



**Grant Thornton**

An instinct for growth™

**Հայաստանում կաթի  
վերամշակման և կաթնամթերքի  
արտադրության ոլորտի  
ուսումնասիրության**

**Հայաստանում Գյուղական Տարածքների  
Տնտեսական Զարգացման Հիմնադրամ**

**Նոյեմբեր 30, 2017**





# Grant Thornton

An instinct for growth™

Private and Confidential

Հայաստանի Գյուղական  
Տարածքների Տնտեսական  
Զարգացման Հիմնադրամ  
Մարյան 26/3, ք. Երևան, ՀՀ

Խորհրդատվական  
ծառայություններ

Գրանթ Թորնթոն Զնայթինգ  
ՓԲԸ  
8/1 Վաղարշյան.  
Երևան 0012  
Հայաստան

Նոյեմբեր 30, 2017

T +374 (0)10 26 09 64  
F +374 (0)10 26 09 61  
www.granthornton.am

Հարգելի պրն. Քալանթարյան

## Հայաստանում կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ոլորտի ուսումնասիրության

Համաձայն Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման Հիմնադրամի և 'Գրանթ Թորնթոն Զնայթինգ' ՓԲԸ-ի միջև 2017թ.-ի օգոստոսի 4-ին կնքված Ծառայությունների մատուցման FREDA/CS-2017/011-4 պայմանագրի, որը ներկայացված է հավելված Գ. Պայմանագիր մասում, սիրով Ձեզ ենք ներկայացնում Հայաստանում կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ոլորտի ուսումնասիրության հաշվետվության նախագծային տարբերակը:

տարբերվում է հաշվետվության Ներածական մասում ներկայացված նպատակից, առանց մեր գրավոր համաձայնության, բացառությամբ հավելված Գ. Պայմանագիր մասում ներկայացված դեպքերի:

Մատուցվող ծառայությունների շրջանակի և սահմանափակումների վերաբերյալ ներկայացված է Հավելված Բ. Ծառայությունների շրջանակ և սահմանափակումներ մասում, որը հանդիսանում է այս հաշվետվության անբաժան մասը:

Մենք չենք կրում որևէ պատասխանատվություն այս հաշվետվության, կատարված մեկնաբանությունների կամ մեր կողմից ձևակերպված կարծիքի համար որևէ կողմի առջև, բարացառությամբ Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման Հիմնադրամի:

Հաշվետվության այս տարբերակը նախագծային է: Դրա բովանդակությունը և առարկան դեռևս վերջնական չեն և կարող են փոփոխվել վերջնական հաշվետվությունում:

Մենք որևէ պատասխանատվություն չենք կրում հաշվետվության օգտագործման հետևանքով առաջացած ցանկացած կորստի կամ վնասների համար, շահառուի կողմից հաշվետվության Ծրագրի նպատակներից տարբերվող նպատակների կիրառման դեպքում:

Այս հաշվետվությունը գաղտնի է և պատրաստվել է բացառապես Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման Հիմնադրամի համար. Այն չպետք է մասնակի կամ ամբողջականորեն օգտագործվի, վերարտադրվի կամ օգտագործվի որևէ նպատակի համար, որը

Հարգանքով՝  
Գրանթ Թորնթոն Զնայթինգ ՓԲԸ

Առաջացած հարցերի կամ առաջարկների դեպքում, խնդրում ենք կապվել՝  
**Գուրգեն Հակոբյան**  
Բաժնետեր/ Տնօրեն  
T +374 (0)10 26 09 64  
E Gurgen.Hakobyan@am.gt.com

Member firm within Grant Thornton International Ltd  
Grant Thornton Consulting CJSC is a closed joint stock company registered in Republic of Armenia.  
Registered office: 8/1 Vaghharshyan Str., Yerevan 0012, Armenia.

# Բովանդակություն

## Բաժին


1. Ամփոփ բաժին
2. Ներածություն
3. ՀՀ մակրոտնտեսական ամփոփ ուսումնասիրություն
4. Գյուղատնտեսության ոլորտի ամփոփ ուսումնասիրություն
5. Կաթի արտադրություն
6. Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն
7. Տեղական վաճառք/ շուկա
8. Օտարերկյա շուկաներ
9. Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրություն
10. Կաթի վերամշակման և կաթնամթերքի ոլորտի SWOT վերլուծություն

## Հավելվածներ

- Ա. Տերմինների բառարան
- Բ. Պայմաններ
- Գ. Պայմանագիր
- Դ. Խոշոր եղջերավոր կենդանիների և կովերի բաշխումը ըստ մարզերի
- Ե. Խոշոր եղջերավոր կենդանիներ ունեցող տնտեսությունների բաշխումը ըստ տնտեսությունների կարգավիճակի
- Զ. Խոշոր եղջերավոր կենդանիների բաշխումը ըստ կազմի և տնտեսությունների կարգավիճակի
- Է. Կաթնային հոտի կովեր ունեցող տնտեսությունների բաշխումը ըստ կաթնային հոտի կովերի քանակի և տնտեսությունների կարգավիճակի

## Էջ Հավելվածներ (շարունակություն)

4	Ը. Կթու կովերի կերաբաժինը	161
16	Թ. Սերմնավորման հասակի էգ հորթերի և երինջների կերաբաժինը	162
18	Ժ. Նամակ ՀՀ Գյուղատնտեսության նախարարությանը	163
26	Ի. ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կողմից ստացված տեղեկատվություն	164
34	Լ. ԽԵԿ-ի բուժմամբ զբաղվող տնտեսություններին ներկայացված հարցաշար	165
84	Խ. Նամակ ՀԳՏՏՀ-ից	168
103	Ծ. ԽԵԿ-ի բուժմամբ զբաղվող տնտեսությունների շրջանակում իրականացված հարցման արդյունքներ	169
120		
135	Կ. CARD-ի կողմից տրամադրված կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերությունների ցանկ	180
141	Հ. Կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերություններին ներկայացված հարցաշար	183
Էջ		
145	Ձ. Կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերությունների շրջանակում իրականացված հարցման արդյունքներ	186
146		
147	Ղ. Կաթի և կաթնամթերքի մանրածախ վաճառքի գները ՀՀ շուկայում	212
157		
158	Ճ. Պանրի արտադրության հավելյալ սարքավորումների ներդրման արժեքի հաշվարկ	215



# Բաժին 1: Ամփոփ բաժին

01. Ամփոփ բաժին

02. Ներածություն

03. ՀՀ մակրոտնտեսական ամփոփ ուսումնասիրություն

04. Գյուղատնտեսության ոլորտի ամփոփ ուսումնասիրություն

05. Կաթի արտադրություն

06. Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն

07. Տեղական վաճառք/ շուկա

08. Օտարերկյա շուկաներ

09. Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրություն

10. Կաթի վերամշակման և կաթնամթերքի ոլորտի SWOT վերլուծություն

# Ամփոփ բաժին

## Ներածություն

### Ծրագրի նպատակը

- Նախագծի նպատակն է աջակցել Հիմնադրամին ավելի լավ ընկալել Հայաստանում կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ոլորտը, ինչի արդյունքում Հիմնադրամն առավել որակյալ կերպով կվերանայի տվյալ ոլորտի ծրագրերը և ի վիճակի կլինի կայացնել տեխնիկապես և տնտեսապես արդարացված ներդրումային որոշումներ:

### Պայմանագիր

- Սույն հաշվետվությունը պատրաստվել է 'Գրանթ Թորնթոն Բնասայթինգ' ՓԲԸ-ի կողմից՝ համաձայն Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Չարգացման Հիմնադրամի և 'Գրանթ Թորնթոն Բնասայթինգ' ՓԲԸ-ի միջև 2017թ.-ի օգոստոսի 4-ին կնքված Ծառայությունների մատուցման FRED/CS-2017/011-4 պայմանագրի:

## ՀՀ մակրոտնտեսական ամփոփ վերլուծություն


### Համախառն ներքին արդյունք

- Գյուղատնտեսության ոլորտը ուսումնասիրվող ժամանակաշրջանում ունեցել է ՀՆԱ-ում ամենամեծ տեսակարար կշիռը՝ կազմելով ՀՆԱ-ի 17-20 %-ը 2010-2015 թվականների համար:
- 2010 թվականից մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն 1,062.7 հազար դրամից (2,844 ԱՄՆ դոլար) հասել է 1,674.8 հազար դրամի (3,504.3 ԱՄՆ դոլար)՝ աճելով 57.6%-ով:

### Արտարժույթային փոխարժեքներ

- Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Էական փոփոխության է ենթարկվել ռուսական ռուբլու փոխարժեքը, որն ունեցել անկման միտում գրեթե ողջ ժամանակաշրջանում: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ռուսական ռուբլին արժեզրկվել է 5.72 ՀՀ դրամով կամ ավելի քան 44.2 տոկոսով: Ռուբլու նման արժեզրկումը բացասաբար է ազդել դեպի Ռուսաստան արտահանում իրականացնող ընկերությունների վրա:

Ռուսական ռուբլի/ՀՀ դրամ փոխարժեքի դինամիկան



### Արտահանում և ներմուծում

- Վերջին տարիներին նկատվել է արտահանման և ներմուծման ծավալների կայուն աճ, սակայն 2015 թվականին մոտ 1,200 մլն ԱՄՆ դոլարով կրճատվել է ներմուծման ծավալը, իսկ արտահանման ծավալը հավասարվել է 2013 թվականի ծավալին՝ կազմելով 1,485 մլն ԱՄՆ դոլար:

## Գյուղատնտեսական ոլորտի ամփոփ վերլուծություն

### Գյուղատնտեսության համախառն արտադրանքը

- 2016թ-ին 2015թ-ի համեմատ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ արտահայտված ընթացիկ գներով նվազել է 10%-ով:
- Գյուղատնտեսական արտադրանքի համախառն տարեկան աճի տեմպը 2010-2016 թթ-ի համար կազմել է 6%:

# Ամփոփ բաժին

## Գյուղատնտեսական ոլորտի ամփոփ վերլուծություն

- 2016թ-ին գյուղատնտեսական արտադրանքի ամենամեծ մասնաբաժինն է ունեցել Արմավիրը՝ 18%, իսկ ամենափոքրը Երևան քաղաքը՝ 1%:
- 2016 թ-ին անասնաբուծությունը ընդհանուր գյուղատնտեսական արտադրանքի մեջ կազմել է 43%:
- 2015թ-ին կաթի արտադրությունը կազմել է գյուղատնտեսական համախառն արտադրանքի 11%-ը:

## Կաթի արտադրություն

### Խոշոր եղջերավոր կենդանիների ամփոփ նկարագիրը

- Կաթնատու կովերի տնտեսական օգտագործումը՝ 12-13 տարի է, իսկ վերարտադրության համար տոհմային կենդանիների օգտագործման ժամկետը՝ 5 - 10 տարի:
- Խոշոր եղջերավոր կենդանիների նախիրները լինում են երկու տեսակի՝ տոհմային և ապրանքային: Հարցման արդյունքները (4 տնտեսությունների համար) վկայում են, որ ՀՀ-ում ԽԵԿ-ի բուծմամբ զբաղվող տնտեսություններն ավելի հակված են զբաղվել տոհմային նախիրների բուծմամբ:
- Ըստ մթերատվության ուղղության խոշոր եղջերավոր կենդանիների ցեղերը դասակարգվում են երեք խմբի՝ կաթնային, մսային, երկակի (համակցված)՝ կաթնա-մսային և մսա-կաթնային: Հարցմանը մասնակցած 4 ընկերությունների նախիրներում գերակշռում են կաթնատու ուղղություն ունեցող ԽԵԿ-ի ցեղատեսակները:
- ՀՀ-ում, հիմնականում կիրառում են խոշոր եղջերավոր կենդանիների պահվածքի երկու համակարգ՝ մսուրա-արոտային և շուրջտարյա-մսուրային: Երկու համակարգի դեպքում էլ կիրառում են պահվածքի երկու ձև՝ կապովի և անկապ: ՀՀ-ում գերազանցապես կիրառվում է կովերի կապովի պահվածքը:

### ՀՀ-ում 2014թ-ի գյուղատնտեսական հաշվառման արդյունքներ

- ՀՀ-ում 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ առկա է եղել խոշոր եղջերավոր կենդանիներ ունեցող 110,975 տնտեսություն, որոնցից ամենաշատը տեղակայված են եղել Գեղարքունիքի մարզում՝ կազմելով ընդհանուրի 23%-ը:
- Կաթնային հոտի կովեր ունեցող ամենաշատ քանակությամբ տնտեսությունները տեղակայված են Գեղարքունիքի, Շիրակի, Արագածոտնի և Լոռվա մարզերում՝ համապատասխանաբար կազմելով ընդհանուրի 24%, 14%, 12% և 12%:
- 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ ՀՀ-ում առկա է եղել 764,217 խոշոր եղջերավոր կենդանի, որոնցից 347,795 եղել են կովեր և կազմել են ընդհանուրի 46%-ը:
- Կովերի տեսակարար կշիռը կաթնա-մսատու ուղղության նախիրներում ցանկալի է լինի 40-45%, իսկ կաթնատու տիպի նախիրներում՝ 45-50% և ավելին:
- Գրեթե բոլոր մարզերում, կովերը միջինում կազմում են խոշոր եղջերավոր կենդանիների 40%-ից ավելին, իսկ կաթնային հոտի մասնաբաժինը կովերի ընդհանուր քանակի մեջ միջինում կազմում է 80%-ից ավելին:

### Խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ուսումնասիրություն

- Խոշոր եղջերավոր կենդանիների կերերը տարանջատվում են 4 հիմնական տեսակի՝ կոպիտ կերեր, հյութալի կերեր, կանաչ

# Ամփոփ բաժին


## Կաթի արտադրություն

Կերեր, խտացրած կերեր:

- Կովերի կերակրումը կախված է կովի կաթնատվությունից, կենդանի զանգվածից, տարիքից, հղիության շրջանից, մնվածությունից, ինչպես նաև այն հանգամանքից թե կովերը պահվածքի որ շրջանում են գտնվում՝ մուրային թե արտային:
- Հարցման արդյունքները վկայում են այն մասին որ ՀՀ-ում ԽԵԿ-ի կերակրումը կատարվում է թերի, ինչի հետևանքով էլ ընկնում է կենդանիների կաթնատվությունը և տուժում է կաթի որակը:
- Հարցմանը մասնակցած տնտեսություններից և ոչ մեկում կերակրման գործընթացը ամբողջովին ավտոմատացված չէ:

### ՀՀ-ում պատրաստի կերի արտադրություն և ներմուծում

- Հայաստանում տարեկան արտադրվում է 20,000-30,000 տոննա համակցված կեր:
- 2016թ-ին ՀՀ-ում արտադրվել է 87,422 տոննա թեփ, հացահատիկային մշակաբույսերի մշակումից ստացված այլ մնացուկներ, 2015թ.-ին ներմուծվել է 12,440 տոննա պատրաստի կեր:
- Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին, պատրաստի կերի արտադրության և ներմուծման ծավալների փոփոխությունը որևէ հստակ միտում չի դրսևորում:



### Կովերի կաթնատվությունը

- Լակտացիայի (կաթնատվության շրջան) միջին տևողությունը կազմում է 270-305 օր, իսկ ցամաքի շրջանինը՝ 60 օր:
- Կովերի կաթնային մթերատվությունը որոշվում է գենետիկական (ժառանգական) բնույթի, ոչ գենետիկական բնույթի և արտաքին միջավայրի գործոններով:
- ՀՀ-ում մեկ կովի տարեկան միջին կաթնատվությունը 2016թ-ին կազմել է 2,546 կգ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 11%, իսկ վերջին 7 տարիների միջինացված ցուցանիշը կազմել է 2,222 կգ:
- Կիթերի թիվը երկուսից երեքի հասցնելով, կաթնատվությունը բարձրանում է 8-12 %-ով:
- Կաթի մաքրության ապահովման և տարբեր տեսակի հիվանդություններից խուսափելու նպատակով նախընտրելի է կիթը իրականացնել սարքերի միջոցով և ոչ թե ձեռքով: Հարցմանը մասնակցած տնտեսությունների (4 տնտեսություն) մեծ մասը կովերի կիթը իրականացնում են սարքերի միջոցով:

### ՀՀ-ում կաթի արտադրության ծավալների ուսումնասիրություն

- Կաթի արտադրության ծավալները ՀՀ-ում դրսևորում են աճող դինամիկա և վերջին յոթ տարվա ընթացքում տարեց տարի միջինում աճել են մոտ 4%:


# Ամփոփ բաժին

## Կաթի արտադրություն

- 33-ում կաթի արտադրության ծավալները 2016թ-ին կազմել են 754 հազար տոննա: Այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է 4%-ով, իսկ 2010թ-ի համեմատ՝ 21%-ով:
- 2016թ-ին կաթի ներքին սպառումը հավասարվել է 278 հազար տոննայի՝ կազմելով արտադրված կաթի 37%-ը:
- 2014թ-ին Հայաստանում կաթի արտադրության ծավալները բնակչության մեկ շնչի հաշվով կազմել են 232 կիլոգրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7%:

## Գյուղատնտեսական շուկայում կաթնամթերքի գների ուսումնասիրություն

- 2016թ-ին գյուղատնտեսական մթերք արտադրողների հիմնական արտադրատեսակներ իրացման միջին գները դրսևորել են նվազման միտում: Այսպես կաթի և պանրի գները 2016թ-ին նախորդ տարվա համեմատ նվազել են համապատասխանաբար 6% և 4%-ով, իսկ մածնի գինը մնացել է անփոփոխ:
- 2016թ-ին թե գյուղատնտեսական, թե սպառողական շուկաներում կաթնամթերքի իրացման գները նախորդ տարվա համեմատ նվազել են համապատասխանաբար 4.4% և 6.1%-ով:



## 33-ում տավարաբուծությամբ զբաղվող հիմնական ֆերմաները

- Համաձայն 2014թ-ի գյուղատնտեսական հաշվառման արդյունքների 33-ում 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ առկա է եղել խոշոր եղջերավոր կենդանիներ ունեցող 110,975 տնտեսություն, որոնցից ամենախոշորներն են Ագրոհոլդինգ Արմենիա ՍՊԸ-ն, Վամաքս ՍՊԸ-ն, Արգևու տոհմային ԹՏԽ ԲԲԸ-ն, Դիլի ագրոարդյունաբերական համալիր ՍՊԸ-ն, Բանդիվան Կաթ ՍՊԸ-ն, Էկոֆարմ ՍՊԸ-ն և Մուլտի Ագրո ՍՊԸ-ն:

## Հարցման արդյունքների ամփոփում

- Խորհրդատուն հարցման համար առանձնացրել է 16 տնտեսություն, որոնցից հարցմանը մասնակցելու համաձայնություն տվել են միայն 4-ը, ընդ որում որոնցից երկուսի մասին տեղեկատվություն ստացվել է կաթնամթերք արտադրող ընկերությունների հարցման ժամանակ:
- Կաթնամթերք արտադրող ընկերությունների հարցման ժամանակ Խորհրդատուն տեղեկատվություն է ստացել և հարցում է անցկացրել այժերի բուժմամբ և այժի կաթի արտադրությամբ զբաղվող տնտեսությունում:
- Հարցմանը մասնակցած ԽԵԿ-ի բուժմամբ զբաղվող տնտեսությունները հիմնականում վաճառում կամ իրենց պատկանող կաթնամթերքի արտադրության գործարաններում վերամշակում են վերջիններիս կողմից արտադրված կաթը:
- Այն տնտեսություններում, որտեղ բուժվում են հոշտեյն և սիմենթալ ցեղատեսակի կովեր 1 լիտր կաթի ստացման ինքնարժեքը բավականին բարձր է, քանի որ այս ցեղատեսակների պահելու, խնամելու և կերակրելու հետ կապված ծախսերը շատ ավելի բարձր են քան Կովկասյան գորշ ցեղատեսակինը:



# Ամփոփ բաժին

## Կաթի արտադրություն

- Կաթի գինը հիմնականում իջնում է կովերի պահվածքի արոտային շրջանում, երբ կովերի հիմնական կերը արոտն է և հետևաբար նվազում է կերերի վրա կատարվող ծախսը:
- Համաձայն հարցմանը մասնակցած տնտեսությունների տրամադրած տեղեկատվության, ոչ մի տնտեսությունում արտադրված կաթի յուղայնության տոկոսը կախված ամիսներից չի փոփոխվում:
- Հարցմանը մասնակցած տնտեսություններից մեծ մասի հիմնական գնորդները կաթնամթերք արտադրող ընկերություններն են:
- Գոյղեն Գոուլթ տնտեսությունը, որը զբաղվում է այծի կաթի արտադրությամբ, ունի 350 այծ, որոնցից տարեկան ստանում է մոտ 190,000 լիտր կաթ: Կաթի ստացման ինքնարժեքը կազմում է 235 դրամ մեկ լիտրի համար: Ընդ որում, հարցման արդյունքները վկայում են, որ այծի կաթի ինքնարժեքը շատ ավելի բարձր է քան կովի կաթինը:

## Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն

### ՀՀ-ում կաթնամթերքի արտադրության ծավալներ

- Կաթի արտադրության ծավալները վերջին 7 տարիներին աստիճանաբար աճել են և 2017թ-ի առաջին 6 ամիսների համար կազմել են 272 հազար տոննա:
- ՀՀ-ում ամենաշատ արտադրվող կաթնամթերքը պանիրն է: 2017թ-ի առաջին 6 ամիսների համար պանրի արտադրության ծավալները կազմել են 9,006 տոննա, ինչը մոտ 5%-ով զիջում է Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արտադրված պանրի ծավալին:
- 2017թ-ի առաջին 6 ամիսների համար նվազել են նաև մածուի, թթվասերի և կաթնաշոռի արտադրության ծավալները՝ համապատասխանաբար 3%, 19% և 7%-ով:
- 2014-2015թթ-ին կաթնամթերքի շուկայում արձանագրված արտադրության ծավալների կտրուկ աճը պայմանավորված է եղել 2014թ-ի սեպտեմբերի 11-ից ուժի մեջ մտած պարտադիր դրոշմապիտակավորման պահանջի հետ:
- Կաթնամթերքի արտադրության ծավալները՝ համադրելի և ընթացիկ գներով, համապատասխանաբար կազմել են 22,958 և 22,884 մլն դրամ 2017թ-ի առաջին կիսամյակի համար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 4% և 3%-ով:
- Պատրաստի արտադրանքի իրացումը արտահայտված ընթացիկ գներով 2017թ-ի առաջին կիսամյակին կազմել է 22,847 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 4%-ով:

### ՀՀ-ում կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող հիմնական ընկերություններ

- ՀՀ-ում գործում են կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ավելի քան 70 ընկերություն, որոնցից ամենախոշորներն են «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն, «Չանախ» ՍՊԸ, «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ն, «Բիոկաթ» ՍՊԸ-ն, «Իգիթ» կաթնամթերքի գործարան ՍՊԸ-ն, «Արզնի Կաթ» կաթնամթերքի արտադրական ձեռնարկությունը, «Թամարա» ՍՊԸ-ն, «Մարիլա» ՍՊԸ-ն և «Բանդիվան Կաթ» ՍՊԸ-ն:
- Նշված ընկերությունները զբաղվում են որակյալ կաթնամթերքի արտադրությամբ՝ արտադրելով կաթ, պանիր, մածու, թան, կեֆիր, թթվասեր, կաթնաշոռ, յոգուրտ, պաղպաղակ և այլ տեսակի կաթնամթերք և լուրջ ներդրումներ են իրականացնում որակի կառավարման ու տեխնոլոգիական հագեցվածությունն ապահովելու համար:

# Ամփոփ բաժին

## Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն


### Հարցման արդյունքների ամփոփում

- Խորհրդադատուն հարցման համար առանձնացրել է կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող 33 ընկերություններ, որոնցից կապ է կարողացել հաստատել միայն 31-ի հետ; հարցմանը մասնակցելու համաձայնություն են տվել 14-ը:
- Հարցմանը մասնակցած կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերությունների կեսից ավելին ունեն ավելի քան 15 տարվա փորձ կաթնամթերքի արտադրության ոլորտում:
- Հարցման մասնակիցներից մեծ մասի համար մատակարարի առջև դրվող առաջնային պայմանը կաթի որակի ապահովումն է: Գրեթե բոլորը պատրաստ են ավել գումար վճարել յուղայնության բարձր մակարդակ ունեցող և որակյալ կաթի համար: Նրանցից 86%-ը հավաստիացնում են նաև, որ իրենց արտադրանքում չեն օգտագործում կաթի փոշի:
- Հարցմանը մասնակցած կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող 14 ընկերություններից կաթի մթերման ամենախոշոր ծավալներն ունի Մարիաննա ընկերությունը՝ ՀՀ կաթնամթերքի շուկայի առաջատարներից մեկը:
- Հարցման արդյունքները ևս վկայում են այն մասին, որ կաթի մթերման ծավալներն ունեն ակնհայտ սեզոնայնություն: Կաթի ամենաշատ մթերումը կատարվում է ամռան ամիսներին, իսկ մնացած ամիսներին, հատկապես ձմռանը, մթերման ծավալները խիստ նվազում են: Հարցման արդյունքները մանրամասն ներկայացված են համապատասխան բաժնում:

## Տեղական վաճառք/ շուկա

### Կաթնամթերքի տեղական արտադրություն


- 2016թ.-ին ՀՀ-ում արտադրվել է 43,140 տոննա կաթնամթերք, որից 51.73%-ը բաժին է ընկել պանրի արտադրությանը:
- 2016թ.-ին արտադրված կաթնամթերքի կառուցվածքում պանրի, պաղպաղակի, մածնի և թփվասերի կշիռը կազմել է 91.04%:
- Կաթնամթերքի արտադրության ծավալները 2016թ.-ի սեպտեմբերից սկսած անկում են ապրել, ինչը պայմանավորված է սեզոնայնությունից բխող կաթնատվության սղությամբ:



### Կաթնամթերքի ներմուծման ուսումնասիրություն

- 2016թ.-ին կաթնամթերքի ներմուծման հիմնական երկրները բնեղեն արտահայտությամբ հանդիսացել են Ուկրաինան (36%), Նոր Չեխանդիան (26%), Ռուսաստանը (23%), Բելառուսը (5%), Ֆիլիպինյան (4%), Գերմանիան (2%): Իսկ դրամական արտահայտությամբ ներմուծման ծավալների դիտարկման արդյունքում Նոր Չեխանդիայի մասնաբաժինը կազմել է 36%, իսկ Ուկրաինային ու Ռուսաստանինը համապատասխանաբար 30% և 14%:
- Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ կաթնամթերքային արտադրանքի միայն 12%-ը, իսկ պանրի, կաթնաշոռի 4%-ն են ներմուծվում: Կարագը գրեթե ամբողջությամբ ներմուծվում է, իսկ վերջինիս տեղական արտադրության մասնաբաժինը աննշան է և հիմնականում բաղկացած է կարագի փոխարինիչներից:
- 2016թ.-ին նախորդ տարվա համեմատ կաթնամթերքի բոլոր տեսակների ներմուծման ծավալները բացառությամբ պանրի և

# Ամփոփ բաժին



## Տեղական վաճառք/ շուկա

կաթնաշոռի աճ են գրանցել:

### Մանրածախ ոլորտի ուսումնասիրություն

- 2017թ.-ի սեպտեմբերի դրությամբ 1լ տեղական արտադրության պասսերիզացված կաթի գինը եղել է միջինում 445 դրամ, մինչդեռ ներմուծվածինը կազմել է գրեթե 3 անգամ ավել:
- Ներմուծված խտացրած կաթի (380գ) ու կարագի (200գ) գները, կազմել են համապատասխանաբար 645 և 1,132 դրամ:
- (200գ) թթվասերի և կաթնաշոռի դեպքում, ներմուծվածի գինը տեղականից բարձր է եղել մոտ 72%-ով:

### Վաճառքի ուղիների ուսումնասիրություն

- Հարցմանը մասնակցած բոլոր ընկերություններն իրենց արտադրանքի իրացումը կազմակերպում են խանութների և սուպեր-մարկետների միջոցով: Նրանցից 5-ն ունեն նաև սեփական խանութները, իսկ 3-ն իրենց արտադրանքը վաճառում են նաև միջնորդների միջոցով:
- Ապրանքների փոխադրումը հիմնականում իրականացվում է արտադրողի սեփական միջոցներով:
- Տրանսպորտային ծախսերը կախված ընկերությունների իրացման ծավալներից, տրանսպորտային միջոցների քանակից, սպասարկման և այլ ծախսերից խիստ տարբեր են:

### Շուկայի մուտքի խոչընդոտների ուսումնասիրություն

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, որն իրականացնում է սննդամթերքի անվտանգության և համապատասխանության գնահատման, անասնաբուժության և բուսա-սանիտարիայի բնագավառների պետական կարգավորումը:
- Կաթնամթերքի արտադրությունը ներառված չէ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների մեջ:
- Սննդամթերքի ներմուծումն իրականացվում է արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված բեռի տվյալ խմբաքանակի անվտանգությունը հավաստող փաստաթղթի կամ համապատասխանության կամ ծագման սերտիֆիկատների կամ բեռի տվյալ խմբաքանակի լաբորատոր փորձարկումների արձանագրությունների առկայության դեպքում:
- Շուկայի մուտքի խոչընդոտների վերլուծության արդյունքում գնորդների և մատակարարների ուժին տրվել է ցածր գնահատական, իսկ մրցակիցների ուժին և իրավական դաշտին՝ միջին:
- Հարցմանը մասնակցած ընկերություններից 9-ի մոտ կան ընկերության զարգացմանը խոչընդոտող գործոններ, որից 60%-ի մոտ խոչընդոտող են դիտարկվել ֆինանսական, 20%-ի մոտ օրենսդրական և 10-ական տոկոսների մոտ հարկային և մարդկային ռեսուրսների գործոնները:

## Օտարերկյա շուկաներ

### Արտահանման ուսումնասիրություն

- 2016թ.-ին կաթնամթերքի արտահանման 98.64%-ը բաժին է ընկել Ռուսաստանին: Արտահանման երկրների շարքը ներառել է նաև Վրաստանը, ԱՄՆ-ն, Ղազախստանը:

# Ամփոփ բաժին


## Օտարերկյա շուկաներ

- 2016թ.-ին արտահանված կաթնամթերքի մեջ գերակշիռ մասը կազմել է պանրի և կաթնաշոռի խումբը՝ 5,498 տոննա, կամ արտահանվող կաթնամթերքի 99.7%-ը:
- Պանրի արտահանման ծավալները 2016թ.-ին նախորդ տարվա համեմատ նվազել են 40%-ով:
- 2016թ.-ին նախորդ տարվա համեմատ կաթնամթերքի արտահանման ծավալները բացառությամբ կաթնաթթվային արտադրանքի (մածուն, թթվասեր, թան, կեֆիր, յոգուրտ և այլն) անկում են ապրել:

## Ռուսական շուկայի վերլուծություն

- 2016թ.-ին Ռուսաստանում արտադրված 10,650,260 տոննա կաթնամթերքի 29%-ը բաժին է ընկել կաթնաթթվային արտադրանքին, իսկ 13%-ը՝ պանրին և կաթնաշոռին: Ռուսաստանին բաժին է ընկել հում կաթի համաշխարհային արտադրության 6.2%-ը:
- Կաթնամթերքի ներմուծման ծավալները 2013թ.-ից սկսած նվազել են, ինչը շարունակվել է նաև 2016թ.-ին: Նվազման հիմնական պատճառն է հանդիսացել Ռուսաստանի կողմից կիրառված ապրանքային էմբարգոն:

Կաթնամթերքի ներմուծման ծավալների դինամիկան Ռ-Ղ-ում



## Վրացական շուկայի վերլուծություն

- 2016թ.-ին Վրաստանի կաթնամթերքի ներմուծման ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են մինչև 17%-ով:
- Ներմուծման կառուցվածքում 33%-ը կազմել են կարագի և այլ կաթնային յուղերի, իսկ 31%-ը՝ խտացրած կաթի և կաթի փոշու ներմուծումը:

## Ղազախական շուկայի վերլուծություն

- 2016թ.-ին Ղազախստանում արտադրված 806 հազ. տոննա կաթնամթերքի 24%-ը բաժին է ընկել կաթնաթթվային ապրանքներին, իսկ 3%-ը կազմել է պանրի և կաթնաշոռի արտադրությունը:
- 2016թ.-ին Ղազախստան ներմուծված կաթնամթերքից 33%-ը բաժին է ընկել խտացրած կաթին և կաթի փոշուն, իսկ 27%-ը՝ պանրին և կաթնաշոռին:

## Մանրածախ ոլորտի ուսումնասիրությունը Ռուսաստանում

- 2017թ-ի սեպտեմբերի դրությամբ ռուսական արտադրության պանրի միջին գինը կազմել է 1,376 դրամ, իսկ ներմուծվածինը՝ մոտ 70%-ով բարձր:
- Հայկական արտադրության աղի պանրի միջին գինը ռուսական շուկայում 200գ-ի համար կազմել է 826 դրամ, իսկ հայկական արտադրության այլ պանիրների համար՝ 1,320 դրամ:
- Հայկական արտադրության այլ պանիրների գները գրեթե 48%-ով ցածր են ռուսական շուկայում շրջանառվող միևնույն տեսակի պանիրների գներից:

# Ամփոփ բաժին

## Օտարերկյա շուկաներ

### Մանրածախ ոլորտի ուսումնասիրությունը Վրաստանում և Ղազախստանում

- 2017թ-ի սեպտեմբերի դրությամբ վրացական արտադրության պանրի միջին գինը կազմել է 1,079 դրամ, իսկ ղազախական արտադրությանը՝ 1,561 դրամ:
- Ղազախստանում ներմուծված կաթնամթերքի գները տեղական արտադրանքի գներից ավելի բարձր են: Ներմուծված կարագի գինը տեղականից բարձր է մոտ 52%-ով, սակայն կաթնաշոռի դեպքում այդ տարբերությունն էական չէ:

### Վաճառքի ուղիների ուսումնասիրություն

- Հարցմանը մասնակցած 14 ընկերություններից կաթնամթերքի 6 արտահանողներն իրենց արտադրանքի իրացումը կազմակերպում են սուպերմարկետների ցանցի և խանութների միջոցով, սակայն նրանցից 3-ը աշխատում են նաև միջնորդների հետ:
- Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՀՀ-ից արտահանվող հիմնական կաթնամթերքի՝ պանրի տեղափոխումը երկաթուղու միջոցով հնարավոր չէ իրականացնել, քանի որ Հարավ-Կովկասյան երկաթուղին չունի սառնարանային վագոններ:
- Բեռնատարների միջոցով 20 տոննա պանրի տեղափոխումը Մոսկվա, Կրասնոդար, Թբիլիսի և Աստանա ուղղություններով միջինում կազմում է համապատասխանաբար 965,000, 723,750, 337,750 և 4,825,000 ՀՀ դրամ:

### Ռուսական շուկա մուտք գործելու խոչընդոտների ուսումնասիրություն

- ՌԴ ապրանքների ներմուծման համար անհրաժեշտ են երկու փաստաթղթեր՝ ներմուծման թույլտվությունը (միայն Մաքսային միության անդամ չհանդիսացող ԱՊՀ երկրների համար) և անասնաբուժական վկայագիրը՝ ստացված արտադրողի երկրից: Սովորաբար այն ուժի մեջ է ոչ ավել քան մեկ ամիս ստացման օրվանից: Արտադրանքը պետք է ունենա Մաքսային Միությանը հատուկ մակնշումը: Իսկ մնացած բոլոր մաքսային պահանջները սովորական են. խմբաքանակի փաստաթղթերը, արտադրողի և բեռնափոխադրողի տվյալները, հաշիվ-ապրանքագրերը, բեռների մաքսային հայտարարագրումը:
- Շուկայի մուտքի խոչընդոտների վերլուծության արդյունքում գնորդների ուժին տրվել է ցածր գնահատական, իսկ մրցակիցների ուժին և իրավական դաշտին՝ միջին:

## Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրություն

### Հայաստանում արտադրվող պանիրների վերլուծություն

- Որպես ՀՀ-ից արտահանվող հիմնական կաթնամթերք դիտարկվել է պանիրը, քանի որ վերջինս առավել արժեքավոր է, հարմար է փոխադրել և ունի պիտանեցիության ավելի երկար ժամկետ:
- Լոռի, Չանախ, Եղեգնաձոր և այլ ազգային պանիրների հետ մեկտեղ Հայաստանում արտադրվում են նաև Սուլուզուևի, Մոցարելա, Էմենտալ, Կամամբեր և մի շարք այլ համաշխարհային ճանաչում ունեցող պանիրներ:
- Համաձայն ընտրված չորս տեսակի պանիրների համար կատարված ինքնարժեքի հաշվարկի, վերջինս կազմում է՝ գաուղա պանրի համար 1,746 դրամ, մասդամ, ֆետա և ռոկֆոր պանիրների համար համապատասխանաբար 2,274, 1,335 և 1,923 դրամ:

### Ռուսական շուկայում պանրի վաճառքի արժեքի հաշվարկ

- Վաճառքի շահութաբերության վերլուծությունը ցույց տվեց, որ դիտարկվող պանիրների արտադրությունը Հայաստանում նպատակահարմար է, քանի որ ցածր ինքնարժեքի շնորհիվ վերջիններս ռուսական շուկայում հնարավորություն ունեն սպառողներին ներկայանալ ավելի մրցունակ գներով, բացառությամբ գաուղա պանրի, որի վաճառքի գինը փաստացի գնից

# Ամփոփ բաժին

## Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրություն

բարձր է 3.3%-ով: Իսկ առանց միջնորդների աշխատելու պարագայում տեղական արտադրողները հնարավորություն կունենան ապահովել ավելի բարձր շահութաբերություն:

### Անհրաժեշտ սարքավորումների ցանկ

- Խորհրդատուի կողմից կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ գաուդա, մասդամ և ռոկֆոր տեսակի պանիրների արտադրության համար անհրաժեշտ հավելյալ սարքավորումների ցանկը ներառում է կաղապարներ, դարակաշարեր, մամլիչներ և ասեղներով դակող սարքեր:
- Իրականացված հաշվարկների համաձայն այդ սարքավորումների ձեռքբերման արժեքը 500 կգ արտադրողականությամբ արտադրություն ղեկելու համար գաուդա և մասդամ տեսակների համար կկազմի 14,093 և 13,255 հազ. ՀՀ դրամ, իսկ ռոկֆորի համար՝ 4,640 հազ. ՀՀ դրամ: Ֆետայի արտադրության համար լրացուցիչ սարքավորումներ անհրաժեշտ չեն:

## SWOT վերլուծություն- կաթի արտադրություն

### Ուժեղ կողմեր

- Հարկային ռեժիմ, գյուղմթերքների արտադրության ոլորտի համար սահմանված են հարկային արտոնություններ, մասնավորապես ԱԱՀ և շահութահարկից ազատված է առաջնային արտադրությունը
- Կերի ծախսի գածը մակարդակ, արտադրողների օգտագործման դեպքում տարեկան մինչև 65 տոկոս օրերը կենդանիները կարող են սնվել արոտային ռեժիմով,
- Ոլորտ մուտքի խոչընդոտների բացակայություն,
- Կաթի նկատմամբ կայուն պահանջարկի առկայություն:

### Հնարավորություններ

- Արտադրողների թերի օգտագործում /<<-ում արտադրողների ընդամենը 30 տոկոսն են օգտագործվում/, Տարածքների աճի հնարավորություններ,
- Աշխատանքների ավտոմատացման հնարավորություններ, օրինակ կթման աշխատանքներ,
- Արտադրողների օգտագործման արդյունավետության բարձրացում,
- Գյուղատնտեսության նախարարության կողմից առկա ծրագրեր՝ սարքավորումների թարմացում՝ լիզինգային ծրագրերով, բարձր արդյունավետ կովերի ներմուծում,

### Թույլ կողմեր

- Արտադրողների օգտագործման պայմանների խախտում, բնակավայրերին մոտ արտադրողները գերծանրաբեռնված են, հեռու վայրերը թերծանրաբեռնված,
- Արտադրողների օգտագործման կանոնավորվածության բացակայություն,
- Մանր արտադրողների տեսակարար կշիռ բարձր է, մանր արտադրողներ (մինչև 5 կով) չունեն ֆինանսական միջոցներ կովերի կերն ու խնամքը ճիշտ կամակերպելու համար,
- Կերի պահպանման համապատասխան պայմանների բացակայություն, կերը պահվում է բացօթյա պայմաններում
- Աշխատանքի ավտոմատացման գածը մակարդակը, կիթն իրականացվում է հիմնականում ձեռքով
- Ցածր արդյունավետությամբ կովերի նախի առկայություն,
- Իտոյոր եղջերավոր կենդանիների անասնաբուժական ծառայությունների թեղադրագաժություն

### Մայրամալիքներ

- Բնակիչների անհամապատասխան փոփոխություն, եղաշա
- Արտաքին մրցակցություն
- Կենդանիների հիվանդություն

# Ամփոփ բաժին

Կաթի վերամշակման և կաթնամթերքի ոլորտի SWOT վերլուծություն

## SWOT վերլուծություն- կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն

### Ուժեղ կողմեր

- Կաթնամթերքի արտադրանքի նկատմամբ կայուն պահանջարկ
- Կաթնամթերք արտադրող ընկերությունների կողմից հարկային բեռի ընդհանուր հնարավորություն ըստ իրացման ծավալների
- Գոյություն ունեցող կայացած արտահանման շուկա Ռուսաստանում:

### Հնարավորություններ

- Կաթնամթերքի սպառման ծավալների աճ ՀՀ-ում
- Արտահանման շուկաներում հնարավորություններ մասնավորապես ԵՏՄ շուկա
- Տեխնոլոգիական առաջընթաց
- Լուր տեսակի արտադրատեսակներ հիմնելու հնարավորություն մասնավորապես նոր տեսակի պանիրների արտադրության հիմնում:

### Թույլ կողմեր

- Հումքի՝ մասնավորապես կաթի ցածր որակ, որը պայմանավորված է կովերի սանիտարական պայմանների պահպանման հետ
- Հումքի մատակարարման խիստ սեզոնայնություն, կաթի մատակարարումը ձմռան ամիսներին կտրուկ նվազում է
- Տեխնոլոգիական թերհագեցվածությունը, շուկայում գործող միջին կաթ վերամշակող և արտադրող ընկերության արքավորումները բավականին հին են
- Ոլորտում լավ մասնագետների պակաս
- ԱԱՀ չհաշվանցման խնդիր, բանի որ կաթնամթերք վերամշակող ընկերությունների հիմնական ձեռքբերումը կաթն է, որն ազատված է ԱԱՀ-ից
- Որակի կառավարման համակարգեր ներդրված է տնտեսավարող սուբյեկտներից միայն փոքր մասի մոտ, որը սահմանափակում է այդ ընկերությունների վաճառքի, մասնավորապես արտահանման հնարավորությունները
- Լեռորումների իրականացման համար ֆինանսավորման աղբյուրների դժվարամատչելիություն

### Սպասնալիքներ

- Կաթի մատակարարման խափանում՝ երաշտի, հիվանդությունների և այլնի պատճառներով
- Արտաքին մրցակցություն ՀՀ շուկայում մասնավորապես՝ ԵՏՄ շուկա
- Ռուսաստանում պատժամիջոցների Վերստիման դեպքում շուկայի բացում շուկայի ավանդական մասնակիցների համար

# Բաժին 2: Ներածություն

01. Ամփոփ բաժին

02. Ներածություն

03. ՀՀ մակրոտնտեսական ամփոփ ուսումնասիրություն

04. Գյուղատնտեսության ոլորտի ամփոփ ուսումնասիրություն

05. Կաթի արտադրություն

06. Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն

07. Տեղական վաճառք/ շուկա

08. Օտարերկյա շուկաներ

09. Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրություն

10. Կաթի վերամշակման և կաթնամթերքի ոլորտի SWOT վերլուծություն



# Ներածություն

## Նախաբան

Հիմնվելով Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Չարգացման Հիմնադրամի (ՀԳՏՏՁՀ/Հիմնադրամ/Հանախորդ) կողմից հրապարակված հետաքրքրության հայտ ներկայացնելու մասին հայտարարության վրա՝ Գրանթ Թորնթոն Բնասլոթինգ՝ ՓԲԸ-ն (Խորհրդատու) ս.թ. հուլիսի 7-ին ներկայացրել է հետաքրքրության հայտ Հայաստանում կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ոլորտի ուսումնասիրություն, FREDA/CS-2017/011-4 ծրագրին մասնակցելու համար:

Այնուհետև, Հիմնադրամի կողմից ս.թ. հուլիսի 20-ին կազմված թիվ 01/122.1-17 Հրավերի հիման վրա Խորհրդատուն ս.թ. հուլիսի 28-ին Հիմնադրամին է ներկայացրել իր կողմից պատրաստված ֆինանսատեխնիկական առաջարկը, որի հիման վրա Հիմնադրամն ընտրել է Խորհրդատուին Հայաստանում կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ոլորտի ուսումնասիրության իրականացման համար:

## Չաշվետվության հիմքերը

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Գրանթ Թորնթոն Բնասլոթինգ՝ ՓԲԸ-ի կողմից՝ համաձայն Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Չարգացման Հիմնադրամի և Գրանթ Թորնթոն Բնասլոթինգ՝ ՓԲԸ-ի միջև 2017թ.-ի օգոստոսի 4-ին կնքված Ծառայությունների մատուցման FREDA/CS-2017/011-4 պայմանագրի:

## Հիմնադրամը

Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Չարգացման Հիմնադրամը ստեղծվել է 2009թ.-ի հունվարի 8-ին Հայաստանում ‘Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին’ ծրագրի ‘Գյուղական ֆինանսավորման’ բաղադրիչի շրջանակներում: Հիմնադրամն առաջարկում է ֆինանսավորում փոքր և միջին չափի գյուղմթերք արտադրողներին,

վերամշակողներին, արտահանողներին, մարքեթինգային գործակալներին և գյուղական արժեքային շղթայում այլ խթանող կազմակերպություններին՝ կապիտալ ներդրման և ստորադաս փոխառությունների միջոցով՝ գույքորդելով այն կառավարման աջակցման տարբեր տեսակներով:

## Ծրագրի նպատակը

Նախագծի նպատակն է աջակցել Հիմնադրամին ավելի լավ ընկալել Հայաստանում կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ոլորտը, ինչի արդյունքում Հիմնադրամն առավել որակյալ կերպով կվերանայի տվյալ ոլորտի ծրագրերը և ի վիճակի կլինի կայացնել տեխնիկապես և տնտեսապես արդարացված ներդրումային որոշումներ:

## Սահմանափակումներ

Ծրագրի շրջանակում, Խորհրդատուի կողմից կատարվել են կաթ արտադրող, ինչպես նաև կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերություններ: Հարցման արդյունքները Խորհրդատուի կողմից չեն ստուգվել, մասնավորապես չի իրականացվել լրացված հարցաթղթիկների կամ հավաքագրված տեղեկատվության հետագա ստուգում:

Այս հաշվետվության շրջանակներում Խորհրդատուի պատասխանատվության սահմանափակումները առավել մանրամասն ներկայացված են Հավելված Բ. Պայմաններ մասում:

# Բաժին 3: ՀՀ մակրոտնտեսական ամփոփ ուսումնասիրություն

01. Ամփոփ բաժին
02. Ներածություն
03. ՀՀ մակրոտնտեսական ամփոփ ուսումնասիրություն
04. Գյուղատնտեսության ոլորտի ամփոփ ուսումնասիրություն
05. Կաթի արտադրություն
06. Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն
07. Տեղական վաճառք/ շուկա
08. Օտարերկյա շուկաներ
09. Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրություն
10. Կաթի վերամշակման և կաթնամթերքի ոլորտի SWOT վերլուծություն

# Համախառն ներքին արդյունք

## Համախառն ներքին արդյունք

ՀՆԱ-ի կառուցվածքում 66%-ից ավելին կազմել են գյուղատնտեսությունը, առևտուրը, հարկերը, շինարարությունը, արդյունաբերությունը և անշարժ գույքի հետ կապված գործունեությունը:


Գյուղատնտեսության ոլորտը ուսումնասիրվող ժամանակաշրջանում ունեցել է ՀՆԱ-ում ամենամեծ տեսակարար կշիռը՝ կազմելով ՀՆԱ-ի 17-20 %-ը 2010-2015 թվականների համար:

2010 թվականից շինարարության ոլորտի մասնաբաժինը անկում է ապրել՝ 17%-ից հասնելով 9%-ի: Միևնույն ժամանակ ան է գրանցել անշարժ գույքի շուկան, որը մինչև 2012 թվականը կազմել է ՀՆԱ-ի մոտ 2.5%-ը, իսկ 2012 թվականից միջինում 8.5%-ը:

2010 թվականից ՀՆԱ աճին զուգընթաց աճել է նաև մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ 1,062.7 հազար դրամից (2,844 ԱՄՆ դոլար) հասնելով 1,674.8 հազար դրամի (3,504.3 ԱՄՆ դոլար), աճելով 57.6%-ով:


Իրական ՀՆԱ-ն և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2010-2015 թթ.-երին ներկայացված է հաջորդ գծապատկերում:

## ՀՆԱ աճի տեմպը և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ 2010-2016 թվականներին



Sources: www.armstat.am

## ՀՆԱ կառուցվածքը 2010-2015 թվականներին



Sources: www.armstat.am

### Դիտարկումներ

- Գյուղատնտեսության ոլորտը ուսումնասիրվող ժամանակաշրջանում ունեցել է ՀՆԱ-ում ամենամեծ տեսակարար կշիռը՝ կազմելով ՀՆԱ-ի 17-20 %-ը 2010-2015 թվականների համար:
- 2010 թվականից մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն 1,062.7 հազար դրամից (2,844 ԱՄՆ դոլար) հասնել է 1,674.8 հազար դրամի (3,504.3 ԱՄՆ դոլար)՝ աճելով 57.6%-ով:

# Բնակչություն և զբաղվածություն

## Բնակչություն


Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանում մշտապես բնակվող բնակչության թիվը ունեցել է անկման միտում: Անկման միջին տարեկան մեծությունը կազմել է -0.4 տոկոս:

Բնակչության թվի անկմանը գուզրնթաց տեղի է ունեցել բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխություն, մասնավորապես, մեծացել է աշխատունակ տարիքից ցածր և աշխատունակ տարիքից բարձր բնակչության թիվը, և նվազել է աշխատունակ տարիքի բնակչությունը: Աշխատանքային ռեսուրսների կազմում տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմում է 63-64%-ը:

Բացասական միտում է նկատվում նաև զբաղվածների շրջանում: 2011 թվականից զբաղվածների թիվը նվազել է մոտ 9%-ով, և 2015 թվականին կազմել է 1,72.6 հազար մարդ:

Աշխատանքային ռեսուրսների կազմը 2010-2015 թթ-երի համար ներկայացված է հաջորդ գծապատկերում՝


## Աշխատանքային ռեսուրսների կազմը



Աղբյուր՝ www.armstat.am

Տնտեսապես ակտիվ բնակչության զբաղվածության միտումների ուսումնասիրությունը 2010-2015 թթ-երի համար ներկայացված է հաջորդ գծապատկերում՝

## Տնտեսապես ակտիվ բնակչության կազմը



Աղբյուր՝ www.armstat.am


## Դիտարկումներ

- Հայաստանում մշտապես բնակվող բնակչության թիվը ունեցել է անկման միտում: Անկման միջին տարեկան մեծությունը կազմել է -0.4 տոկոս:
- 2011 թվականից զբաղվածների թիվը նվազել է մոտ 9%-ով, և 2015 թվականին կազմել է 1,72.6 հազար մարդ:

# Բնակչություն և զբաղվածություն

Զբաղվածների 70%-ից ավելին ներգրավված են գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության, առևտրի, պետական կառավարման և կրթության ոլորտներում:

## Զբաղվածներն ըստ գործունեության ոլորտների




**Դիտարկումներ**

- Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածները կազմել են <<-ում զբաղված բնակչության ամենամեծ տոկոսը: Սակայն վերջինս ունի անկման միտում, եթե 2011 թ-ին զբաղվածների 39 տոկոսը եղել են գյուղատնտեսության ոլորտում, ապա 2015 թ-ին այդ տոկոսը նվազել է 4-ով և կազմել 35 տոկոս:


# Արտարժույթի փոխարժեքներ

## Արտարժույթային փոխարժեքներ

Ստորև ներկայացված են դրամի նկատմամբ Եվրո-ի, ԱՄՆ դոլարի և Ռուսական ռուբլու փոխարժեքների տատանումները 2000-2016 թվականների համար:



Եվրո ԱՄՆ դոլար



Ռուբլի

Նշենք որ Եվրո-ի առավելագույն արժեքը եղել է 2004 թվականին և կազմել 662 դրամ, իսկ ԱՄՆ դոլարինը 2003 թվականին և կազմել 579 դրամ:


## Դիտարկումներ

- Ուսումնասիրվող ժամանակաշրջանում էական փոփոխության է ենթարկվել Ռուսական ռուբլու փոխարժեքը, որն ունեցել անկման միտում գրեթե ողջ ժամանակաշրջանում: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ռուսական ռուբլին արժեզրկվել է 5.72 ՀՀ դրամով կամ ավելի քան 44.2 տոկոսով: Ռուբլու նման արժեզրկումը բացասաբար է ազդել դեպի Ռուսաստան արտահանում իրականացնող ընկերությունների վրա:

# Պետական պարտք և օտարերկրյա ներդրումներ


## Պետական պարտք

ՀՀ համախմբված բյուջեի ծախսերը մշտապես գերազանցում են եկամուտները: Համախմբված բյուջեի ծախսերի գրեթե 97%-ը կազմում է պետբյուջեի ծախսը, իսկ մնացած մասը Կենտրոնական բանկի ծախսը:



Sources: www.armstat.am

Պետական պարտքը 2000 թվականից սկսած կտրուկ աճել է 560%-ով: Հիմնական աճը եղել է 2009 թվականին, երբ պետական պարտքը 1,577 մլն. ԱՄՆ դոլարից հասավ 2,967 մլն. ԱՄՆ դոլար:




Sources: www.armstat.am

## Օտարերկրյա ուղղակի ներդրումներ

Օտարերկրյա ուղղակի ներդրումները 2011 թվականից նվազել են գրեթե 3.5 անգամ հասնելով 71,778.5 մլն դրամի:

### ՕՈՒՆ-ների կառուցվածքը 2011-2016թթ.



Sources: www.armstat.am

Իրական հատվածում ընդամենը ներդրումների հոսքերով 2015 թվականին առաջատար էին Արգենտինան 47.1 մլրդ դրամ ցուցանիշով (օդային տրանսպորտի գործունեություն, բուսաբուծություն և հարակից ծառայություններ) և Շվեյցարիան 43.1 մլրդ դրամ ցուցանիշով (հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում): Միևնույն ժամանակ Ընդամենը ներդրումների գուտ հոսքերի տեսանկյունից հաջորդ տեղում է Ռուսաստանը (32 մլրդ դրամ), Լյուքսեմբուրգը (28.4 մլրդ դրամ) և Գերմանիան (26.8 մլրդ դրամ):

Ուղղակի ներդրումների գուտ հոսքերը դիտարկելիս Շվեյցարիային (41.4 մլրդ դրամ) հաջորդում է Ռուսաստանը (37 մլրդ դրամ), Լյուքսեմբուրգը (28.7 մլրդ դրամ) և Արգենտինան (12.5 մլրդ դրամ): Միևնույն ժամանակ ուղղակի ներդրումների գուտ հոսքերի տեսանկյունից ամենամեծ բացասական ցուցանիշը գրանցել են Միացյալ Թագավորությունները (-50.7 մլրդ դրամ), Ֆրանսիան (-40.5 մլրդ դրամ) և Գերմանիան (-29.2 մլրդ դրամ):


# Արտաքին առևտրային հաշվեկշիռ

2010-2011 թվականներին ՕՈՒՆ-ների շատ մեծ մաս ուղղվել է հիմնային մետաղների արտադրության ոլորտ, մոտ 65,000 մլն դրամ, ինչը կազմել է ընդհանուր ՕՈՒՆ ներքին մոտ 25%-ը, սակայն հաջորդ տարիներին այն գրեթե չի եղել: 2012 թվականին գրեթե կրկնակի ավելացել է հեռահաղորդակցության ոլորտի ներդրումները, սակայն 2013 թվականին այդ ներդրումները կրճատվել են 2.5 անգամ:

2015 թվականներին հեռահաղորդակցության, հիմնային մետաղների ոլորտներ ուղղված ներդրումները եղել են բացասական միասին կազմելով մոտ -60,000 մլն դրամ: Ավելացել է էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում և հանքարդյունաբերական ոլորտներ ուղղված ներդրումները:

Վերջին տարիներին նկատվում է արտահանման և ներմուծման ծավալների կայուն աճ, սակայն 2015 թվականին մոտ 1,200 մլն ԱՄՆ դոլարով կրճատվել է ներմուծման ծավալը, իսկ արտահանման ծավալը հավասարվել է 2013 թվականի ծավալին, կազմելով 1,485 մլն ԱՄՆ դոլար:

## Արտահանում և ներմուծում



Sources: www.armstat.am

Հանքահումքային արտադրանքը մշտապես կազմել է ներմուծման ծավալի 32-33%-ը, իսկ արտահանման ծավալի 20% -ը և համարվում է արտահանման և ներմուծման ծավալով ամենախոշոր ապրանքախումբը: Վերջին տարիներին նկատվում է ոչ թանկարժեք մետաղների և իրերի արտահանման բացասական միտում 27%-ից հասնելով 15%-ի, միևնույն ժամանակ նույն ապրանքախմբի ներմուծման ծավալները կայուն են մնացել տասանվելով 7-8% միջակայքում: Հակառակ վերոնշյալ ապրանքախմբի պատրաստի սննդի արտահանումն ավելացել է 14%-ից հասնելով 22%, ինչպես նաև մի փոքր ավելացել է ներմուծումը 8%-ից դառնալով 10%:

Մնացած ապրանքախմբերի մասին տեղեկատվությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակներում:

## Ներմուծումն ըստ հիմնական ապրանքախմբերի մլն ԱՄՆ դոլար

Ապրանքախմբի տեսակ	2011	2012	2013	2014	2015
Հանքահումքային արտադրանք	822 20%	916 21%	872 20%	858 19%	639 20%
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	566 14%	602 14%	581 13%	598 14%	414 13%
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից	215 5%	179 4%	295 7%	303 7%	118 4%
Բուսական ծագման արտադրանք	242 6%	259 6%	245 6%	239 5%	192 6%
Քիմիական արտադրության ապրանքներ	303 7%	326 8%	359 8%	351 8%	303 9%
Պատրաստի սննդի արտադրանք	348 8%	356 8%	396 9%	370 8%	315 10%
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	326 8%	309 7%	297 7%	327 7%	251 8%
Այլ	#### 32%	#### 31%	#### 31%	#### 31%	#### 31%

Sources: www.armstat.am



# Արտաքին առևտրային հաշվեկշիռ

## Արտահանումն ըստ հիմնական ապրանքախմբերի մլն ԱՄՆ դոլար

Ապրանքախմբի տեսակ	2011	2012	2013	2014	2015
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից	196 15%	173 13%	188 13%	230 15%	194 13%
Ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից	365 27%	342 25%	309 21%	303 20%	225 15%
Հանքահումքային արտադրանք	404 30%	403 29%	407 28%	386 25%	477 32%
Սեբենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	33 2%	41 3%	21 1%	24 2%	16 1%
Պատրաստի սննդի արտադրանք	184 14%	255 18%	310 21%	338 22%	325 22%
Մանածագործական իրեր	8 1%	19 1%	39 3%	50 3%	68 5%
Այլ	144 11%	147 11%	205 14%	216 14%	180 12%


Արտահանման հիմնական գործընկերներ երկրներն են ՌԴ-ն (244.9 մլն դրամ), Չինաստանը (165.3 մլն դրամ), Գերմանիան (140.2 մլն դրամ), Վրաստանը (125.3 մլն դրամ), Կանադան (108.3 մլն դրամ), որոնք կազմում են արտահանման ծավալի 53%-ը:

Ներկրման հիմնական գործընկեր երկրներն են ՌԴ-ն (942.3 մլն դրամ), Չինաստանը (316 մլն դրամ), Գերմանիան (202 մլն դրամ), Թուրքիան (137 մլն դրամ), Իրանի իսլամական հանրապետությունը (198 մլն դրամ), Իտալիան (148.5 մլն դրամ), որոնք կազմում են ներկրման 60%-ը:


## Դիտարկումներ

- Պատրաստի սննդի արտահանում և ներմուծում ծավալներ
  - bullet 2 text
  - bullet 3 text

## Ներմուծումն ըստ հիմնական գործընկեր երկրների



## Արտահանումն ըստ հիմնական գործընկեր երկրների



# Բաժին 4: Գյուղատնտեսության ոլորտի ամփոփ ուսումնասիրություն

01. Ամփոփ բաժին
02. Ներածություն
03. ՀՀ մակրոտնտեսական ամփոփ ուսումնասիրություն
- 04. Գյուղատնտեսության ոլորտի ամփոփ ուսումնասիրություն**
05. Կաթի արտադրություն
06. Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն
07. Տեղական վաճառք/ շուկա
08. Օտարերկյա շուկաներ
09. Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրություն
10. Կաթի վերամշակման և կաթնամթերքի ոլորտի SWOT վերլուծություն

# Գյուղատնտեսական արտադրանք


## Գյուղատնտեսության համախառն արտադրանքը

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալները՝ արտահայտված ընթացիկ գներով վերջին տարիների ընթացքում փոքր ինչ աճել են:

29% կտրուկ աճ է արձանագրվել 2011 թ-ին 2010-ի համեմատ և 10 % նվազում 2016թ-ին 2015-ի նկատմամբ:

Գյուղատնտեսական արտադրանքի համախառն տարեկան աճի տեմպը 2010-2016 թթ-ի համար կազմել է 6%:

2017 թ-ի 8 ամիսների կուտակային ցուցանիշը գրեթե 10%-ով զիջում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված ցուցանիշը:



Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am>, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010-2017թթ-ին (Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն)


Գյուղատնտեսական արտադրանքի երկու խոշոր բաղադրիչները՝ բուսաբուծությունը և անասնաբուծությունը, 2016 թ-ին ընդհանուր գյուղատնտեսական արտադրանքի մեջ համապատասխանաբար կազմել են

57% և 43 %: Նշենք, որ այս երկու ցուցանիշները բավականին փոխվել են 2010 թ-ի համեմատ, երբ վերջիններս համապատասխանաբար կազմել են 62% և 38%:

## Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքը 2016 թվականին՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի

2016թ-ին գյուղատնտեսական արտադրանքի 50% բաժին է ընկել Արարատի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերին, որոնցից առաջատարը Արմավիրի մարզն է:

Ամենափոքր մասնակցությունը արձանագրել է Երևան քաղաքը, իսկ մարզերից՝ Վայոց Ձորը, վերջիններիս մասնաբաժինները ընդհանուր արտադրանքի մեջ համապատասխանաբար կազմել են 1% և 2%:




Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am>, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին (Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն)

# Գյուղատնտեսական արտադրանք

## Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքը 2015 թվականին՝ ըստ գյուղատնտեսական ապրանքատեսակների խոշոր խմբերի

2015թ-ին գյուղատնտեսության արտադրանքի ամենամեծ մասը բաժին է ընկել մսի արտադրությանը՝ 20.4%, իսկ ամենափոքրը բրդի արտադրությանը՝ 0.2%:

Կաթի արտադրությունը կազմել է ընդհանուրի 11%-ը, ինչը մի փոքր նվազել է նախորդ տարվա նկատմամբ, երբ վերջինս կազմել է 11.4%:



Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am>, Հայաստանը թվերով, 2016 (Գյուղատնտեսություն)


### Դիտարկումներ

- 2016թ-ին 2015թ-ի համեմատ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալները՝ արտահայտված ընթացիկ գներով նվազել են 10%-ով:
- Գյուղատնտեսական արտադրանքի համախառն տարեկան աճի տեմպը 2010-2016 թթ-ի համար կազմել է 6%:
- 2016թ-ին գյուղատնտեսական արտադրանքի ամենամեծ մասնաբաժինն է ունեցել Արմավիրը՝ 18%, իսկ ամենափոքրը Երևան քաղաքը՝ 1%:
- 2016 թ-ին անասնաբուծությունը ընդհանուր գյուղատնտեսական արտադրանքի մեջ կազմել է 43%:
- 2015թ-ին կաթի արտադրությունը կազմել է գյուղատնտեսական համախառն արտադրանքի 11%-ը:

# Գյուղատնտեսության ոլորտում առկա ռեսուրսները

## Մարդկային ռեսուրսները՝ գյուղատնտեսության ոլորտում

Ստորև բերված գրաֆիկում ամփոփված է զբաղվածների թիվը 2011-2015թթ-ն ընդգրկող ժամանակահատվածի համար՝ ըստ տնտեսական գործունեության հիմնական խմբերի: Նշված ժամանակահատվածի բոլոր տարիների համար զբաղվածների ամենաշատ թիվը բաժին է ընկնել գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտին: 2015թ-ին այս ոլորտում աշխատող անձանց թիվը կազմել է ընդհանուր զբաղվածների 35%-ը:



- Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն
- Մշակող արդյունաբերություն
- Սեճածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում
- Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն
- Կրթություն
- Այլ

Աղբյուր: ԶԳ ԱԿԾ, <http://armstat.am>, Հայաստանը թվերով, 2014-2016թթ (Աշխատանքի շուկա)

Վերջին հինգ տարիների ընթացքում գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտում զբաղվածների թիվը ունի նվազման միտում:

Այսպես 2015թ-ին այս ոլորտում զբաղվածների թիվը 4%-ով նվազել է նախորդ տարվա համեմատ և 17%-ով 2011թ-ի համեմատ:

## Տեխնիկական ռեսուրսները՝ գյուղատնտեսության ոլորտում

Գյուղատնտեսական տեխնիկայի մեջ ամենամեծ քանակը բաժին է ընկել տրակտորներին և բեռնատար ավտոմեքենաներին, որը կազմել է ընդհանուրի 60%-ը:

## Գյուղատնտեսական տեխնիկայի քանակը՝ 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ (հատ)

Տեխնիկայի տեսակը	Առկա քանակը	Սարքին վիճակում	Սարքինության մակարդակը
Տրակտորներ	15,239	11,960	78%
Բեռնատար ավտոմեքենաներ	15,049	11,509	76%
Հացահատիկահավաք կոմբայններ	1,358	1,031	76%
Տրակտորային կցասայլակներ	6,195	5,365	87%
Տրակտորային խոտհնձիչներ	2,112	1,772	84%
Կերահավաք կոմբայններ	421	308	73%
Հատիկագտիչ մեքենաներ	422	360	85%
Տրակտորային շարքացաններ	1,884	1,599	85%
Տրակտորային գութաններ	3,900	3,398	87%
Կուլտիվատորներ	2,318	1,949	84%
Հավաքիչ-մանլիչներ	1,738	1,484	85%
<b>ԸՆԴԱՄԵՆՆԸ</b>	<b>50,636</b>	<b>40,735</b>	<b>80%</b>

Աղբյուր: ԶԳ ԱԿԾ, <http://armstat.am>, Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ

## Դիտարկումներ


- 2015թ-ին գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտում զբաղվածների թիվը 4%-ով նվազել է նախորդ տարվա համեմատ և 17%-ով 2011թ-ի համեմատ: 2015թ-ին այս ոլորտում աշխատող անձանց քանակը կազմել է ընդհանուր զբաղվածների 35%-ը:
- 2017թ-ի հունվարի 1-ի դրությամբ ընդհանուր գյուղատնտեսական տեխնիկայի թիվը <<- ունի կազմել է 20,636 հատ, իսկ սարքինության միջին մակարդակը՝ 80%:

# Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գներ

## Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ

Ինչպես սպառողական ապրանքների, այնպես էլ գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գները տարեց տարի տատանվում են՝ արձանագրելով միմյանցից անկախ աճի և նվազման միտումներ:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գները կտրուկ աճ են արձանագրել 2010 և 2011 թթ-ին՝ համապատասխանաբար 32% և 17.1%, իսկ 2015թ-ին կտրուկ նվազում՝ 19.5%-ով, մինչդեռ սպառողական գների փոփոխությունը դիտարկված ժամանակաշրջանի համար եղել է համեմատաբար կայուն:



Աղբյուր: ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am>, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010-2016թթ-ին (Գներ և սակագներ)

2016 թ-ին սպառողական ապրանքների գները 2015 թ-ի նկատմամբ նվազել են 1.4 %-ով, իսկ գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գները 2.2 %-ով:

## Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսները ըստ մարզերի 2010-2016 թթ-ի համար: 2016թ-ին գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գները բոլոր մարզերում, բացառությամբ Արարատի և Արմավիրի նվազել են: Վերջիններում գների աճը նախորդ տարվա համեմատ համապատասխանաբար կազմել է 9% և 10%:

### Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսները ըստ մարզերի

	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Արագածոտն	124	133	97	93	102	80	92
Արարատ	137	97	99	103	95	67	109
Արմավիր	141	103	94	101	92	56	110
Գեղարքունիք	125	140	90	98	108	89	90
Լոռի	117	126	98	97	108	91	91
Կոտայք	130	121	94	99	105	89	94
Շիրակ	127	124	95	101	108	93	87
Սյունիք	127	120	100	97	104	95	93
Վայոց Ձոր	134	105	80	103	101	90	97
Տավուշ	120	126	100	98	101	100	91

Աղբյուր: ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am>, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010-2016թթ-ին (Գներ և սակագներ)

## Դիտարկումներ

- 2016 թ-ին սպառողական ապրանքների գները 2015 թ-ի նկատմամբ նվազել են 1.4 %-ով, իսկ գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գները 2.2 %-ով:
- 2016թ-ին գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գները նախորդ տարվա համեմատ աճել են միայն Արարատի և Արմավիրի մարզերում՝ համապատասխանաբար 9% և 10%-ով:

# Հարկային միջավայրի ուսումնասիրություն


«Հ հարկային օրենսդրությունը նախատեսում է հարկային արտոնություններ գյուղացիական մթերքների ստացման նախնական փուլում, ուստի հարկային ոլորտի ուսումնասիրությունը իրականացվել է՝ ելնելով տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտից: Մասնավորապես տարանջատվել են հետևյալ ոլորտները՝

- Կաթի արտադրություն և
- Կաթի վերամշակում, կաթնամթերքի արտադրություն:

Հարկային ուսումնասիրությունն իրականացվել է ըստ գործող հարկային ռեժիմների:

Կաթի արտադրության, կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության հարկային ռեժիմները ներկայացված են հաջորդ գծապատկերում՝ ըստ հարկային բեռի ավելացման:

## Ըստ գործունեության և դրա ծավալի գործող հարկային ռեժիմները



## Շահութահարկ

Շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տաս տոկոսը:

Մույն հոդվածի իմաստով՝ գյուղատնտեսական արտադրանք են համարվում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող՝

- տեխնիկական մշակաբույսերը.
- դաշտային մշակման կերային մշակաբույսերը.
- կերարտադրության այլ արտադրանքը.
- անասնաբուծության արտադրանքը.
- ոչխարաբուծության և այծաբուծության արտադրանքը:

Համաձայն «Հ հարկային օրենսդրության, կաթի արտադրության ոլորտը, որը ներառում է խոշոր և մանր եղջերավոր կենդանիներից կաթի ստացումը ենթակա չէ հարկման, ինչպես Շահութահարկով, այնպես էլ Ավելացված Արժեքի Հարկով:

Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ոլորտը ելնելով ընկերության գործունեության ծավալներից կարող է հարկվել, ինչպես Շրջանառության հարկով, այնպես էլ Ընդհանուր հարկային ռեժիմով:

## Շրջանառության հարկ

Շրջանառության հարկ վճարող կարող են համարվել անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի (այսուհետ՝ իրացման շրջանառություն), չի գերազանցել 115.0 մլն դրամը:

# Հարկային միջավայրի ուսումնասիրություն

## Ավելացված արժեքի հարկ

Ավելացված արժեքի հարկը անուղղակի հարկ է, որը կարող է հաշվանցվել հարկ վճարողի կողմից արդեն վճարված ԱԱՀ-ի դեբետային մնացորդի հետ:

Հիմք ընդունելով, որ կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ոլորտի ընկերությունների հիմնական հումքը կաթ արտադրողներից կատարված կաթի ձեռքբերումներն են, որոնք ազատված են ԱԱՀ-ից կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերությունները կարող են ԱԱՀ դեբետային մնացորդի խնդիր ունենալ:

## Դիտարկումներ

- Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ, մասնավորապես խոշոր և մանր եղջերավորներից ստացված կաթի իրացումից ստացված եկամուտը ենթակա չէ հարկման Շահութահարկով:
- Շրջանառության հարկով կիրառվում է 3.5 տոկոս հարկային դրույքաչափ իրացման շրջանառության վրա, որը նշանակում է որ Ընկերությունը պետք է գործի առնվազն 17.5 տոկոս շահութաբերությամբ՝ շահութահարկի 20 տոկոս հարկվելուն համահավասար լինելու համար:
- Ընդհանուր հարկային ռեժիմի կիրառման պարագայում, երբ ընկերության իրացման շրջանառությունը գերազանցում է 115 մլն ՀՀ դրամը, կիրառվում է շահութահարկի 20 տոկոս և ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափ, որն անուղղակի հարկ է և ենթակա է հաշվանցման:



# Իրավական միջավայրի ուսումնասիրություն

## Անասնաբուժություն, կենդանական ծագման մթերք և հումք

Անասնաբուժության ոլորտը նաև վերահսկողություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության տարածքով կենդանիների, կենդանական ծագման մթերքի և հումքի, լրացակերերի, անասնաբուժական դեղերի տարանցիկ փոխադրման, կենդանական ծագման մթերքի և հումքի, կերերի, կերային խառնուրդների, լրացակերերի, դրանց հետագա վերամշակման, անասնաբուժական դեղերի ներմուծման և արտահանման, ինչպես նաև կենդանական ծագման մթերքի իրացման կետերում անասնաբուժասանիտարական փորձաքննության նկատմամբ:

### Ոլորտը կարգավորվում է

#### Օրենքներ

1. ՀՀ օրենքը անասնաբուժության մասին,
2. ՀՀ օրենքը ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին,
3. ՀՀ օրենքը սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին,
4. ՀՀ օրենքը կերի մասին:

#### Որոշումներ

ՀՀ կառավարության որոշումը կերերի և կերային հավելումների արտադրությանը, ինչպես նաև կերերի և կերային հավելումների օգտագործմանը, փոխադրմանը և պահպանմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին

## Սննդամթերքի (կաթի և կաթնամթերքի) անվտանգություն

Սննդամթերքի անվտանգությունը սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, սննդի շղթայի և առևտրի ու հանրային սննդի ոլորտում ծառայությունների մատուցման փուլերում անվտանգությանն առնչվող հարաբերությունները կարգավորող, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող մարդու առողջության պաշտպանության երաշխիքները ամրագրող և սննդամթերքի և սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի վնասակար ու վտանգավոր ազդեցությունից պաշտպանող ոլորտ է:

Ոլորտը կարգավորվում է՝

#### Օրենքներ

1. ՀՀ օրենքը համապատասխանության գնահատման մասին
2. ՀՀ օրենքը ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին
3. ՀՀ օրենքը սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին
4. ՀՀ օրենքը առևտրի և ծառայությունների մասին
5. Հայաստանի Հանրապետության օրենքը սպառողների իրավունքների պաշտպանության մասին

#### Որոշումներ

1. ՀՀ կառավարության որոշումը կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին
2. ՀՀ կառավարության որոշումը արգելված սննդային հավելումների ցանկը հաստատելու մասին

# Բաժին 5: Կաթի արտադրություն

01. Ամփոփ բաժին
02. Ներածություն
03. ՀՀ մակրոտնտեսական ամփոփ ուսումնասիրություն
04. Գյուղատնտեսության ոլորտի ամփոփ ուսումնասիրություն
- 05. Կաթի արտադրություն**
06. Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն
07. Տեղական վաճառք/ շուկա
08. Օտարերկյա շուկաներ
09. Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրություն
10. Կաթի վերամշակման և կաթնամթերքի ոլորտի SWOT վերլուծություն

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների ուսումնասիրություն

Կաթի արտադրության ուսումնասիրության տեսանկյունից առաջնային է խոշոր եղջերավոր կենդանիների ուսումնասիրությունը, որը ներառում է դրանց հիմնական տեսակների, վերաբաղյալ գործընթացի, առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Այս նպատակով Խոշորդատուն իրականացրել է ՀՀ-ում **ԽԵԿ-ի ուսումնասիրություն**, որն իր մեջ ներառել է հետևյալ հիմնական բաժինները՝

- Խոշոր եղջերավոր կենդանիների ամփոփ նկարագիրը,
- Խոշոր եղջերավոր կենդանիների հիմնական տեսակները ՀՀ-ում,
- Խոշոր եղջերավոր կենդանիների վերաբաղյալությունը:

## Խոշոր եղջերավոր կենդանիների ամփոփ նկարագիրը

### Խոշոր եղջերավոր կենդանիների բնութագիրը

Կովերի կյանքի միջին տևողությունը՝ 20 տարի (երբեմն՝ 35)

Ցուլերի կյանքի միջին տևողությունը՝ 15-20 տարի

Կաթնատու կովերի տնտեսական օգտագործումը՝ 12-13 տարի

Վերաբաղյալության համար տոհմային կենդանիների օգտագործման ժամկետը՝ 5 - 10 տարի

### Նախիրի տեսակը

Խոշոր եղջերավոր կենդանիների նախիրները լինում են երկու տեսակի՝ տոհմային և ապրանքային: Այս երկու տեսակի նախիրների միջև հիմնական տարբերությունը վերջիններիս մասնագիտացման ուղղությունն է:

Տոհմային նախիրների հիմնական նպատակն է բարելավել բուծվող տեսակի տոհմային և ապրանքային հատկանիշները: Վերջինիս աշխատանքը ուղղված է ԽԵԿ-ի մթերատվության բարձրացմանը, ժառանգական հատկությունների


կատարելագործմանը և տոհմային կենդանիների արդյունավետ օգտագործմանը: Այս նախիրներում հիմնականում բուծում են տոհմային մատղաշ, որը օգտագործում են ապրանքային նախիրները համալրելու նպատակով, և արտադրող կենդանիներ, որոնք օգտագործվում են արհեստական սերմնավորման կայաններում: Տոհմային աշխատանքի արդյունավետ կազմակերպումը հնարավորություն է ընձեռում արագ հասնել կենդանիների մթերատվության բարձրացմանը:

Ապրանքային նախիրների հիմնական նպատակը արտադրանքի (կաթ, միս) արտադրությունն է:

### Հարցման արդյունքների ամփոփում

Հարցմանը մասնակցած խոշոր եղջերավոր կենդանիների բուծմամբ զբաղվող 4 տնտեսությունները նշել են թե իրենց կողմից բուծվող նախիրները ընդունված որ տեսակներին են պատկանում: Վերջիններիս կողմից տրված պատասխանները ամփոփված են ստորև բերված գրաֆիկում:

Ներկայացված գրաֆիկը վկայում է այն մասին, որ ՀՀ-ում ԽԵԿ-ի բուծմամբ զբաղվող տնտեսություններն ավելի հակված են զբաղվել տոհմային նախիրների բուծմամբ: Այս ընտրությունը պատահական չէ, քանի որ ինչպես արդեն նշվեց տոհմային նախիրները նպաստում են կենդանիների մթերատվության բարձրացմանը:



Տնտեսություններից մեկը՝ Արզնու տոհմային ԹՏԽ ԲԲԸ-ն միաժամանակ զբաղվում է ինչպես տոհմային, այնպես էլ ապրանքային նախիրների բուծմամբ:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների ուսումնասիրություն


## Խոշոր եղջերավոր կենդանիների ցեղի մթերատվության ուղղությունը

Ըստ մթերատվության ուղղության խոշոր եղջերավոր կենդանիները դասակարգվում են երեք խմբի՝

- Կաթնային
- Մսային
- Երկակի (համակցված)՝ կաթնամսային և մսակաթնային

## Հարցման արդյունքների ամփոփում

Հարցմանը մասնակցած խոշոր եղջերավոր կենդանիների բուծմամբ զբաղվող 4 տնտեսությունները նշեն են թե իրենց կողմից բուծվող խոշոր եղջերավոր կենդանիների ցեղատեսակները մթերատվության ինչ ուղղություն ունեն: Հարցման արդյունքները ամփոփված են ստորև բերված աղյուսակում, համաձայն որի հարցմանը մասնակցած ընկերությունների նախիրներում գերակշռում են կաթնատու ուղղություն ունեցող ԽԵԿ-ի ցեղատեսակները:



## Խոշոր եղջերավոր կենդանիների պահվածքի համակարգերը և ձևերը

Հայաստանի Հանրապետությունում, կախված բնատնտեսական առանձնահատկություններից, հիմնականում կիրառվում են խոշոր եղջերավոր կենդանիների պահվածքի երկու համակարգեր՝ **մսուրա-արոտային և շուրջտարյա-մսուրային**:

Լեռնային և նախալեռնային գոտիների տնտեսությունների մեծամասնություններում, որոնք ապահովված են արոտավայրերով, հիմնականում կիրառում են մսուրա-արոտային պահվածքը, համապատասխանաբար՝ 200-220 և 140-160 օր տևողությամբ:

Ցածրադիր և նախալեռնային գոտու քաղաքամերձ տնտեսությունների մի մասում, որոնք չունեն ամառային արոտահանդակներ, ամբողջ գլխաքանակը կամ հիմնականում կշուր նախիրը շուրջ տարի պահում են մսուրային պայմաններում:

Կովերի շուրջտարյա մսուրային պահվածքը նպաստում է կաթնատվության ավելացմանը, սակայն մսուրա-արոտային պահվածքը հնարավորություն է տալիս նվազ նյութական և աշխատանքային ծախսումներով կաթ արտադրել: Կովերի մսուրա-արոտային պահվածքը նպաստում է նաև բարձրորակ կաթի ստացմանը և պտղատվության բարձրացմանը:

Նշված երկու համակարգի դեպքում էլ գոյություն ունի խոշոր եղջերավոր կենդանիների պահվածքի երկու ձև՝ **կապովի և անկապ**:

ԽԵԿ-ի կապովի պահվածքի դեպքում յուրաքանչյուր կենդանուն հատկացվում է առանձին կանգնելատեղ, որտեղ առկա են շղթայից պատրաստված կապը, կերամանը և ջրախմբը: Կապովի պահվածքը թույլ է տալիս առավել ճիշտ կազմակերպել կովերի նորմավորված կերակրումը, լիակյծումը, հետևել առողջական վիճակին և ապահովել անհրաժեշտ խնամքը:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների ուսումնասիրություն

ԽԵԿ-ի անկապ պահվածքի դեպքում կենդանիներն անասնագոմում պահվում են խմբերով, առանց անհատական կանգնելատեղերի և կենդանիները ազատ տեղաշարժվում են շենքում և զբոսարանում:

**ՀՀ-ում գերազանցապես կիրառվում է կովերի կապովի պահվածքը:**

## Դիտարկումներ

- Կաթնատու կովերի տնտեսական օգտագործումը՝ 12-13 տարի է, իսկ վերարտադրության համար տոհմային կենդանիների օգտագործման ժամկետը՝ 5 - 10 տարի:
- Խոշոր եղջերավոր կենդանիների նախիրները լինում են երկու տեսակի՝ տոհմային և ապրանքային: Հարցման արդյունքները (4 տնտեսությունների համար) վկայում են, որ ՀՀ-ում ԽԵԿ-ի բուծմամբ զբաղվող տնտեսություններն ավելի հակված են զբաղվել տոհմային նախիրների բուծմամբ:
- Ըստ մթերատվության ուղղության խոշոր եղջերավոր կենդանիների ցեղերը դասակարգվում են երեք խմբի՝ կաթնային, մսային, երկակի (համակցված)՝ կաթնամսային և մսակաթնային: Հարցմանը մասնակցած 4 ընկերությունների նախիրներում գերակշռում են կաթնատու ուղղություն ունեցող ԽԵԿ-ի ցեղատեսակները:
- ՀՀ-ում, հիմնականում կիրառում են խոշոր եղջերավոր կենդանիների պահվածքի երկու համակարգ՝ մսուրա-արոտային և շուրջտարյա-մսուրային: Երկու համակարգի դեպքում էլ կիրառում են պահվածքի երկու ձև՝ կապովի և անկապ: ՀՀ-ում գերազանցապես կիրառվում է կովերի կապովի պահվածքը:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների ուսումնասիրություն

## ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների հիմնական ցեղատեսակները

Ցեղատեսակը	Տեսակի ամփոփ նկարագիրը
<b>Կովկասյան գորշ</b>	<p>Ուղղությունը՝ կաթնամսատու</p> <p>Կովերի կենդանի զանգվածը՝ 500-600 կգ</p> <p>Ցուլերի կենդանի զանգվածը՝ 800-900 կգ</p> <p>Տարեկան միջին կաթնատվությունը՝ 2,000-2,500 կգ</p> <p>Կաթնատվությունը տոհմային տնտեսություններում՝ 3,000-4,000 կգ</p> <p>Կաթի յուղայնությունը՝ 3.8-3.9%</p> <p>Սպանդային ելքը՝ 50-55%</p> <p>ՀՀ-ում գերակշռող տեսակն է:</p>
<b>Սիմենթալ</b>	<p>Ուղղությունը՝ կաթնամսատու</p> <p>Կովերի կենդանի զանգվածը՝ 600-700 կգ</p> <p>Ցուլերի կենդանի զանգվածը՝ 1,000-1,250 կգ</p> <p>Տարեկան միջին կաթնատվությունը՝ 3,500-4,000 կգ</p> <p>Լավագույնը կաթնատվությունը՝ 5,000 կգ</p> <p>Կաթի յուղայնությունը՝ 3.9-4.0%</p> <p>Սպանդային ելքը՝ 58-63%</p>
<b>Հոլշտեյն (հոլշտին)</b>	<p>Ուղղությունը՝ կաթնային</p> <p>Կովերի կենդանի զանգվածը՝ 600-700 կգ</p> <p>Ցուլերի կենդանի զանգվածը՝ 1,000-1,200 կգ</p> <p>Տարեկան միջին կաթնատվությունը՝ 8,000-10,000 կգ</p> <p>Լավագույնը կաթնատվությունը՝ 25,000-30,000 կգ</p> <p>Կաթի յուղայնությունը՝ 3.3-3.6%</p> <p>Աշխարհում ամենակաթնատու տավարի ցեղն է:</p>


## ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների հիմնական ցեղատեսակները

Ցեղատեսակը	Տեսակի ամփոփ նկարագիրը
<b>Շվից</b>	<p>Ուղղությունը՝ կաթնամսատու</p> <p>Կովերի կենդանի զանգվածը՝ 550-600 կգ</p> <p>Ցուլերի կենդանի զանգվածը՝ 800-950 կգ</p> <p>Տարեկան միջին կաթնատվությունը՝ 4,000-45,00 կգ</p> <p>Ամենաբարձր կաթնատվությունը՝ 10,000 կգ</p> <p>Կաթի յուղայնությունը՝ 3.7-3.9%</p> <p>Սպանդային ելքը՝ 50-60%</p>
<b>Սևաբլետ</b>	<p>Ուղղությունը՝ կաթնային</p> <p>Կովերի կենդանի զանգվածը՝ 450-650 կգ</p> <p>Ցուլերի կենդանի զանգվածը՝ 850-1,100 կգ</p> <p>Տարեկան միջին կաթնատվությունը՝ 4,200-4,500 կգ</p> <p>Կաթնատվությունը լավագույն տնտեսություններում՝ 5,000-6,000 կգ</p> <p>Կաթի յուղայնությունը՝ 3.4-4.1%</p> <p>Սպանդային ելքը՝ 53-55%</p>

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների ուսումնասիրություն

## Հարցման արդյունքների ամփոփում

Հարցմանը մասնակցած խոշոր եղջերավոր կենդանիների բուծմամբ զբաղվող 4 տնտեսությունները նշեն են, թե իրենց նախիրներում խոշոր եղջերավոր կենդանիների որ ցեղատեսակներն են բուծվում: Տնտեսությունների կողմից տրամադրված պատասխանները ամփոփված են ստորև բերված գրաֆիկում:



Հարցման արդյունքները և ս վկայում են այն մասին, որ ՀՀ-ում ԽԵԿ-ի ամենատարածված ցեղատեսակը Կովկասյան գորշն է, սակայն ներկայացված գրաֆիկից կարելի է նկատել, որ ԽԵԿ-ի բուծմամբ զբաղվող տնտեսությունները աստիճանաբար անցում են կատարում ավելի բարձր մթերատվությամբ ցեղատեսակների բուծմանը, ինչպիսին են Հոլտեյնը և Սիմենթալը:

Այնուամենայնիվ, մթերատվության բարձր ունակությամբ օժտված կենդանիները տնտեսավարողների համար դեռևս այնքան էլ հասանելի չեն: Նրանց ազատ կերպով հասանելի չէ նաև բարձրարժեք տոհմային կենդանիների հետ իրենց կենդանիների տրամախաչման հնարավորությունը՝ վերջիններիս

Գենային հատկանիշների բարելավման նպատակով: Ներկայումս նման կենդանիներ հիմնականում ներմուծվում են կառավարության կողմից և տրամադրվում առանձին տնտեսավարողներին: Առկա չէ նման կենդանիների վաճառքի բաց շուկա, և փոքր ու միջին տնտեսավարողներն չեն կարող իրենց թույլ տալ ներմուծել նման կենդանիներ:

## Դիտարկումներ

- ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների բուծվող հիմնական ցեղատեսակներն են Կովկասյան գորշը, Սիմենթալը և Ծվիցը, որոնք ունեն կաթնամսատու ուղղվածություն, ինչպես նաև Հոլտեյնը (հոլտին) և Սևաբղետը, որոնք ունեն կաթնային ուղղվածություն:
- Հարցման արդյունքները (4 տնտեսությունների համար) վկայում են այն մասին, որ ՀՀ-ում ԽԵԿ-ի ամենատարածված ցեղատեսակը Կովկասյան գորշն է, սակայն ԽԵԿ-ի բուծմամբ զբաղվող տնտեսությունները հակված են անցում կատարել ավելի ավելի բարձր մթերատվությամբ ցեղատեսակների բուծմանը, ինչպիսին են Հոլտեյնը և Սիմենթալը, սակայն նման ցեղատեսակների ներմուծումը փոքր ու միջին տնտեսությունների կողմից բավականին դժվար է, իսկ ՀՀ-ում առկա չէ նման կենդանիների վաճառքի բաց շուկա:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների ուսումնասիրություն

## Խոշոր եղջերավոր կենդանիների վերարտադրությունը

### Խոշոր եղջերավոր կենդանիների բուծման և գույզավորման տեսակները

Տավարաբուծության մեջ կիրառում են բուծման երեք տարբերակ՝ մաքուր (կամ ներցեղային) բուծում, տրամախաչում և հիբրիդացում:

- Մաքուր կամ ներցեղային բուծումը միևնույն ցեղին պատկանող կենդանիների գույզավորումն է:
- Տրամախաչման մեթոդի դեպքում գույզավորվող կենդանիները պատկանում են տարբեր ցեղերի:
- Հիբրիդացումը տարբեր տեսակի կենդանիների արու և էգ կենդանիների գույզակցումն է:

Կիրառվում է խոշոր եղջերավոր կենդանիների բեղմնավորման երկու տարբերակ՝ **բնական գույզավորում** և **արհեստական սերմնավորում**: Իր հերթին տարանջատում են բնական գույզավորման երեք տարբերակ՝ ձեռնքաշ (տոհմային տնտեսություններում), խմբակային կամ ջոկային (տոհմային տնտեսություններում) և ազատ գույզավորում:

### Սերմնավորման ժամկետը

Կովերի սերմնավորման օպտիմալ ժամկետը համարվում է ծնից հետո 80-րդ օրը: Ավելի կարճ միջժնային ժամանակահատվածի դեպքում (10 ամիս), կաթի քանակությունը նվազում է 10-12 %-ով: Կովերի սերմնավորման լավագույն ժամկետը համարվում է ծնից հետո 2-րդ ամիսը: Բարձրակիթ, լիակթվող կովերի համար այդ ժամկետը երկարացվում է մինչև 70-80 օր: Որպեսզի ամեն տարի յուրաքանչյուր կովից հորթ ստացվի, ապա դրանց միջժնային ժամանակահատվածը պետք է լինի 365 օրից կամ 12 ամսից ոչ ավելի: Միջժնային երկար ժամանակահատվածը՝ ավելի քան 365 օր, ոչ կենսաբանորեն և ոչ տնտեսապես ձեռնառու չէ: Ծնից հետո 90 օրվա ընթացքում

չբեղմնավորված կովերին համարում են ստերջ, կամ ժամանակավոր անպտուղ:

### Նախրի վերարտադրության տեսակները


Նախրի վերարտադրությունը լինում է երկու տեսակի՝ հասարակ /պարզ/ և ընդլայնված:

- Հասարակ վերարտադրության դեպքում կենդանիների գլխաքանակը նախրում, տնտեսությունում չի ավելանում, այսինքն՝ տարվա սկզբին և վերջին մնում է նույնը:
- Ընդլայնված վերարտադրության դեպքում կենդանիների գլխաքանակը տարվա ընթացքում ավելանում է, ավելի շատ կենդանիներ են մուտք գործում նախիր, քան դուրս գալիս: Այդ ավելացումը կարող է լինել տարբեր չափերով՝ 5-10% և ավելին:

Նախրի պարզ վերարտադրության դեպքում, երբ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին ԽԵԿ-ի գլխաքանակը մնում է անփոփոխ, տոհմային խումբ են մտցնում 50-60, իսկ ընդլայնված վերարտադրության դեպքում՝ մինչև 70 % կովեր:

### Հարցման արդյունքների ամփոփում

Հարցման արդյունքների համաձայն հարցմանը մասնակցած 4 տավարաբուծական տնտեսություններից երեքը կիրառում են նախրի վերարտադրության ընդլայնված տեսակը, այսինքն փորձում են տարեց տարի ավելացնել նախրում բուծվող կենդանիների քանակը:





# «-ում խոշոր եղջերավոր կենդանիների ուսումնասիրություն

## Վերարտադրության վերաբերյալ կարևոր փաստեր

Հետազոտությունները ցույց են տվել, որ տնտեսապես առավել արդյունավետ է էգ հորթերին վերարտադրության համար օգտագործել 16-17 ամսականից սկսած: Էգ մատղաշին գուգավորելիս կենդանի զանգվածը պետք է կազմի տվյալ նախրի լիահասակ կովերի կենդանի զանգվածի առնվազն 70-75 %-ը, մանր ցեղերի համար՝ 290-320 կգ-ից, իսկ խոշոր ցեղերի համար՝ 340-350 կգ-ից ոչ պակաս:

Էգ հորթերը սեռահասունության տարիքը՝ 7-9 ամսական

Ցլիկների սեռահասունության տարիքը՝ 6-8 ամսական

Էգ հորթերը ֆիզիոլոգիական հասունացման տարիքը՝ 15-18 ամսական

Ցլիկների ֆիզիոլոգիական հասունացման տարիքը՝ 14-15 ամսական

Երինջների սերմնավորման տարիքը՝ 18-22 ամսական

Սերվիս-շրջանը (ծնից մինչև ցանկության սկիզբը)՝ 3 շաբաթ

Հղիության տևողությունը՝ 285 օր


Կովերը միապտուղ են:

## Հարցման արդյունքների ամփոփում

Հարցմանը մասնակցած 4 տնտեսություններից երեքը տեղեկատվություն են տրամադրել իրենց նախիրներում խոշոր եղջերավոր կենդանիների ծնելիության սեզոնայնության վերաբերյալ, որն ամփոփված է հաջորդիվ ներկայացված գրաֆիկում:

Համաձայն հարցման արդյունքերի՝ տնտեսություններից երկուսում, ԽԵԿ-ի ծնելիությունը ըստ տարվա եղանակների բաշխված է համաչափ և հետևաբար չունի սեզոնային կախվածություն: Այս փաստը վկայում է նաև այն մասին, որ

ԽԵԿ-ի բեղմնավորումը տեղի է ունենում ամբողջ տարվա ընթացքում և հետևաբար տնտեսությունները կարողանում են ապահովել ԽԵԿ-ի վերարտադրության կայուն գործընթացը:



Մինչդեռ Հարթավան Կաթ կոոպերատիվի դեպքում կենդանիների բեղմնավորումը հիմնականում տեղի է ունենում գարնան ամիսներին, երբ կենդանիները մսուրային պահվածքից անցում են կատարում արոտային պահվածքի:

## Նախրի կառուցվածքը

Նախրի կառուցվածքը տնտեսությունում կամ Ֆերմայում կենդանիների սեռահասակային խմբերի տոկոսային հարաբերությունն է: Առանձնացնում են հետևյալ խմբերը՝ արտադրող ցուլեր, կովեր, երինջներ, մեկ տարեկանից բարձր էգ հորթեր, մինչև 1 տարեկան էգ հորթեր, մեկ տարեկանից բարձր ցուլիկներ և մինչև մեկ տարեկան ցուլիկներ:

Տարվա սկզբին նախրի կառուցվածքը սահմանում են հաշվի առնելով տավարաբուծության ուղղությունը (կաթնային, մսային), տնտեսության բնույթը (տոհմային և ասպրանքային), բուծման գոտու տնտեսական և բնական

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների ուսումնասիրություն

պայմանները, տնտեսության առանձնահատկությունները:

Նախրում 60-65 % կովերի առկայության դեպքում, նորմալ վերարտադրությունը ապահովելու համար, 100 կովի հաշվով անհրաժեշտ է ունենալ 22-25 % երինջներ, 25-28% մեկ տարեկանից բարձր էգ հորթեր և 30-35%` մինչև մեկ տարեկան էգ հորթեր:

Մսային տավարաբուծության մեջ կովերի տեսակարար կշիռը նախրում կազմում է 35-40%, իսկ երինջներինը` կովերի գլխաքանակի մինչև 20 %-ը:

Ապրանքային տնտեսություններում 100 կովի հաշվով առաջարկվում է աճեցնել 25-30, իսկ ընդլայնված վերարտադրության դեպքում` 35-40 երինջ:

## ՀՀ-ում տոհմային գործի և գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման պետական կայաններ`

- Արտաշատի շրջանի Մխչյանի տոհմային գործի և գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման պետական կայան
- Ստեփանավանի շրջանի Ստեփանավանի տոհմային գործի և գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման պետական կայան
- Մարտունու շրջանի Մարտունու տոհմային գործի և գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման պետական կայան
- Ախուրյանի շրջանի Ախուրյանի տոհմային գործի և գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման պետական կայան
- Իջևանի շրջանի Իջևանի տոհմային գործի և գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման պետական կայան
- Սիսիանի շրջանի Սիսիանի տոհմային գործի և գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման պետական կայան

### Դիտարկումներ

- Տավարաբուծության մեջ կիրառում են բուծման երեք տարբերակ` մաքուր (կամ ներցեղային) բուծում, տրամախաչում և հիբրիդացում:
- Կիրառվում է խոշոր եղջերավոր կենդանիների բեղմնավորման երկու տարբերակ` բնական գուգավորում և արհեստական սերմնավորում:
- Նախրի վերարտադրությունը լինում է երկու տեսակի` հասարակ /պարզ/ և ընդլայնված: Հարցման արդյունքների (4 տնտեսությունների համար) համաձայն ՀՀ-ում ԽԵԿ-ի բուծմամբ զբաղվող տնտեսությունները նախընտրում են կիրառել նախրի վերարտադրության ընդլայնված տեսակը, այսինքն փորձում են տարեց տարի ավելացնել նախրում բուծվող կենդանիների քանակը:
- Հարցման արդյունքներից կարելի է ենթադրել, որ համեմատաբար խոշոր տնտեսություններում ԽԵԿ-ի վերարտադրության գործընթացը չի կրում սեզոնային բնույթ, մինչդեռ ավելի փոքր տնտեսություններում ԽԵԿ-ի բեղմնավորումն հիմնականում կատարվում է զարնան ամիսներին և հետևաբար ԽԵԿ-ի ծնելիությունն էլ մեծամասամբ բաժին է ընկնում ձմեռվա ամիսներին:
- Նախրում 60-65 % կովերի առկայության դեպքում, նորմալ վերարտադրությունը ապահովելու համար, 100 կովի հաշվով անհրաժեշտ է ունենալ 22-25 % երինջներ, 25-28% մեկ տարեկանից բարձր էգ հորթեր և 30-35 %` մինչև մեկ տարեկան էգ հորթեր:

# Խոշոր եղջերավոր կենդանիների կազմի և թվային դինամիկայի ուսումնասիրություն ՀՀ-ում


Կաթի արտադրության ծավալների առկա հնարավորությունները, պոտենցիալը, բաշխվածությունը ըստ մարզերի հասկանալու նպատակով Խոշորդատուն իրականացրել է ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կազմի և թվային դինամիկայի ուսումնասիրություն, որն իր մեջ ներառել է հետևյալ հիմնական բաժինները՝

- ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակի ուսումնասիրություն,
- ՀՀ-ում 2014թ-ի գյուղատնտեսական հաշվառման արդյունքների ամփոփում:

## ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակի ուսումնասիրություն

### ՀՀ-ում ԽԵԿ-ի թվային դինամիկայի ուսումնասիրություն

2010-2016թթ-ի ընթացքում յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ խոշոր եղջերավոր կենդանիների և կովերի գլխաքանակը աճել է նախորդ տարվա համեմատ:



Աղբյուրը: ՀՀ ԱԿԾ, <http://armstat.am>, Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման հանրագումարները 2010-2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ


2016թ-ի հունվարի 1-ին խոշոր եղջերավոր կենդանիների և կովերի քանակը 2010 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ համապատասխանաբար աճել է 23% և 16%-ով:

2017թ-ի հունվարի 1-ի դրությամբ ինչպես խոշոր եղջերավոր կենդանիների, այնպես էլ կովերի քանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 7%-ով:

Խոշոր եղջերավոր կենդանիների գրեթե կեսը կազմում են կովերը, որոնց մասնաբաժինը աստիճանաբար նվազում է և 2017թ-ի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 45%:

## ԽԵԿ-ի բաշխումը ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի

Տարիների ընթացքում մարզերի մասնաբաժինները ընդհանուրի մեջ գրեթե չեն փոփոխվում:



Աղբյուրը: ՀՀ ԱԿԾ, <http://armstat.am>, Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման հանրագումարները 2010-2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ

Խոշոր եղջերավոր կենդանիների մեծ մասը բաժին է ընկնում Գեղարքունիքի և Շիրակի մարզերին: Վերջիններիս միջին մասնաբաժինները ընդհանուրի մեջ

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կազմի և թվային դինամիկայի ուսումնասիրություն


վերջին 8 տարվա կտրվածքով համապատասխանաբար կազմել են 17% և 16%:

Խոշոր եղջերավոր կենդանիների ամենաքիչ քանակությունը առկա է Երևան քաղաքում, իսկ մարզերից՝ Վայոց Ձորում:

## Կովերի բաշխումը ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի

Կովերի բաշխումը ըստ մարզերի գրեթե ամբողջովին համընկնում է խոշոր եղջերավոր կենդանիների բաշխմանը:

Ինչպես և խոշոր եղջերավոր կենդանիների, այնպես էլ կովերի պարագայում առաջատար մարզերն են Գեղարքունիքը և Շիրակը, որոնց միջին մասնաբաժինները ընդհանուր կովերի գլխաքանակի մեջ վերջին 8 տարվա կտրվածքով համապատասխանաբար կազմել են 19% և 16%:



Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am>, Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման հանրագումարները 2010-2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ

Պատկերը նույն է նաև ամենասակավաթիվ քանակությամբ կովեր ունեցող տարածաշրջանների պարագայում, որոնք են Երևան քաղաքը և Վայոց Ձոր մարզը:

Կովերի պարագայում ևս մարզերի մասնաբաժինները ընդհանուրի մեջ տարիների ընթացքում գրեթե չեն փոփոխվում:

Հարկ է նշել, որ գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին բաժին ընկնող կովերի գլխաքանակը ընդհանուրի մեջ կազմում է ընդամենը 1%, իսկ մնացած 99%-ը բաժին է ընկնում ֆիզիկական անձանց:

Խոշոր եղջերավոր կենդանիների և կովերի քանակային բաշխումը ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, ինչպես նաև կովերի բաշխումը ըստ տնտեսությունների իրավական կարգավիճակի ներկայացված են սույն հաշվետվության Հավելված Դ-ում:

## Դիտարկումներ

- 2016թ-ի հունվարի 1-ի դրությամբ խոշոր եղջերավոր կենդանիների և կովերի քանակը 2010 թ-ի հունվարի 1-ի նկատմամբ համապատասխանաբար աճել է 23% և 16%-ով, սակայն 2017թ-ի հունվարի 1-ի դրությամբ ինչպես խոշոր եղջերավոր կենդանիների, այնպես էլ կովերի քանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 7%-ով:
- 2017թ-ի հունվարի 1-ի դրությամբ կովերի մասնաբաժինը խոշոր եղջերավոր կենդանիների մեջ կազմել է 45%:
- Խոշոր եղջերավոր կենդանիների և կովերի ամենաշատ գլխաքանակը առկա է Գեղարքունիքի և Շիրակի մարզերում, իսկ ամենաքիչ գլխաքանակը բաժին է ընկնում Երևան քաղաքին և Վայոց Ձոր մարզին:
- Կովերի ընդամենը 1%-ն է բաժին ընկնում գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին, իսկ մնացածը պատկանում են ֆիզիկական անձանց:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կազմի և թվային դինամիկայի ուսումնասիրություն

## ՀՀ-ում 2014թ-ի գյուղատնտեսական հաշվառման արդյունքներ

### ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիներ ունեցող տնտեսությունների ուսումնասիրություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ ՀՀ-ում առկա խոշոր եղջերավոր կենդանիներ ունեցող տնտեսությունների բաշխումը ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, ինչպես նաև ըստ խոշոր եղջերավոր կենդանիների կազմի:

### խոշոր եղջերավոր կենդանիներ ունեցող տնտեսությունների քանակը 10.10.2014-ի դրությամբ

Տնտեսություններ, որոնք ունեն	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ	Երևան	Ընդամենը ՀՀ
խոշոր եղջերավոր կենդանիներ*	13,003	8,701	8,766	25,210	13,063	9,801	14,732	6,528	4,312	6,468	391	110,975
Կովեր, որից	12,227	7,432	7,314	24,431	12,355	9,086	13,993	6,339	4,138	6,118	380	103,813
Կաթնային հոտի	11,684	6,860	6,772	24,042	12,173	8,958	13,684	6,162	4,121	6,057	337	100,850
Արտադրող ցուլեր	2,378	1,296	1,791	2,379	1,676	1,294	2,910	1,625	761	904	34	17,048
Երինջներ 2 տարեկանից բարձր	4,476	2,493	2,701	6,824	4,113	2,876	5,173	3,004	1,369	1,632	42	34,703
Ցլիկներ 2 տարեկանից բարձր	3,116	2,455	2,610	4,229	2,317	1,807	3,730	1,721	964	1,030	24	24,003
Մոզիներ 1-ից մինչև 2 տարեկան	6,076	3,481	4,183	10,544	5,859	4,096	7,352	3,686	2,405	2,947	27	50,656
Այլ խոշոր եղջերավոր կենդանիներ, ներառյալ մատղաշներ	6,869	2,497	4,110	13,373	6,671	4,910	9,721	3,573	1,872	4,009	11	57,616

Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, <http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a>, Գյուղատնտեսական համաարած հաշվառում 2014

Խոշոր եղջերավոր կենդանիներ ունեցող ամենաշատ տնտեսությունները տեղակայված են եղել Գեղարքունիքի մարզում՝ կազմելով ընդհանուրի 23%-ը: Գեղարքունիքի մարզում են գտնվում նաև ամենաշատ քանակությամբ այն տնտեսությունները, որոնք ունեն կաթնային հոտի կովեր և 2 տարեկանից բարձր երինջներ: Վերջիններիս մասնաբաժինները ընդհանուրի մեջ համապատասխանաբար կազմել են 24% և 20%:

Կաթնային հոտի կովեր ունեցող մեծ քանակությամբ տնտեսություններ են առկա նաև Շիրակի, Արագածոտնի և Լոռվա մարզերում՝ համապատասխանաբար 14%, 12% և 12% մասնաբաժիններով:

Խոշոր եղջերավոր կենդանիներ ունեցող տնտեսությունների բաշխումը ըստ կազմի, մարզերի և ըստ տնտեսությունների իրավաբանական կարգավիճակի


ներկայացված է սույն հաշվետվության Հավելված Ե-ում:

### Դիտարկումներ

- ՀՀ-ում 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ առկա է եղել խոշոր եղջերավոր կենդանիներ ունեցող 110,975 տնտեսություն, որոնցից ամենաշատը տեղակայված են եղել Գեղարքունիքի մարզում՝ կազմելով ընդհանուրի 23%-ը:
- Կաթնային հոտի կովեր ունեցող ամենաշատ քանակությամբ տնտեսությունները տեղակայված են Գեղարքունիքի, Շիրակի, Արագածոտնի և Լոռվա մարզերում՝ համապատասխանաբար կազմելով ընդհանուրի 24%, 14%, 12% և 12%:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կազմի և թվային դինամիկայի ուսումնասիրություն

## ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կազմի ուսումնասիրություն՝ 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ



Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, <http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a>, Գյուղատնտեսական համատարած հաշվառում 2014

Կովերի տեսակարար կշիռը կաթնամսատու ուղղության նախիրներում ցանկալի է լինի 40-45%, իսկ կաթնատու տիպի նախիրներում՝ 45-50% և ավելին:

Այսպես 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ ՀՀ-ում ամկա է եղել 764,217 խոշոր եղջերավոր կենդանի, որոնցից 347,795 եղել են կովեր և կազմել են ընդհանուրի 46%-ը: Այս ցուցանիշը գտնվում է ընդունված նորմերի միջակայքում և վկայում է խոշոր եղջերավոր կենդանիների ճիշտ բաշխվածության մասին:

2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ ՀՀ-ում ամկա է եղել 294,190 գլուխ կաթնային հոտի կով, ինչը կազմել է կովերի 85 %-ը, իսկ ընդհանուր խոշոր եղջերավոր կենդանիների 38 %-ը:


Կաթի արտադրության և կաթնատվության տեսանկյունից շատ կարևոր է

նաև երինջների գլխաքանակը, որոնց թիվը 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ կազմել է 69,135 հատ:

Խոշոր եղջերավոր կենդանիների ամենափոքր գլխաքանակը բաժին է ընկել արտադրող ցուլերին, որոնց թիվը դիտարկվող ժամանակահատվածի դրությամբ կազմել է 50,404 գլուխ:

### Հարցման արդյունքների ամփոփում

Հարցմանը մասնակցած այն տնտեսություններում, որոնց նախիրները ունեն մթերատվության կաթնատու ուղղություն, կովերի տեսակարար կշիռը նախիրի կազմում գերազանցում է 50%-ը (Մարտիրոսյան Խաչիկ ԱԶ-ի նախրում կովերի տեսակարար կշիռը կազմում է 91%, իսկ Վամաքս ՄՊԸ-ում 53%), ինչը համապատասխանում է ընդունված նորմերին:




Հարթավան Կաթ կոոպերատիվում կովերի մասնաբաժինը ընդհանուր ԽԵԿ-ի գլխաքանակի մեջ կազմում է 37%, ինչը մի փոքր ցածր է քան կաթնամսատու ուղղության նախիրներում ընդունված միջին ցուցանիշը: Արզնու տոհմային

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կազմի և թվային դինամիկայի ուսումնասիրություն

ԹՏԽ-ում, որի նախիրն ունի խառը ուղղվածություն (կաթնատու, կաթնամատու և մատու) կովերի մասնաբաժինը նախրում ամենացածրն է և կազմում է 28%:


2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ խոշոր եղջերավոր կենդանիների կազմի ուսումնասիրություն՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի



Աղբյուրը: ԲԳ ԱԿԾ, <http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a>, Գյուղատնտեսական համատարած հաշվառում 2014

Համաձայն ներկայացված գրաֆիկի, 2014 թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ խոշոր եղջերավոր կենդանիների և կովերի ամենաշատ քանակը առկա է եղել Գեղարքունիքի և Շիրակի մարզերում՝ միասին կազմելով ընդհանուրի համապատասխանաբար 34% և 35%-ը:

Բոլոր մարզերում, բացառությամբ Արմավիրի, կովերը միջինում կազմում են խոշոր եղջերավոր կենդանիների 40 %-ից ավելին: Երևան քաղաքում վերջիններիս մասնաբաժինը կազմում է 77%:



Աղբյուրը: ԲԳ ԱԿԾ, <http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a>, Գյուղատնտեսական համատարած հաշվառում 2014


Գեղարքունիքի և Շիրակի մարզերը առաջատար տեղում են նաև կաթնային հոտի կովերի և երկու տարեկանից բարձր երինջների գլխաքանակով:

Բոլոր մարզերում կաթնային հոտին պատկանող կովերի և ընդհանուր կովերի հարաբերակցությունը բավականին բարձր է և կաթնային հոտի մասնաբաժինը կովերի ընդհանուր քանակի մեջ միջինում կազմում է 80%-ից ավելին:

Հաշվի առնելով այն փաստը, որ կովերի կաթնատվության շրջանը սկսվում է հորթը ծնելուց հետո, կաթնային հոտի մեծ մասնաբաժինը վկայում է կովերի բարձր արտադրողականության մասին:

Այսպես այս ցուցանիշի ամենաբարձր հարաբերակցությունը նկատվում է Տավուշի մարզում, իսկ ամենացածրը՝ Արագածոտնի մարզում: Այս երկու մարզերում կաթնային հոտի մասնաբաժինը կովերի ընդհանուր քանակի մեջ համապատասխանաբար կազմում է 96% և 79%:


# «Ն»-ում խոշոր եղջերավոր կենդանիների կազմի և թվային դինամիկայի ուսումնասիրություն



Աղբյուրը: ԳՂ ԱԿԾ, <http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a>, Գյուղատնտեսական համատարած հաշվառում 2014

Արտադրող ցուլերի 44%-ը բաժին է ընկնում Շիրակի (16%), Արագածոտնի (14%) և Արմավիրի (14%) մարզերին, իսկ երկու տարեկանից բարձր ցիկների 57%-ը բաժին է ընկնում՝ Արմավիրի (15%), Գեղարքունիքի (14%), Արարատի (14%) և Շիրակի(14%) մարզերին:

Ընդհանուր առմամբ արտադրող ցուլերը և երկու տարեկանից բարձր ցիկները 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ կազմել են խոշոր եղջերավոր կենդանիների գրեթե 11%-ը:



Աղբյուրը: ԳՂ ԱԿԾ, <http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a>, Գյուղատնտեսական համատարած հաշվառում 2014

Մեկից մինչև երկու տարեկան մոզիների 32% բաժին է ընկնում Գեղարքունիքի և Շիրակի մարզերին, որոնցից յուրաքանչյուրի մասնաբաժինը մեկից մինչև երկու տարեկան մոզիների գլխաքանակում համապատասխանաբար կազմում է 17% և 15%:

Այլ խոշոր եղջերավոր կենդանիների, ներառյալ մատղաշների մեծ մասը ևս բաժին է ընկնում Գեղարքունիքի և Շիրակի մարզերին, որոնցից յուրաքանչյուրի մասնաբաժինը ընդհանուրի մեջ կազմում է 19%:

Խոշոր եղջերավոր կենդանիների մանրամասն բաշխումը ըստ վերջիններիս կազմի, մարզերի և տնտեսությունների իրավաբանական կարգավիճակի



# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կազմի և թվային դինամիկայի ուսումնասիրություն

ներկայացված են սույն հաշվետվության Հավելված 2-ում:

## Դիտարկումներ

- 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ ՀՀ-ում ամկա է եղել 764,217 խոշոր եղջերավոր կենդանի, որոնցից 347,795 եղել են կովեր և կազմել են ընդհանուրի 46%-ը:
- 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ ՀՀ-ում ամկա է եղել 294,190 հատ կաթնային հոտի կով, ինչը կազմել է կովերի 85%-ը, իսկ ընդհանուր խոշոր եղջերավոր կենդանիների 38%-ը:
- Կովերի տեսակարար կշիռը կաթնա-մսատու ուղղության նախիրներում ցանկալի է լինի 40-45%, իսկ կաթնատու տիպի նախիրներում՝ 45-50% և ավելին:
- Հարցումների արդյունքները ևս վկայում են այն մասին, որ կովերի մասնաբաժինը նախրի մեջ կախված է դրա մթերատվության ուղղությունից և որ կովերի տեսակարար կշիռը ամենաբարձրն է կաթնատու ուղղություն ունեցող նախիրներում, իսկ ամենացածրն է մսատու կամ խառը նախիրներում, որտեղ միաժամանակ բուծվում են մթերատվության տարբեր (կաթնատու, կաթնա-մսատու, մսատու) ուղղություններ ունեցող ԽԵԿ-ի ցեղատեսակներ:
- 2014 թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ խոշոր եղջերավոր կենդանիների, կովերի, կաթնային հոտի կովերի և երկու տարեկանից բարձր երինջների ամենաշատ քանակը ամկա է եղել Գեղարքունիքի և Շիրակի մարզերում:
- Գրեթե բոլոր մարզերում, կովերը միջինում կազմում են խոշոր եղջերավոր կենդանիների 40%-ից ավելին, իսկ կաթնային հոտի մասնաբաժինը կովերի ընդհանուր քանակի մեջ միջինում կազմում է 80%-ից ավելին:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կազմի և թվային դինամիկայի ուսումնասիրություն

## ՀՀ-ում կաթնային հոտի կովեր ունեցող տնտեսությունների ուսումնասիրությունը՝ 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ ՀՀ-ում կաթնային հոտի կովեր ունեցող տնտեսությունների քանակն ըստ կաթնային հոտի կովերի գլխաքանակի:

### Տնտեսությունների քանակը ըստ կաթնային հոտի կովերի գլխաքանակի՝ 10.10.2014-ի դրությամբ

Կաթնային հոտի կովերի քանակը	Վրագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ	Երևան	Ընդամենը ՀՀ
1-2	7,296	5,212	4,929	17,573	8,024	6,813	7,974	3,334	3,004	4,196	194	68,549
3-4	2,533	831	950	4,361	2,349	1,324	3,317	1,352	774	1,012	69	18,872
5-9	1,410	506	537	1,544	1,285	512	1,701	904	265	591	37	9,292
10-19	344	241	280	422	413	196	563	373	59	197	28	3,116
20-49	88	59	64	114	87	88	108	170	15	55	7	855
50-99	13	10	11	26	13	19	20	22	2	3	1	140
100-199	-	1	1	2	2	2	1	4	2	3	-	18
200-499	-	-	-	-	-	3	-	3	-	-	-	6
500 և ավելի	-	-	-	-	-	1	-	-	-	-	1	2
<b>ԸՆԴԱՄԵՆՆՆԸ</b>	<b>11,684</b>	<b>6,860</b>	<b>6,772</b>	<b>24,042</b>	<b>12,173</b>	<b>8,958</b>	<b>13,684</b>	<b>6,162</b>	<b>4,121</b>	<b>6,057</b>	<b>337</b>	<b>100,850</b>

Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, <http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a>, Գյուղատնտեսական համատարած հաշվառում 2014

ՀՀ-ում առկա կաթնային հոտի կովեր ունեցող 100,850 տնտեսություններից միայն 27-ը ունեն իրավաբանական անձի կարգավիճակ:

Կաթնային հոտի կովեր ունեցող տնտեսությունների մոտ 68%-ը ունի 1-ից 2 կով, որոնցից ամենաշատը՝ մոտ 26%-ը տեղակայված են Գեղարքունիքի մարզում: Ընդ որում 1-ից 2 կաթնային հոտի կով ունեցող բոլոր տնտեսությունները պատկանում են ֆիզիկական անձանց: Սակավաթիվ անասնա-գլխաքանակից կարելի է ենթադրել, որ այս տնտեսությունների մոտ արտադրվող անասնապահական մթերքների զգալի մասն օգտագործվում է սեփական կարիքները հոգալու համար:

ՀՀ-ում արտադրվող կաթի մեծ մասը արտադրվում է փոքր տնտեսություններում, իսկ նրանցից շատերում կենդանիների պահվածքի

պայմանները բավականին աղքատիկ են, ինչի հետևանքով առաջանում են կենդանիների առողջության և կաթնատվության հետ կապված տարատեսակ խնդիրներ:

Գոմերը պատշաճ կերպով նախագծված չեն, դրանք սովորաբար փակ են, ապահովված չեն օդի շրջանառությամբ, պատշաճ կերպով չեն մաքրվում և պահպանվում: Այս ամենի հետևանքով չեն ապահովվում համապատասխան արտադրական պայմաններ, որոնք կապահովեն կաթի պատշաճ որակն ու կաթի հիգիենայի և անվտանգության պահանջվող մակարդակը: Արդյունքում ստացվում է ցածր որակի կաթ:

Փոքր արտադրողների գերակշռության, ինչպես նաև նրանց միջև թույլ համագործակցության կամ դրա բացակայության հետևանքով՝

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կազմի և թվային դինամիկայի ուսումնասիրություն

- դժվարանում է կաթի հավաքման լոգիստիկան, մեծ թվով փոքր արտադրողներից կաթ հավաքելը դժվար է և թանկ է նստում՝ բարձրացնելով կաթի ինքնարժեքը,
- խոչընդոտներ են առաջանում կաթի որակի և անվտանգության պատշաճ ստանդարտների սահմանման և կիրառության առնչությամբ:

500 և ավելի կաթնային հոտի կովեր ունեցող տնտեսությունների քանակը ընդամենը երկուսն է, որոնցից մեկը տեղակայված է Երևան քաղաքում՝ ֆիզիկական անձի կարգավիճակով, իսկ մյուսը Կոտայքի մարզում՝ իրավաբանական անձի կարգավիճակով:

Կաթնային հոտի կովեր ունեցող տնտեսությունների բաշխումը ըստ քանակի և տնտեսությունների կարգավիճակի ներկայացված է սույն հաշվետվության Հավելված Է-ում:

### Դիտարկումներ

- Կաթնային հոտի կովեր ունեցող տնտեսությունների մոտ 68%-ը ունի 1-ից 2 կով, որոնցից ամենաշատը՝ մոտ 26%-ը տեղակայված են Գեղարքունիքի մարզում:
- Կաթնային հոտի կովերի սակավաթիվ գլխաքանակ ունեցող տնտեսությունների գերակշռությունը վկայում է այն մասին, որ ՀՀ-ում արտադրվող կաթի մեծ մասը բաժին է ընկնում այս տնտեսություններին, սակայն փոքր ագարակների մեծ մասում կենդանիների պահվածքի պայմանները բավականին աղքատիկ են, ինչի հետևանքով առաջանում են կենդանիների առողջության և կաթնատվության հետ կապված տարատեսակ խնդիրներ: Արդյունքում արտադրվում է առկա պոտենցիալից շատ ավելի քիչ քանակությամբ կաթ, որի որակը բավականին ցածր է և ոչ մրցունակ ու պիտանի որակյալ կաթնամթերքի արտադրության համար:
- ՀՀ-ում 2014 թ-ի հոկտեմբերի դրությամբ 500 և ավելի կաթնային հոտի կովեր ունեցող տնտեսությունների քանակը ընդամենը երկուսն է, որոնցից մեկը տեղակայված է Երևան քաղաքում՝ ֆիզիկական անձի կարգավիճակով, իսկ մյուսը Կոտայքի մարզում՝ իրավաբանական անձի կարգավիճակով:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ուսումնասիրություն

Խոշոր եղջերավոր կենդանիների քանակի ավելացման և հետևաբար կաթի արտադրության ծավալների պոտենցիալի գնահատման տեսանկյունից կարևոր է ուսումնասիրել ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կերակրման գործընթացը, այդ թվում կերերի ընդունված տեսակները, նորմերը և կերերի առկայությունը: Այս նպատակով Խորհրդատուն իրականացրել է **ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ուսումնասիրություն**, որն իր մեջ ներառել է հետևյալ հիմնական բաժինները՝

- Խոշոր եղջերավոր կենդանիների կերակրումը,
- ՀՀ լանդշաֆտային գոտիների ուսումնասիրություն,
- Տավարաբուծության մասնագիտացումը ըստ աշխարհագրական գոտիների և արոտային շրջանի տևողությունը,
- ՀՀ-ում խոտհարքների և արոտավայրերի ուսումնասիրություն:

## Խոշոր եղջերավոր կենդանիների կերակրումը

### Խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ընդունված տեսակները

Կովերի կաթնային մթերատվությունը ուղիղ համեմատական է որակյալ և սննդարար կերերով կերակրման մակարդակին: Բարձրորակ և ցածր ինքնարժեքով կաթ կարելի է ստանալ լակտացիայի ամբողջ ընթացքում կովերին լիարժեք կերակրելով: Ընդ որում, կերակրումը ազդում է կաթի ինչպես քանակի, այնպես էլ որակի վրա:

ԽԵԿ-ի հիմնական կերը արոտի կանաչն է, ծղոտը, սիլոսը, արմատապտուղները, արտադրական մնացուկները (քուսպ, շրոտ, ժոմ, բարդա և այլն), համակցված, ինչպես նաև հանքային աղերով, պրոտեինով և վիտամիններով հարստացված կերը:

Առանձին կերատեսակներ տարբեր կերպ են ազդում կաթնատվության վրա: Այդ

պատճառով էլ կովերի կերակրումը պետք է լինի բազմազան, իսկ կերերը՝ սննդարար:

Խոշոր եղջերավոր կենդանիների կերերը տարանջատվում են 4 հիմնական տեսակի՝

- **Կոպիտ կերեր** - այս տեսակի կերերի շարքին են դասվում ցածր խոնավությամբ և բջջանյութի (клетчатка) բարձր պարունակությամբ բուսական կերերը: Այս տեսակի կերերին են պատկանում խոշոր եղջերավոր կենդանիների համար ամենատարածված կերերը՝ խոտը, ծղոտը, սենածը:
- **Հյութալի կերեր** - այս տեսակի կերերի շարքին են դասվում բարձր խոնավությամբ (90 %) բուսական կերերը: Դրանք պատրաստված (սիլոս) կամ պատրաստի (արմատապտուղներ, պալարապտուղներ, բանջարեղեններ, մրգեր) կերեր են, որոնք պարունակում են մեծ քանակությամբ ջուր, ինչպես նաև ունեն բարձր սննդարար և էներգետիկ արժեք:
- **Կանաչ կերեր** - այս կերերի տեսակին են պատկանում հնձված հացազգիները, բակլազգիները (հատիկաընդեղեն բույսեր), տարբեր բույսեր, բանջարեղենի փրերը (ботва овощей) և ջրիմուռները, որոնք ամառվա բնական կերեր են:
- **Խտացրած կերեր** - այս տեսակի կերերին են պատկանում հացազգիների և բակլազգիների ցորենը, ալրադացային և մշակող արդյունաբերության թափոնները: Այս տեսակի կերերը թույլ են տալիս վերացնել միկրոէլեմենտների և վիտամինների պակասը և բարձրացնում են կերի էներգետիկ արժեքը:

### Խոշոր եղջերավոր կենդանիների կերակրման նորմաները

Կերի տեսակը և չափաբաժինը կախված է կովի կաթնատվությունից, կենդանի

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ուսումնասիրություն

զանգվածից, տարիքից, հղիության շրջանից, սնվածությունից, ինչպես նաև այլ գործոններից: Կերակրումն ուղղակիորեն ազդում է կենդանիների կաթնատվության վրա:

Հայաստանում ներկայում կիրառվում են կենդանիների կերակրման երկու եղանակներ, որոնք կախված են կենդանիների պահվածքի համակարգերից՝

- Արոտային պահվածք, երբ կենդանիները կերակրվում են արոտավայրի կանաչ զանգվածով՝ տարվա սահմանափակ ժամանակահատվածում (զարնան երկրորդ կես, ամառ),
- Մսուրային պահվածք, երբ կենդանիները պահվում են շենքերում և կերակրվում պահեստավորված խոտով:

ՀՀ-ում կովերը տարվա ընթացքում շուրջ 7 ամիս /նոյեմբեր-ապրիլ/ գտնվում են մսուրային պահվածքի պայմաններում: Այդ ժամանակաընթացքում ստացվում է տարեկան արտադրվող կաթի մոտ կեսը: Կովերի ծինը նույնպես հիմնականում տեղի է ունենում մսուրային շրջանում: Հետևապես, նրանց բավարար կերակրումը և խնամքը այդ ժամանակաընթացքում շատ կարևոր է մթերատվության բարձրացման գործում:

Կաթի յուղայնության վրա դրականորեն է ազդում կոպիտ կերերով կերակրումը՝ առաջին հերթին թիթեռնածաղկավոր խոտը, հյութալի թիթեռնածաղկավոր բույսերը, շաքարի ճակնդեղը, քիչ քանակով՝ արևածաղկի և բամբակի քուսալը: Կերաբաժնում խտացրած կերերի մեծ քանակը վատացնում է կաթի տեխնոլոգիական հատկությունները, իսկ որոշ դեպքերում էլ՝ կաթի կազմը:

Օրաբաժնի յուրաքանչյուր 1 կերի միավորին պետք է համապատասխանի 110-120 գ մարսելի պրոտեին, 7 գ կալցիում, 5 գ ֆոսֆոր, 7 գ կերակրի աղ և 40-45 մգ կարոտին: 6 կգ արոտականաչի սննդարարությունը համապատասխանում է 1 կգ կերի միավորին:

## 400-450 կգ կենդանի զանգվածով կովի օրաբաժինը յուրաքանչյուր 1 կգ կաթ արտադրելու համար

Կաթնատվություն	Կերի միավոր	Խտացրած կեր (գրամ)
Մինչև 10կգ	0.91-1	100-150
10-15 կգ	0.8	150-250
15-20 կգ	0.8	250-300
20 կգ-ից ավել	0.7	300-350

Աղբյուր: <https://library.anau.am/images/stories/grqer/Anasabutsuyun/Tavarabucutyun.pdf>

Կովերի ճիշտ կերակրման համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև չոր նյութի քանակը օրաբաժնում: Օրաբաժնում հյութալի կերերի սահմանափակ քանակի դեպքում, յուրաքանչյուր 100 կգ կենդանի զանգվածի հաշվով կյու կովը պետք է ստանա 2,5-3,0 կգ չոր նյութեր: Օրաբաժնում հյութալի կերերի մեծ տեսակարար կշռի դեպքում չոր նյութի քանակը կարող է կազմել 3,0-3,5 կգ: Մսուրային շրջանում կովերի օրաբաժին հնարավորին չափ պետք է ընդգրկել ավելի շատ հյութալի կերեր (կերի ճակնդեղ, գազար, կարտոֆիլ և այլն):

## Մսուրային շրջանում տարբեր Ֆիզիոլոգիական վիճակում գտնվող կովերի կերաբաժնի օրինակելի կառուցվածքը (%)

Կերեր	Ցամաքի շրջան	Լիակթուն	Լակտացիայի միջնամաս	Լակտացիայի վերջնամաս
Խոտ	25	10	13	14
Սենած	15	16	21	24
Ծղոտ	8	-	4	6
Սիլոս	16	22	25	27
Արմատապտուղներ	10	12	9	7
Խտացրած կերեր	26	40	28	22

Աղբյուր: <https://library.anau.am/images/stories/grqer/Anasabutsuyun/Tavarabucutyun.pdf>

Յուրաքանչյուր 100 կգ կենդանի զանգվածի հաշվով կովերին օրական կարելի է տալ 4-6 կգ սիլոս՝ կախված դրա խոնավությունից և որակից: Կերային արմատապտուղներ օրաբաժին նպատակահարմար է մտցնել օրական 10 կգ-ից

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ուսումնասիրություն

ավելի կաթնատվության դեպքում, յուրաքանչյուր 1 կգ կաթնատվության դիմաց 0,6-0,8 կգ: Կուպիտ կերերի քանակը օրաբաժնում 100 կգ կենդանի զանգվածի հաշվով, պետք է կազմի առնվազն 0,7-1,0 կգ, որը կապահովի կովի մարտողական օրգանների նորմալ գործունեությունը: Ցանկալի է, որպեսզի կուպիտ կերերի ընդհանուր քանակում խոտը կազմի 2/3-ից ոչ պակաս:

Մսուրային պահվածքի դեպքում ցամաքի շրջանում հղի կովերի օրաբաժնի հիմքը կազմում են լավորակ խոտը և սիլոսը, քիչ քանակությամբ՝ խտացրած կերերը: Անհրաժեշտ է ծնելուց 10-15 օր առաջ կովի օրաբաժնում կրճատել հյութալի կերերի քանակը, իսկ ծնից 1-2 օր առաջ՝ լրիվ հանել: Հղի ցամաք կովերի դեպքում մարսելի պրոտեինը պետք է կազմի 110-120 գրամ, կալցիումը՝ 9-10 գրամ, Ֆոսֆորը՝ 5-6 գրամ, կարոտինը՝ 40-50 միլիգրամ մեկ կերամիավորի հաշվով:

Կթու կովերի կերաբաժինները 400 կգ կենդանի քաշով, 3,000 կգ տարեկան կաթնատվությամբ և 450 կգ կենդանի քաշով, 4,000 կգ տարեկան կաթնատվությամբ, ինչպես նաև սերմնավորման հասակի էգ հորթերի և երինջների կերաբաժինները ներկայացված են սույն հաշվետվության Հավելվածներ Ը-ում և Թ-ում:

Արոտավայրերի արդյունավետ օգտագործման դեպքում (հատկապես արոտակտորների տեսքով) 15-17 %-ով բարձրանում է կովերի կաթնային մթերատվությունը և 20-30 %-ով իջնում է արոտավայրերի պահանջը:

## Արոտականաչի պահանջը

Սեռահասակային խմբերը	Կերի ընդունված նորման (կերի միավոր)	Օրական տրվող խտացրած կերի քանակը (կերի միավոր)	Պահանջվող արոտականաչի քանակը (կգ)*
Չղի-ցամաք կովեր	9	1.5	45
Կթու կովեր օրական կաթնատվությամբ՝ 12 կգ	11	2.4	49
Կթու կովեր օրական կաթնատվությամբ՝ 16 կգ	13	3.6	54
Կթու կովեր օրական կաթնատվությամբ՝ 20 կգ	15	5.0	58
Մատղաշ՝ 6-12 ամսական	5	1.0	23
Մատղաշ՝ 13-18 ամսական	6	0.8	30
Երինջներ	8	1.5	36

\*6 կգ արոտականաչի սննդարարությունը ընդունված է 1 կերի միավոր

Աղբյուրը: <https://library.anau.am/images/stories/grqer/Anasnabutsuyun/Tavarabucutyun.pdf>

Արոտականաչի օգտագործումը, որպես կովերի կերի հիմնական բաղադրիչ գարնան և ամառվա ամիսներին, շատ կարևոր է կովերի լիարժեք կերակրումը ապահովելու տեսանկյունից, սակայն ՀՀ-ում արոտավայրերի կառավարումը իրականացվում է թերի, իսկ արոտավայրերում կատարվող ներդրումները բավականին փոքր են կամ ընդհանրապես բացակայում են:

Ներդրումների սակավության և բացակայության հետևանքով արոտավայրերի մեծ մասում չկան էլեկտրականություն, ջրի խմոցներ ու ջուր, ինչը խոչընդոտում է տեղում կենդանիների լիարժեք սնմանը, ինչպես նաև պատշաճ կթի իրականացմանը: Դեպի արոտավայրեր տանող ճանապարհները գտնվում են շատ վատ կացության մեջ, որի հետևանքով կենդանիները ենթարկվում են սթրեսի:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ուսումնասիրություն

## Հարցման արդյունքների ամփոփում

**Կերերի տեսակը:** Հարցմանը մասնակցած 4 տնտեսությունների կողմից խոշոր եղջերավոր կենդանիների կերակրման համար կիրառվող կերերի տեսակները ըստ տարվա եղանակների ներկայացված են ստորև բերված աղյուսակում:


### Կերերի տեսակը՝ ըստ տարվա եղանակների

Տարվա եղանակ	Արգնու տոհմային ԹՏԽ ԲԲԸ	Հարթավան Կաթ կոոպերատիվ	Մարտիրոսյան Խաչիկ Ա/Չ	Վամաքս ՍՊԸ
Գարուն	Սիլոս, եգիպտացորեն, գարի, ցորեն, խոտ	Խոտ	Թեփ, խոտ	Սիլոս, Խոտ, Համակցված կեր
Ամառ	Արոտ	Խոտ	Թեփ, խոտ	Սիլոս, Խոտ, Համակցված կեր
Աշուն	Սիլոս, եգիպտացորեն, գարի, ցորեն, խոտ	Չոր խոտ	Թեփ, խոտ	Սիլոս, Խոտ, Համակցված կեր
Զմեռ	Սիլոս, եգիպտացորեն, գարի, ցորեն, խոտ	Չոր խոտ	Թեփ, խոտ	Սիլոս, Խոտ, Համակցված կեր

Ներկայացված ֆերմաներից միայն Վամաքս ՍՊԸ-ն է իր կենդանիներին կերակրում համակցված կերերով: Ընդհանուր առմամբ հարցման արդյունքները վկայում են այն մասին որ ՀՀ-ում ԽԵԿ-ի կերակրումը կատարվում է թերի, ինչի հետևանքով էլ ընկնում է կենդանիների կաթնատվությունը և տուժում է կաթի որակը: Կենդանիների կերակրումը սիրտով և համակցված կերերով բավականին կարևոր է վերջիններիս լիարժեք կերակրումը ապահովելու տեսանկյունից, սակայն կերակրման այս եղանակը ինչպես վկայում են հարցման արդյունքները տարածված չեն տնտեսությունների շրջանակում:

**Կերակրման գործընթացը:** Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ հարցմանը մասնակցած տնտեսություններից և ոչ մեկում կերակրման գործընթացը ավտոմատացված չէ:

Համեմատաբար խոշոր տնտեսություններում, ինչպիսիք են Արգնու տոհմային ԹՏԽ ԲԲԸ-ն և Վամաքս ՍՊԸ-ն ԽԵԿ-ի կերակրման գործընթացը մասնակիորեն ավտոմատացված է:



## Դիտարկումներ


- Խոշոր եղջերավոր կենդանիների կերերը տարանջատվում են 4 հիմնական տեսակի՝ կոպիտ կերեր, հյութալի կերեր, կանաչ կերեր, խտացրած կերեր:
- Կովերի կերակրումը կախված է կովի կաթնատվությունից, կենդանի զանգվածից, տարիքից, հղիության շրջանից, անվաճությունից, ինչպես նաև այն հանգամանքից թե կովերը պահվածքի որ շրջանում են գտնվում՝ մսուրային թե արոտային:
- Կովերի օրաբաժնի յուրաքանչյուր 1 կերի միավորին պետք է համապատասխանի 110-120 գ մարսելի պրոտեին, 7 գ կալցիում, 5 գ ֆոսֆոր, 7 գ կերակրի աղ և 40-45 մգ կարոտին:
- Կովերի օրինակելի կերաբաժինը հիմնականում ընդգրկում է կերերի հետևյալ տեսակները՝ խոտ, սենած, ծղոտ, սիլոս, արմատապտուղներ, խտացրած կերեր:
- Հարցման արդյունքները վկայում են այն մասին որ ՀՀ-ում ԽԵԿ-ի կերակրումը կատարվում է թերի, ինչի հետևանքով էլ ընկնում է կենդանիների կաթնատվությունը և տուժում է կաթի որակը:
- Հարցմանը մասնակցած տնտեսություններից և ոչ մեկում կերակրման գործընթացը ամբողջովին ավտոմատացված չէ:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ուսումնասիրություն

## ՀՀ-ում պատրաստի կերի արտադրություն և ներմուծում

Հայաստանում կերի արտադրությունը դեռևս զարգացած չէ: Ըստ Գյուղատնտեսության նախարարության գնահատականի՝ Հայաստանում տարեկան արտադրվում է 20,000-30,000 տոննա համակցված կեր: Ընդ որում, կերի այդ քանակը օգտագործվում է ոչ միայն խոշոր եղջերավոր կենդանիների, այլ նաև թռչնաբուծության և այլ կենդանիների կերակրման համար:

ՀՀ-ում արտադրվում են նաև թեփ, հացահատիկային մշակաբույսերի մշակումից ստացված այլ մնացուկներ, սակայն կերի այս տեսակները՝ համակցված կերի համեմատ ունեն էականորեն ցածր սննդային արժեք:



Աղբյուր: ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am>, Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտադրությունից 2012-2016թթ-ին, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012-2016թթ-ին

Ընդհանուր առմամբ, ներկայացված գրաֆիկից կարելի է նկատել որ այս տեսակի կերերի արտադրության և պատրաստի կերի ներմուծման ծավալների փոփոխությունը ներկայացված ժամանակաշրջանի համար որևէ հստակ միտում չի դրսևորում:

## ՀՀ-ում ԽԵԿ-ի լիարժեք կերակրման հետ կապված խնդիրները

Հայաստանում կերի մատակարարման և կերակրման հետ կապված անկատարությունները կաթի արտադրության հետագա ընդլայնումն ու զարգացումը սահմանափակող գործոններ են: ՀՀ-ում կենդանիների համար նախատեսված տեղական կերը բավականին ցածրորակ է, իսկ կերակրման մշակույթը անարդյունավետ:

Առաջին հերթին, կովերի արտադրողականության վրա բացասաբար է ազդում կերակրման պթերսը՝ պայմանավորված կերերի արտադրության խիստ սեզոնայնությամբ, քանի որ Հայաստանում թույլ զարգացած է հյութալի և չոր կերերի արտադրությունը, և անբավարար են կերերի պահեստավորման կարողությունները: Պահեստավորման կարողությունների բացակայության հետևանքով պահեստավորված խոտը պահպանվում է բաց երկնքի տակ և կորցնում իր սննդարար արժեքը տեղումների արդյունքում:

Կերի արտադրության, մատակարարման և կառավարման ոչ արդյունավետ գործելակերպերի պատճառով զարնան և ամռան շրջանից հետո կտրուկ ընկնում են կերի որակն ու սնուցողական տվյալները:

Տնտեսվարողների գերակշռող մեծամասնությունը չի կիրառում կերակրման արդյունավետ ռեժիմ և կերաբաժին՝ կերերի հետազոտման լաբորատորիաների և կերերի արտադրության կարողությունների բացակայության պատճառով:

Տնտեսվարողները հանախ խոտը հավաքում են դրա հասունացման ուշ շրջանում՝ մեծ ծավալ ապահովելու նպատակով: Դրա արդյունքում, սակայն խոտի սննդարար հատկանիշները կտրուկ նվազում են:

Տնտեսությունները սովորաբար իրենց կենդանիներին կերակրում են օրվա որոշակի ժամերի (առավոտյան և երեկոյան), սակայն նման գործելակերպը արդյունավետ չէ:



# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ուսումնասիրություն

## Խոշոր եղջերավոր կենդանիների հիմնական կերերի գները

Հանրությանը մատչելի տեղեկատվական աղբյուրներում խոշոր եղջերավոր կենդանիների կերերի գների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակ է, իսկ որոշ դեպքերում էլ բացակայում է, այնուամենայնիվ Խորհրդատուն կարողացել է գտնել կերերի որոշ տեսակների միջին շուկայական գները, որոնք առաջարկված են եղել [www.list.am](http://www.list.am) կայքով՝

Խոտի տուկ - 500-2,000 դրամ/հատ, միջինում 1200 դրամ

Խտացրած կերեր 110-120դրամ/կգ


Ծղոտ - 600դրամ/կապ

## Դիտարկումներ

- Հայաստանում տարեկան արտադրվում է 20,000-30,000 տոննա համակցված կեր:
- 2016թ-ին ՀՀ-ում արտադրվել է 87,422 տոննա թեփ, հացահատիկային մշակաբույսերի մշակումից ստացված այլ մնացուկներ, 2015թ.-ին ներմուծվել է 12,440 տոննա պատրաստի կեր:
- Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին, պատրաստի կերի արտադրության և ներմուծման ծավալների փոփոխությունը որևէ հստակ միտում չի դրսևորում:
- ՀՀ-ում ԽԵԿ-ի կերակրման հետ կապված խնդիրների հիմնական պատճառներն են կերերի արտադրության սեզոնայնությունը, տեղական կերերի ցածր որակը, պահեստավորման կարողությունների բացակայությունը, կերակրման անարդյունավետ ռեժիմը և կերաբաժինը և այլն:
- Խոտի տուկի գինը տատանվում է 500-2,000 դրամի միջև, միջինում կազմելով 1,200 դրամ, խտացրած կերերի 1 կգ-ի արժեքը 110-120 դրամ է, իսկ մեկ կապ ծղոտինը՝ 600 դրամ:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ուսումնասիրություն

## ՀՀ լանդշաֆտային գոտիների ուսումնասիրություն



ՀՀ-ում լավագույն արոտավայրերը և խոտհարքի համար տարածքները, իրենց բուսականությամբ սփռված են Մերձալպյան բարձրալեռնային և Ալպյան բարձրալեռնային շրջաններում, և առավել քիչ Մարգագետնատափաստանային միջին լեռնային շրջաններում:

Վերոնշյալ լանդշաֆտային գոտիների բնութագիրը, ինչպես նաև այդ գոտիների էկոհամակարգի ամփոփ նկարագիրը ներկայացված է ստորև՝

### Մերձալպյան և ալպյան լանդշաֆտները

Մերձալպյան և ալպյան լանդշաֆտները, հանդիսանալով արժեքավոր գենո և գենոֆոնդի կրողներ, հանրապետության խոտհարքի և ամառային արոտների հիմնական վայրերն են:

Գյուղատնտեսական հանդակների կառուցվածքում խոտհարքները կազմում են 10 %, իսկ արոտավայրերը՝ 49 %: ՀՀ ԳՆ տվյալների համաձայն՝ Հայաստանում առկա է 1 մլն. 118 հազար հա արոտավայր (բոլոր լանդշաֆտային գոտիներում), որից արդյունավետ օգտագործվում է միայն 30 տոկոսը: Ներկայումս անասնապահական մթերքների, մասնավորապես՝ տարեկան արտադրվող կաթի շուրջ 70 %-ը, մսի՝ կեսից ավելին, բրդի ողջ քանակը ստացվում է արոտային կերերի օգտագործումից:

Ներկայումս բնական կերհանդակների կենսաբանական և տնտեսական վիճակը դեռևս հեռու է բավարար լինելուց: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետության արոտավայրերի շուրջ 57 %-ը դեգրադացված են (հողատարված, ոտնահարված, կազմալուծված): Դրա հիմնական պատճառը արոտավայրերի անկանոն օգտագործումն է, ինչպես նաև խնամքի և բարելավման միջոցառումների գրեթե իսպառ բացակայությունը:

Բացի այդ, այսօր խիստ անհամաչափ են օգտագործվում գյուղամերձ և հեռագնա արոտավայրերը: Եթե վերջիններն օգտագործվում են թերբեռնված կամ գրեթե չեն օգտագործվում, ապա գյուղամերձները, ընդհակառակը՝ խիստ գերծանրաբեռնված են:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ուսումնասիրություն

**Մարգագետնային բուսականությունը** հանրապետության ամենատարածված տիպերից է, որը զբաղեցնում է ամբողջ տարածքի 25-30%-ը և կազմում հանրապետության արոտների ու խոտհարքների գերակշռող մասը: Մարգագետինների հիմնական մասը բնական ծագում ունեն և համարվում են առաջնային: Որոշ մասն ունի երկրորդային ծագում, հիմնականում առաջացել է մարդու տնտեսական գործունեության հետևանքով՝ կապված անտառի վերին սահմանի իջեցման, ստորին սահմանի բարձրացման կամ ամբողջական զանգվածների ոչնչացման հետ:

Հայաստանում մարգագետնային համակեցություններն ըստ տեղաբաշխման կարելի է բաժանել հիմնականում երկու խմբի՝ լեռնային և բարձր լեռնային, որոնք իրենց ծագումով լինում են առաջնային կամ երկրորդային: Լեռնային առաջնային մարգագետինները զարգանում են սովորաբար միջին լեռնային գոտու վերին մասում, ծովի մակերևույթից 1600-1700 մ բարձրությունից հասնելով մինչև 2700-2800 մ բարձրության:

Համակեցություններում գերակշռում են մարգագետնային և տափաստանային խոտա-բուսատեսակները, այդ իսկ պատճառով անվանում են մարգագետնա-տափաստանային բուսական տիպ՝ օժտված մարգագետնային և տափաստանային համակեցություններին բնորոշ հատկանիշներով: ՀՀ-ում մարգագետնատափաստանային բուսականությունը առաջացնում է լավ արտահայտված գոտի: Այն լավ է զարգանում հարավային լանջերում: Հյուսիսային կողմնադրության լանջերում զգալիորեն կրճատվում է տարածման չափերը, իսկ ավելի խոնավ վայրերում՝ ամբողջությամբ բացակայում է: Նշված բուսականությունը լավ արտահայտված է **Գեղամա և Արագած լեռներում, Ծիրակի հարթավայրում, Լոռու, Սյունիքի, Տավուշի մարզերում** և այլուր: Մարգագետնատափաստանային գոտու բուսական համակեցությունները աչքի են ընկնում բազմազանությամբ, որոնք հանդիպում են հիմնականում հացազգի, հացազգա-տրախոտային, տարախոտա-հացազգի, տարախոտային, երեքնուկա-հացազգի, երեքնուկա-տարախոտային խմբավորումներով: Տարախոտային և տարախոտա-հացազգի համակեցությունները հանդիպում են գլխավորապես թեք լանջերում և զբաղեցնում են զգալի տարածություն:

Հարթ և թույլ թեքությունների վրա աճող համակեցություններում

տիրապետում են թիթեռնածաղկավոր բույսերը, որոնք միախառնվելով հացազգիներին և տարախոտերին առաջացնում են երեքնուկա-հացազգի և երեքնուկա-տարախոտային խմբավորումներ: Վեգետացիայի ընթացքում բուսական զանգվածի դինամիկային բնորոշ են բերքատվության երկու առավելագույն քանակներ: Առաջինը համընկնում է էֆիմերոփոյների մասսայական ծաղկման շրջանին (ապրիլի վերջ և մայիսի սկիզբ՝ 40-50 գ/մ<sup>2</sup>), երկրորդը, որը հիմնականն է, Էդիֆիկատորների ծաղկման ու սերմերի կաթնամոմային հասունացման հետ՝ հուլիսին: Վաղ զարնանային բուսածածկը կազմում է 30-40%, տիրապետում են էֆեմերոփոյները: Միավոր մակերեսում աճում է միջին հաշվով 200 բուսատեսակ: Վաղ զարնանային բուսականության զարգացումը սովորաբար տևում է 25-30 օր: Երկրորդային մարգագետինների, այսպես կոչված հետանտառային մարգագետինների առաջացման հիմնական պատճառը ինչպես նշվեց, մարդու կողմից անտառների ոչնչացումն է: Դրանք աչքի են ընկնում բուսածածկի խայտաբղետությամբ և համեմատաբար սակավ տեսակային կազմով: Բուսածածկը կազմում է մինչև 85-95%, բուսածածկի բարձրությունն առանձին դեպքերում կազմում է մինչև 100-120սմ, իսկ չոր զանգվածը՝ 350-450 գ/մ<sup>2</sup>:

**Դիտարկումներ**

- Գյուղատնտեսական հանդակների կառուցվածքում խոտհարքները կազմում են 10%, իսկ արոտավայրերը՝ 49%: ՀՀ ԳՆ տվյալների համաձայն՝ Հայաստանում առկա է 1 մլն. 118 հազար հա արոտավայր (բոլոր լանդաֆտային գոտիներում), որից արդյունավետ օգտագործվում է միայն 30 տոկոսը:
- Անասնապահական մթերքների, մասնավորապես՝ տարեկան արտադրվող կաթի շուրջ 70%-ը, մսի՝ կեսից ավելին, բրդի ողջ քանակը ստացվում է արոտային կերերի օգտագործումից:
- ՀՀ հիմնական արոտավայրերը տեղաբաշխված են **Գեղամա և Արագած լեռներում, Ծիրակի հարթավայրում, Լոռու, Սյունիքի, Տավուշի մարզերում**:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ուսումնասիրություն

## Տավարաբուծության մասնագիտացումը ըստ աշխարհագրական գոտիների

**Արարատյան հարթավայր:** Այս տարածաշրջանը նպատակահարմար է բացառապես տավարաբուծական այն տնտեսությունների համար, որոնք ունեն կաթնային ուղղվածություն: Այս տարածաշրջանի նախիրներում կովերի տեսակարար կշիռը պետք է կազմի 50-55%: Այստեղ լայն տարածում ունեցող կովկասյան գորշի փոխարեն նպատակահարմար է բուծել բարձր կաթնատվություն ունեցող կովերի ցեղատեսակները, ինչպիսիք են հոլշտեյնը և սևաբդետը:

**Նախալեռնային գոտի:** Այս տարածաշրջանը նպատակահարմար է տավարաբուծական այն տնտեսությունների համար, որոնք ունեն կաթնամսատու ուղղվածություն: Այդ տեսանկյունից այս տարածաշրջանում նպատակահարմար է բուծել շվից և սիմենթալ տավարի ցեղատեսակները:

**Լեռնային գոտի:** Այս տարածաշրջանը նպատակահարմար է տավարաբուծական այն տնտեսությունների համար, որոնք ունեն մսակաթնատու և մսատու ուղղվածություն: Այստեղ նպատակահարմար է հիմնականում բուծել կովկասյան գորշ տավարի ցեղատեսակը:

## Արոտային շրջանի տևողություն

Արոտային շրջանի տևողությունը հանրապետության ցածրադիր, հարթավայրային և նախալեռնային գոտիներում կազմում է՝ խոշոր եղջերավոր կենդանիների համար՝ 210-240 օր, մանր եղջերավոր կենդանիների համար՝ 270-300 օր, բարձր լեռնային գոտիներում համապատասխանաբար՝ 150-170 օր և 180-210 օր:

Միևնույն արոտատարածքում ամբողջական բոլորապտույտով արածեցումների թիվն ամբողջ արոտային շրջանում սահմանվում է՝

- 1) կիսաանապատային և չոր տափաստանային գոտիներում՝ 2-3 անգամ.
- 2) տափաստանային գոտում՝ 3-4 անգամ.

- 3) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 4-5 անգամ.
- 4) ենթալպյան գոտում՝ 5-6 անգամ.
- 5) ալպյան գոտում՝ 3 անգամ:

## Արածեցման սկսում

Կենդանիների արածեցումն սկսվում է զարնանը բույսերի վերան սկսվելուց 15-18 օր հետո, երբ արոտավայրում բույսերը հասել են հասունացման, իսկ արոտականացի բարձրությունը հողի մակերեսից կազմում է՝

- 1) կիսաանապատային, չոր տափաստանային և ալպյան գոտիներում՝ 6-8 սմ.
- 2) տափաստանային գոտում՝ 10-12 սմ.
- 3) մարգագետնատափաստանային, հետանտառային և ենթալպյան գոտիներում՝ 12-15 սմ բարձրություն:

Որպեսզի կատարվի հերթական արածեցում, այն պետք է տևի 20-25 օր, որպեսզի բույսերը սկսեն վերան տալ, հետագա բոլորապտույտները պետք է տալ 35-40 օր հետո: Արոտավանդակում արածեցման տևողությունը առաջին բոլորապտույտի ժամանակ պետք է կազմի 2-3 օր, իսկ հաջորդ բոլորապտույտները 3-5 օր, ոչ ավելին:

### Դիտարկումներ


- Արածեցումների առավելագույն թիվը ընկնում է ենթալպյան գոտու համար, որտեղ այն կազմում է 5-6 անգամ, այնուհետև մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 4-5 անգամ:
- Տարվա մեջ արոտային շրջանը կազմում է 150-170 օր բարձր լեռնային գոտիներում և 210-240 օր հարթավայրային և նախալեռնային գոտիներում, որը նշանակում է, որ տարվա 50 %-ից մինչև 65 %-ը խոշոր եղջերավոր կենդանիների կերը հիմնականում կազմում է արոտը:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ուսումնասիրություն

## ՀՀ-ում խոտհարքների և արոտավայրերի ուսումնասիրություն

### Գյուղատնտեսական հողերը՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի

Ստորև բերված գրաֆիկում ներկայացված են գյուղատնտեսական հողատարածքները և արոտավայրերի մասնաբաժինները այդ հողատարածքներում ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի:



Աղբյուրը: [http://www.cadastre.am/page/land\\_balance](http://www.cadastre.am/page/land_balance)

Գյուղատնտեսական հողատարածքների ամենամեծ մասը գտնվում է Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում, որտեղ արոտավայրերը կազմում են գյուղատնտեսական հողերի համապատասխանաբար 53% և 48%-ը:


Որպես գյուղատնտեսական հողերի մասնաբաժին արոտավայրերը ամենամեծ կշիռն ունեն Արագածոտնի և Լոռվա մարզերում, համապատասխանաբար կազմելով՝ 60% և 58%:

Ընդհանուր առմամբ գրեթե բոլոր մարզերում գյուղատնտեսական հողատարածքների մոտ կեսը բաժին է ընկնում արոտավայրերին:

Բացառություն են կազմում Արմավիրի մարզը և Երևան քաղաքը, որտեղ արոտավայրերի մասնաբաժինը գյուղատնտեսական հողերում ընդամենը կազմում է 22%:

Ընդհանուր առմամբ ՀՀ-ում առկա գյուղատնտեսական հողերի մոտ 51%-ը զբաղեցնում են արոտավայրերը:

## ՀՀ-ում արոտավայրերի և խոտհարքների ուսումնասիրություն




Աղբյուրը: [http://www.cadastre.am/page/land\\_balance](http://www.cadastre.am/page/land_balance)

Խոտհարքների և արոտավայրերի մակերեսները գրեթե չեն փոփոխվել վերջին 4 տարիների ընթացքում: Այնուամենայնիվ շնորհիվ ներկայացված գրաֆիկի կարելի է նկատել, որ տարեց տարի տեղի է ունենում ինչպես արոտավայրերի, այնպես էլ խոտհարքների աննշան նվազում:

Խոտհարքների և արոտավայրերի բացվածքը ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 2016թ-ի հուլիսի 1-ի դրությամբ ներկայացված է հաջորդ էջում:

# «-ում խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ուսումնասիրություն




Աղբյուրը: [http://www.cadastre.am/page/land\\_balance](http://www.cadastre.am/page/land_balance)

2016թ-ի հունիսի 1-ի դրությամբ արտադրյալների 45%-ը բաժին է ընկել Գեղարքունիքի (17%), Սյունիքի(14%) և Լոռվա(14%) մարզերին:

Ընդհանուր ամսամբ խոտհարքների մակարդակը բոլոր մարզերում բավականին ցածր է, իսկ Երևանում խոտհարքներ ընդհանրապես չկան:

Խոտհարքների 58%-ը բաժին է ընկնում Գեղարքունիքի և Լոռվա մարզերին, որոնցից յուրաքանչյուրի մասնաբաժինը ընդհանուրի մեջ կազմում է 29%:



Աղբյուրը: [http://www.cadastre.am/page/land\\_balance](http://www.cadastre.am/page/land_balance), <http://armstat.am> Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման հանրագումարները 2010-2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Խորհրդատուի հաշվարկ


Այս և հաջորդ վերլուծության համար դիտարկվել են արտադրյալները և խոտհարքները 2016թ-ի հունիսի 1-ի դրությամբ և խոշոր եղջերավոր կենդանիների 2016-2017թթ հունվարի 1-ի միջին քանակային ցուցանիշը:

Վերևում ներկայացված գրաֆիկում յուրաքանչյուր մարզի համար համադրվել է մարզում առկա խոշոր եղջերավոր կենդանիների քանակը այդ մարզում տեղակայված արտադրյալների և խոտհարքների տարածքների հետ:

Ներկայացված գրաֆիկից կարելի է նկատել, որ Սյունիքում և Վայոց Ձորում արտադրյալների տարածքները բավականին մեծ են համեմատած այդտեղ արածող խոշոր եղջերավոր կենդանիների, իսկ Արմավիրի մարզում խոշոր եղջերավոր կենդանիները շատ ավելի շատ են քան արտադրյալները և հետևաբար այդ մարզում խոշոր եղջերավոր կենդանիներին բաժին ընկնող արտադրյալները բավականին քիչ են:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների կերերի ուսումնասիրություն

Յուրաքանչյուր մարզում մեկ խոշոր եղջերավոր կենդանուն բաժին ընկնող արոտավայրերը և խոտհարքները ներկայացված են ստորև բերված գրաֆիկում:



Աղբյուրը: [http://www.cadastr.am/page/land\\_balance](http://www.cadastr.am/page/land_balance), <http://armstat.am>, Խորհրդատուի հաշվարկ

Գրաֆիկից պարզ է դառնում, որ մեկ խոշոր եղջերավոր կենդանու հաշվով ամենաշատ արոտավայր բաժին է ընկնում Վայոց Ձորի, իսկ ամենաքիչը՝ Երևան քաղաքի և Արմավիր մարզի կենդանիներին: Արոտավայրերի առատություն առկա է նաև Սյունիքի, Տավուշի և Լոռվա մարզերում: Ամենաշատ խոտհարքները մեկ կենդանու հաշվով բաժին են ընկնում Լոռվա մարզին, ամենաքիչը կրկին՝ Արմավիրին:

Այսպես, համաձայն ներկայացված տվյալների՝ արոտավայրերի առատության տեսանկյունից խոշոր եղջերավոր կենդանիների բուծման համար ամենանպաստավոր մարզն է հանդիսանում Վայոց Ձորը, իսկ ամենաքիչ նպաստավորը՝ Արմավիր մարզը և Երևան քաղաքը:

Մարզերից մեծ մասում արոտավայրերը միջինում ծանրաբեռնված (1 հա-ի վրա 1 պայմանական գլուխ) են 55%-ով, ինչը նշանակում է որ այս մարզերում

արոտավայրերի պոտենցիալը լիարժեք չի օգտագործվում:

Արոտավայրերի պոտենցիալը ամբողջությամբ օգտագործվում է միայն Շիրակի մարզում, որտեղ ծանրաբեռնվածությունը կազմում է 0.93 գլուխ/հա, գերծանրաբեռնված են Երևանում (4.35) և Արմավիրում (2.82):

ՀՀ-ում արոտավայրերի առկա քանակի պարագայում ԽԵԿ-ի գլխաքանակի առավել նպաստավոր սահման է համարվում 800-850 հազար գլուխը, իսկ ՀՀ-ում 2017թ-ի հունվարի 1-ի դրությամբ առկա է եղել մոտ 656 հազար գլուխ, հետևաբար ԽԵԿ-ի գլխաքանակը ցածր ծանրաբեռնվածություն ունեցող մարզերում կարելի է ավելացնել:

## Դիտարկումներ

- ՀՀ-ում առկա գյուղատնտեսական հողերի մոտ 51%-ը զբաղեցնում են արոտավայրերը:
- Որպես գյուղատնտեսական հողերի մասնաբաժին՝ արոտավայրերը ամենամեծ կշիռն ունեն Արագածոտնի (60%) և Լոռվա մարզերում (58%):
- Խոտհարքների և արոտավայրերի մակերեսները գրեթե չեն փոփոխվել վերջին 4 տարիների ընթացքում և 2016թ-ի հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ-ում առկա է եղել 1,051,286 հեկտար արոտավայր և 121,060 հեկտար խոտհարք:
- 2016թ-ի հուլիսի 1-ի դրությամբ արոտավայրերի մեծ մասը բաժին է ընկել Գեղարքունիքի (17%), Սյունիքի(14%) և Լոռվա(14%) մարզերին, իսկ խոտհարքների մեծ մասը՝ Գեղարքունիքի (29%) և Լոռվա մարզերին (29%):
- Մեկ կենդանուն բաժին ընկնող արոտավայրերի առատության տեսանկյունից ԽԵԿ-ի բուծման համար ամենանպաստավոր մարզն է՝ Վայոց Ձորը, իսկ ամենաքիչը՝ Արմավիրը և Երևան քաղաքը:
- Հաշվի առնելով մարզերի մեծ մասում արոտավայրերի ցածր ծանրաբեռնվածությունը, ԽԵԿ-ի գլխաքանակը հանրապետությունում կարելի է ավելացնել 25-30%-ով:

# ՀՀ-ում կաթի արտադրության ուսումնասիրություն

ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների, վերջիններիս կազմի և թվային դինամիկայի, ինչպես նաև կերերի ուսումնասիրությունն իրականացնելուց հետո, Խորհրդատուն իրականացրել է ՀՀ-ում կաթի արտադրության ուսումնասիրություն, որն իր մեջ ներառել է հետևյալ հիմնական բաժինները՝

- Կովերի կաթնատվությունը,
- ՀՀ-ում կաթի արտադրության ծավալների ուսումնասիրություն,
- Գյուղատնտեսական շուկայում կաթնամթերքի գների ուսումնասիրություն,
- Գյուղատնտեսական սարքավորումների ուսումնասիրություն:

## Կովերի կաթնատվությունը

### Կաթնատվության ցիկլի նկարագրություն

Կաթնատու կովի տարեկան ցիկլը բաղկացած է հետևյալ երկու փուլերից՝ լակտացիա, որն իր հերթին ընդգրկում է ծնի, սերվիս-շրջանի, բեղմնավորման և հղիության առաջին 7 ամիսների ժամանակահատվածը և ցամաքեցում, որն ընդգրկում է հղիության վերջին 2 ամիսը:

Օրացույցային տարվա ընթացքում կովը պետք է ծնի, սկսի և ավարտի լակտացիան:

Լակտացիան դա ծնից մինչև ցամաքեցում ընկած կաթնատվության շրջանն է:

Կովերի լակտացիոն ֆունկցիան խստորեն կապված է վերարտադրության ֆունկցիայի հետ: Լակտացիայի միջին տևողությունը կազմում է 270-305 օր:

Կաթնագոյացման և կաթնարտազատման պրոցեսը սկսվում է անմիջապես ծնից հետո, կամ նույնիսկ դրանից մեկ, երկու օր առաջ: Ծնից հետո առաջին 6-8 օրը կովը արտադրում է նորմալ կաթից իր Ֆիզիկա-քիմիական բաղադրությամբ

և օրգանոլեպտիկ հատկությամբ խիստ տարբերվող մի հեղուկ՝ խիժ, որն անհրաժեշտ է նորածին հորթին: Խիժային շրջանից հետո կաթը նորմալանում է և նրա քանակը սկսում է ավելանալ մինչև լակտացիայի 2-3-րդ ամիսները, որից հետո կիթերը նվազում են:

Կովերը հիմնականում իրենց առավելագույն կաթնատվությանը հասնում են 4-6-րդ լակտացիաների ընթացքում, հետագայում կիթերը աստիճանաբար նվազում են:

Սերվիս-շրջանը ծնից մինչև բեղմնավորումն ընկած ժամանակահատվածն է: Նորմալ լակտացիա ապահովելու համար կովը պետք է բեղմնավորվի ծնից 2-3 ամսից ոչ ուշ:

Ցամաքի շրջանը ցամաքեցումից մինչև ծինը ընկած ժամանակահատվածն է: Դրա տևողությունը պետք է կազմի միջինը 60 օր:

### Կաթնատվության վրա ազդող գործոնները

Կովերի կաթնային մթերատվությունը որոշվում է գենետիկական (ժառանգական) բնույթի, ոչ գենետիկական բնույթի և արտաքին միջավայրի գործոններով:

- Գենետիկական (ժառանգական) բնույթի գործոններից են՝ ցեղը և հատկանիշների ժառանգումը:
- Ոչ գենետիկական բնույթի գործոններից են՝ կենդանի զանգվածը, լակտացիայի և հղիության տևողությունը, սեռացանկությունը և սերվիս շրջանը, կենդանու առողջությունը, ցամաքի շրջանը, առաջին սերմնավորման տարիքը, կենդանու տարիքը և սնվածությունը:
- Արտաքին միջավայրի գործոններից են՝ ծնի սեզոնը, կովերի կթի տեխնոլոգիան, կերակրումը, պահվածքի պայմանները, օդի ջերմաստիճանը, հարաբերական խոնավությունը և այլն:



# ՀՀ-ում կաթի արտադրության ուսումնասիրություն

Ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ կովերի կաթնատվությունը ավելի բարձր է աշնանա-ձմեռային և ձմեռա-գարնանային ծինների դեպքում: Սակայն ծնի սեզոնը և տարվա եղանակը ազդում են այն դեպքում, երբ կերի պահանջի հետ կան խնդիրներ: Իսկ երբ կերի պահանջը բոլոր սեզոններին բավարարված է, ապա այդ գործոնների ազդեցությունը շատ թույլ է:

## Կաթի քիմիական բաղադրությունը և վերջինիս փոփոխությունը լակտացիայի ընթացքում

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է կաթի քիմիական կազմը ըստ բաղադրիչների մասնաբաժինների և վերջիններիս հնարավոր տատանումների:

### Կաթի քիմիական կազմը

Ցուցանիշ	Միջին պարունակություն (%)	Տատանումներ (%)
Ձուր	87.5	82.7-90.7
Չոր նյութեր, որից	12.5	9.3-17.3
• Ցուր	3.8	2.7-7.0
• Սպիտակուց, այդ թվում	3.3	2.0-5.0
– Կազեին	2.7	2.2-4.5
– Ալբումին	0.5	0.2-0.6
– Գլոբուլին	0.1	0.05-0.15
• Կաթնաշաքար (լակտոզ)	4.7	4.0-5.3
• Չանքային տարրեր (մոխիր)	0.7	0.5-1

Աղբյուրը: <https://library.anau.am/images/stories/grqer/Anasabutsuyun/Tavarabucutyun.pdf>

Կախված ֆիզիոլոգիական, սեզոնային, կերակրման և այլ գործոններից լակտացիայի ընթացքում փոփոխվում է նաև կաթի քիմիական կազմը:

Լակտացիայի 2-3-րդ ամիսներին յուղի և սպիտակուցի պարունակությունը պակասում է, այնուհետև աստիճանաբար բարձրանում է և վերջում հասնում առավելագույնին:

Ցամաքեցումից մի քանի օր առաջ կաթի կազմը խիստ փոփոխվում է և յուղի պարունակությունը հասնում է 8-9 %-ի, շաքարի տոկոսը պակասում է, ընկնում է թթվայնությունը, փոքր ինչ բարձրանում են սպիտակուցների և հանքային նյութերի քանակը:

Գոյություն ունի կորելացիոն բացասական կապ ինչպես կիթի և կաթի յուղի, այնպես էլ կիթի և կաթի սպիտակուցի միջև և կորելացիոն դրական կապ կաթի յուղի և սպիտակուցի միջև:

## Կովերի կաթնային մթերատվությունը ըստ լակտացիաների

Ցուցանիշները	1-ին լակտացիա	2-րդ լակտացիա	3-րդ լակտացիա և բարձր
Կիթը (կգ)	3,126	3,460	3,623
Ցուր (%)	4	4	4
Ցուր (կգ)	118	129	135
Սպիտակուց (%)	3	3	3
Սպիտակուց (կգ)	106	119	123

Աղբյուրը: <https://library.anau.am/images/stories/grqer/Anasabutsuyun/Tavarabucutyun.pdf>

## Կաթնատվության արդյունավետության գնահատումը

Կովի կաթնատվության արդյունավետության գնահատման համար հիմնականում օգտագործում են հետևյալ ցուցանիշները՝

- Կովի յուրաքանչյուր 100 կգ կենդանի զանգվածի դիմաց կլաված կաթի քանակը: Այս ցուցանիշը ցույց է տալիս թե ինչպիսին է կենդանու մթերատվության ուղղությունը՝ օրինակ կաթնատու տիպի է, թե ոչ: Նորմալ է համարվում, երբ այդ ցուցանիշը մոտ է 1000 կգ-ին: Կովը բարձր կաթնատու է համարվում, երբ կիթը 8-10 անգամ գերազանցում է իր կենդանի զանգվածին:
- 1 կգ կաթի համար ծախսված կերի միավորի քանակը (կերերի ծախսը) և 1 կերի միավորի հաշվով ստացված կաթի քանակը (կերի հատուցումը կաթով):

# ՀՀ-ում կաթի արտադրության ուսումնասիրություն

- Մեկ տարում կովից կթված կաթի քանակը

## ՀՀ-ում կովերի միջին կաթնատվությունը

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ՀՀ-ում մեկ կովի տարեկան միջին կաթնատվությունը վերջին յոթ տարիների համար: Այս ցուցանիշը հաշվարկվել է յուրաքանչյուր տարվա ընթացքում արտադրված կաթի ծավալները բաժանելով այդ տարվա կովերի ընդհանուր քանակին:

### Մեկ կովի տարեկան միջին կաթնատվությունը (կիլոգրամ)

	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Կաթնատվությունը	2,205	2,123	2,038	2,122	2,231	2,287	2,548

Աղբյուրը: ՀՀ ԱՎՃ, <http://armstat.am>, Խորհրդատուի հաշվարկ

Մեկ կովի տարեկան միջին կաթնատվությունը 2013թ-ից սկսած դրսևորել է աճի միտում և 2016թ-ին կազմել է 2,546 կիլոգրամ: Այս ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ աճել է 11%-ով:

Ընդհանուր առմամբ ներկայացված ժամանակաշրջանի համար մեկ կովի տարեկան միջին կաթնատվությունը կազմել է 2,222 կիլոգրամ: Այս ցուցանիշը բավականին կանխատեսելի էր, եթե հաշվի առնենք այն փաստը, որ Հայաստանում գերակշռում է ԽԵԿ-ի կովկասյան գորշ ցեղատեսակը, որի տարեկան միջին կաթնատվությունը կազմում է ` 2000-2500 կգ:

## Կիթի կազմակերպումը

Արտադրողականության բարձրացման և կաթի բարձր որակի ապահովման տեսանկյունից կարևոր է կովերի կիթի գործընթացի ճիշտ կազմակերպումը:

Կիթերի թիվը երկուսից երեքի հասցնելով, կաթնատվությունը բարձրանում է 8-12 %-ով: Արագ և լիարժեք կիթը ուղեկցվում է կաթնատվության բարձրացմամբ, կաթի բաղադրության բարելավմամբ:

Համեմատաբար փոքր տնտեսությունները, որոնք ունեն քիչ քանակությամբ կովեր և նաև ոչ բավարար ֆինանսական միջոցներ կիթի համար նախատեսված սարքեր ձեռք բերելու համար, կովերի կիթը իրականացնում են ձեռքով:


Կիթի իրականացումը ձեռքով կաթի աղտոտման, ինչպես նաև կենդանիների և մարդկանց շրջանում հիվանդությունների (մաստիտ, բրյուցելոզ) տարածման հիմնական աղբյուրներից մեկն է և հետևաբար այս խնդիրներից խուսափելու համար կարևոր է անցում կատարել սարքերով կիթին:

Սարքերով կիթը կարող է իրականացվել ինչպես ավտոմատացված եղանակով՝ մեծ սարքավորումների միջոցով, այնպես էլ փոքր շարժական կիթի մեքենաներով:

## Հարցման արդյունքների ամփոփում

Հարցման մասնակցած տնտեսությունների մեծ մասը կովերի կիթը իրականացնում են սարքերի միջոցով:

Ընդ որում Վամաքս ՄՊԸ-ում կովերի կիթի գործընթացը ավտոմատացված է և միաժամանակ կյծվում է 24 կով, իսկ Արզնու տոհմային ԹՏԻՄ-ն, որը բավականին խոշոր տնտեսություն է և ունի 200-ից ավել կաթնային հոտի կով, կիթը իրականացնում է բացառապես ձեռքով մեկնաբանելով որ ձեռքով իրականացվող կիթն ավելի քիչ սթրեսային է կենդանիների համար:



# ՀՀ-ում կաթի արտադրության ուսումնասիրություն

## Կաթի նախնական մշակումը

Կաթի նախնական մշակումը տնտեսությունում ընդգրկում է հետևյալ փուլերը՝ կլաված կաթի հաշվառումը, մաքրումը, պաղեցումը, պահպանումը և անհրաժեշտության դեպքում՝ փոխադրումը: Կլաված կաթի քանակը որոշում են կշռով կամ ծավալով: Կաթի նախնական մշակումը, մեխանիկական խառնուրդներից կատարվում է ֆիլտրի միջոցով կամ կենտրոնախույս ուժի ազդեցությամբ գործող մաքրման սարքավորումով: Կաթը մաքրում են մի քանի տակ ծաված թանգիֆով քամելով, լավ է լավսանի կտորով, որոնց հաճախակի պետք է լվանալ մաքուր ջրով: Մաքուր կաթը պետք է լցնել փակ կաթնամանները և պաղեցնել: Պաղեցման ջերմաստիճանը կախված է պահելու տևողությունից: Անհատական տնտեսություններում կաթը կարելի է պաղեցնել սառը ջրավազանում, հոսող ջրում կամ սառույցի միջոցով, իսկ քիչ քանակի դեպքում՝ նաև սառնարանում:

## Կաթի պահպանման ջերմաստիճանը

Կաթը պահելու տևողությունը (ժամ)	Պաղեցման ջերմաստիճան (C)
6-12	8-10
12-18	6-8
18-24	5-6
24-36	4-5
36-48	1-2

Աղբյուրը: <https://library.anau.am/images/stories/grqer/Anasabutsuyun/Tavarabucutyun.pdf>


## Դիտարկումներ

- Լակտացիայի (կաթնատվության շրջան) միջին տևողությունը կազմում է 270-305 օր, իսկ ցամաքի շրջանինը՝ 60 օր:
- Կովերի կաթնային մթերատվությունը որոշվում է գենետիկական (ժառանգական) բնույթի, ոչ գենետիկական բնույթի և արտաքին միջավայրի գործոններով:
- Գոյություն ունի կորելացիոն բացասական կապ ինչպես կիթի և կաթի յուղի, այնպես էլ կիթի և կաթի սպիտակուցի միջև և կորելացիոն դրական կապ կաթի յուղի և սպիտակուցի միջև:
- ՀՀ-ում մեկ կովի տարեկան միջին կաթնատվությունը 2016թ-ին կազմել է 2,546 կգ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 11%, իսկ վերջին 7 տարիների միջինացված ցուցանիշը կազմել է 2,222 կգ:
- Կիթերի թիվը երկուսից երեքի հասցնելով, կաթնատվությունը բարձրանում է 8-12 %-ով:
- Կաթի մաքրության ապահովման և տարբեր տեսակի հիվանդություններից խուսափելու նպատակով նախընտրելի է կիթը իրականացնել սարքերի միջոցով և ոչ թե ձեռքով: Հարցմանը մասնակցած տնտեսությունների (4 տնտեսություն) մեծ մասը կովերի կիթը իրականացնում են սարքերի միջոցով:

# ՀՀ-ում կաթի արտադրության ուսումնասիրություն

## ՀՀ-ում կաթի արտադրության ծավալների ուսումնասիրություն

### ՀՀ-ում կաթի արտադրության և ներքին սպառման ծավալների դինամիկայի ուսումնասիրություն



Աղբյուր: ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am>, Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2010-2017թթ-ին, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010-2017թթ-ին (Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն)


Կաթի արտադրության ծավալները ՀՀ-ում դրսևորում են աճող դինամիկա, վերջին յոթ տարվա ընթացքում տարեց տարի աճելով միջինում մոտ 4%:

2016թ-ին ՀՀ-ում կաթի արտադրության ծավալները 4%-ով աճել են նախորդ տարվա և 21%-ով՝ 2010թ-ի համեմատ:

2017թ-ի առաջին վեց ամսվա արտադրության ծավալները ևս չնչին աճ (0.7%) են արձանագրել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Կաթի արտադրության ծավալների աճին զուգընթաց նվազում են կաթի ներքին սպառման ծավալները: Այսպես, եթե 2010թ-ին ներքին սպառման համար օգտագործվել էր արտադրված կաթի 48%-ը, ապա 2016-ին՝ ընդամենը 37 %-ը:

## Կաթի արտադրության ծավալները ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի՝ վերջին յոթ տարվա կտրվածքով



Աղբյուր: ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am>, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010-2017թթ-ին (Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն)

2016թ-ին կաթի արտադրության ծավալների 50%-ից ավելին բաժին է ընկել Գեղարքունիքի (19%), Շիրակի(15%), Լոռվա(13%) և Արագածոտնի(12%) մարզերին:

Ներկայացված պատկերը բավականին կանխատեսելի էր, հաշվի առնելով այն փաստը, որ կաթնային հոտի կովերի մեծ մասը ևս բաժին է ընկնում վերը թվարկված մարզերին:

Ներկայացված գրաֆիկից կարելի է նկատել, որ բոլոր մարզերում և Երևան քաղաքում կաթի արտադրության ծավալները դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում յուրաքանչյուր տարի դրսևորել են աճի միտում, իսկ վերջիններիս մասնաբաժինները տարվա արտադրության մեջ տարեց տարի գրեթե չեն փոփոխվել:

# ՀՀ-ում կաթի արտադրության ուսումնասիրություն

## Կաթի արտադրությունը բնակչության մեկ շնչի հաշվով

Մտորև բերված աղյուսակում ներկայացված են կաթի արտադրության ծավալները բնակչության մեկ շնչի հաշվով Հայաստանում և մի շարք հարևան երկրներում 2011-2014թթ-ի համար :

## Կաթի արտադրությունը բնակչության մեկ շնչի հաշվով (կիլոգրամ)

Երկիր	2011	2012	2013	2014
Հայաստան	199	204	217	232
Բելառուս	686	715	701	708
Ղազախստան	316	289	289	293
Ղրղզստան	258	252	258	259
Մոլդովա	157	147	148	148
Ռուսաստան	221	222	213	211
Տաջիկստան	90	99	103	103
Ուզբեկստան	231	246	261	
Ուկրաինա	243	250	253	260
Ադրբեջան	179	187	193	197

Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am/am/?nid=81&id=1844>, Միջազգային համեմատություններ (ԱԳՐ անդամ երկրներ)

Համաձայն ներկայացված տվյալների, կաթի առավելագույն ծավալները բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվում են Բելառուսում, իսկ նվազագույնը՝ Տաջիկստանում:

Հայաստանում կաթի արտադրությունը բնակչության մեկ շնչի հաշվով ներկայացված ժամանակահատվածի ընթացքում տարեց տարի աճել է: 2014թ-ին այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է 7%-ով:

Հայաստանում կաթի արտադրության ծավալները բնակչության մեկ շնչի հաշվով ավելի ցածր են քան ներկայացված բոլոր երկրների միջին ցուցանիշը, սակայն Հայաստանի և միջին ցուցանիշի միջև տարբերությունը

աստիճանաբար նվազում է: Այսպես, եթե 2011թ-ին Հայաստանում կաթի արտադրության ծավալները բնակչության մեկ շնչի հաշվով միջին ցուցանիշից ցածր էին 23%-ով, ապա 2014թ-ին Հայաստանի ցուցանիշը միջին ցուցանիշին զիջում էր ընդամենը 4%:


## Դիտարկումներ

- Կաթի արտադրության ծավալները ՀՀ-ում դրսևորում են աճող դինամիկա և վերջին յոթ տարվա ընթացքում տարեց տարի միջինում աճել են մոտ 4%:
- ՀՀ-ում կաթի արտադրության ծավալները 2016թ-ին կազմել են 754 հազար տոննա: Այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է 4%-ով, իսկ 2010թ-ի համեմատ՝ 21%-ով:
- 2016թ-ին կաթի ներքին սպառումը հավասարվել է 278 հազար տոննայի՝ կազմելով արտադրված կաթի 37%-ը:
- 2016թ-ին կաթի արտադրության ծավալների 50%-ից ավելին բաժին է ընկել Գեղարքունիքի (19%), Շիրակի(15%), Լոռվա(13%) և Արագածոտնի(12%) մարզերին:
- 2014թ-ին Հայաստանում կաթի արտադրության ծավալները բնակչության մեկ շնչի հաշվով կազմել են 232 կիլոգրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7%:

# ՀՀ-ում կաթի արտադրության ուսումնասիրություն

## Գյուղատնտեսական շուկայում կաթնամթերքի գների ուսումնասիրություն

**Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին գները ՀՀ-ում:** Ստորև ներկայացված գրաֆիկից կարելի է նկատել, որ ի տարբերություն կաթի և պանրի գների, որոնք դիտարկվող ժամանակահատվածում չեն դրսևորել աճման կամ նվազման հստակ միտում, մաճնի գները յուրաքանչյուր տարի նախորդ տարվա համեմատ աճել են:




Աղբյուր: ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am>, Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում 2011-2017թթ-ին

Գների ամենակտրուկ աճը նկատվել է 2011թ-ին, երբ կաթի, մաճնի և պանրի գները 2010թ-ի համեմատ համապատասխանաբար աճել են 43%, 15% և 45%-ով:

2016թ-ին գները դրսևորել են նվազման միտում: Այսպես կաթի և պանրի գները 2016թ-ին նախորդ տարվա համեմատ նվազել են համապատասխանաբար 6% և 4%-ով, իսկ մաճնի գինը մնացել է անփոփոխ:

**ՀՀ-ում գյուղատնտեսական և սպառողական շուկաներում կաթնամթերքի իրացման գների փոփոխության ուսումնասիրություն:** Հաջորդիվ ներկայացված գրաֆիկից պարզ է դառնում, որ գյուղատնտեսական և

սպառողական շուկաներում կաթնամթերքի իրացման գները կորելացված չեն և մի շուկայում գների աճը ոչ միշտ է ուղեկցվում մյուսի աճով, իսկ ուղեկցվելու դեպքում աճի տեմպերը էականորեն տարբերվում են:



Աղբյուր: ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am>, Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում 2011-2017թթ-ին, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010-2016թթ-ին (Գներ և սակագներ)

2016թ-ին թե գյուղատնտեսական, թե սպառողական շուկաներում կաթնամթերքի իրացման գները նախորդ տարվա համեմատ նվազել են համապատասխանաբար 4.4% և 6.1%-ով:

## Դիտարկումներ

- 2016թ-ին գյուղատնտեսական մթերք արտադրողների հիմնական արտադրատեսակներ իրացման միջին գները դրսևորել են նվազման միտում: Այսպես կաթի և պանրի գները 2016թ-ին նախորդ տարվա համեմատ նվազել են համապատասխանաբար 6% և 4%-ով, իսկ մաճնի գինը մնացել է անփոփոխ:
- 2016թ-ին թե գյուղատնտեսական, թե սպառողական շուկաներում կաթնամթերքի իրացման գները նախորդ տարվա համեմատ նվազել են համապատասխանաբար 4.4% և 6.1%-ով:

# ՀՀ-ում կաթի արտադրության ուսումնասիրություն

## Գյուղատնտեսական սարքավորումների ուսումնասիրություն

Մտորև բերված աղյուսակում ներկայացված են 2014թ-ին գյուղատնտեսական հաշվառման արդյունքում գրանցված կաթի արտադրությանը վերաբերող գյուղատնտեսական սարքավորումները:

### Կաթին վերաբերող գյուղատնտեսական սարքավորումները՝ 10.10.2014-ի դրությամբ

Սարքավորման տեսակը	Քանակը
Կաթի պահպանման սառնարանային սարքավորումներ	386
Կաթ վերամշակող սարքավորումներ	15,329
<b>ԸՆԴԱՄԵՆՆԸ</b>	<b>15,715</b>

Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, <http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a>,  
Գյուղատնտեսական համատարած հաշվառում 2014

Հաշվի առնելով այն փաստը, որ 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ ՀՀ-ում առկա է եղել կաթնային հոտի կով ունեցող 100,850 տնտեսություն և ենթադրելով, որ տնտեսություններից ոչ մեկ չի ունեցել մեկից ավելի կաթի վերամշակման սարքավորում կամ կաթի պահպանման սառնարան, ապա կարելի է եզրակացնել, որ կաթնային հոտի կովեր ունեցող տնտեսություններից առավելագույնը 16% ունի կաթ վերամշակող սարքավորում և 0.4%-ը՝ կաթի պահպանման սառնարան:

Հաշվի առնելով նաև այն փաստը, որ կաթնային հոտի կովեր ունեցող տնտեսություններից 87% ունի մինչև 4 կով, կարելի է ենթադրել, որ կաթի վերամշակման սարքավորումները հիմնականում օգտագործվում են և հետևաբար բաժին են ընկնում այն տնտեսություններին, որոնք ունեն 5-ից ավել կով, իսկ կաթի պահպանման սառնարանները օգտագործվում են համեմատած մեծ (օրինակ 20 կովից ավել) տնտեսությունների կողմից, քանի որ վերջիններիս կաթի արտադրության ծավալներն ավելի մեծ են և հետևաբար կաթի պահպանման անհրաժեշտությունն ավելի շատ է:

Հայաստանում կատարված գործված, բարձր տեխնոլոգիական անասնապահական համալիրների, ինչպես նաև կաթի հավաքման ու վերամշակման սարքավորումները ներմուծվում են: Կաթի վերամշակմանը վերաբերող որոշ սարքերի (կաթի հավաքման սարքեր, կաթի սեպարատոր) ներմուծումը ազատված է ավելացված արժեքի հարկից: Սակայն ԱԱՀ-ի այս արտոնությունը չի տարածվում կաթի և պանրի արտադրությունում օգտագործվող որոշ մեքենաների և սարքերի վրա, մասնավորապես՝ կթելու սարքավորում, կաթի մշակման սարքեր և կերի պատրաստման սարքեր:

## Դիտարկումներ

- 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ ՀՀ-ում առկա է եղել 386 կաթի պահպանման սառնարանային սարքավորում և 15,329 կաթ վերամշակող սարքավորում:
- Քանի որ կաթնային հոտի կովեր ունեցող տնտեսությունների քանակը նույն ժամանակահատվածի դրությամբ հավասար է եղել 100,850-ի, կարելի է ենթադրել, որ կաթի վերամշակման սարքավորումները հիմնականում օգտագործվում են 5-ից ավելի, իսկ կաթի պահպանման սառնարանները 20-ից ավելի կաթնային հոտի կովեր ունեցող տնտեսությունների կողմից:
- Հայաստանում կաթի մթերման և վերամշակման սարքավորումները ներմուծվում են:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների բուծմամբ զբաղվող հիմնական ֆերմաների ուսումնասիրություն

## ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող հիմնական ֆերմաները

Խորհրդատու ուսումնասիրելով հանրությանը մատչելի աղբյուրները և ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունը առանձնացրել է ՀՀ-ում գործող հիմնական և խոշոր տավարաբուծական ֆերմաները, որոնք են Ագրոհոլդինգ Արմենիա ՍՊԸ-ն, Վամաքս ՍՊԸ-ն, Արգնու տոհմային ԹՏԽ ԲԲԸ-ն, Մուկտի Ագրո ՍՊԸ-ն, Դիլի ագրո-արդյունաբերական համալիր ՍՊԸ-ն, Բանդիվան Կաթ ՍՊԸ-ն և Էկոֆարմ ՍՊԸ-ն:

### Ագրոհոլդինգ Արմենիա ՍՊԸ

Հասցե՝ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Պանրագործների թաղ., Անասնապահական համալիր 1

Ագրոհոլդինգ Արմենիան ժամանակակից ընկերություն է, որը շուկայում գործունեություն է ծավալում անասունների, մսամթերքի, կաթնամթերքի, գյուղատնտեսական սարքավորումների իրացման ոլորտում:

Ընկերությունը հիմնադրվել է 1993թ-ին և ի սկզբանե մասնագիտացված է եղել միայն ցեղական անասունների վերարտադրման և կաթի արտադրության ոլորտում: Առաջին անասնաբուծական տնտեսությունը կառուցվել է Ամասիայում, հետագայում ընկերությունը ընդլայնվել և վերակազմավորվել է Հոլդինգի:

2002թ-ին Ընկերությունը Սպիտակ քաղաքում հիմնադրել է նոր անասնաբուծական համալիր, որը դարձել է Ագրոհոլդինգի անասնապահության և կաթի արտադրության կենտրոնական տնտեսությունը, և այսօր համարվում է առաջադեմներից մեկը Հայաստանում: Նույն թվականին ընկերությունը անասնապահական համալիրներ է ձեռք բերել նաև Հրազդանում, Արագածավանում և Ղազանչիում:

Սպիտակի անասնաբուծական համալիրում ընկերությունը բուծում է Հոլտեյն, Սիմենթալ և Շվից ցեղատեսակի խոշոր եղջերավոր կենդանիներ: Այսօր ընկերությունը զբաղվում է ոչ միայն ցեղական անասունների բուծմամբ և բազմացմամբ, այլև իրացմամբ: Ընկերության կողմից տնտեսությունում կիրառվում են անասնապահական գործունեության նոր մոտեցումներ, մասնավորապես՝ ավտոմատացման գործընթաց, ինչը հնարավորություն է տալիս բարձրացնել վերահսկողության արդյունավետությունը և կառավարել որակը:

Ընկերության բոլոր տնտեսություններում աշխատում են միայն բարձր որակավորում ունեցող մասնագետներ՝ անասնաբույժներ, տեխնիկներ և հմուտ ֆերմերներ:

Ագրոհոլդինգ Արմենիա ընկերության առաջնային նպատակներից մեկը կաթի բարձր որակի ապահովումն է, այդ իսկ պատճառով Ընկերությունը ներդրումներ է կատարել կաթի սառեցման և պահպանման համակարգերի և, ավտոմատացված կիթի սարքավորումների մեջ: Կիթի սրահը առանձնանում է իր հիգիենիկ մաքրությամբ, համալրված է կիթի սարքավորումներով և պոմպերով, որոնց միջոցով կթված կաթը ավտոմատ կերպով լցվում է մանրեագերծված մեծ սառնարանների մեջ: Ամբողջ համակարգը լվացվում է մանրեզերծող միջոցներով յուրաքանչյուր կիթի ավարտից հետո, իսկ սառնարանը ամեն օր՝ անմիջապես կաթը հանձնելուց հետո:

Ագրոհոլդինգ Արմենիա ընկերությունը հանդիսանում է Հայաստանի խոշոր կաթնամթերք արտադրողներից Մարիաննա և Բիոկաթ ընկերությունների կաթի հիմնական մատակարարը:



# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների բուծմամբ զբաղվող հիմնական ֆերմաների ուսումնասիրություն

## Վամաքս ՍՊԸ

Հասցե՝ Սյունիքի մարզ, գյուղ Սյունիք

«Վամաքս» ՍՊԸ-ն սկսել է իր գործունեությունը 2007թ.-ին: Տավարաբուծական տոհմային տնտեսություն հիմնելու նպատակով Ընկերությունը Եվրոպայից ներմուծել է 280 գլուխ «Միմենթալ» ցեղատեսակի հղի երինջներ և մոտ 600,000 եվրոյի սարքավորում և գյուղատնտեսական տեխնիկա: Կերային բազան մասնակի ապահովելու համար ընկերությունը մոտակա տարածքներից գնել և վարձակալել է մոտ 500 հա դաշտային տարածքներ, ինչպես նաև ամեն տարի Արցախի, Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններից գնում է մոտ 150 միլիոն դրամի խոտ և հացահատիկային կերեր: Ընդհանուր առմամբ «Վամաքս» ՍՊԸ-ում կատարվել է մոտ 2,5 միլիարդ դրամի ներդրումներ:

Այսօրվա դրությամբ Վամաքս ընկերության տավարաբուծական տոհմային տնտեսությունում խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը կազմում է 601 հատ, որից 320-ը կաթնային հոտի կովեր են: Տնտեսությունը ունի կաթնամսատու ուղղություն և բուծում է երկու ցեղատեսակի խոշոր եղջերավոր կենդանի՝ հոլշտեյն և սիմենթալ: Նախրի վերարտադրության տեսակը ընդլայնված է:

Կենդանիների խնամքը իրականացվում է ստանդարտներին համապատասխան, կերակրման գործընթացը մասնակիորեն ավտոմատացված է: Կովերի կիթը ավտոմատացված է և միաժամանակ կթվում է 24 կով:

## Արզնու տոհմային ԹՏԻՍ ԲԲԸ

Հասցե՝ Կոտայքի մարզ, Արզնի գյուղ (Աբովյանի տարածաշրջան)

Արզնու տոհմային ԹՏԻՍ ԲԲԸ-ին պատկանող տավարաբուծական տոհմային տնտեսությունը ունի 1242 խոշոր եղջերավոր կենդանի, որոնցից 267-ը կաթնային հոտի կովեր են:

Տնտեսությունում միաժամանակ զարգանում են տավարաբուծության երեք ուղղություններ՝ կաթնատու, կաթնամսատու և մսատու, այդ իսկ պատճառով ընկերությունն ունի տարբեր ցեղատեսակների խոշոր եղջերավոր կենդանիներ, այդ թվում՝ կովկասյան գորշ, հոլշտեյն, ֆլեկվի, աբերդին անգուս, հալովեյ, լիմուզին և այլն:

Կենդանիների խնամքը իրականացվում է ստանդարտներին համապատասխան: Անասնագույնը պարբերաբար ախտահանվում են ախտահանիչ նյութերով՝ կիր, կաուստիկ սոդա: Ամբողջ տարվա ընթացքում կենդանիները գտնվում են անասնաբույժի վերահսկողության ներքո: Կերակրման գործընթացը մասնակիորեն ավտոմատացված է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կենդանիները ամռան շրջանում գտնվում են արոտավայրերում, իսկ ագրեգատով կիթի կազմակերպումը այնտեղ իրականացնելը դժվար է և նաև այն, որ կենդանիները ենթարկվում են սթրեսի ձեռքից ագրեգատի անցնելու դեպքում, ապա կիթը հիմնականում կազմակերպվում է ձեռքով:

## Դիլի ագրոարդյունաբերական համալիր ՍՊԸ

Հասցե՝ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան փ. 55

«Դիլի» ընկերությունը հիմնադրվել է 2005թ. Հայաստանում: Համալիրի տարածքը կազմում է մոտավորապես 9,000 մ<sup>2</sup>՝ ներառյալ ագարակը, արտադրամասը, ավտոտնակը և պահեստները:

Գերմանիայից ներկրվել են ցեղական, բարձր կաթնատվությամբ («Շվից» և «Միմենթալ» ցեղատեսակների) կովեր, որոնք տարեկան 6,000 կգ բարձրակ կաթ են տալիս: Կենդանիները բերվել են Բավարիայից, որտեղ նրանք պահվում էին ծովի մակարդակից նույն բարձրության վրա, ինչ և Հայաստանում գտնվող ագարակում: Այս հանգամանքի շնորհիվ նրանք ավելի լավ են ընտելացել նոր վայրին:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների բուժմամբ զբաղվող հիմնական ֆերմաների ուսումնասիրություն

Ազարակի նախագծման և կառուցման ժամանակ հաշվի են առնվել անասունների պահման առավել արդիական գաղափարները: Կենդանիների պահման համար անհրաժեշտ շինություններ են կառուցվել, որոնք ապահովված են օդափոխության և ջերմաստիճանային առավել բարենպաստ ռեժիմներով, լավ բնական լուսավորությամբ, յուրաքանչյուր կենդանու համար ազատ տեղաշարժման և հանգստի տարածքներով:

Կովերի կթման մեքենայացված համակարգ է ներդրվել, ինչը հնարավորություն է տալիս բոլոր սանիտարահիգիենիկ նորմատիվներին համապատասխանող կաթի մեծաքանակ արտադրություն ապահովել: Կովերի կթումն իրականացվում է դասական երաժշտության ներքո, ինչը նպաստում է արդյունավետ կթմանը:

Կենդանիների բեղմնավորումն իրականացվում է այնպես, որ ամբողջ տարվա ընթացքում կովերի մշտական գլխաքանակ լակտացիայի շրջանում է գտնվում, ինչը հնարավորություն է տալիս կյոռ տարին թարմ կաթ ունենալ: Ցեղատեսակի գտարյունությունը պահպանելու և սելեկցիայի գործընթացը շարունակելու նպատակով սերմնավորումն իրականացվում է արհեստական ճանապարհով՝ Գերմանիայից ներմուծվող սերմնանյութի միջոցով:

Հատուկ ուշադրություն է դարձվում կենդանիների կերակրմանը: Նրանք բաժանված են խմբերի՝ ըստ տարիքի և սեռի: Յուրաքանչյուր խմբի համար առանձին սննդակարգ է մշակված, որը հյուսիսային ու հասցահատիկային կերեր, հանքային նյութեր և վիտամիններ է պարունակում:

Կերի պատրաստման նպատակով ընկերությունը սարքավորում է գնել հացահատիկներից կոմբինացված կերի ստացման համար: Դա հատուկ շարժական մի սարք է, որը պատրաստում և կենդանիներին է բաշխում վերջնական համասեռ կերի զանգվածը՝ օպերատորի կողմից նշված սննդակարգին համապատասխան: Կենդանիներին մշտապես որակյալ կերով ապահովելու, նաև կերի մատակարարմանն առնչվող խնդիրների կամ կերի գնի

բարձրացման հետ կապված ռիսկերը նվազեցնելու նպատակով «Դիլի» ընկերությունը որդեգրել է ինքնապահովման և կերակրային մեծ բազայի ստեղծման քաղաքականությունը: Այդ նպատակով կառուցվել են կերի պահեստներ, գնվել և վարձակալության են վերցվել հողատարածքներ, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկա: Ազարակում արտադրվող կաթի էկոլոգիական մաքրությունն ապահովելու նպատակով հողի պարարտացման համար օգտագործվում են միայն սեփական անասնաբուժական մնացուկները:

Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության նպատակով Իտալիայից սարքավորումներ են ներմուծվել: Կաթի և արտադրանքի որակի վերահսկողության նպատակով արտադրությունում գործում է ժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիա: Ընկերությունն ունի ISO 22000 վկայական, որը վկայում է Ընկերության սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգի համապատասխանությունը միջազգային չափանիշի պահանջներին:

## Բանդիվան Կաթ ՍՊԸ

Հասցե՝ Ծիրակի մարզ, Ամասիայի շրջան, գ. Բանդիվան

«Բանդիվան Կաթ» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2007 թ-ին: Այս Ընկերությունում մի քանի խոշոր ու միամյանց փոխկապակցված ճուղեր են զարգանում՝ տավարաբուժական համալիրը, խոզաբուժական համալիրը, կերարտադրողական համալիրը և կաթի վերամշակման գործարանը:

Բանդիվան կաթ ընկերությունն ունի 60-ից 70 հեկտար սեփական ցանքատարածություն: Գարնան և աշնան ամիսներին այս ցանքատարածությունը պարարտացվում է գոմաղբով, իսկ մշակված եզիպտացորենը սիլոսի տեսքով, որպես անասնակեր ուղղվում է տավարաբուժական ֆերմա, որտեղ բուծվում են Եվրոպայից բերված Հոլշտեյն

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների բուծմամբ զբաղվող հիմնական ֆերմաների ուսումնասիրություն

Ֆրիզ հոլանդական ցեղատեսակի խոշոր եղջերավոր կենդանիներ: Համալիրը տարին տասներկու ամիս կանոնավոր բարձր որակի կաթ է կարողանում ապահովել:

Խոշոր եղջերավոր կենդանիների խնամքի համար Բանդիվան կաթ ընկերությունը ստեղծել է հատուկ պայմաններ: Առանձնացված հանգստի գոտիների հատակը պատված է հատուկ ռետինե ներքնակներով ու բարձիկներով, տեղադրված են ժամանակակից ջերմակարգավորիչ ջրային խմոցներ ու կենդանիների մաքրման համար նախատեսված սենսորային խոզանակներ: Այս պայմանները նպաստում են կովերի կաթնատվության ու կաթի որակի բարձրացմանը: Միջին կաթնատվությունը մեկ կովի հաշվով տարեկան կազմում է 7,000-8,000 լիտր կաթ: Կան այնպիսի կովեր, որոնց կաթնատվությունը գերազանցում է տարեկան 12,000 լիտրը:

Խոշոր եղջերավոր կենդանիները ամբողջ տարվա ընթացքում պահվում են եվրոպացի մասնագետների նախագծով կառուցված համալիրներում, որտեղ տեղադրված են միջազգային չափանիշներին համապատասխան ժամանակակից սարքավորումներ, օդափոխության համակարգ ու գոմաղբի ավտոմատ հեռացման հոսքագիծ:

Ձեռնարկության առանձնահատկությունը լրիվ փակ ցիկլն է, որը ներառում է գլխաքանակի մաքրացող բուծում, կերերի սեփական մթերման բազայի ստեղծում, ստացված հումքի վերամշակում: Կաթի հարթակները, ինչպես նաև բոլոր գետեղարանները, որտեղ բազմացվում է և պահվում է գլխաքանակը, մաքրվում են սանիտարահիգիենիկ կանոններին բավարարող մեքենայացված մաքրման սարքերի օգնությամբ:

Բանդիվան Կաթ ընկերությունում կովերի կիթը կատարվում է ավտոմատացված եղանակով, որտեղ մարդկային գործոնը հասցված է նվազագույնի: Մեքենայացված կիթի արտադրամասում կաթը հատուկ տարայի

մեջ ֆիլտրացվելուց հետո փակ հոսքագծով անցնում է հատուկ սառնարանների միջով և հասնում է կաթի վերամշակման արտադրամաս:

## Էկոֆարմ ՄՊԸ

Հասցե՝ Վայոց Ձորի մարզ, Վայքի տարածաշրջան, գ. Գնդեվագ

Անասնապահական այս համալիրը՝ նախատեսված խոշոր եղջերավոր կենդանիների բուծման, հում կաթի և պանրի արտադրության համար, հիմնադրվել է 2013թ-ի սեպտեմբերին, բացվել՝ 2015 թ-ին:

Համալիրը հիմնականում ունի կաթի արտադրության ուղղվածություն: Այս նպատակով այստեղ բուծվում են Գերմանիայից ներկրված տոհմային կաթնամսատու երինջներ: 2015թ-ի հունիսի դրությամբ կենդանիների գլխաքանակը Ընկերությունում կազմել է 330 հատ, սակայն համալիրը նախատեսված է 500 գլխաքանակի համար: Բոլոր անասունները ներկրված են դրսից, բեղմնավորումն իրականացվում է արհեստական ճանապարհով:

Համալիրն, այդ թվում կերի հավաքման և կերակրման համակարգերը, ամբողջապես ավտոմատացված է, այն նախագծված է սննդի անվտանգության միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան և իր տեխնիկական հագեցվածությամբ չի զիջում եվրոպական որակի և կառավարման չափորոշիչներին:

Համալիրի առանձնահատկություններից մեկն այն է, որ կաթը ֆիլտրվում է հենց տեղում, չի ստերիլիզացվում, ինչի շնորհիվ կաթն ավելի որակյալ ու բարձր յուղայնությամբ է լինում:

# ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների բուծմամբ զբաղվող հիմնական ֆերմաների ուսումնասիրություն

## Մուլտի Ագրո ՍՊԸ

Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Առինջ, Բաղրամյան փ.,

Ընկերությունը հիմնադրվել է 1989թ-ին և զբաղվում է մեղվապահությամբ, անասնաբուծությամբ, ոչխարաբուծությամբ և ձիաբուծությամբ:

Ընկերությունը ունի կաթի մթերման և մշակման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

### Դիտարկումներ

- Համաձայն 2014թ-ի գյուղատնտեսական հաշվառման արդյունքների ՀՀ-ում 2014թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ առկա է եղել խոշոր եղջերավոր կենդանիներ ունեցող 110,975 տնտեսություն, որոնցից ամենախոշորներն են Ագրոհոլդինգ Արմենիա ՍՊԸ-ն, Վամաքա ՍՊԸ-ն, Արգնու տոհմային ԹՏԽ ԲԲԸ-ն, Դիլի ագրո-արդյունաբերական համալիր ՍՊԸ-ն, Բանդիվան Կաթ ՍՊԸ-ն, Էկոֆարմ ՍՊԸ-ն և Մուլտի Ագրո ՍՊԸ-ն:

# Տնտեսությունների/Ֆերմերների հարցման արդյունքների ամփոփում

**ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների բուծմամբ զբաղվող խոշոր տնտեսությունների/ֆերմերների ցանկի կազմում**  
**ՀՀ-ում կաթի արտադրության հիմնական տնտեսությունները/ֆերմերները**

Անվանում	Գործունեության վայրը	Պատրաստ են համագործակցել
Ագրոհոլդինգ Արմենիա ՍՊԸ	Լոռվա մարզ	Ոչ
Վամաքս ՍՊԸ	Սյունիքի մարզ	Այո
Արզնու տոհմային ԹՏԻ ԲԲԸ	Կոտայքի մարզ	Այո
Մուլտի Ագրո ՍՊԸ	Կոտայքի մարզ	Ոչ
Դիլի ագրոարդյունաբերական համալիր ՍՊԸ	Տավուշի մարզ	Ոչ
Բանդիվան Կաթ ՍՊԸ	Շիրակի մարզ	Ոչ
Էկոֆարմ ՍՊԸ	Վայոց Ձորի մարզ	Ոչ
Հիմնատավուշ զարգացման հիմնադրամ	Տավուշի մարզ	Չենք կարողացել կապվել
Թամարա, Հովբար ՍՊԸ	Արագածոտնի մարզ	Չենք կարողացել կապվել
Ալեքսոլ ՍՊԸ	Շիրակի մարզ	Ոչ
Դսեղի գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն	Լոռվա մարզ	Չենք կարողացել կապվել
Հարթավան Կաթ կոոպերատիվ	Արագածոտնի մարզ	Այո
Լենդրուշ Գարեգինյան Ա/Չ	Շիրակի մարզ	Ոչ
Մարտիրոսյան Խաչիկ Ա/Չ	Վայոց ձորի մարզ	Այո
Արա- Արեգ ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ	Ոչ
Արծրուն և Որդիներ ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ	Ոչ

Խորհրդատուն ուսումնասիրելով հանրությանը մատչելի աղբյուրները և դիմելով ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը փորձել է պարզել տավարաբուծությամբ զբաղվող խոշոր տնտեսությունների և ֆերմերների կոնտակտային տվյալները և գործունեության վայրերը, վերջիններիս շրջանակներում հարցում իրականացնելու նպատակով:

Խորհրդատուի կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարություն և ներկայացված նամակը՝ համաձայն որի Խորհրդատուն փորձել է

տեղեկատվություն հավաքագրել խոշոր եղջերավոր կենդանիների բուծմամբ զբաղվող տնտեսությունների, ինչպես նաև ՀՀ-ում առկա խոտհարքների և արոտավայրերի վերաբերյալ, և ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունը՝ ի պատասխան Խորհրդատուի նամակին, կցված են սույն հաշվետվության Հավելվածներ Ժ-ում և Ի-ում:

Խորհրդատուն՝ ուսումնասիրելով հանրությանը մատչելի աղբյուրներից և ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունը, կարողացել է տարանջատել ՀՀ-ում գործող 16 խոշոր տնտեսություն/ֆերմեր, որոնք զբաղվում են խոշոր եղջերավոր անասունների բուծմամբ: Ամբողջական ցանկը ներկայացված է ձախ կողմում բերված աղյուսակում:

## Խոշոր եղջերավոր կենդանիների բուծմամբ զբաղվող տնտեսություններին ներկայացվող հարցաշարի կազմում

Հարցաշարը կազմվել է՝ հիմք ընդունելով սույն ծրագրով նախատեսված տեխնիկական առաջադրանքի պահանջները:

Խորհրդատուն, ուսումնասիրելով խոշոր եղջերավոր կենդանիների բուծման և կաթի արտադրության գործընթացը և համագործակցելով անկախ փորձագետի հետ, մշակել է հարցաշարի նախնական տարբերակը, որն այնուհետև հաստատվել է Հիմնադրամի կողմից:

Կազմված հարցաշարը ներառել է հետևյալ հիմնական բաժինները՝

- Տնտեսության համառոտ նկարագիրը, այդ թվում հիմնադրման տարեթիվը, գտնվելու վայրը, նախրի կառուցվածքը,
- Արտադրական գործընթացը, այդ թվում կերակրման գործընթացը, կենդանիների վերարտադրությունը և խնամքը, կիթի կազմակերպումը,
- Կաթի արտադրությունը և իրացումը, այդ թվում կաթի արտադրության

# Տնտեսությունների/Ֆերմերների հարցման արդյունքների ամփոփում

ծավալները, ինքնարժեքը, վաճառքի գները և ուղիները,

- Կաթի հիմնական գնորդները, այդ թվում գնորդների ցանկը, կոնտակտային տվյալները, վերջիններիս հետ աշխատելու սկզբունքները,
- Կաթի որակը:

Ամբողջական հարցաշարը ներկայացված է սույն հաշվետվության Հավելված Լ-ում:

## Հարցման անցկացում

Հարցումը տնտեսությունների շրջանակում իրականացվել է երեք փուլով՝

1. Խորհրդատուն հասանելի կոնտակտային տվյալներով փորձել է կապվել տնտեսությունների հետ, վերջիններիս հակիրճ ներկայացրել է իրագործվող ծրագրի բովանդակությունը, նշտել է էլեկտրոնային հասցեները և տրամադրված էլեկտրոնային հասցեներով ուղարկել է կազմված հարցաշարը և ծրագիրը հավաստող նամակը՝ տրամադրված Հիմնադրամի կողմից, որը ներկայացված է սույն հաշվետվության հավելված Խ-ում:
2. Հարցաշարը ուղարկելուց մի քանի օր հետո Խորհրդատուն կրկին կապվել է կոնտակտային անձի հետ և տեղեկացել արդյոք վերջինս ծանոթացել է հարցաշարի հետ և պատրաստ է համագործակցել թե ոչ: Նշենք, որ տվյալ գործողությունը կրկնվել է այնքան ժամանակ մինչև Խորհրդատուն ստացել է հստակ պատասխան (համաձայնության կամ մերժման):
3. Համաձայնությունը ստանալուց հետո, Խորհրդատուն առաջարկել է հարցումը անցկացնելու երկու տարբերակ՝
  - Տնտեսությունը ինքնուրույն է լրացնում հարցաշարը, ուղարկում է Խորհրդատուին և դիմում է վերջինիս հարցեր առաջանալու դեպքում,

- Խորհրդատուն Տնտեսության համար հարմար օրը և ժամին ներկայանում է վերջինիս գործունեության վայր և լրացնում է հարցաշարը՝ Տնտեսության կողմից կցված լիազորված անձի օգնությամբ:

## Հարցման հաջողության ամփոփում

Նախորդ էջում ներկայացված աղյուսակից կարելի է նկատել, որ հարցման համար առանձնացվել է 16 տնտեսություն, որոնցից երկուսը եղել են ֆիզիկական անձի կարգավիճակով:

Խորհրդատուն կարողացել է կապ հաստատել ցանկում ներառված սուբյեկտներից միայն 13-ի հետ, որոնցից հարցմանը մասնակցելու և հարցաշարը լրացնելու համաձայնություն են տվել միայն 4-ը, իսկ մնացածը, տարբեր պատճառաբանություններ բերելով, հրաժարվել են:

Ընդ որում ներկայացված ցանկից մեկ տնտեսության (Հարթավան Կաթ կոոպերատիվ) և մեկ ֆերմերի (Մարտիրոսյան Խաչիկ) տվյալները ստացվել են կաթնամթերք արտադրող ընկերությունների հարցման ժամանակ, երբ վերջիններս նշել են իրենց հիմնական կաթի մատակարարներին:


### Դիտարկումներ

- Խորհրդատուն հարցման համար առանձնացրել է 16 տնտեսություն, որոնցից հարցմանը մասնակցելու համաձայնություն տվել են միայն 4-ը, ընդ որում որոնցից երկուսի մասին տեղեկատվություն ստացվել է կաթնամթերք արտադրող ընկերությունների հարցման ժամանակ:
- Կաթնամթերք արտադրող ընկերությունների հարցման ժամանակ Խորհրդատուն տեղեկատվություն է ստացել և հարցում է անցկացրել այծերի բուծմամբ և այծի կաթի արտադրությամբ զբաղվող տնտեսությունում:

# Տնտեսությունների/Ֆերմերների հարցման արդյունքների ամփոփում


## Հարցման արդյունքում ստացված տեղեկատվության վերլուծություն

**Կաթի արտադրություն և իրացում:** Հարցմանը մասնակցած 4 ընկերություններից միայն երեքն են տեղեկատվություն տրամադրել այն մասին թե իրենց կողմից արտադրված կաթի որ մասն են վաճառում, վերամշակում կամ պահում անձնական օգտագործման համար: Ստացված տեղեկատվությունը ամփոփված է ստորև բերված գրաֆիկում:



**Կաթի ստացման միջին ինքնարժեք:** Հարցմանը մասնակցած տնտեսություններից միայն 3-ն են տեղեկատվություն տրամադրել 1 լիտր կաթի ինքնարժեքի ստացման վերաբերյալ:

Աջ կողմում ներկայացված գրաֆիկից կարելի է նկատել, որ կաթի ստացման ինքնարժեքը բավականին տարբերվում է ըստ տնտեսությունների և ամենաբարձրն է Վամաքս ընկերությունում:



Վամաքս ընկերության կողմից արտադրվող մեկ լիտր կաթի այսքան բարձր ինքնարժեքը բացատրվում է այն հանգամանքով, որ տնտեսությունում բուծվում են միայն սիմենթալ և հոլշտեյն ցեղատեսակի կովեր, որոնց պահելու, խնամելու և կերակրելու հետ կապված ծախսերը շատ ավելի բարձր են քան Կովկասյան գորշ ցեղատեսակինը:

### Դիտարկումներ

- Հարցմանը մասնակցած ԽՏԿ-ի բուծմամբ զբաղվող տնտեսությունները հիմնականում վաճառում կամ իրենց պատկանող կաթնամթերքի արտադրության գործարաններում վերամշակում են վերջիններիս կողմից արտադրված կաթը:
- Այն տնտեսություններում, որտեղ բուծվում են հոլշտեյն և սիմենթալ ցեղատեսակի կովեր 1 լիտր կաթի ստացման ինքնարժեքը բավականին բարձր է, քանի որ այս ցեղատեսակների պահելու, խնամելու և կերակրելու հետ կապված ծախսերը շատ ավելի բարձր են քան Կովկասյան գորշ ցեղատեսակինը:

# Տնտեսությունների/Ֆերմերների հարցման արդյունքների ամփոփում

## Կաթի ինքնարժեքի կառուցվածք

ՀՀ-ում կաթ արտադրող ընկերություններում հիմնականում բացակայում է ճիշտ հաշվապահական հաշվառումը, որի հետևանքով կաթի փաստացի ինքնարժեքի թվերը Խորհրդատուն հնարավորություն չի ունեցել ձեռք բերել ուսումնասիրվող ընկերություններից: Համաձայն ՖՀՄՄ-ի Գյուղատնտեսություն 41 ստանդարտը պետք է կիրառվի, որը շատ դեպքերում չի կիրառվում կաթ արտադրող ընկերություններում, ուստի կաթի ինքնարժեքի մանրամասն բացվածքը ստացվել է Խորհրդատուի կողմից կատարված կաթի ինքնարժեքի բաղադրիչների ուսումնասիրությունների հիման վրա:

Հաջորդիվ բերված աղյուսակում ներկայացված է կաթի ստացման ինքնարժեքի կառուցվածքն ըստ բաղադրիչների:


## Կաթի ինքնարժեքի կառուցվածք

	500 գլուխ կաթնային հոտի կովեր ունեցող ֆերմայում կաթի ինքնարժեքի կառուցվածքը
Աշխատողների աշխատավարձեր	27.1%
Կերեր	35.6%
Կենդանիների պաշտպանության միջոցներ, ազոտ և այլն	2.5%
Կոմունալ ծախսեր	3.1%
Պահեստամասեր և սարքավորումների համար անհրաժեշտ այլ ծախսեր	6.0%
Տրանսպորտային ծախսեր	4.8%
Պահպանման այլ ծախսեր	11.8%
Մաշվածություն	9.2%



# Տնտեսությունների/Ֆերմերների հարցման արդյունքների ամփոփում

**Կաթի վաճառքի գները և յուղայնությունը:** Համաձայն հարցման տվյալների տնտեսություններից երկուսում կաթի գները էժանանում են ամառվա ամիսներին, երբ պակասում է կենդանիների կերերի ծախսը, քանի որ վերջիններիս կերի մեծ մասը այդ ամիսներին կազմում է արոտը:




Մյուս երկու տնտեսությունները նշել են, որ կաթը ամբողջ տարվա ընթացքում վաճառում են նույն գնով: Ընդ որում ներկայացված նախորդ երկու գրաֆիկներից կարելի է նկատել, որ Վամաքս ՄՊԸ-ն իր կաթը վաճառում է ինքնարժեքից ցածր (ինչը պայմանավորված է գնորդի և վաճառողի միջև առկա փոխկապակցվածությամբ), իսկ Մարտիրոսյան Խաչիկ ԱՁ-ն՝ ինքնարժեքին հավասար գնով:

Համաձայն հարցմանը մասնակցած տնտեսությունների տրամադրած

տեղեկատվության, ոչ մի տնտեսությունում արտադրած կաթի յուղայնության տոկոսը կախված ամիսներից չի փոփոխվում:

**Կաթի գնորդները:** Հարցման արդյունքների համաձայն տնտեսություններում արտադրվող կաթի հիմնական գնորդները կաթնամթերք արտադրող ընկերություններն են:




### Դիտարկումներ

- Կաթի գները հիմնականում էժանանում են կովերի պահվածքի արոտային շրջանում, երբ կովերի հիմնական կերը արոտն է և հետևաբար նվազում է կերերի վրա կատարվող ծախսը:
- Համաձայն հարցմանը մասնակցած տնտեսությունների տրամադրած տեղեկատվության, ոչ մի տնտեսությունում արտադրված կաթի յուղայնության տոկոսը կախված ամիսներից չի փոփոխվում:
- Հարցմանը մասնակցած տնտեսություններից մեծ մասի հիմնական գնորդները կաթնամթերք արտադրող ընկերություններն են:

# Տնտեսությունների/Ֆերմերների հարցման արդյունքների ամփոփում


**Կաթի տեղափոխումը:** Հարցմանը մասնակցած ընկերություններից երեքը նշել են, որ վաճառված կաթը գնորդին են փոխանցում սեփական միջոցներով, այսինքն կաթի փոխադրումը կատարում են իրենք:

Միայն Վամասր ՍՊԸ-ն է նշել, որ իր գնորդները իրենք են կազմակերպում կաթի փոխադրումը:




## Գնորդների հետ աշխատելու սկզբունքը

### Պայմանագրերի կնքում




### Պայմանագրերի տևողությունը



Հարցմանը մասնակցած տնտեսությունների մեծ մասը իրենց կաթի գնորդների հետ աշխատելիս նախընտրում են կիրառել պայմանագրերի կնքման պրակտիկան: Ընդ որում պայմանագրերը հիմնականում կնքվում են մինչև 1 տարի ժամկետով:

**Վճարման միջոցները:** Տնտեսությունները կիրառում են ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ վճարումների պրակտիկան:



**Վճարման ժամկետ:** Հարցմանը մասնակցած բոլոր 4 տնտեսությունները նշել են, որ գնորդները իրենց հետ աշխատում են ետվճարային սկզբունքով և, որ գումարը հիմնականում ստանում են ապրանքը վաճառելուց 15 օր հետո: Արգելու տոհմային ԹՏԽ-ին վճարումը կատարում են 1 ամիս հետո:


## Դիտարկումներ

- Հարցված տնտեսությունները նշել են, որ հիմնականում կաթն իրենք են մատակարարում գնորդներին:
- Հարցման մասնակիցների մեծ մասը գնորդների հետ աշխատելիս կիրառում են պայմանագրերի կնքման պրակտիկան: Պայմանագրերը մեծամասամբ կնքվում են մինչև 1 տարի ժամկետով՝ ետվճարային սկզբունքով, իսկ գնված կաթի դիմաց վճարումները կատարվում են ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:

# Տնտեսությունների/Ֆերմերների հարցման արդյունքների ամփոփում

**Հիմնական գնորդ գտնելու հավանականությունը:** Հարցմանը մասնակցած տնտեսություններից մեծ մասի կարծիքով կաթի նոր գնորդներ գտնելը բավականին հեշտ է:

Այս հարցի շուրջ Արզնու Տոհմային Թ-ՏԻՄ-ն մանրամասներ չի տրամադրել




**Հիմնական գնորդի ներգրավվածության աստիճանը:** Հարցմանը մասնակցած տնտեսություններից երկուսը նշել են, որ գնորդը հետադարձ կապի միջոցով տեղեկատվություն է տրամադրում կաթի որակի վերաբերյալ կամ այցելում է ֆերմա, աջակցելու կատարողականի բարելավմանը: Հարթավան կաթ կոոպերատիվը նշել է, որ իր հիմնական գնորդը կոոպերատիվի համար կազմակերպում է ուսուցման դասընթացներ (թրեյնինգներ):

**Համագործակցություն որակի բարելավման նպատակով:** Այն հարցին, թե արդյոք տնտեսությունները համագործակցում են այլ ֆերմաների կամ ֆերմերների հետ որակի բարելավման նպատակով, հարցմանը մասնակցած բոլոր 4 տնտեսությունները տվել են դրական պատասխան:

## Աջակցության ստացում:

Այն հարցին թե, վերջին 5 տարիների ընթացքում, բացի հիմնական գնորդներից ստացել են արդյոք որևէ տեխնիկական աջակցություն կաթի արտադրության հետ կապված, ինչպիսիք են օրինակ թրեյնինգները, տնտեսություններից երեքը պատասխանել են “այո”:



Հարցման պատասխանները մանրամասն ներկայացված են սույն հաշվետվության Հավելված Ծ-ում:

### Դիտարկումներ

- Հարցման մասնակիցների կարծիքով կաթի նոր հիմնական գնորդ գտնելը բավականին հեշտ է:
- Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ գնորդ ընկերությունները մասնակցում են մատակարար տնտեսությունների որակի բարելավման գործընթացին:
- Հարցմանը մասնակցած տնտեսությունները բացի իրենց հիմնական գնորդներից կաթի արտադրության հետ կապված տեխնիկական աջակցություն են ստացել նաև այլ ընկերություններից:

# Տնտեսությունների/Ֆերմերների հարցման արդյունքների ամփոփում

## Այծի կաթի արտադրությամբ զբաղվող տնտեսություն

Կաթնամթերք արտադրող ընկերությունների հարցման ժամանակ Խորհրդատուն տեղեկատվություն է ստացել նաև մեկ տնտեսության՝ Գոլդեն Գոուլթի, մասին որը զբաղվում է այծերի բուծմամբ և հանդիսանում է տեղեկատվությունը տրամադրած ընկերության այծի կաթի միակ մատակարարը: Ընկերությունը այծի կաթը օգտագործում է պանրի արտադրության համար: Այծի բուծմամբ զբաղվող տնտեսությունն ունի 350 այծ, որոնցից տարեկան ստանում է մոտ 190,000 լիտր կաթ: Կաթի ստացման ինքնարժեքը կազմում է 235 դրամ մեկ լիտրի համար:

Տնտեսությունում այծերի կերակրումը ավտոմատացված չէ: Այծերի հիմնական կերը կլոր տարի կազմում է խոտը:

Այծերը համարակալված են և պարբերաբար պարտադիր ստուգվում են անասնաբույժի կողմից: Դրանց խնամքը իրականացվում է ստանդարտներին համապատասխան:

Կաթը գնորդին մատակարարվում է սեփական միջոցներով: Հիմնական գնորդի հետ կաթի վաճառքի գործարքը կատարվում է առանց պայմանագիր կնքելու, Մատակարարվող կաթի դիմաց գնորդը տալիս է կանխիկ կամ անկանխիկ կանխավճար:

Տնտեսությունը նշել է, որ համագործակցում է այլ ֆերմաների կամ ֆերմերների հետ կաթի որակի բարելավման նպատակով, և որ վերջին 5 տարիների ընթացքում, բացի իր հիմնական գնորդներից ստացել է տեխնիկական աջակցություն կաթի արտադրության հետ կապված:

### Դիտարկումներ

- Գոլդեն Գոուլթ տնտեսությունը, որը զբաղվում է այծի կաթի արտադրությամբ, ունի 350 այծ, որոնցից տարեկան ստանում է մոտ 190,000 լիտր կաթ: Կաթի ստացման ինքնարժեքը կազմում է 235 դրամ մեկ լիտրի համար: Ընդ որում, հարցման արդյունքները վկայում են, որ այծի կաթի ինքնարժեքը շատ ավելի բարձր է քան կովի կաթինը:

# Բաժին 6: Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն

01. Ամփոփ բաժին
02. Ներածություն
03. ՀՀ մակրոտնտեսական ամփոփ ուսումնասիրություն
04. Գյուղատնտեսության ոլորտի ամփոփ ուսումնասիրություն
05. Կաթի արտադրություն
- 06. Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն**
07. Տեղական վաճառք/ շուկա
08. Օտարերկյա շուկաներ
09. Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրություն
10. Կաթի վերամշակման և կաթնամթերքի ոլորտի SWOT վերլուծություն

## ՀՀ-ում կաթնամթերքի արտադրության ծավալներ

ՀՀ-ում կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ուսումնասիրության համար դիտարկվել են կաթնամթերքի արտադրության ծավալների դինամիկան, ուսումնասիրվել են կաթնամթերք արտադրող հիմնական ընկերությունները, իրականացվել են հարցումներ կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերությունների շրջանակում, որոնց արդյունքներն ամփոփվել են սույն գլխում:

### ՀՀ-ում կաթնամթերքի արտադրության ծավալները բնեղեն արտահայտությամբ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ՀՀ-ում կաթնամթերքի հիմնական արտադրատեսակների արտադրության ծավալները 2010-2016թթ-ի և 2016-2017 թթ-ի առաջին 6 ամիսների համար:

#### Կաթնամթերքի հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ

Արտադրատեսակ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2016 (6 ամիս)	2017 (6 ամիս)
Կաթ (հազար տոննա)*	310	327	335	375	400	464	476	270	272
Պանիր (տոննա)	17,047	17,614	17,629	17,375	18,317	18,593	22,316	9,452	9,006
Մածուն (տոննա)	3,055	3,519	3,120	3,549	4,721	6,170	6,098	3,036	2,956
Թթվասեր (տոննա)	3,153	2,864	3,389	3,453	3,961	6,065	5,923	3,014	2,439
Կաթնաշոռ (տոննա)	736	950	840	1,011	922	989	955	465	431
Պաղպաղակ (տոննա)	1,815	1,907	1,988	2,337	3,477	5,282	4,939	2,727	2,887

\*Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրվածը (բացառությամբ ներքին սպառումը)

Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am>, Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2010-2017թթ-ին

Ներկայացված աղյուսակից կարելի է նկատել, որ 2014 և 2015 թթ-ին կաթնամթերքի արտադրության ծավալները կտրուկ աճել են 2013թ-ի նկատմամբ: Այս աճը պայմանավորված է եղել հարկային դաշտի փոփոխությամբ, համաձայն որի 2014թ-ի սեպտեմբերի 11-ից ուժի մեջ է մտել կաթնամթերքի դրոշմապիտակավորման պարտադիր պահանջը, ինչի արդյունքում էապես աճել են հաշվառվող արտադրանքի ծավալները, այսինքն կաթնամթերք արտադրողները մեծ մասամբ դուրս են եկել ստվերային տնտեսությունից:

2014թ-ի արդյունքների վրա օրենքի փոփոխության ազդեցությունը արտացոլվել է մասնակիորեն, քանի որ փոփոխությունը ընդգրկել է միայն վերջին 4 ամիսները, այդ իսկ պատճառով 2014թ-ին աճն ավելի զսպված է եղել

քան 2015թ-ին, երբ մածունի, թթվասերի և պաղպաղակի արտադրության ծավալները 2013թ-ի համեմատ գրանցել են կրկնակի աճ:

2016թ-ին բացառությամբ կաթի և պանրի արտադրության ծավալների, որոնք 2015թ-ի համեմատ աճել են համապատասխանաբար 3% և 20%-ով, մնացած արտադրատեսակների արտադրության ծավալները նվազել են, որոնցից ամենաշատ նվազումը արձանագրել է պաղպաղակը՝ 6%: Նվազում է նկատվում նաև, երբ համեմատվում են 2017թ-ի առաջին 6 ամիսների կաթնամթերքի արտադրության ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ: Այսպես պանրի, մածունի, թթվասերի և կաթնաշոռի արտադրության ծավալները այդ ժամանակահատվածում համապատասխանաբար նվազել են 5%, 3%, 19% և 7%-ով: Կաթի և պաղպաղակի ծավալները աճել են 0.4% և 6%-ով:

# ՀՀ-ում կաթնամթերքի արտադրության ծավալներ

## ՀՀ-ում կաթնամթերքի արտադրության ծավալները դրամական արտահայտությամբ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ՀՀ-ում արտադրված ամբողջ կաթնամթերքի արտադրության և իրացման ծավալները դրամական արտահայտությամբ 2010-2016թթ-ի և 2016-2017 թթ-ի առաջին կիսամյակի համար:

## Կաթնամթերքի արտադրությունը և իրացումը դրամական արտահայտությամբ

Չափար դրամ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2016 (6 ամիս)	2017 (6 ամիս)
Արտադրանքի ծավալը համադրելի գներով	31,712,907	38,829,452	38,487,426	38,549,516	47,579,117	49,904,869	52,425,331	23,799,010	22,958,312
Արտադրանքի ծավալը ընթացիկ գներով	31,713,282	41,080,842	39,007,508	42,387,394	51,236,417	52,114,879	51,988,510	23,646,700	22,884,505
Պատրաստի արտադրանքի իրացումը ընթացիկ գներով, որից									
ԱՊՀ երկրներում	244,350	499,991	679,835	2,048,767	3,266,042	1,359,368	5,724,037	2,152,109	860,160
Այլ երկրներում	231,870	266,031	229,402	140,360	92,478	638,535	204,502	105,118	58,698

Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, <http://armsstat.am>, Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգամիջ դասակարգման 2010-2016թթ-ին

2016թ-ի կաթնամթերքի արտադրության ծավալները արտահայտված համադրելի գներով նախորդ տարվա նկատմամբ աճել են 5%-ով: Այն հիմնականում բաժին է ընկնում պանրի արտադրությանը, որի ծավալները բնեղեն արտահայտությամբ նախորդ տարվա համեմատ աճել են 20%-ով:

Արտադրության ծավալները և պատրաստի արտադրանքի իրացման ծավալները արտահայտված ընթացիկ գներով 2016թ-ին նախորդ տարվա համեմատ համապատասխանաբար նվազել են 0.2% և 1%-ով: Այս նվազումը պայմանավորված է գների անկման հետ, քանի որ 2016թ-ին թե՛ գյուղատնտեսական, թե՛ սպառողական շուկաներում կաթնամթերքի իրացման գները նախորդ տարվա համեմատ նվազել են համապատասխանաբար 4.4% և 6.1%-ով:

Ներկայացված աղյուսակից կարելի է նկատել, որ տարեց տարի աճում է կաթնամթերքի իրացման ծավալները միջազգային շուկայում: Այսպես, եթե 2010թ-ին միջազգային շուկայում կաթնամթերքի իրացման ծավալները ընդհանուր իրացման ծավալների մեջ կազմել են 2%, ապա 2016թ-ին այս

ցուցանիշը կազմել է 11%: 2016թ-ին կաթնամթերքի իրացման ծավալները ԱՊՀ երկրներում 2015թ-ի համեմատ աճել են ավելի քան 3 անգամ, մինչդեռ այլ երկրներում նվազել են 68 %-ով:

Դիտարկվող ժամանակաշրջանում իրացման ծավալները ԱՊՀ երկրներում տարեց տարի աճել են, նվազում է արձանագրվել միայն 2015թ-ին, երբ կաթնամթերքի իրացման ծավալները նախորդ տարվա նկատմամբ նվազել են 58%-ով

Կաթնամթերքի արտադրության ծավալները ինչպես համադրելի, այնպես էլ ընթացիկ գներով 2017թ-ի առաջին կիսամյակին նվազել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, համապատասխանաբար 4% և 3%-ով:

4% նվազել են նաև պատրաստի արտադրանքի իրացման ծավալները: Այս նվազման հիմնական պատճառը այդ ժամանակահատվածում ավելի քիչ արտադրված կաթնամթերքն է:

# ՀՀ-ում կաթնամթերքի արտադրության ծավալներ

## Դիտարկումներ

- Կաթի արտադրության ծավալները վերջին 7 տարիներին աստիճանաբար աճել են և 2017թ-ի առաջին 6 ամիսների համար կազմել են 272 հազար տոննա:
- ՀՀ-ում ամենաշատ արտադրվող կաթնամթերքը պանիրն է: 2017թ-ի առաջին 6 ամիսների համար պանրի արտադրության ծավալները կազմել են 9,006 տոննա, ինչը մոտ 5%-ով զիջում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արտադրված պանրի ծավալին:
- 2017թ-ի առաջին 6 ամիսների համար նվազել են նաև մածնի, թթվասերի և կաթնաշոռի արտադրության ծավալները՝ համապատասխանաբար 3%, 19% և 7%-ով:
- 2014-2015թթ-ին կաթնամթերքի շուկայում արձանագրված արտադրության ծավալների կտրուկ աճը պայմանավորված է եղել 2014թ-ի սեպտեմբերի 11-ից ուժի մեջ մտած պարտադիր դրոշմապիտակավորման պահանջի հետ:
- Կաթնամթերքի արտադրության ծավալները՝ համադրելի և ընթացիկ գներով, համապատասխանաբար կազմել են 22,958 և 22,884 մլն դրամ 2017թ-ի առաջին կիսամյակի համար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 4% և 3%-ով:
- Պատրաստի արտադրանքի իրացումը արտահայտված ընթացիկ գներով 2017թ-ի առաջին կիսամյակին կազմել է 22,847 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 4%-ով:
- 2010թ-ին միջազգային շուկայում կաթնամթերքի իրացման ծավալները ընդհանուր իրացման ծավալների մեջ կազմել են 2%, իսկ 2016թ-ին այս ցուցանիշը կազմել է 11%:
- Արտաքին շուկայում արտահանվող կաթնամթերքի մեծ մասը իրացվում է ԱՊՀ երկրներում:

- 2017թ-ի առաջին կիսամյակում նվազել են նաև արտահանման ծավալները.
  - ԱՊՀ երկրներում կաթնամթերքի իրացման ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 60%-ով,
  - այլ երկրներում կաթնամթերքի իրացման ծավալը նվազել է 44%-ով:



# ՀՀ-ում կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող հիմնական ընկերությունները

## Կաթնամթերք արտադրող հիմնական ընկերությունները ՀՀ-ում

Համաձայն Խորհրդատուի կողմից կատարված ուսումնասիրությունների, ՀՀ-ում գործում են կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ավելի քան 70 ընկերություն: Այս ընկերությունների ցանկը Խորհրդատուն առանձնացրել է՝ համագործակցելով ոլորտի մասնագետի հետ և օգտվելով հանրամատչելի աղբյուրներից, մասնավորապես ՄՓՅՈՒՌ տեղեկատվական համակարգից:

Ինչպես և ցանկացած սպառողական շուկայում, այնպես էլ կաթնամթերքի շուկայում գործում են այն հիմնական մասնակիցները, որոնց արտադրանքին բաժին է ընկնում շուկայի մեծ մասը: Այսպես ՀՀ-ի կաթնամթերքի շուկայում գործող և շուկայի մեծ մասնաբաժին ունեցող հիմնական ընկերություններն են «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն, «Չանախ» ՍՊԸ, «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ն, «Բիոկաթ» ՍՊԸ-ն, «Իգիթ» կաթնամթերքի գործարան ՍՊԸ-ն, «Արգնի Կաթ» կաթնամթերքի արտադրական ձեռնարկությունը, «Թամարա» ՍՊԸ-ն, «Մարիլա» ՍՊԸ-ն և «Բանդիվան Կաթ» ՍՊԸ-ն:

### «Դուստր Մարիաննա» ՍՊԸ

Կաթնարդյունաբերության բնագավառում առաջատարներից մեկը հանդիսացող «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն հիմնադրվել է 1997 թ.-ին և իր արտադրական գործունեությունը ծավալում է Երևան քաղաքում: Ընկերության արտադրամասերը տեղակայված են Երևան քաղաքի Հաղթանակ թաղամասում:

«Դուստր Մարիաննա» ընկերությունն ունի շուրջ 50 անվանատեսակի արտադրանք, զբաղվում է կարագի, պանրի, կաթնաթթվային արտադրանքի՝



կեֆիրի, յոգուրտի, մածնի, կաթնաշոռի, թթվասերի և մի շարք այլ կաթնամթերքների արտադրությամբ:

Ընկերությունը հանրապետության բարձր, լեռնային կաթնառատ շրջաններում տեղակայված սեփական մթերման կայանների միջոցով Հայաստանի մոտ 5000 ֆերմերային տնտեսություններից հավաքում է որակյալ կաթ և սառնախցիկներով ապահովված հատուկ փոխադրամիջոցներով տեղափոխում գործարան:

Ընկերությունն ունի արտադրական լաբորատորիա և ISO 22000 միջազգային ստանդարտին համապատասխանության վկայական, որի համաձայն էլ իրականացնում է արտադրանքի որակի վերահսկողությունը և ապահովում է մթերքների անվտանգությունը:

### «Չանախ» ՍՊԸ

«Չանախ» ՍՊԸ-ն իր գործունեությունը սկսել է ծավալել 1991թ.-ից: Ընկերության գործարանը տեղակայված է Կոտայքի մարզի Չովք գյուղում:

Ընկերության կողմից արտադրվող ապրանքների ցանկը ներառում է կաթ, պանիր, թթվասեր, մածուն, կաթնաշոռ, կեֆիր, թան:

Ընկերությունը բացի ժամանակակից տեխնոլոգիաներից, ունի նաև բավականին հմուտ մասնագետներ: «Չանախ» ՍՊԸ-ն անընդմեջ կատարում է ներդրումներ արտադրության զարգացման և առաջխաղացման, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծման նպատակով:



# ՀՀ-ում կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող հիմնական ընկերությունները

## «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ

«Աշտարակ-Կաթ» ընկերությունը հիմնադրվել է 1995 թ.-ին Արագածոտնի մարզի Ազարակ գյուղում՝ պանրի գործարանի հիման վրա: «Աշտարակ-Կաթ» ընկերությունը համագործակցում է ՀՀ-ում տեղակայված 550 գյուղերի շուրջ 6000 ֆերմերային տնտեսությունների հետ:



Տարեցտարի ավելանում է այդ տնտեսությունների թիվը՝ նպատակ ունենալով ձեռք բերել միայն թարմ, որակյալ և արժեքավոր կաթ:

Ընկերությունը սեփական մթերման կետեր ունի Հայաստանի բոլոր մարզերում:

Ներկայում ընկերությունն ունի շուրջ 500 աշխատակից, արտադրում է կաթնամթերքի 50 և պաղպաղակի 45 տեսակ՝ իրենց ենթատեսակներով, ինչպես նաև ջեմեր և մուրաբաներ:

Ընկերությունը իր ապրանքները իրացնում է ոչ միայն Հայաստանում, այլ նաև Լեռնային Ղարաբաղում և Վրաստանում:

«Աշտարակ-Կաթ» ընկերությունը շարունակական ներդրումներ է կատարում գիտահետազոտական և զարգացման (Research&Development) բնագավառում, ժամանակակից սարքավորումներում, անձնակազմի ուսուցման ոլորտում և կառավարչական համակարգի զարգացման մեջ:

Ընկերությունը ունի ISO 9001-2002 Որակի Կառավարման Համակարգի համապատասխանության վկայական:

## «Բիոկաթ» ՍՊԸ

Բիոկաթ ՍՊԸ-ն հիմնադրվել է 2003թ-ին: Ընկերության արտադրամասը գտնվում է Երևան քաղաքի Հաղթանակ թաղամասում: Ձեռնարկության առաջին արտադրատեսակներն են եղել թանը, կեֆիրը և 12%-ոց սերուցքը:



Այսօր կազմակերպությունը արտադրում է 9 տեսակի կաթնամթերք (կաթ, պանիր, մածուն, թան, կեֆիր, թթվասեր, կաթնաշոռ, յոգուրտ, պաղպաղակ)՝ ներկայանալով ավելի քան 30 արտադրատեսակով:

2010թ. Բիոկաթ ընկերությունը կառուցել է նոր գործարան, որն ամբողջովին հագեցած է ժամանակակից սարքավորումներով: Նույն թվականին հիմնել է նաև պաղպաղակի արտադրություն: Այսօր ընկերությունը արդեն ներկայանում է սպառողին 5 տարբեր համերի՝ 17 տեսակի պաղպաղակով:

Բնական կաթը մատակարարվում է Ալազյազի և Ապարանի շրջաններից, իսկ մերանները բերվում են Եվրոպայից:

## Իգիթ ՍՊԸ

«Իգիթ» ՍՊԸ հիմնադրվել է 1995թ –ին Ծիրակի մարզի Ագատան գյուղում Իգիթյանների ընտանիքի կողմից:



Ընկերությունը արտադրում է տարբեր տեսակի կաթնամթերք՝ կաթ, պանիր, կարագ, մածուն, քամած մածուն, կաթնաշոռ, թթվասեր և թան:

Ձեռնարկությունը համարված է նորագույն տեխնոլոգիաներով: Ամբողջ

# ՀՀ-ում կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող հիմնական ընկերությունները

տեսականին անցնում է բոլոր տեսակի լաբորատոր փրձաքննությունները ու ստուգումները:

## «Արգնի Կաթ» կաթնամթերքի արտադրական ձեռնարկությունը

«Արգնի Կաթ» կաթնամթերքի արտադրական ձեռնարկությունը հիմնադրվել է 1998 թ.-ին: Ընկերությունը իր արտադրական գործունեությունը ծավալում է Երևան քաղաքում, Նոր Նորքի 2-րդ միկրոշրջանում:



Ընկերությունը արտադրում է տարբեր տեսակի կաթնամթերք՝ այդ թվում կաթ, կաթի սեր, պանիր, մածուն, քամած մածուն, կաթնաշոռ, թթվասեր և յոգուրտ: Կաթնամթերքի իրացումն իրականացվում է միայն Հայաստանի Հանրապետությունում:

Ընկերության կաթի միակ մատակարարը Արգնու տոհմային ԹՏԽ ԲԲԸ-ն է, որը գտնվում է Կոտայքի մարզի Արգնի գյուղում և հանդիսանում է ընկերության կապակցված կողմ:

Ընկերությունը չունի ներդրված որակի կառավարման համակարգեր:

## «Թամարա» ՍՊԸ

«Թամարա» ընկերությունը հիմնադրվել է 1988թ.-ին և մասնագիտացած է կաթնամթերքի և հրուշակեղենի արտադրության ոլորտում: Ընկերությունը զինված է նորագույն տեխնիկայով, ունի լիցենզավորված լաբորատորիա:



«Թամարա» ընկերությունը իր սարքավորումները, փաթեթավորման նյութերը և կաթնամթերքի հումքի անհրաժեշտ բաղադրիչները հիմնականում ներկրում է

Իտալիայից:

2000 թ.-ին ընկերությունը ստացել է ISO-9002-98 և 2003 թ. ISO 9001-2002 միջազգային ստանդարտներին համապատասխանության վկայական:

Արտադրում է մոտ 90 տեսակի պաղպաղակ, 15 տեսակի կաթնամթերք (կաթ, մածուն, թթվասեր, կաթնաշոռ, թան, կեֆիր, յոգուրտ), 30 տեսակի հրուշակեղեն:

Ունի միջև 300 աշխատող: Արտադրանքն արտահանվում է ԱՄՆ և ՌԴ:

## «Մարիլա» ՍՊԸ

«Մարիլա» ընկերությունը ստեղծվել է 2010թ.-ին: Ընկերության արտադրամասը գտնվում է Սյունիքի մարզի Կապան քաղաքում:

Ընկերության գործարանը կառուցվել է Եվրոպական չափանիշներին համապատասխան, իսկ սարքավորումները ներկրվել են Գերմանիայից:

Ընկերությունը ապահովված է բարձրակարգ մասնագետներով և տեխնիկական բոլոր միջոցներով՝ բարձրորակ արտադրանք արտադրելու համար, ունի սեփական լաբորատորիա և որակի կառավարման HACCP ներդրված համակարգ: Ներկայում Ընկերությունում աշխատում են 51 աշխատակիցներ:

Ընկերությունը զբաղվում է ինչպես կաթնամթերքի, այնպես էլ մսամթերքի արտադրությամբ: «Մարիլա» ընկերությունը համագործակցում է գերմանացի առաջատար մասնագետների հետ նոր ապրանքատեսակներ արտադրելու ուղղությամբ:



# ՀՀ-ում կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող հիմնական ընկերությունները

Ընկերության կաթնամթերքի տեսականին ներառում է կաթ, մածուն, քամած մածուն, թթվասեր, թան, կաթնաշոռ և «Չանախ» պանիր: Ներկայում արտադրանքն առաքվում է Կապանի, Քաջարանի, Մեղրու, Ագարակի խանութներ, ինչպես նաև Երևան քաղաքի ճանաչված սուպերմարկետներ և Ընկերության ֆիրմային «Սյունիքի բարիքներ» խանութներ:

«Մարիլա» ընկերության կաթի միակ մատակարարը «Վամաքս» ՍՊԸ-ն է, որը հանդիսանում է «Մարիլա» ընկերության մայր ընկերությունը:

## «Բանդիվան Կաթ» ՍՊԸ

«Բանդիվան Կաթ» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2007թ.-ին: Ընկերության կաթնամթերքի արտադրամասը տեղակայված է Ծիրակի մարզի Բանդիվան գյուղում: Այստեղ մի քանի խոշոր ու միմյանց հետ փոխկապակցված ճյուղեր են զարգանում, մասնավորապես՝ տավարաբուծական համալիրը, խոզաբուծական համալիրը, կերարտադրող համալիրը և կաթի վերամշակման գործարանը:



Ընկերությունն ունի 60-70 հա սեփական ցանքատարածք: Բանդիվան կաթ ընկերության կաթնամթերքի արտադրության գործարանը կառուցված է եվրոպական ստանդարտներին համապատասխան և հագեցված է եվրոպական ժամանակակից սարքավորումներով:

Տավարաբուծական համալիրը տարվա բոլոր ամիսներին կարողանում է կանոնավոր և բարձր որակի կաթ ապահովել, ինչն էլ հնարավորություն է տալիս ընկերությանը ելման նյութը մշակել ամեն օր՝ խուսափելով կաթի մթերումից:

Ընկերությունն արտադրում է կաթ, կարագ, մածուն, քամած մածուն, թթվասեր,

կաթնաշոռ, թան, ինչպես նաև առաջարկում է պանիրների լայն տեսականի՝ Լոռի, Չանախ, Սուլուգունի և այլն:

Ընկերությունը իր արտադրանքն արտահանում է Իսրայել:

## Դիտարկումներ

- ՀՀ-ում գործում են կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ավելի քան 70 ընկերություն, որոնցից ամենախոշորներն են «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն, «Չանախ» ՍՊԸ, «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ն, «Բիոկաթ» ՍՊԸ-ն, «Իգիթ» կաթնամթերքի գործարան ՍՊԸ-ն, «Արզնի Կաթ» կաթնամթերքի արտադրական ձեռնարկությունը, «Թամարա» ՍՊԸ-ն, «Մարիլա» ՍՊԸ-ն և «Բանդիվան Կաթ» ՍՊԸ-ն:
- Նշված ընկերությունները զբաղվում են որակյալ կաթնամթերքի արտադրությամբ՝ արտադրելով կաթ, պանիր, մածուն, թան, կեֆիր, թթվասեր, կաթնաշոռ, յոգուրտ, պաղպաղակ և այլ տեսակի կաթնամթերք և լուրջ ներդրումներ են իրականացնում որակի կառավարումն ու տեխնոլոգիական հագեցվածություն ապահովելու համար:
- Վերոնշյալ ընկերություններից մեծ մասի արտադրամասերը գտնվում են մարզերում և նրանցից որոշները իրենց արտադրանքը արտահանում են արտերկիր:
- Ընկերությունների գործունեությունը նպաստում է ֆերմերային տնտեսությունների ակտիվացմանը: Մասնավորապես՝ Աշտարակ Կաթ և Դուստր Մարիաննա ընկերություններն աշխատում են համապատասխանաբար ավելի քան 6000 և 5000 ֆերմերային տնտեսությունների հետ:

# Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ընկերությունների հարցման արդյունքների ամփոփում

## ՀՀ-ում կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերությունների բացահայտման գործընթաց

Խորհրդատուն օգտվելով ՍՓՅՈՒՌ- տեղեկատվական համակարգից և «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի կողմից տրամադրված տեղեկատվությունից (կցված է սույն հաշվետվության Հավելված Կ-ում) փորձել է առանձնացնել բոլոր այն գրանցված ընկերությունները, որոնք ՀՀ-ում զբաղվում են կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ: Արդյունքում Խորհրդատուն առանձնացրել է կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ավելի քան 70 ընկերություն: Հաջորդիվ, այս ընկերությունների ցանկի հիման վրա ընտրվել են հարցմանը մասնակից ընկերությունները:

Հարցման ցանկը կազմվել է, հիմք ընդունելով ընկերությունների ճանաչելիությունը տեղական շուկայում, ինչպես նաև վերջիններիս գործունեության վայրերը: Ընտրության այս երկու չափանիշը կիրառելով՝ Խորհրդատուն փորձել է հարցման մեջ ընդգրկել ՀՀ-ում գործող հիմնական և խոշոր կաթնամթերք արտադրող ընկերությունները, ինչպես նաև յուրաքանչյուր մարզից ունենալ գոնե մեկ ներկայացուցիչ: Հաջորդիվ ներկայացված է հարցմանը մասնակցելու համար կաթնամթերք արտադրող ընկերությունների ընտրված ցանկը:

## Կաթնամթերք արտադրող ընկերությունների ընտրված ցանկ

Անվանում	Գործունեության վայրը	Պատրաստ են համագործակցել
Դուստր Մարիանա ՍՊԸ	Երևան	Այո
Թամարա և Աճի	Կոտայքի մարզ	Ոչ
Թամարա ՍՊԸ	Կոտայքի մարզ	Ոչ
Չանախ ՍՊԸ	Կոտայքի մարզ	Այո
Աշտարակ Կաթ ՍՊԸ	Երևան	Ոչ
Բիոկաթ ՍՊԸ	Երևան	Ոչ

## Կաթնամթերք արտադրող ընկերությունների ընտրված ցանկ (շարունակություն)

Անվանում	Գործունեության վայրը	Պատրաստ են համագործակցել
Արգնի Կաթ կաթնամթերքի արտադրական ձեռնարկություն	Երևան	Այո
Բոնիլատ ՍՊԸ	Երևան	Մասնակի
Մաստարաչեղո ՍՊԸ	Արագածոտնի մարզ	Ոչ
Մարիլա ՍՊԸ	Սյունիքի մարզ	Այո
Բանդիվան Կաթ ՍՊԸ	Շիրակի մարզ	Ոչ
Իգիթ կաթնամթերքի գործարան ՍՊԸ	Շիրակի մարզ	Ոչ
Սիս Ալպ ՍՊԸ	Սյունիքի մարզ	Ոչ
Ապարան Գրուպ ՍՊԸ	Արագածոտնի մարզ	Այո
Արարատյան կաթնամթերք/ ԽԱԹ ՍՊԸ	Արարատի մարզ	Ոչ
Արցախկաթ ՓԲԸ	Լեռնային Ղարաբաղ	Այո
Դիլի ագրոարդյունաբերական համալիր ԷԼՈՒ ՓԲԸ	Տավուշի մարզ	Ոչ
Էջմիածին Կաթ ՍՊԸ	Սյունիքի մարզ	Ոչ
Մեր Երկիր ՍՊԸ	Արմավիրի մարզ	Ոչ
Մուլտի Ագրո ՍՊԸ	Շիրակի մարզ	Մասնակի
Ապարանի պանրի գործարան	Կոտայքի մարզ	Ոչ
Դուստր Մեխանյա պանրի գործարան ՍՊԸ	Արագածոտնի մարզ	Այո
Աշոցի պանրի գործարան ՍՊԸ	Լոռվա մարզ	Մասնակի
Գլորիա Չիգիս	Շիրակի մարզ	Ոչ
Գոլդեն Գոուբ Այծի Պանրի Գործարան ՓԻ	Արագածոտնի մարզ	Այո
Ամասիայի գլխավոր պանրի գործարան Էկոկաթ/ Արաքս 2 ԱԿ	Վայոց Ձորի մարզ	Ոչ
Արծրուն և Որդիներ ՍՊԸ	Շիրակի մարզ	Այո
Բորիսովկա պանրի արտադրամաս	Գեղարքունիքի մարզ	Ոչ
Կաթնաղբյուր ԱՉ	Սյունիքի մարզ	Այո
Կալինինո Կաթ ՍՊԸ	Արմավիրի մարզ	Այո
Տաշիր Կաթ ԲԲԸ	Լոռվա մարզ	Չենք կարողացել կապվել
	Լոռվա մարզ	Չենք կարողացել կապվել

# Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ընկերությունների հարցման արդյունքների ամփոփում

33 ընկերությունից կազմված ցանկը ընդգրկում է ՀՀ բոլոր մարզերը, Երևան քաղաքը և Լեռնային Ղարաբաղը:

## Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերություններին ներկայացվող հարցաշարի կազմում

Հարցաշարը կազմվել է հիմք ընդունելով սույն ծրագրով նախատեսված տեխնիկական առաջադրանքի պահանջները:

Խորհրդատուն, ոլորտի մասնագետների հետ միասին, մշակել է հարցաշարի նախնական տարբերակը, որն այնուհետև հաստատվել է Հիմնադրամի կողմից:

Կազմված հարցաշարը ներառել է հետևյալ հիմնական բաժինները՝

- Ընկերության համառոտ նկարագիրը, այդ թվում հիմնադրման տարեթիվը, արտադրամասի գտնվելու վայրը, ընկերության կողմից արտադրվող ապրանքների ցանկը,
- Կաթի մթերման գործընթացը, այդ թվում կաթի մատակարարների ընտրության հիմքում ընկած գործոնները, կաթի հիմնական մատակարարների ցանկը, վերջիններիս կոնտակտային տվյալները և նրանց հետ աշխատելու սկզբունքը, կաթի մատակարարման հաճախականությունը, կաթի մթերման ծավալները, կաթի պահպանման պայմանները, կաթի փոշու օգտագործումը,
- Կաթի վերամշակման գործընթացը, այդ թվում վերամշակման ինքնարժեքը, ինքնարժեքի կառուցվածքը, արտադրության ծավալները, արտադրական հզորությունները, կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության տեխնոլոգիաները,
- Արտադրանքի իրացումը, այդ թվում իրացման կառուցվածքը, արտահանվող ապրանքները, վաճառքի ուղիները,
- Այլ գործոններ, այդ թվում ներդրված որակի կառավարման համակարգեր,

գործունեությանը խոչընդոտող գործոններ, արտահանման խոչընդոտներ և հնարավորություններ:

Հարցաշարի օրինակը ներկայացված է սույն հաշվետվության Հավելված Ծ-ում:

## Հարցման անցկացում

Հարցումը տնտեսությունների շրջանակում իրականացվել է երեք փուլով՝

1. Խորհրդատուն հասանելի կոնտակտային տվյալներով փորձել է կապվել կաթնամթերք արտադրող ընկերությունների հետ, վերջիններիս հակիրճ ներկայացրել է իրագործվող ծրագրի բովանդակությունը, ճշտել է էլեկտրոնային հասցեները և տրամադրված էլեկտրոնային հասցեներով ուղարկել կազմված հարցաշարը և ծրագիրը հավաստող նամակը՝ տրամադրված Հիմնադրամի կողմից, որը ներկայացված է սույն հաշվետվության հավելված Խ-ում:
2. Հարցաշարը ուղարկելուց մի քանի օր հետո Խորհրդատուն կրկին կապվել է կոնտակտային անձի հետ և տեղեկացել վերջինիս համագործակցության պատրաստակամության մասին: Նշենք, որ սվյալ գործողությունը կրկնվել է այնքան ժամանակ մինչև Խորհրդատուն ստացել է հստակ պատասխան (համաձայնության կամ մերժման):
3. Համաձայնությունը ստանալուց հետո, Խորհրդատուն առաջարկել է հարցման անցկացման երկու տարբերակ՝
  - Ընկերությունը ինքնուրույն է լրացնում հարցաշարը և լրացված հարցաշարը ուղարկում է Խորհրդատուին և դիմում է վերջինիս հարցեր առաջանալու դեպքում,
  - Խորհրդատուն Ընկերության համար հարմար օրը և ժամին ներկայանում է Ընկերության գործունեության վայր և Ընկերության

# Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ընկերությունների հարցման արդյունքների ամփոփում

Կողմից կցված լիազորված անձի օգնությամբ լրացնում հարցաշարը:

## Հարցման հաջողության ամփոփում

Ինչպես արդեն նշվեց հարցմանը մասնակցելու համար Խորհրդատուն նախնական ցանկից առանձնացրել էր 33 կաթնամթերք արտադրող ընկերություն, որոնցից կապ է կարողացել հաստատել 31-ի հետ: Հարցմանը մասնակցելու և հարցաշարը լրացնելու համաձայնություն տվել են միայն 14-ը: Ընդ որում համաձայնված ընկերություններից երեքը տեղեկատվությունը տրամադրել են մասնակի:

## Ընտրված ընկերությունների համագործակցության պատրաստակամությունը ըստ գործունեության վայրի

Գործունեության վայրը	Նախնական քանակ	Համաձայնվածների քանակ	Համաձայնվածների մասնաբաժինը
Երևան	5	3	60%
Արագածոտնի մարզ	4	2	50%
Արարատի մարզ	1	-	0%
Արմավիրի մարզ	2	1	50%
Գեղարքունիքի մարզ	2	1	50%
Լոռվա մարզ	3	1	33%
Կոտայքի մարզ	4	1	25%
Շիրակի մարզ	5	1	20%
Սյունիքի մարզ	4	2	50%
Վայոց Ձորի մարզ	1	1	100%
Տավուշի մարզ	1	-	0%
Լեռնային Ղարաբաղ	1	1	100%
<b>ԸՆԴԱՄԵՆՆԸ</b>	<b>33</b>	<b>14</b>	<b>42%</b>

Հարցման արդյունքները ամփոփված են հաջորդ ենթագլխում, իսկ պատասխանները մանրամասն ներկայացված են Հավելված Զ-ում:

## Դիտարկումներ


- Խորհրդատուն հարցման համար առանձնացրել է կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող 33 ընկերություն, որոնցից կապ է կարողացել հաստատել միայն 31-ի հետ; հարցմանը մասնակցելու համաձայնություն են տվել 14-ը:
- Հարցման մասնակիցներից երեքը հարցման համար մշակված հարցաշարերը լրացրել են մասնակիորեն:

# Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ընկերությունների հարցման արդյունքների ամփոփում

## Հարցման արդյունքում ստացված տեղեկատվության վերլուծություն


**Գործունեության ժամկետ:** Հարցմանը մասնակցած 14 ընկերությունների մեծ մասը ունեն երկար տարիների փորձ և հետևաբար կայուն դիրք կաթնամթերքի արտադրության հայաստանյան շուկայում:

Հարցմանը մասնակցած ընկերություններից միայն մեկն է, որ համեմատաբար նոր է և գործում է ընդամենը երկու տարի:




**Բաշխվածությունը ըստ գործունեության վայրի:** Հարցմանը մասնակցած 14 ընկերությունների մեծ մասը տեղակայված են Երևան քաղաքում, Արագածոտնի և Սյունիքի մարզերում:

Հարցմանը մասնակցած ընկերությունների ցանկում չկան ներկայացուցիչներ Արմավիրի և Տավուշի մարզերից:



**Արտադրվող կաթնամթերք:** Հարցմանը մասնակցած ընկերությունների մեծ մասը արտադրում են կաթ, մածուխ և պանիր:



## Դիտարկումներ


- Հարցմանը մասնակցած կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերությունների կեսից ավելին ունեն ավելի քան 15 տարվա փորձ կաթնամթերքի արտադրության ոլորտում:
- Հարցմանը մասնակցած ընկերությունների մեծ մասը տեղակայված են Երևան քաղաքում, Արագածոտնի և Սյունիքի մարզերում, սակայն հարցման մասնակիցների ցանկում չկան ներկայացուցիչներ Արմավիրի և Տավուշի մարզերից:
- Հարցմանը մասնակցից 14 ընկերություններից 13-ը ներգրավված են պանրի արտադրության մեջ:



# Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ընկերությունների հարցման արդյունքների ամփոփում


## Կաթի մատակարարների ընտրության հիմքում ընկած գործոնները

Հարցմանը մասնակցած 14 ընկերություններից 12-ը, որպես կաթի մատակարարի ընտրության առաջնային գործոն են ընտրել կաթի որակը:



## Կաթի որակի համար հավելագումարի վճարում


Ելնելով այն հանգամանքից, որ հարցմանը մասնակցած ընկերություններից մեծ մասի համար մատակարարի ընտրության առաջնային գործոնն է կաթի որակը, պատահական չէ, որ այն հարցին, թե արդյոք բարձր որակի կաթի համար ընկերությունները վճարում են հավելագումար, վերջիններիս 86% պատասխանել է այո:



Ընդ որում ընկերությունների մեծ մասը որպես կաթի բարձր որակի գրավական հիմնականում նշել են կաթի յուղայնության մակարդակը, իսկ նրանցից որոշները կիթի մեքենայի առկայությունը և հոտազրկումը:


**Կաթի փոշու օգտագործում:** Համաձայն հարցման պատասխանների հարցմանը մասնակցած ընկերությունների մեծ մասը կաթնամթերքի արտադրության մեջ չեն օգտագործում կաթի փոշի:

Հարցման մասնակցած ընկերություններից միայն երկուսն են նշել, որ կաթնամթերքի արտադրության մեջ օգտագործում են կաթի փոշի:



## Որակի կառավարման ներդրված համակարգեր

Համաձայն ստացված տեղեկատվության ընկերություններից միայն 7-ը ունեն որակի կառավարման ներդրված համակարգեր, ընդ որում ընկերություններից երկուսը ունեն ինչպես HACCP, այնպես էլ ISO 22000:



## Դիտարկումներ

- Հարցման մասնակիցներից մեծ մասի համար մատակարարի առջև դրվող առաջնային պայմանը կաթի որակի ապահովումն է: Գրեթե բոլորը պատրաստ են ավել գումար վճարել յուղայնության բարձր մակարդակ ունեցող և որակյալ կաթի համար: Նրանցից 86%-ը հավաստիացնում են նաև, որ իրենց արտադրանքում չեն օգտագործում կաթի փոշի:
- Չնայած որ հարցման մասնակիցներից բոլորի առաջնային նպատակը որակյալ կաթնամթերքի արտադրությունն է, այնուամենայնիվ որակի կառավարման համակարգեր ներդրված են միայն յոթում:


# Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ընկերությունների հարցման արդյունքների ամփոփում

## Մատակարարների հետ աշխատելու սկզբունքը

**Պայմանագրերի կնքում:** Հարցմանը մասնակցած 14 ընկերություններն էլ նշել են, որ իրենց կաթի մատակարարների հետ աշխատելիս կիրառում են պայմանագրերի կնքման պրակտիկան:


### Պայմանագրերի տևողությունը

### Վճարման միջոց



**Վճարման ժամկետ:** Հարցմանը մասնակցած ընկերություններից միայն մեկն է իր կաթի մատակարարների հետ աշխատում միայն կանխավճարային սկզբունքով:

Ետվճարային սկզբունքով աշխատելիս ընկերություններից մի քանիսը նշել են, որ գումարը վճարում են ապրանքը ստանալուց հետո 10-15 օրվա ընթացքում, իսկ որոշները՝ 45 օրվա ընթացքում:




**Պայմանագրերի կնքման առանձնահատկություններ:** Պայմանագրերի կնքումը հնարավորություն է ընձեռում ընկերություններին ապահովագրված լինել կաթի պակասուրդից և ավելի ճշգրիտ կազմակերպել արտադրական գործընթացը, ինչպես նաև պլանավորել բյուջեն, քանի որ շնորհիվ պայմանագրերի վերջիններս հստակ գիտեն, թե երբ և որքան կաթ են մթերելու և ինչպիսի դրամական արտահոսքեր են ունենալու:

## Դիտարկումներ

- Հարցմանը մասնակցած կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող բոլոր 14 ընկերություններն էլ իրենց մատակարարների հետ աշխատելիս կիրառում են պայմանագրերի կնքման պրակտիկան: Պայմանագրերը մեծամասամբ կնքվում են մինչև 1 տարի ժամկետով՝ ինչպես կանխավճարային, այնպես էլ ետվճարային սկզբունքով, իսկ գնված կաթի դիմաց վճարումները կատարվում են ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:
- Պայմանագրերի կնքումը թույլ է տալիս ընկերություններին ավելի լավ պլանավորել իրենց արտադրական գործընթացը և դրամական միջոցների արտահոսքը:


# Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ընկերությունների հարցման արդյունքների ամփոփում

**Կաթի փոխադրումը:** Համաձայն ներկայացված արդյունքների, հարցմանը մասնակցած ընկերությունների մեծ մասը կաթի փոխադրումը կատարում է ինքնուրույն:



Ընդ որում փոխադրումը ինքնուրույն իրականացնող ընկերություններից միայն մեկն է փոխադրումն իրականացնում բեռնափոխադրող ընկերության միջոցով, իսկ մնացածը փոխադրման գործընթացը կազմակերպում են սեփական մեքենաներով:

**Կաթի մթերման ծավալներ:** Աջ կողմում բերված գրաֆիկում ներկայացված են հարցմանը մասնակցած 14 ընկերություններից 12-ի կաթի մթերման ծավալները 2017թ-ի հունվար-սեպտեմբեր ժամանակաշրջանի համար (ընկերություններից երկուսը այս տեղեկատվությունը չեն տրամադրել): Ներկայացված գրաֆիկից ակնհայտ է, որ կաթի մթերման ամենախոշոր ծավալներն ունի Մարիաննա ընկերությունը, որը ՀՀ-ում հանդիսանում է կաթնամթերքի արտադրության առաջատարներից և շուկայի հիմնական մասնակիցներից մեկը:



Տեղեկատվությունը տրամադրած ընկերությունների արտադրության ծավալները (բնեղեն արտահայտությամբ)՝ ըստ ապրանքի տեսակների և ամիսների (հիմնական արտադրատեսակների համար) 2017թ-ի համար ներկայացված է սույն հաշվետվության Հավելված Զ-ում:


**Դիտարկումներ**

- Հարցման մասնակիցների մեծ մասը կաթի փոխադրումը կատարում են ինքնուրույն՝ սեփական մեքենաներով:
- Հարցմանը մասնակցած կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող 14 ընկերություններից կաթի մթերման ամենախոշոր ծավալներն ունի Մարիաննա ընկերությունը՝ ՀՀ կաթնամթերքի շուկայի առաջատարներից մեկը:

# Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ընկերությունների հարցման արդյունքների ամփոփում

## Կաթի մատակարարման սեզոնայնությունը


Կաթնամթերքի արտադրության ընդլայնումը և զարգացումը զսպող խոչընդոտներից մեկը կաթի մատակարարման սեզոնայնությունն է, մատակարարվող ծավալի սահմանափակությունը և մեծ տատանումները տարվա ընթացքում: Առավելագույն քանակ արտադրվում է ամառվա ամիսներին: Նման սեզոնայնության պատճառներից մեկն այն է, որ անասնապահությամբ զբաղվող տնտեսությունների մեծ մասը մանր տնտեսություններ են, որոնք չենք կարողանում ապահովել կենդանիների համապատասխան խնամքը և լիարժեք ու կայուն կերակրումը ողջ տարվա ընթացքում, ինչի հետևանքով էլ ոչ ամառային ամիսներին, երբ կենդանիները չեն կարող սնվել արոտականաչով, կենդանիների կաթնատվությունը կտրուկ նվազում է:



Կաթնամթերք արտադրողների համար կաթի մատակարարման այսպիսի տատանումները առաջացնում են մի շարք դժվարություններ՝


- դժվարանում է կայուն արտադրության պլանավորումը և կազմակերպումը,
- առաջանում են փոխադրման և պահպանման հետ կապված լոգիստիկ խնդիրներ,
- դժվարանում է ֆինանսական կառավարումը:

Ստորև բերված գրաֆիկում, 12 ընկերությունների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա, ներկայացված է կաթի մթերման ծավալները և միջին կշռված յուղայնությունը ըստ ամիսների: Գրաֆիկից կարելի է նկատել կաթի մթերման ծավալների ակնհայտ սեզոնայնությունը: Այսպես հունվար ամսից սկսած կաթի մթերման ծավալները աստիճանաբար աճում են՝ գագաթնակետին հասնելով հուլիս ամսին, որից հետո կրկին աստիճանաբար սկսում են նվազել: Ընդհանուր առմամբ ամենամեծ քանակությամբ կաթի մթերում իրականացվում է ամառվա ամիսներին:



# Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ընկերությունների հարցման արդյունքների ամփոփում

**Կաթի գները և յուղայնությունը ըստ ամիսների:** Համաձայն հարցմանը մասնակցած ընկերությունների կողմից տրամադրված տեղեկատվության, կաթի գները էականորեն չեն տատանվում կախված կաթի մթերման ծավալներից և չի նկատվում բացահայտ կորելացիոն կապ կաթի միջին գների և միջին յուղայնության միջև:



### Դիտարկումներ

- Կաթի մատակարարումն ունի խիստ դրսևորվող սեզոնային բնույթ, որի հիմնական պատճառը փոքր տնտեսությունների գերակշռությունն է և նրանց անկարողությունը իրենց կենդանիների համար ապահովել ստանդարտներին համապատասխան կերակրման և խնամքի պայմաններ:
- Հարցման արդյունքները ևս վկայում են այն մասին, որ կաթի մթերման ծավալներն ունեն ակնհայտ սեզոնայնություն: Կաթի ամենաշատ մթերումը կատարվում է ամռան ամիսներին, իսկ մնացած ամիսներին, հատկապես ձմռանը, մթերման ծավալները խիստ նվազում են:
- Հարցման արդյունքում հավաքագրված տեղեկատվության համաձայն չկա ակնհայտ կորելացիոն կապ կաթի մթերման գների և ծավալների, ինչպես նաև կաթի գների և յուղայնության միջև:

# Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ընկերությունների հարցման արդյունքների ամփոփում

**Կաթի մատակարարումը և պահպանումը:** Հարցմանը մասնակցած բոլոր 14 ընկերությունները նշել են, որ իրենց մատակարարները կաթը մատակարարում են ամեն օր, իսկ կաթի պահպանումը իրականացվում է ստորև բերված աղյուսակում ներկայացված տեղեկատվությանը համապատասխան (ընկերություններից միայն մեկը չի նշել թե ինչպես է իրականացնում կաթի պահպանումը): Ընկերությունների մեծ մասը նշել են, որ կաթը գործարանում պահվում է առավելագույնը 1 օր: Բոլոր ընկերությունները կաթը պահպանում են պաղեցման ընդունված ջերմաստիճանի նորմաներին համապատասխան:

## Կաթի պահպանման պայմանները և ժամկետները

	Ապարան Գրուպ	Դուստր Մեյլանիա	Չանախ	Գոլդեն Գոուօ	Բորիսովկա ՍՊԸ	Մարիլա	Ապարանի պանրի գործարան	Մարիաննա	Կաթնադեյուր	Բոնիլաթ	Մեր Երկիր	Արցախ Կաթ	Էկո Կաթ
Պահպանման ջերմաստիճան	2-6C	2-4C	4-7C		3-4.5C	2-4C	2C		4C		4C	0±8 C	2-4C
Պահպանման մաքսիմալ օրերի քանակը	4	1	1	-	1	1	-	1	1	1	-	2	-


**Կաթի վերամշակման տեխնոլոգիաներ:** Հարցմանը մասնակցած 14 ընկերություններից 13-ը նշել են, թե կաթի վերամշակման ինչպիսի տեխնոլոգիաներ են առկա վերջիններիս արտադրամասերում: Ընկերությունների տրամադրած տեղեկատվությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

## Կաթի վերամշակման տեխնոլոգիաներ


	Ապարան Գրուպ	Դուստր Մեյլանիա	Չանախ	Գոլդեն Գոուօ	Բորիսովկա ՍՊԸ	Մարիլա	Արզնի Կաթ	Ապարանի պանրի գործարան	Մարիաննա	Կաթնադեյուր	Բոնիլաթ	Մեր Երկիր	Արցախ Կաթ	Էկո Կաթ
Կաթի ընդունում	X	X	X	X	X	X	X	X	X	X	-	X	-	X
Կաթի պահպանում	X	X	X	X	X	-	X	X	X	X	-	-	X	X
Կաթի հոտազրկում	X	-	X	X	X	X	-	-	X	X	-	-	-	-
Կաթի կեղտամաքում	X	X	X	X	X	X	X	X	X	X	-	-	X	X
Կաթի զատում	X	X	X	X	X	X	-	X	X	X	-	-	X	X
Կաթի ստանդարտացում	X	X	X	X	X	X	-	X	X	X	-	-	X	X
Կաթի պաստերիզացիա	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
Կաթի հովացում	X	-	X	X	X	X	X	X	X	X	-	X	X	X
Կաթի համասեռացում (հոմոգենիզացիա)	X	-	X	X	X	X	X	X	X	X	-	X	-	-
Կաթի փաթեթավորում	X	-	X	X	-	X	X	X	X	X	X	X	X	-
Պանրի արտադրություն	X	X	X	X	X	X	X	X	X	X	-	X	X	X
Մածուկի արտադրություն	X	-	X	X	-	X	X	-	X	X	-	X	-	-
Թթվասերի արտադրություն	X	-	X	X	X	X	X	-	X	X	-	X	-	-
Պաղպաղակի արտադրություն	-	-	-	-	-	-	-	-	X	-	-	-	-	-
Կաթնաշոռի արտադրություն	-	-	X	-	-	-	-	-	X	X	-	X	-	-

# Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ընկերությունների հարցման արդյունքների ամփոփում

**Պաստերիզացված կաթի ինքնարժեքը:** Հարցմանը մասնակցած կաթ արտադրող 10 ընկերություններից միայն 4-ն են տեղեկատվություն տրամադրել արտադրվող կաթի ինքնարժեքի վերաբերյալ: Կաթի ամենաբարձր ինքնարժեքն ունի Արցախի կաթը, որը ներկայացված ընկերություններից ամենաբարձր գնով է կատարում կաթի մթերումը:



**Պանրի ինքնարժեքը:** Հարցմանը մասնակցած պանիր արտադրող 13 ընկերություններից միայն 7-ն են տեղեկատվություն տրամադրել արտադրվող պանրի ինքնարժեքի վերաբերյալ, ինչը ներկայացված է ստորև բերված գրաֆիկում: Ընդ որում Գորդեն Գոուլթ ընկերությունը պանրի արտադրության համար հիմնականում օգտագործում է այժի կաթ:



Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Լոռի և Չանախ պանիրների ինքնարժեքի մանրամասն բացվածքը:

Եղեգնաձոր տեսակի պանրի համար ինքնարժեքի կառուցվածքը հնարավոր չի եղել պարզել:

## Լոռի և Չանախ պանիրների 1 կգ-ի ինքնարժեքի հաշվարկ, ՀՀ

	Մասնաբաժինը*	Լոռի	Չանախ
Կաթ և բակտերիաներ	87.6%	1,238	1,078
Նյութական ծախսեր	2.9%	41	36
Աշխատավարձ	3.2%	45	39
Կոմունալ ծախսեր	2.4%	34	30
Մաշվածություն	3.4%	48	42
Տրանսպորտային ծախսեր	0.4%	6	5
<b>Ինքնարժեք</b>	<b>100%</b>	<b>1,412</b>	<b>1,230</b>

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 1 կգ Լոռի և Չանախ տեսակի պանիրների ինքնարժեքը կազմում է համապատասխանաբար 1,412 և 1,230 ՀՀ դրամ:

Ստորև բերված աղյուսակում 1 կգ թթվասերի արտադրության համար օգտագործված կաթի և բակտերիաների արժեքը կազմում է 579 ՀՀ դրամ:

## Թթվասերի 1 կգ-ի արտադրության համար անհրաժեշտ կաթի և բակտերիաների արժեքի հաշվարկ, ՀՀ դրամ

Բաղադրիչներ	Միավոր	1 կգ-ի համար անհրաժեշտ մյուսեր	Գինը, ՀՀ դրամ	Ընդամենը
Կաթ անարատ 4%	լիտր	0.9	140	125
Սերակարագ	կգ	0.1	3,000	234
Չոր յուղազուրկ կաթ	կգ	0.02	2,500	50
Կայունացուցիչ MO-2	կգ	0.01	4,800	36
Բակտերիալ կուլտուրա	միավոր	0.1	90	9
Տարա 200 գ	հատ	5	25	125
<b>Ընդամենը</b>				<b>579</b>


# Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ընկերությունների հարցման արդյունքների ամփոփում

Ստորև բերված աղյուսակում 1 կգ թթվասերի արտադրության համար օգտագործված կաթի և բակտերիաների արժեքը կազմում է 238 ՀՀ դրամ:

**Մածուցի 1 կգ-ի արտադրության համար անհրաժեշտ կաթի և բակտերիաների արժեքի հաշվարկ, ՀՀ դրամ**

Բաղադրիչներ	Միավոր	1 կգ-ի համար անհրաժեշտ մյուլքեր	Գինը, ՀՀ դրամ	Ընդամենը
Կաթ անարատ 3.4%	լիտր	0.962	140	135
Բակտերիալ կուլտուրա	միավոր	0.038	90	3
Տարա 500 գ	հատ	2	50	100
<b>Ընդամենը</b>				<b>238</b>

**Ընկերությունների գործունեությանը խոչընդոտող գործոններ:** Հարցմանը մասնակցած 14 ընկերություններից 9-ը նշել են, որ կան արտաքին գործոններ, որոնք խոչընդոտում են իրենց գործունեությանը և ընդլայնմանը:



Առաջատար տեխնոլոգիաներով համալիրների և սարքավորումների ներդրման և արտադրության ընդլայնման համար պահանջվում են զգալի ֆինանսական ներդրումներ, որոնց համար հաճախ պահանջվում է երկարաժամկետ ֆինանսավորում: ՀՀ-ում գործարարների համար դժվար է գտնել երկարաժամկետ վարկեր: Մատչելի չեն նաև ֆինանսավորման այլ միջոցները, ինչպիսին են լիզինգը, ծրագրերի ֆինանսավորումը, վարկային գծերի տրամադրումը:

Խոչընդոտող գործոններն ավելի մանրամասն ներկայացված են 122 էջում:

### Դիտարկումներ

- Հարցման մասնակիցների 64%-ը նշել է, որ կան արտաքին գործոններ, որոնք խոչընդոտում են իրենց գործունեությանը և ընդլայնմանը: Ընդ որում նրանցից 67%-ը որպես հիմնական խոչընդոտող գործոն է նշել ֆինանսավորման ոչ բավարար հնարավորությունները:



# Բաժին 7: Տեղական վաճառք/ շուկա

- 01. Ամփոփ բաժին
- 02. Ներածություն
- 03. ՀՀ մակրոտնտեսական ամփոփ ուսումնասիրություն
- 04. Գյուղատնտեսության ոլորտի ամփոփ ուսումնասիրություն
- 05. Կաթի արտադրություն
- 06. Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն
- 07. Տեղական վաճառք/ շուկա**
- 08. Օտարերկյա շուկաներ
- 09. Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրություն
- 10. Կաթի վերամշակման և կաթնամթերքի ոլորտի SWOT վերլուծություն

# ՀՀ կաթի և կաթնամթերքի շուկայի ուսումնասիրություն

Տեղական շուկայի ուսումնասիրության նպատակով իրականացվել է կաթնամթերքի տեղական արտադրության ուսումնասիրություն, ներմուծման ծավալների, հիմնական ներմուծող ընկերությունների վերլուծություն, կաթի և կաթնամթերքի, ինչպես նաև վերջինիս փոխարինիչների գնային ուսումնասիրություն, վաճառքի ուղիների վերլուծություն և տեղական շուկա մուտք գործելու խոչընդոտների գնահատում:

## Կաթնամթերքի տեղական արտադրություն

Կատարվել է ՀՀ-ում կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության ծավալների ուսումնասիրությունը 2016թ.-ի և 2017թ.-ի 7 ամիսների համար: Հատկանշական է, որ 2016թ.-ին ՀՀ-ում արտադրված մոտ 43,140 տոննա կաթնամթերքից 51.73%-ը կազմել է պանրի արտադրությունը: Համաձայն ուսումնասիրության արդյունքների՝ առաջին 4 խումբ արտադրվող սպրանքների կշիռը կազմում է 91.04% և 90.14% համապատասխանաբար 2016թ.-ի և 2017թ.-ի 7 ամիսների համար (տես ստորև բերված աղյուսակը):


## Կաթնամթերքի տեղական արտադրության կառուցվածքը, տոննա

	Մասնաբաժ		Մասնաբաժ	
	2016 թ. 12 ամիս	12 ինը (2016 թ. 12 ամիս)	2017թ. 7 ամիս	7 ինը (2017թ. 7 ամիս)
Պանիր	22,316	51.73%	11,014	46.46%
Պաղպաղակ	4,939	11.45%	4,046	17.07%
Մածուն	6,098	14.14%	3,502	14.77%
Թթվասեր	5,923	13.73%	2,807	11.84%
Թան	1,906	4.42%	1,386	5.85%
Կաթնաշոռ	955	2.21%	505	2.13%
Կեֆիր	442	1.02%	303	1.28%
Յոգուրտ	526	1.22%	143	0.60%
Պանրիկներ	36	0.08%	-	0.00%
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>	<b>43,140</b>	<b>100.00%</b>	<b>23,705</b>	<b>100.00%</b>

Աղբյուրը: ՀՀ ԱՎՏ, [www.armstat.am](http://www.armstat.am)

Հաջորդիվ բերված գծապատկերում ներկայացված են կաթնամթերքի տեղական արտադրության ծավալները 2016թ.-ի և 2017թ.-ի 7 ամիսների համար: Կաթնամթերքի արտադրության ծավալներն այս տարվա մարտից մայիս ընկած

ժամանակահատվածում գրեթե համադրելի են եղել նախորդ տարվա նույն ցուցանիշի հետ: Մայիսից հուլիս ընկած ժամանակահատվածում, արտադրության ծավալները, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, զգալիորեն կրճատվել են, ինչը կարող էր տեղի ունենալ 3 հիմնական պատճառներով՝ հում կաթի արտադրության նվազում, արտահանման Կաթնամթերքի և հում կաթի տեղական



Աղբյուրը: ՀՀ ԱՎՏ, [www.armstat.am](http://www.armstat.am)

ծավալների և տեղական շուկայում սպառման ծավալների նվազում: Գծապատկերից երևում է, որ հում կաթի արտադրության ծավալները դիտարկվող ժամանակաշրջանում էականորեն չեն տարբերվել նախորդ տարվա մինևույն արդյունքից: Արտահանման և սպառման ծավալների վերաբերյալ տեղեկատվության բացակայության պատճառով հնարավոր չէ ասել, թե նշվածներից որն է հանդիսացել արտադրության ծավալների նվազման հիմնական պատճառը:

### Դիտարկումներ

- 2016թ.-ին ՀՀ-ում արտադրվել է 43,140 տոննա կաթնամթերք, որից 51.73%-ը բաժին է ընկել պանրի արտադրությանը:

# «Վաճառքի և կաթնամթերքի ներմուծման ուսումնասիրություն»

## Դիտարկումներ (շարունակություն)

- 2016թ.-ին արտադրված կաթնամթերքի կառուցվածքում պանրի, պաղպաղակի, մածնի և թթվաձրի կշիռը կազմել է 91.04%:
- Կաթնամթերքի արտադրության ծավալները 2016թ.-ի սեպտեմբերից սկսած անկում են ապրել, ինչը պայմանավորված է սեզոնայնությունից բխող կաթնատվության սղությանը:

## Կաթնամթերք ներմուծող հիմնական ընկերությունները ԳԳ-ում

### «Բրենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ

Բրենդ Լիդեր ՀՁ ՍՊԸ -ն լայն սպառման ապրանքների ներմուծմամբ զբաղվող մասնագիտացած ընկերություն է: Բրենդ Լիդեր ՀՁ ՍՊԸ-ն հանդիսանում է Ինտերմիլկ ՀՁ ՍՊԸ իրավահաջորդը, որը հիմնադրվել էր 2002թ. նոյեմբերի 15-ին: Գործունեության առաջին տարում ընկերությունը միայն մեկ ապրանքանիշ էր ներկայացնում Հայաստանում (Ehrmann), 2003թ. ավելանում է նաև Hochland ապրանքանիշը:

Այսօր Բրենդ Լիդեր ընկերությունը հանդիսանում է միջազգային ճանաչում ունեցող այնպիսի ապրանքանիշերի ներկայացուցիչը, ինչպիսիք են Ալմետ (Almette), Վալիո (Valio), Օլտերմանի (Oltermanni), Պլավիչ (Плавич), Առլա (Arla), Կաստելո (Castello), Լուրպակ (Lurpak), Էրմանն (Ehrmann), Կամպինա (Campina) և այլն: Ընկերության ներմուծում է պանիր, կարագ, յոգուրտ, սերուցք և այլն:

### «Մառնիկ» ՍՊԸ

Մառնիկ ընկերությունը հիմնադրվել է 2000թ.: 2000թ.-ից Մառնիկը հանդիսանում է Վալիո-ի դիստրիբյուտորը, ներմուծում է նաև Օլտերման ապրանքանիշի պանիրներ: Վալիոն ֆիննական կաթնամթերք արտադրող ընկերություն է, որը հիմնադրվել է 1905 թվականին, կաթ վերամշակող մասնավոր ընկերությունների կողմից:

«Մառնիկ» ՍՊԸ-ն զբաղվում է կարագի և պանրի ներմուծմամբ:

### «Լիա Ֆուդ» ՍՊԸ

«Լիա Ֆուդ» հիմնադրվել է 1993 թ.-ին: Ընկերությունը ներմուծում է մի շարք ապրանքատեսակներ, իսկ կաթնամթերքի ցանկը ներառում է խտացրած կաթը և մարգարինը: Ներկայացնում է Չապոռոժսկի, Սանիա, Շչեդրո, ԿՄԿ, Ռոզաչյով և այլն:

### «Մեգաֆուդ» ՍՊԸ

«Մեգաֆուդ» ՍՊԸ-ն ներմուծող ընկերություն է, որը Հայաստանում գործունեություն է ծավալում 2001թ.-ից: Ընկերության հիմնական գործունեությունը սննդամթերքի ներմուծումն ու արտահանումն է: Ներմուծման ծավալները 2016 թ.-ին կազմել են 8,014 տոննա բնեղեն արտահայտությամբ:

Ընկերությունը ներկայում հանդիսանում է 8 երկրների ավելի քան 25 ապրանքանիշերի ներկայացուցիչը Հայաստանում: Վերջինս ներմուծում է տարբեր տեսակների պանիրներ: Հանդիսանում է հետևյալ ապրանքանիշերի ներկայացուցիչը՝ Սպոմլեկ (Spomlek), Մլեկովիտա (Mlekovita), Կոլիոս (Kolios), Պալադին (Paladin), Խմելնիցկի Մասլոսիրբազա (Khmelnitsky Maslosyrbaza), Կրոոն (Kroon), Մամեն Չիզ (Mammen Cheese):

### «Դերժավա-Ս» ՓԲԸ

«Դերժավա-Ս» ՓԲԸ-ն հիմնադրվել է 1995 թվականին:

Ընկերությունը հանդիսանում է Դանոն ապրանքանիշի ներկայացուցիչը Հայաստանում: Ընկերության կողմից ներմուծվող կաթնամթերքի ցանկը ներառում է կաթը և յոգուրտը:


## Դիտարկումներ

- «Վ» կաթնամթերք ներմուծող հիմնական 5 ընկերությունները տեղակայված են Երևանում և իրականացնում են պանրի, կարագի, յոգուրտի, կաթի, խտացրած կաթի և այլ կաթնամթերքի ներմուծում:
- Հանդիսանում են մի շարք հանրահայտ ապրանքանիշերի ներկայացուցիչը Հայաստանում:

# «Կաթի և կաթնամթերքի ներմուծման ուսումնասիրություն


## Ներմուծում տեղական շուկա

Կաթնամթերքի ներմուծումն ըստ երկրների բնեղեն արտահայտությամբ, 2016թ.



Աղբյուր: ՀՀ ԱՎԾ, [www.armstat.am](http://www.armstat.am)

Կաթնամթերքի ներմուծումն ըստ երկրների դրամական արտահայտությամբ, 2016թ.



Աղբյուր: ՀՀ ԱՎԾ, [www.armstat.am](http://www.armstat.am)

2016թ.-ի ընթացքում «Կ» ներմուծվել է մոտ 12,880 տոննա կաթնամթերք: 2016թ.-ին նախորդ տարվա համեմատ կաթնամթերքի ներմուծումը բնեղեն արտահայտությամբ աճել է 7.6%-ով:

Կաթնամթերքի ներմուծման հիմնական երկրները ներմուծման ծավալներով 2016թ.-ին եղել են Ուկրաինան, Նոր Զելանդիան և Ռուսաստանը, համապատասխանաբար 36%, 26% և 23% արդյունքներով:

Սակայն պատկերն այլ է, երբ ներմուծման երկրները դիտարկում ենք ըստ ներմուծված ապրանքների արժեքի: Այս դեպքում հիմնական ներմուծման երկրները եղել են Նոր Զելանդիան, Ուկրաինան և Ռուսաստանը, համապատասխանաբար 36%, 30% և 14 % արդյունքներով, ինչը պայմանավորված է նրանով, որ նորզելանդական արտադրության ապրանքները ներկրվել են ավելի բարձր գներով:

2016թ.-ին ամենաշատ ներմուծված կաթնամթերքը եղել է կարագը՝ կազմելով 4,740 տոննա, իսկ ամենաքիչը ներմուծվել է կաթնաթթվային արտադրության մեջ օգտագործվող կաթնային շիճուկը՝ կազմելով 254 տոննա: Հարկ է նշել, որ վերջինս բացառապես ներմուծվում է:

### Օգտագործված արժույթ


Կաթնամթերքի ներմուծումն իրականացվել է ԱՄՆ դոլարով, որը 2016թ.-ին կազմել է 16 մլրդ «Կ» դրամ (33,301 հազ. ԱՄՆ դոլար):

### Տեղական և ներմուծվող արտադրություն

Հաջորդիվ բերված գծապատկերում ներկայացված են տեղական արտադրության և ներմուծման մասնաբաժինները: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ կաթը, կաթնաթթվային արտադրանքը (մածուկ, թթվասեր, թան, կեֆիր, յոգուրտ և այլն), պանիրը, կաթնաշոռը հիմնականում հայրենական արտադրության են և նրանց միայն չնչին մասն է ներմուծվում: Միևնույն ժամանակ, կաթնամթերքի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են խտացրած կաթը, կաթնային շիճուկը, ընդհանրապես չեն արտադրվել տեղական արտադրողների կողմից 2016թ.-ի ընթացքում:

# «Կաթի և կաթնամթերքի ներմուծման ուսումնասիրություն»

Տեղական արտադրության և ներմուծման մասնաբաժինները



Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, [www.armstat.am](http://www.armstat.am), Խորհրդատուի հաշվարկ

Ինչպես արդեն նշվեց, կարագի գերակշիռ մասը ներմուծվել է, իսկ տեղական արտադրության կարագը և այլ կաթնային յուղերը, որոնց արտադրության ծավալները 2016թ.-ին աննշան են եղել, հիմնականում հանդես են եկել կարագի փոխարինիչների՝ սփրեդի և մարգարինային արտադրանքի տեսքով:

Ներմուծման պատմական ծավալների վերլուծության արդյունքում ակնհայտ դարձավ, որ 2016թ.-ին նախորդ տարվա համեմատ կաթնամթերքի բոլոր տեսակների ներմուծման ծավալները բացառությամբ պանրի և կաթնաշոռի ան են գրանցել:

Ներմուծման ծավալների դինամիկան, որն ավելի մանրամասն ներկայացված է հաջորդիվ բերված աղյուսակում, ցույց տվեց, որ 2010թ.-ի համեմատ, 2016թ.-ին կաթնամթերքի ներմուծման ծավալները միջինում աճել են 46%-ով:

Ներմուծման պատմական ծավալների վերլուծություն տոննա

	Խտացրած կաթ, կաթի փոշի		Կաթնային շիճուկ	Կարագ և այլ կաթնային յուղեր	Պանիր, կաթնաշոռ	
	Կաթ	Կաթնային արտադրանք	Կաթնային արտադրանք	Կաթնային արտադրանք	Կաթնային արտադրանք	
2010	345	3292	234	1112	3059	726
2011	377	3130	331	888	4540	1019
2012	387	2680	458	946	4907	1056
2013	431	2664	595	1179	4749	1244
2014	596	3859	383	1448	5262	1188
2015	515	3829	204	1889	4420	1118
2016	554	4335	254	1945	4740	1053

Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, [www.armstat.am](http://www.armstat.am)

## Դիտարկումներ

- 2016թ.-ին կաթնամթերքի ներմուծման հիմնական երկրները բնեղեն արտահայտությամբ հանդիսացել են Ուկրաինան (36%), Նոր Չելանդիան (26%), Ռուսաստանը (23%), Բելառուսը (5%), Ֆինլանդիան (4%), Գերմանիան (2%): Իսկ դրամական արտահայտությամբ ներմուծման ծավալների դիտարկման արդյունքում Նոր Չելանդիայի մասնաբաժինը կազմել է 36%, իսկ Ուկրաինային ու Ռուսաստանինը համապատասխանաբար 30% և 14%:
- Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ կաթնաթթվային արտադրանքի միայն 12%-ը, իսկ պանրի, կաթնաշոռի 4%-ն են ներմուծվում: Կարագը գրեթե ամբողջությամբ ներմուծվում է, իսկ վերջինիս տեղական արտադրության մասնաբաժինը աննշան է և հիմնականում բաղկացած է կարագի փոխարինիչներից:
- 2016թ.-ին նախորդ տարվա համեմատ կաթնամթերքի բոլոր տեսակների ներմուծման ծավալները բացառությամբ պանրի և կաթնաշոռի ան են գրանցել:


# ՀՀ շուկայում վաճառվող կաթի և կաթնամթերքի գնային ուսումնասիրություն

Ապառողական շուկայում կաթնամթերքի գները 2017թ-ի հունվարի դրությամբ ըստ քաղաքների, ՀՀ դրամ

	Երևան	Գյումրի	Վանաձոր	Վաղարշապատ	Աշտարակ	Իջևան	Հրազդան	Եղեգնաձոր	Գավառ	Կապան	Արտաշատ
Կաթ (լիտր)	413	400	370	384	424	435	402	429	433	397	426
Մածուն (լիտր)	674	513	634	576	687	673	570	685	675	508	718
Թթվասեր (կգ)	1,429	1,177	1,568	1,558	1,513	1,364	1,470	1,391	1,347	1,460	1,389
Կաթնաշոռ (կգ)	2,452	2,260	2,526	2,579	2,438	2,447	2,583	2,540	2,439	1,947	2,500
Պանիր Չանախ (կգ)	2,021	1,819	1,817	1,772	1,678	1,875	1,914	1,951	2,166	1,844	1,940
Պանիր Լոռի (կգ)	2,249	2,072	2,363	2,158	2,278	2,203	2,240	2,381	2,381	2,292	2,259
Պաղպաղակ (կգ)	1,545	1,717	1,700	1,508	1,340	1,500	1,465	1,408	1,462	1,711	1,603

Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, [www.armstat.am](http://www.armstat.am)

## Կաթնամթերքի գները 2017թ-ի հունվարի դրությամբ



Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, [www.armstat.am](http://www.armstat.am), Խորհրդատուի հաշվարկ

Կաթնամթերքի գնային ուսումնասիրության շրջանակներում յուրաքանչյուր արտադրատեսակի համար առանձնացվել են գնային երեք կատեգորիա՝ նվազագույն գին, միջին գին և առավելագույն գին:

Վերոնշյալ գծապատկերից երևում է, որ թթվասերի 1 կգ-ի առավելագույն գինը եղել է 1,568 դրամը, իսկ նվազագույնը 1,177 դրամը: Նվազագույն և առավելագույն գների միջև զգալի տարբերություն գրանցվել է կաթնաշոռի

դեպքում՝ կազմելով 32.7%:

Աղյուսակում ներկայացված է կաթնամթերքի վաճառքի միջին գները յուրաքանչյուր ապրանքատեսակի համար ըստ քաղաքների:

Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ պանրի վաճառքի ամենաբարձր գինը գործել է Գավառ քաղաքում, մասնավորապես՝ 1 կգ Չանախ և Լոռի տեսակի պանիրները վաճառվել են համապատասխանաբար 2,166 և 2,381 դրամով: 1 լիտր մածունի համար սահմանված գինն ամենաբարձրը եղել է Արտաշատում, իսկ կաթինը՝ Իջևանում:

## Դիտարկումներ

- Կաթնամթերքի վաճառքի գները քաղաքից կախված զգալիորեն տատանվում են: Օրինակ Կապան քաղաքում կաթնաշոռի 1 կգ-ի վաճառքի գինը 2017 թ.-ի հունվարի դրությամբ կազմել է 1,947 դրամ, մինչդեռ Հրազդան քաղաքում այն եղել է 2,583 դրամ, այսինքն՝ 32.7%-ով ավելի բարձր:
- 2017 թ.-ի հունվարի դրությամբ թթվասերի և կաթնաշոռի միջին գները 1 կգ-ի համար կազմել են համապատասխանաբար 1,424 և 2,428 դրամ:
- 1 լիտր մածունի համար սահմանված գինն ամենաբարձրն եղել է Արտաշատում, իսկ կաթինը՝ Իջևանում:

# ՀՀ շուկայում վաճառվող կաթի և կաթնամթերքի գնային ուսումնասիրություն

## Մանրածախ ոլորտի ուսումնասիրություն

Կաթնամթերքի գների ուսումնասիրությունը ներառել է նաև խանութներում և սուպերմարկետների ցանցերում կատարված վերլուծությունները, ինչի արդյունքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

## Կաթնամթերքի վաճառքի միջին գները տեղական շուկայում 2017թ.-ի սեպտեմբերի դրությամբ

Անվանում	Քաշ	Տեղական արտադրութ	
		յուն, ՀՀ դրամ	Ներմուծում, ՀՀ դրամ
Պաստերիզացված կաթ	1լ	445	1,230
Խտացրած կաթ	380գ	-	645
Մածուն	500գ	328	-
Թթվաք	200գ	294	505
Կարագ	200գ	-	1,132
Աղի պանիր	200գ	491	-
Այլ տեսակի պանիրներ	200գ	1,688	2,155
Կաթնաշոռ	200գ	462	790

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

Ներմուծված կաթնամթերքի գները գրեթե երկու անգամ, իսկ որոշ դեպքերում նույնիսկ երեք անգամ գերազանցում են տեղականի գները: Օրինակ՝ ներմուծված կաթի միջին գինը մոտ 3 անգամ բարձր է տեղականից, իսկ ներմուծված թթվաքի գինը 72%-ով ավելի բարձր է:

Վերոնշյալ աղյուսակում ներառված կաթնամթերքի յուրաքանչյուր տեսակի ավելի մանրամասն բացվածքը ներկայացված է Հավելված Դ-ում:

## Դիտարկումներ

- 2017թ.-ի սեպտեմբերի դրությամբ 1լ տեղական արտադրության պաստերիզացված կաթի գինը եղել է միջինում 445 դրամ, մինչդեռ ներմուծվածինը կազմել է գրեթե 3 անգամ ավել:
- Ներմուծված խտացրած կաթի (380գ) ու կարագի (200գ) գները, կազմել են համապատասխանաբար 645 և 1,132 դրամ:
- (200գ) թթվաքի և կաթնաշոռի դեպքում, ներմուծվածի գինը տեղականից բարձր է եղել մոտ 72%-ով:

# Փոխարինող ապրանքների ուսումնասիրություն

## Փոխարինող ապրանքներ

Կաթնամթերքի տարբեր տեսակների համար գոյություն ունեն այլընտրանքային ապրանքներ, որոնք փոխարինում են վերջիններիս: Ստորև դիտարկվում է կաթնամթերքի հիմնական տեսակներին փոխարինող ապրանքները.

- Որպես կաթի փոխարինիչ հանդես է գալիս կաթի փոշին: Կաթի փոշին ամենաշատ օգտագործվող փոխարինիչներից է, որը տաք ջրի հետ խառնվելով փոխակերպվում է կաթի՝ պահպանելով թարմ պատերիզացված կաթի մի շարք հատկություններ: Նշենք, որ ՀՀ-ում կաթի փոշին և խտացրած կաթը գրեթե ամբողջությամբ ներմուծվում են: Կաթի այլ փոխարինիչներ են համարվում սոյայի, կոկոսի կաթը, վերջիններս միայն ներմուծվում են:
- Որպես կանոն կարագի փոխարինիչ է համարվում մարգարինային արտադրանքը, որոնցից տարածվածներից է սփրեդը: Սփրեդը կարագին ոչ լիարժեքորեն փոխարինող և ցածր արժեք ունեցող սննդամթերք է, որի բաղադրությունն իրենից ներկայացնում է կաթնային յուղի համակցությունը բուսական յուղի տարբեր տեսակների հետ: 2016թ.-ին ՀՀ ներմուծվել են 4,740 տոննա ընդհանուր ծավալով կարագ և այլ կաթնային յուղեր:
- Թթվասերի հիմնական փոխարինիչ է համարվում բնական սերուցքային յոգուրտը, իսկ օրինակ կաթնաշոռը կարող է փոխարինվել ֆետա պանրով: Ավելացնենք, որ պանրի և կաթնաշոռի 95.7%-ը և կաթնաթթվային արտադրանքի (թթվասեր, յոգուրտ, մածուն, թան և այլն) 88.5%-ն արտադրվում են ՀՀ-ում:

Հաջորդիվ բերված աղյուսակում ներկայացված է փոխարինող ապրանքների վաճառքի գները 2017թ.-ի սեպտեմբերի դրությամբ:

## Փոխարինող ապրանքների վաճառքի գները տեղական շուկայում

Անվանում	Քաշ	Արժեքը (ՀՀ դրամ)
<b>Կաթի փոխարինիչներ</b>		
Կաթի փոշի	200գ	673
Կոկոսի կաթ	1լ	2,850
Նուշի կաթ	1լ	2,850
Սոյայի կաթ	1լ	1,390
Բրնձի կաթ	1լ	1,990
<b>Կարագի փոխարինիչներ</b>		
Սփրեդ	200գ	820
Մարգարին	250գ	290
<b>Կաթնաշոռի փոխարինիչներ</b>		
Ֆետա պանիր	250գ	1,680

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

## Դիտարկումներ

- Կաթի փոխարինիչներից ամենաբարձր գինն ունեցել են կոկոսի կաթը և նուշի կաթը, որոնց արժեքը ավելի քան 2 անգամ գերազանցում է ներմուծված կաթի գինը, իսկ տեղականինը՝ 6 անգամ:
- Սփրեդը, որը հանդիսանում է կարագի հիմնական փոխարինիչը, վաճառվում է 38% ավելի ցածր, քան կարագը:



# Իրացման ուղիների և տրանսպորտային ծախսերի ուսումնասիրություն


## Վաճառքի ուղիներ

Վաճառքի ուղիների ուսումնասիրությունն իրականացվել է կաթնամթերք արտադրող ընկերությունների շրջանում հարցումների անցկացման միջոցով:

Հարցված 14 ընկերություններից բոլորն իրացումը կազմակերպում են սուպերմարկետների ցանցի և խանութների միջոցով: Հարցվածներից 5-ը բացի սուպերմարկետների և խանութների հետ աշխատելուց ունեն նաև սեփական խանութներ, իսկ 3-ն իրենց արտադրանքը վաճառում են նաև միջնորդների միջոցով:

Ստորև բերված գծապատկերում ներկայացված է կաթնամթերք արտադրող ընկերությունների արտադրանքի մատակարարման լոգիստիկ տարբերակները:

## Բեռնափոխադրման կառուցվածք



Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

Հարցմանը մասնակցած ընկերությունների 79%-ն ապրանքի փոխադրումն իրականացնում են միայն սեփական տրանսպորտային միջոցներով, իսկ 14%-ը սեփական տրանսպորտային միջոցների հետ մեկտեղ օգտագործում են նաև գևորդների միջոցները և միայն 7%-ն է, որը համագործակցում է բեռնափոխադրող ընկերությունների հետ:

Հարցված ընկերությունների տարեկան տրանսպորտային ծախսերը բավականին փոփոխական են, ինչը պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են ընկերության իրացման ծավալները, իրացման կետերի հեռավորությունը, տրանսպորտային միջոցների քանակը, տրանսպորտային միջոցների սպասարկման ծախսերը և այլն:

## Դիտարկումներ

- Հարցմանը մասնակցած բոլոր ընկերություններն իրենց արտադրանքի իրացումը կազմակերպում են խանութների և սուպերմարկետների միջոցով: Նրանցից 5-ն ունեն նաև սեփական խանութները, իսկ 3-ն իրենց արտադրանքը վաճառում են նաև միջնորդների միջոցով:
- Ապրանքների փոխադրումը հիմնականում իրականացվում է արտադրողի սեփական միջոցներով:
- Տրանսպորտային ծախսերը կախված ընկերությունների իրացման ծավալներից, տրանսպորտային միջոցների քանակից, սպասարկման և այլ ծախսերից խիստ տարբեր են:

# Իրացման ուղիների և տրանսպորտային ծախսերի ուսումնասիրություն

## Տեղափոխման ծախսերի կանխատեսում

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է տեղափոխման ծախսերի հաշվարկը 100 կմ-ի համար:

### Տեղափոխման ծախսերը 100 կմ-ի համար, ՀՀ դրամ

	Տեղափոխման ծախսեր
Վառելիքի ծախսը 100 կմ-ի համար	5,158
Մաշվածություն	681
Վարորդների աշխատավարձ	6,786
<b>ԸՆդամենը</b>	<b>12,624</b>
<b>1 կգ-ի տեղափոխման ծախսերը</b>	<b>9.0</b>

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

Վերոնշյալ աղյուսակի հաշվարկը կատարվել է հետևյալ ենթադրությունների հիման վրա.

1. Տրանսպորտային միջոցը դիտարկվող 100 կմ հեռավորությունն անցնում է 3 ժամում,
2. Մաշվածությունը հաշվարկվել է գծային մեթոդով,
3. Տրանսպորտային միջոցի օգտակար ծառայության ժամկետն ընդունվել է հավասար 10 տարվա,
4. Առաքումը սպասարկող անձանց թիվն ընդունվել է հավասար երկուսի,
5. Աշխատողներից յուրաքանչյուրի ամսական աշխատավարձն ընդունվել է հավասար 190,000 ՀՀ դրամի, որն իրենից ներկայացնում է ՀՀ-ում միջին աշխատավարձի մեծությունը համաձայն [www.armstat.am](http://www.armstat.am) կայքի:
6. Հաշվարկի հիմքում օգտագործվել է 2017թ.-ի արտադրության Գազել մակնիշի A21R32 սառնարանային բեռնախցիկով մեքենան: Հարկ է նշել, որ 100 կմ հեռավորությունն անցնելու համար վերոնշյալ մեքենան միջինում ծախսում է 12.58 լ բենզին:

Արդյունքում 100 կմ-ի տեղափոխման ծախսերը կազմում են 12,624 ՀՀ դրամ: Ըստ դիտարկվող տրանսպորտային միջոցների տեխնիկական հատկանիշների, վերջիններս կարող են տեղափոխել 1400 կգ, ուստի 1 կգ-ի տեղափոխման արժեքը կազմում է 9 ՀՀ դրամ:

## Դիտարկումներ

- Տեղափոխման ծախսերի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ 100 կմ-ի տեղափոխման ծախսերը կազմում են 12,624 ՀՀ դրամ:
- Ուստի 1 կգ-ի տեղափոխման արժեքը կազմում է 9 ՀՀ դրամ:

# Շուկայի մուտքի խոչընդոտների ուսումնասիրություն

## Կարգավորում

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, որն իրականացնում է սննդամթերքի անվտանգության և համապատասխանության գնահատման, անասնաբուժության և բուսա-սանիտարիայի բնագավառների պետական կարգավորումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրականացնում է վերահսկողական գործառնություններ և կիրառում պատասխանատվության միջոցներ՝ այդ բնագավառում հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

**Նշենք, որ կաթնամթերքի արտադրությունը ներառված չէ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների մեջ:**

## Սահմանված պահանջներ տեղական արտադրողների համար

### Սանիտարական պահանջներ

- Պետք է լինի աղտոտման վտանգը բացառող կոյուղու համակարգով ապահովվածություն:
- Մշակման համար կամ որպես բաղադրիչ օգտագործվող շրջանառվող ջուրը չպետք է պարունակի աղտոտման վտանգ:
- Ապահովված լինի խմելու ջրի անխափան ջրամատակարարմամբ:
- Սննդամթերքի պատրաստման, մշակման կամ վերամշակման համար նախատեսված սննդի կառույցները պետք է ապահովեն հիգիենիկ պատշաճ գործելակերպի իրականացումը՝ ներառյալ գործընթացների ընթացքում և դրանց միջև ընկած ժամանակահատվածում խաչաձև աղտոտումից պաշտպանումը:
- Պատուհանները և փեղկերը պետք է կիպ փակվեն, սարքին և մաքուր լինեն, ունենան միջատապաշտպան ցանցեր:
- Արտադրամասերի պատերը պետք է ունենան հարթ մակերես, պահվեն նորոգ վիճակում, հեշտությամբ մաքրվեն ու ախտահանվեն և

պատրաստված լինեն անջրանցիկ, լվացվող և ոչ թունավոր նյութերից:

- Առաստաղները և վերին ամրությունները պետք է կառուցված լինեն այնպես, որ կանխարգելի կամ նվազեցվի կեղտի կուտակումը, գոյորշու խտացումը, անցանկալի բորբոսների աճը և մասնիկներ թափվելու հնարավորությունը:
- Տարածքում պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ կենդանիների, միջատների և կրծողների մուտքը սննդամթերքի պատրաստման, մշակման, պահման և տեղափոխման տարածքներ կանխելու, ինչպես նաև վնասատուների դեմ պայքարելու ուղղությամբ:
- Պետք է ապահովված լինեն թափոնների պահման և հեռացման պատշաճ հիգիենիկ պայմանները: Աղբանոցը պետք է կառուցված լինի այնպես, որ ապահովվի մաքրությունը և կենդանիների ու վնասատուների անհասանելիությունը:
- Լվացող և ախտահանող նյութերը պետք է պահվեն սննդամթերքից առանձնացված տարածքում:

## Աշխատակիցների անձնական հիգիենա

- Սննդամթերքի տեղակայման տարածքում աշխատող բոլոր անձինք պետք է ենթարկվեն պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննությունների և ունենան սանիտարական գրքույկ:
- Սննդամթերքի տեղակայման տարածքում աշխատող յուրաքանչյուր անձ պետք է պահպանի անձնական հիգիենայի կանոնները և կրի համապատասխան մաքուր, անհրաժեշտության դեպքում՝ պաշտպանիչ հագուստ:

## Տեխնիկական պահանջներ

- Բոլոր սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկղերը պատրաստված պետք է լինեն սննդամթերքի հետ շփման համար նախատեսված նյութերից և ենթարկվեն պատշաճ մաքրման և ախտահանման:

# Շուկայի մուտքի խոչընդոտների ուսումնասիրություն

- Փայթեթավորման համար օգտագործվող նյութերը և տարաները չպետք է հանդիսանան սննդամթերքի աղտոտման աղբյուր:
- Հատուկ ջերմային ռեժիմի պահպանում պահանջող սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցները պետք է ապահովված լինեն համապատասխան ջերմաստիճանը պահպանող և այդ ջերմաստիճանի պահպանումը վերահսկող սարքերով:
- Փայթեթավորման, սպառողական տարայի, պիտակի, լրացուցիչ պիտակի կամ ներդրակի վրա գետեղված տեղեկությունները պետք է լինեն ընթերցելի, ամբողջական ու հավաստի:

## Հումքի և պատրաստի արտադրանքի պահում

- Պատրաստի արտադրանքը, հումքը, օժանդակ նյութերը պետք է պահվեն դրանց փչացումը և աղտոտումը կանխարգելող պայմաններում:
- Պետք է առկա լինեն անհրաժեշտ տարածքներ և սառնարանային խցիկներ՝ հումքի և այլ բաղադրիչների առանձնացված պահման համար:
- Փայթեթավորող նյութերը, տարաները պետք է ունենան որակը և անվտանգությունը հիմնավորող փաստաթղթեր:
- Արտադրությունը պետք է իրականացվի միայն համապատասխան տեխնոլոգիական հրահանգով նախատեսված տեխնոլոգիական սարքավորումների առկայության պայմաններում:

## Սահմանված պահանջներ ներմուծողների համար

Սննդամթերքի ներմուծումն իրականացվում է արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված բեռի տվյալ խմբաքանակի անվտանգությունը հավաստող փաստաթղթի կամ համապատասխանության կամ ծագման սերտիֆիկատների կամ բեռի տվյալ խմբաքանակի լաբորատոր փորձարկումների արձանագրությունների առկայության դեպքում:

Հետևյալ հանգամանքների առկայության պարագայում իրականացվում է միայն փաստաթղթային և նույնականացման ստուգում.

- սննդամթերք արտադրողի մոտ ներդրված են սննդամթերքի (բեռի) արտադրությունում սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերը՝ վտանգի աղբյուրի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգ (ՎԱՎԿԿՀ) կամ ԻՍՕ 22000,
- փոխադրամիջոցների պայմանները համապատասխանում են սննդամթերքի տվյալ տեսակի փոխադրման համար ներկայացվող տրանսպորտային միջոցների պահանջներին,
- նախորդ ներմուծումների ժամանակ՝ նույն կազմակերպության արտադրած սննդամթերքի և ներմուծված տվյալ բեռի գծով բացակայում են սննդամթերքի անվտանգության խնդիրների ծանուցումներ՝ նույն կամ նմանատիպ արտադրանքի անվտանգության հարցերի վերաբերյալ կամ ներմուծված սննդի և ներմուծողի կողմից ոչ մի նորմատիվ իրավական ու փաստաթղթային անհամապատասխանություններ, ինչպես նաև կեղծումներ և նմանատիպ խնդիրներ առկա չեն եղել,
- ծագման երկրում ներդրված սննդամթերքի անվտանգության համակարգը համապատասխանում է միջազգային ստանդարտներին և չափանիշներին:

## Դիտարկումներ

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, որն իրականացնում է սննդամթերքի անվտանգության և համապատասխանության գնահատման, անասնաբուժության և բուսա-սանիտարիայի բնագավառների պետական կարգավորումը:
- Կաթնամթերքի արտադրությունը ներառված չէ “Լիցենզավորման մասին” ՀՀ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների մեջ:

# Շուկայի մուտքի խոչընդոտների ուսումնասիրություն

**Դիտարկումներ (շարունակություն)**

- Մանուսկրիպտի ներմուծումն իրականացվում է արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված բեռի տվյալ խմբաքանակի անվտանգությունը հավաստող փաստաթղթի կամ համապատասխանության կամ ծագման սերտիֆիկատների կամ բեռի տվյալ խմբաքանակի լաբորատոր փորձարկումների արձանագրությունների առկայության դեպքում:

**Մրցակցություն**

Ներկայում գործում են կաթ և կաթնամթերք արտադրող ավելի քան 75 տեղական և ներմուծող 8 ընկերություններ, որոնք ներկայացնում են մոտ 30 բրենդներ: Տեղական շուկայում խոշոր արտադրողներից են համարվում «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ն, «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն, «Թամարա» ՍՊԸ-ն, «Չանախ» ՍՊԸ-ն և այլն, իսկ ներմուծողներից՝ «Բրենդ Լիդեր» ՀՁ ՍՊԸ-ն, «Մառնիկ» ՍՊԸ-ն, «Անդակո» ՍՊԸ-ն, «Մեգաֆուդ» ՍՊԸ-ն և այլն: Տեղական արտադրողները գործունեություն են ծավալում ինչպես Երևանում, այնպես էլ տարբեր մարզերում: Գերակշիռ մասն աշխատում է տարբեր ֆերմերային տնտեսությունների հետ, սակայն կան նաև այնպիսի ընկերություններ, որոնք ունեն իրենց սեփական ֆերման և մթերում են հենց իրենց ֆերմայի հում կաթը: Ներմուծող ընկերությունները հիմնականում գտնվում են Երևանում և հանդիսանում են կաթնամթերք արտադրող համաշխարհային ընկերությունների ներկայացուցիչը Հայաստանում: Տեղական շուկայում վաճառվող կաթնամթերքի գնային վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ տեղական շուկայում վաճառվող ներմուծված կաթնամթերքի գները մոտ 2 անգամ, իսկ որոշ դեպքերում նույնիսկ 3 անգամ գերակշռում են տեղականի գները: Ուստի, եթե որպես մրցակցային հիմնական գործոն դիտարկում ենք գինը, ապա ակնհայտ է դառնում, որ ներմուծված կաթնամթերքը տեղականի հետ չի կարող մրցակցել, քանի որ տեղական արտադրանքը սպառողին է ներկայանում ավելի մրցունակ գներով:

**Դիտարկումներ**

- Տեղական շուկայում գործում են կաթ և կաթնամթերք արտադրող 75 տեղական և ավելի քան 8 ներմուծող ընկերություններ:
- Ներմուծող ընկերությունները ներկայացնում են կաթնամթերքի մոտ 30 բրենդներ:
- Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ եթե որպես մրցակցային հիմնական գործոն դիտարկվում է գինը, ապա ներմուծված կաթնամթերքը տեղականի հետ չի կարող մրցակցել, քանի որ տեղական արտադրանքը սպառողին է ներկայանում ավելի մրցունակ գներով:

# Շուկայի մուտքի խոչընդոտների ուսումնասիրություն

## Մատակարարներ

Քանի որ կաթի արտադրության համար հիմնական հումքը համարվում է հում կաթը, մատակարարների ուժը գնահատվել է ըստ կաթնային հոտի կովերի գլխաքանակի: Առկա է կաթնային հոտի կովերի ցածր կենտրոնացվածություն, քանի որ շուկայում գործում են հում կաթի մեծ քանակությամբ մատակարարներ, ինչն էլ վկայությունն է այն բանի, որ մատակարարների ուժը ցածր է:

## Տնտեսությունների քանակն ըստ կաթնային հոտի կովերի գլխաքանակի 2014թ.-ի Հոկտեմբերի 10-ի դրությամբ

Կաթնային հոտի կովերի քանակը	Ընդամենը ՀՀ
1-2	68,549
3-4	18,872
5-9	9,292
10-19	3,116
20-49	855
50-99	140
100-199	18
200-499	6
500 և ավելի	2
<b>Ընդամենը</b>	<b>100,850</b>

Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, [www.armstat.am](http://www.armstat.am)

Հետևաբար, արտադրողի համար մատակարար գտնելու հետ կապված խնդիրներ չեն առաջանա, քանի որ վերջինիս լայն շրջանակը հնարավորություն է տալիս ձեռք բերել հումքը ելնելով սեփական նախընտրություններից: Միևնույն ժամանակ, ինչպես ցույց տվեցին ֆերմաների շրջանակներում կատարված հարցումները, վերջիններս կաթի վաճառքի հետ կապված խնդիրներ չունեն, ինչը մեծապես պայմանավորված է կաթի նկատմամբ բարձր պահանջարկով:

## Դիտարկումներ

- Չնայած հիմնականում կաթի մատակարարները չունեն վաճառքի հետ կապված խնդիրներ պայմանավորված կաթի նկատմամբ բարձր պահանջարկով, կաթի առանձին մատակարարների ուժը գնահատվել է ցածր, քանի որ շուկայում գործում են հում կաթի մեծ քանակությամբ մատակարարներ:

# Շուկայի մուտքի խոչընդոտների ուսումնասիրություն

## Գտորդներ


Այստեղ դիտարկվում է հաճախորդների գների վրա ազդելու կարողությունը: Ուժեղ դիրքերից հանդես եկող գնորդները կարող են ստիպել ընկերություններին նվազեցնել գները, անցնել ավելի կատաղի մրցակցության, ինչի արդյունքում կրճատվում է ընկերությունների շահութաբերությունը: Գնորդների ուժը գնահատելու համար ուսումնասիրվել են՝

- կաթնամթերքի նկատմամբ պահանջարկը և
- սպառողների գնողունակությունը:

## Պահանջարկի ուսումնասիրություն

Պահանջարկն ուսումնասիրելու համար դիտարկվել են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են կաթնամթերքի 1 շնչի հաշվով սպառումը <<-ում և սպառման նորման: Ստորև բերված գծապատկերում ներկայացված է 1 շնչի հաշվով սպառումն ըստ տարիների:

Կաթնամթերքի հիմնական տեսակների 1 շնչի հաշվով սպառումը բնեղեն արտահայտությամբ



Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, [http://armstat.am/file/article/f\\_sec\\_2\\_2017\\_5.pdf](http://armstat.am/file/article/f_sec_2_2017_5.pdf)

Կաթի, մածնի 1 շնչի հաշվով սպառումը տարեց տարի ան է գրանցել, ինչը 2015թ.-ին 2012թ.-ի համեմատ կազմել է մոտ 12%: Մինևույն ժամանակ,

կարագի սպառման ծավալները նվազել են, 1շնչի հաշվով 2.1 կգ-ից դառնալով 1.7 կգ: Պանրի սպառման ծավալները 2015թ.-ին որոշ չափով վերականգնվել են, սակայն դեռևս մոտ 2%-ով ցածր են 2012թ.-ի արդյունքից: Հաջորդիվ ներկայացվում է կաթնամթերքի հիմնական տեսակների փաստացի օրական սպառումը <<-ում և սպառման օրական նորման 1շնչի հաշվով:

## 1 շնչի հաշվով օրական սպառումը ՀՀ-ում և սպառման նորման, 2015

	Չափման միավոր	Փաստացի օրական սպառում	Օրական սպառման նորման մեկ շնչի հաշվով
Կաթ, մածուկ	լիտր	0.06	0.2
Պանիր բոլոր տեսակների	կգ	0.03	0.02
Կարագ	կգ	0.005	0.01

Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, [http://armstat.am/file/article/f\\_sec\\_2\\_2017\\_5.pdf](http://armstat.am/file/article/f_sec_2_2017_5.pdf)

Այսպիսով, միայն պանրի դեպքում է փաստացի սպառումը գերազանցել սահմանված նորման, իսկ մնացած դեպքերում սահմանված նորման գերակշռում է, մասնավորապես՝ կաթի, մածնի դեպքում մոտ 3 անգամ, իսկ կարագի դեպքում՝ 2 անգամ:

## Դիտարկումներ


- Դիտարկվող ժամանակաշրջանում կաթնամթերքի սպառման ծավալներն աճել են, բացառությամբ կարագի, որը 2015թ.-ին 2012թ.-ի համեմատ նվազել է 19%-ով: Պանրի փաստացի սպառումը 1 շնչի հաշվով գերազանցում է օրական սպառման նորման: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ կաթնամթերքի նկատմամբ պահանջարկը դրսևորում է աճի միտում:

# Շուկայի մուտքի խոչընդոտների ուսումնասիրություն

## Գնողունակության ուսումնասիրություն

Սպառողների գնողունակությունը գնահատելու համար դիտարկվել են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են նվազագույն սպառողական գամբյուրը, միջին ամսական աշխատավարձը, 1 շնչի հաշվով կաթնամթերքի սպառողական ծախսերը, ինչպես նաև կաթնամթերքի ամսական ծախսերի մասնաբաժինը միջին ամսական աշխատավարձի կառուցվածքում: Նշված վերլուծության նպատակն է հասկանալ, թե արդյոք սպառողներն ունակ են գումարներ ծախսել կաթնամթերքի ձեռքբերման համար: Հաջորդիվ բերված գծապատկերում դիտարկվել են նվազագույն սպառողական գամբյուրը և միջին ամսական անվանական աշխատավարձը:

Սպառողական գամբյուր և աշխատավարձ



Աղբյուր: ՀՀ ԱԿԾ, [http://armstat.am/file/article/f\\_sec\\_4\\_2016\\_5.pdf](http://armstat.am/file/article/f_sec_4_2016_5.pdf), Խորհրդատվի հաշվարկ

Նվազագույն սպառողական գամբյուրը 2013-2015թթ.-ի ընթացքում գրանցել է 17% աճ: Հատկանշական է, որ միջին ամսական աշխատավարձը նույնպես աճել է 17%-ով: Նշենք, որ նվազագույն սպառողական գամբյուրը 2015թ.-ին կազմել է միջին ամսական աշխատավարձի 25%-ը: Վերոնշյալ գծապատկերում ներկայացված է նաև կաթնամթերքի գների ինդեքսի դինամիկան, որը

դիտարկվող ժամանակաշրջանում անընդհատ վերելք է ապրել՝ 2013թ.-ին կազմելով 6.9%, 2014 և 2015 թթ.-ին համապատասխանաբար 8.2% և 5%:

Ուսումնասիրվել են 1 շնչի հաշվով կաթնամթերքի հիմնական տեսակների միջին սպառողական ծախսերը տարվա կտրվածքով: Ստորև բերված աղյուսակի համաձայն կաթի, մածուխի, պանրի, կարագի գծով միջին սպառողական ծախսերը 2015թ.-ին կազմել են համապատասխանաբար 8,877, 23,037 և 6,174 ՀՀ դրամ:

## Կաթնամթերքի հիմնական տեսակների գծով սպառողական ծախսերը 1 շնչի հաշվով

	Չափման միավոր	2012	2013	2014	2015
<b>Կաթ, մածուխ</b>					
	դրամ/լիտր				
Միավորի միջին արժեքը		343	394	411	411
Միջին տարեկան սպառում	լիտր	18.3	18.1	20.0	21.6
<b>ԸՆդամենը սպառողական ծախսեր</b>		<b>6276.9</b>	<b>7131.4</b>	<b>8220</b>	<b>8877.6</b>
<b>Պանիր բոլոր տեսակների</b>					
	դրամ/կգ				
Միավորի միջին արժեքը		1993	2180.5	2388.5	2258.5
Միջին տարեկան սպառում	կգ	10.4	9.5	9.6	10.2
<b>ԸՆդամենը սպառողական ծախսեր</b>		<b>20727</b>	<b>20715</b>	<b>22930</b>	<b>23037</b>
<b>Կարագ</b>					
	դրամ/կգ				
Միավորի միջին արժեքը		3328	3772	3881	3632
Միջին տարեկան սպառում	կգ	2.1	2.0	1.8	1.7
<b>ԸՆդամենը սպառողական ծախսեր</b>		<b>6988.8</b>	<b>7544</b>	<b>6985.8</b>	<b>6174.4</b>


Աղբյուր: ՀՀ ԱԿԾ, [www.armstat.am](http://www.armstat.am), Խորհրդատվի հաշվարկ

Հաջորդիվ ներկայացված է կաթնամթերքի ամսական ծախսերի հարաբերակցությունը աշխատավարձին:



# Շուկայի մուտքի խոչընդոտների ուսումնասիրություն

## Միջին ամսական աշխատավարձ և կաթնամթերքի միջին ամսական ծախսեր



Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ, [www.armstat.am](http://www.armstat.am), Խորհրդատուի հաշվարկ

Այսպիսով, եթե 2012թ.-ին կաթնամթերքի ամսական ծախսերը կազմում էին աշխատավարձի 2.5%, ապա 2015թ.-ին միայն 1.8%-ը, ինչը խոշոր հաշվով պայմանավորված էր, ոչ թե կաթնամթերքի սպառման ծավալների կրճատմամբ, այլ նրանով, որ միջին ամսական աշխատավարձը կաթնամթերքի ամսական ծախսերի համեմատ ավելի արագ է աճել:

## Շուկայի մուտքի խոչընդոտների ամփոփում

Հաշվի առնելով Խորհրդատուի կողմից կատարված վերլուծությունը, կատարվել է շուկայի մուտքի խոչընդոտների գնահատում:

## Շուկայի մուտքի խոչընդոտների գնահատում

	Գնահատական
Գնորդների ուժ	ցածր
Մրցակիցների ուժ	միջին
Մատակարարների ուժ	ցածր
Իրավական դաշտ	միջին

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

Շուկայի մուտքի խոչընդոտների վերլուծության արդյունքում գնորդների և մատակարարների ուժին տրվել է ցածր գնահատական, իսկ մրցակիցների ուժին և իրավական դաշտին՝ միջին:

## Դիտարկումներ


- Կաթնամթերքի մասնաբաժինը դիտարկվող ժամանակաշրջանում նվազագույն սպառողական զամբյուղի կառուցվածքում կրճատվել է՝ 8.1% - ից դառնալով 7.4%: Կաթնամթերքի մասնաբաժինը միջին ամսական աշխատավարձի կազմում նույնպես կրճատվել է, սակայն դա մեծապես պայմանավորված էր նրանով, որ միջին ամսական աշխատավարձը և նվազագույն սպառողական զամբյուղը կաթնամթերքի ամսական ծախսերի համեմատ ավելի արագ են աճել, ինչը լավատեսական միտումներ է պարունակում:
- Ինչ վերաբերում է կաթնամթերքի ամսական ծախսերին, ապա նշենք, որ դիտարկվող ժամանակահատվածում այն միջինում աճել է 3.9%-ով:
- Գնորդների և մատակարարների ուժը գնահատվել են ցածր, իսկ մրցակիցների ուժը և իրավական դաշտը գնահատվել են միջին:

# Շուկայի մուտքի խոչընդոտների ուսումնասիրություն

## Ընկերությունների գործունեության խոչընդոտների ուսումնասիրություն

Հարցմանը մասնակցած 14 ընկերություններից 9-ը նշել են, որ կան գործոններ, որոնք խոչընդոտում են ընկերության հետագա զարգացմանը:

### Տեղական արտադրողների գործունեության զարգացման խոչընդոտները



Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

9-ը ընկերությունների 60%-ի համար խոչընդոտող եղել են ֆինանսական, 20%-ի համար օրենսդրական և 10-ական տոկոսների համար հարկային և մարդկային ռեսուրսների գործոնները:

Ընկերությունները նշել են նաև, որ **մասնագիտական գիտելիքների և փորձի պակասը**, ինչպես նաև ապրանքների իրացման ցածր մակարդակը խոչընդոտում են նրանց հետագա զարգացմանը:

**Օրենսդրական** խոչընդոտների շարքին են դասվում օրենքների փոփոխությունները, օրենքի ճիշտ մեկնաբանումների, օրենքով սահմանված իրավունքների պաշտպանության խնդիրները:

**Ֆինանսական** խոչընդոտները կապված են ֆինանսական միջոցների ներգրավման դժվարությունների կամ, արդեն իսկ ներգրավված միջոցների մատչելիության հետ:

Հարկային խոչընդոտները ներառում են հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունները, հարկային օրենսդրության տարբերակները և մեկնաբանման հնարավորությունները: Կաթնամթերք վերամշակող ընկերությունների կողմից հարկային դժվարությունների խնդրին է դասվել նաև ԱԱՀ մնացորդի հաշվանցման անհնարինությունը, որը նաև ներկայացված է հաշվետվության Գյուղատնտեսության ոլորտի ամփոփ ուսումնասիրության բաժնում:

Մարդկային ռեսուրսների խոչընդոտները բխում են մարդկանց մասնագիտական գիտելիքների ցածր մակարդակից և փորձի պակասից:

## Դիտարկումներ

- Հարցմանը մասնակցած ընկերություններից 9-ի մոտ կան ընկերության զարգացմանը խոչընդոտող գործոններ, որից 60%-ի մոտ խոչընդոտող են դիտարկվել ֆինանսական, 20%-ի մոտ օրենսդրական և 10-ական տոկոսների մոտ հարկային և մարդկային ռեսուրսների գործոնները:

# Բաժին 8: Օտարերկյա շուկաներ

01. Ամփոփ բաժին

02. Ներածություն

03. ՀՀ մակրոտնտեսական ամփոփ ուսումնասիրություն

04. Գյուղատնտեսության ոլորտի ամփոփ ուսումնասիրություն

05. Կաթի արտադրություն

06. Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն

07. Տեղական վաճառք/ շուկա

**08. Օտարերկյա շուկաներ**

09. Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրություն

10. Կաթի վերամշակման և կաթնամթերքի ոլորտի SWOT վերլուծություն

# ՀՀ-ից արտահանված կաթի և կաթնամթերքի ուսումնասիրություն

Սույն գլխում ուսումնասիրվել են կաթնամթերքի արտահանման ծավալները, արտահանման հիմնական երկրները, կատարվել է արտահանման հիմնական շուկաների վերլուծություն՝ ներառյալ կաթնամթերքի գնային ուսումնասիրություն: Խորհրդատու իրականացրել է նաև վաճառքի ուղիների վերլուծություն, ռուսական շուկա մուտք գործելու խոչընդոտների գնահատում:

## Արտահանման ուսումնասիրություն

2016թ.-ի ընթացքում ՀՀ-ից արտահանվել է մոտ 5,517 տոննա կաթնամթերք: Նշենք, որ 2016թ.-ին նախորդ տարվա համեմատ կաթնամթերքի արտահանումը նվազել է 40%-ով: Իսկ երկրի համախառն արտահանման կառուցվածքում կաթնամթերքի արտահանումը կազմել է ընդամենը 0.3%:

Կաթնամթերքի արտահանման հիմնական երկիրը 2016թ.-ին եղել է Ռուսաստանը, որին բաժին է ընկել արտահանվող կաթնամթերքի 98.64%-ը: Արտահանման երկրների շարքին են դասվել նաև Վրաստանը, ԱՄՆ-ն և Ղազախստանը:

## Կաթնամթերքի արտահանման հիմնական երկրները 2016թ.

	Մասնաբաժինը
Ռուսաստան	98.64%
Վրաստան	0.61%
ԱՄՆ	0.58%
Ղազախստան	0.14%

Աղբյուրը: ԲԳ ԱԿԾ, [www.armstat.am](http://www.armstat.am)

Ուսումնասիրվել են կաթնամթերքի արտահանման ծավալներն ըստ կաթնամթերքի հիմնական խմբերի:

Հաջորդիվ բերված աղյուսակում ներկայացված են կաթնամթերքի արտահանման ծավալները բնեղեն արտահայտությամբ 2016թ.-ի դրությամբ:

2016թ.-ին արտահանված կաթնամթերքի մեջ գերկաշիռ մասը կազմել է պանրի և կաթնաշոռի խումբը՝ 5,498 տոննա, կամ արտահանվող կաթնամթերքի 99.7%-ը: Կաթնամթերքի արտահանումը 2016թ.-ին դրամային արժեքով կազմել է 6.3 մլրդ ՀՀ դրամ (13,073 հազ. ԱՄՆ դոլար): Արտահանման պատմական

## Կաթնամթերքի արտահանման ծավալները 2016թ.

տոննա


	Արտահանում
Պանիր, կաթնաշոռ	5,498
Սերուցք, մածուց, թթվասեր, թան, կեֆիր, յոգուրտ և այլ խմորման ենթարկված կամ թթվեցրած կաթ ու կաթնասեր	17.3
Խտացրած կաթ, կաթի փոշի	1.3
Կարագ և այլ կաթնային յուղեր	0.4
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>5,517</b>

Աղբյուրը: ԲԳ ԱԿԾ, [www.armstat.am](http://www.armstat.am)

ծավալների վերլուծության արդյունքում ակնհայտ դարձավ, որ 2016թ.-ին նախորդ տարվա համեմատ կաթնամթերքի բոլոր տեսակների արտահանման ծավալները բացառությամբ կաթնաթթվային արտադրանքի (մածուն, թթվասեր, թան, կեֆիր, յոգուրտ և այլն) անկում են ապրել:

Արտահանման ծավալների դինամիկան ավելի մանրամասն ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

## Արտահանման ծավալների դինամիկան



Աղբյուրը: ԲԳ ԱԿԾ, [www.armstat.am](http://www.armstat.am)

# ՀՀ-ից արտահանված կաթի և կաթնամթերքի ուսումնասիրություն

Պատմական ծավալների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ արտահանման կառուցվածքում միշտ էլ գերակշիռ մասը զբաղեցրել է պանիրը: Պանրի և կաթնաշոռի արտահանման առավելագույն արդյունքը գրանցվել է 2015թ.-ին կազմելով՝ 9,115 տոննա: 2016թ.-ին կարագի և մարգարինային արտադրանքի արտահանման ծավալները կտրուկ նվազել են՝ 35.5 տոննայից դառնալով 0.4 տոննա:

Դրական միտում է նկատվել կաթնաթթվային արտադրանքի պարագայում, որի ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են ավելի քան 4 անգամ:

## Դիտարկումներ

- 2016թ.-ին կաթնամթերքի արտահանման 98.64%-ը բաժին է ընկել Ռուսաստանին: Արտահանման երկրների շարքը ներառել է նաև Վրաստանը, ԱՄՆ-ն, Ղազախստանը:
- 2016թ.-ին արտահանված կաթնամթերքի մեջ գերակշիռ մասը կազմել է պանրի և կաթնաշոռի խումբը՝ 5,498 տոննա, կամ արտահանվող կաթնամթերքի 99.7%-ը:
- Պանրի արտահանման ծավալները 2016թ.-ին նախորդ տարվա համեմատ նվազել են 40%-ով:
- 2016թ.-ին նախորդ տարվա համեմատ կաթնամթերքի արտահանման ծավալները բացառությամբ կաթնաթթվային արտադրանքի (մածուն, թթվասեր, թան, կեֆիր, յոգուրտ և այլն) անկում են ապրել:

# Ռուսական և արտահանման հիմնական շուկաների նկարագրություն

## Ռուսական շուկայի վերլուծություն

2016թ.-ին Ռուսաստանում արտադրվել է 10,650 հազ. տոննա կաթնամթերք, որի 52%-ը բաժին է ընկել կաթին: Հում կաթի համաշխարհային արտադրության 6.2%-ն արտադրվել է Ռուսաստանի կողմից: Բացի այդ Ռուսաստանը պանրի արտադրության ծավալներով համաշխարհային մակարդակով զբաղեցնում է 3-րդ տեղը:

Մտորև բերված աղյուսակում ներկայացված են կաթնամթերքի հիմնական խմբերի արտադրության ծավալները 2016թ.-ի դրությամբ:

### Կաթնամթերքի տեղական արտադրության ծավալները, 2016թ.


	Տեղական արտադրություն (տոննա)
Կաթ	5,490,000
Խտացրած կաթ	321,860
Չոր կաթ	116,400
Թթվասեր, կեֆիր, յոգուրտ և այլ խմորման ենթարկված կամ թթվեցրած կաթ ու կաթնասեր	3,095,000
Կարագ և այլ կաթնային յուղեր	251,000
Պանիր, կաթնաշոռ	1,376,000
<b>ԸՆԴՈՒՄՆԵՐ</b>	<b>10,650,260</b>

Աղբյուրը: ՌԴ վիճ. ծառայություն, [www.gks.ru](http://www.gks.ru)

Կաթնաթթվային ապրանքների արտադրությունը կազմել է կաթնամթերքի համախառն արտադրության 29%-ը, մինչդեռ պանրին ու կաթնաշոռինը՝ 13%-ը: Ամենացածրը կազմել է չոր կաթի արտադրությունը 116,400 տոննա արդյունքով:

Հաջորդիվ բերված գծապատկերում ներկայացված է կաթնամթերքի ներմուծման ծավալների դինամիկան բնեղեն արտահայտությամբ: 2013թ.-ից սկսած կաթնամթերքի ներմուծման ծավալներն անկում են ապրել՝ 9,445 տոննայից դառնալով 7,917 տոննա 2015թ.-ին: Նշենք, որ որպես 2016թ.-ի արդյունք վերցվել է կանխատեսումայինը, փաստացի արդյունքի վերաբերյալ տեղեկատվության բացակայության պատճառով: Համաձայն ներկայացված

## Կաթնամթերքի ներմուծման ծավալների դինամիկան ՌԴ-ում



Աղբյուրը: ՌԴ վիճ. ծառայություն, [www.gks.ru](http://www.gks.ru)

ցուցանիշի, 2016թ.-ին կաթնամթերքի ներմուծման ծավալները շարունակել են նվազել: Նշենք, որ այս նվազեցման հիմնական պատճառը հանդիսացել է Ռուսաստանի կողմից Եվրոմիության, ԱՄՆ-ի, Կանադայի, Ավստրալիայի և Նորվեգիայի նկատմամբ 2014թ.-ի օգոստոսի 7-ի որոշմամբ կիրառված ապրանքային էմբարգոն, որը ներառում էր այդ երկրներից այնպիսի ապրանքների ներմուծման սահմանափակումը ինչպիսիք էին մսամթերքը, պանիրը և կաթնամթերքը, ընկուզեղենը և այլն:

## Դիտարկումներ


- 2016թ.-ին Ռուսաստանում արտադրված 10,650,260 տոննա կաթնամթերքի 29%-ը բաժին է ընկել կաթնաթթվային արտադրանքին, իսկ 13%-ը՝ պանրին և կաթնաշոռին: Ռուսաստանին բաժին է ընկել հում կաթի համաշխարհային արտադրության 6.2%-ը:
- Կաթնամթերքի ներմուծման ծավալները 2013թ.-ից սկսած նվազել են, ինչը շարունակվել է նաև 2016թ.-ին: Նվազման հիմնական պատճառն է հանդիսացել Ռուսաստանի կողմից կիրառված ապրանքային էմբարգոն:

# Ռուսական և արտահանման հիմնական շուկաների նկարագրություն

## Վրացական շուկայի վերլուծություն

2015թ.-ին Վրաստանում արտադրվել է 676,500 տոննա հում կաթ: Հում կաթի արտադրության ծավալները տարեց տարի աճել են և 2010թ.-ի համեմատ 2015թ.-ին արտադրության ծավալների աճը կազմել է 15%: Ստորև բերված գծապատկերում ներկայացված է հում կաթի արտադրության դինամիկան:

### Վրաստանում հում կաթի արտադրության ծավալների դինամիկան



Աղբյուրը: Վրաստանի վիճ. ծառայություն, [www.geostat.ge](http://www.geostat.ge)

Վրաստանն ունի նաև պանրի զարգացած արտադրություն: Ամեն տարի արտադրում է մոտ 80,000 տոննա պանիր, որի 80%-ը կազմում են սուլյուզունի և իմերեթական տեսակի պանիրները:

Ըստ հաջորդիվ բերված աղյուսակի, 2016թ.-ին Վրաստան է ներմուծվել 49,873 հազ. ԱՄՆ դոլարի կաթնամթերք, ինչը նախորդ տարվա արդյունքից բարձր է մոտ 17%-ով: Կաթնամթերքի ներմուծման կառուցվածքում գերակշիռ մասը՝ 33%-ը բաժին է ընկել կարագին և այլ կաթնային յուղերին, իսկ 31%-ը կազմել են խտացրած կաթի և կաթի փոշու ներմուծումը: Միևնույն ժամանակ պանրի և կաթնաշոռի ներմուծումը կազմել է ընդամենը 14%:

## Կաթնամթերքի ներմուծման մասնաբաժինը Վրաստանում, 2016թ.

	Ներմուծում (հազ. ԱՄՆ դոլար)	Ներմուծման մասնաբաժինը
Կարագ և այլ կաթնային յուղեր	16,646	33%
խտացրած կաթ և կաթի փոշի	15,251	31%
Պանիր, կաթնաշոռ	7,109	14%
Կաթ	6,383	13%
Թթվասեր, կեֆիր, յոգուրտ և այլ խմորման ենթարկված կամ թթվեցրած կաթ ու կաթնասեր	4,044	8%
Կաթնային շիճուկ	441	1%
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>49,873</b>	<b>100%</b>

Աղբյուրը: Վրաստանի վիճ. ծառայություն, [www.geostat.ge](http://www.geostat.ge)

## Դիտարկումներ

- 2016թ.-ին Վրաստանի կաթնամթերքի ներմուծման ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են մոտ 17%-ով:
- Ներմուծման կառուցվածքում 33%-ը կազմել են կարագի և այլ կաթնային յուղերի, իսկ 31%-ը՝ խտացրած կաթի և կաթի փոշու ներմուծումը:

# Ռուսական և արտահանման հիմնական շուկաների նկարագրություն

## Ղազախական շուկայի վերլուծություն

2016թ.-ին Ղազախստանում արտադրվել է 805 հազ. տոննա կաթնամթերք, ինչը 5%-ով ավել է նախորդ տարվա արդյունքից: Կաթնամթերքի արտադրության կառուցվածքում կաթի արտադրությունը կազմել է 62%:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է կաթնամթերքի հիմնական խմբերի արտադրության ծավալները 2016թ.-ի դրությամբ:

### Կաթնամթերքի արտադրության ծավալները Ղազախստանում, 2016թ.

	Տեղական արտադրություն (տոննա)
Կաթ	499,709
Թթվասեր, կեֆիր, յոգուրտ և այլ խմորման ենթարկված կամ թթվեցրած կաթ ու կաթնասեր	191,581
Կարագ և այլ կաթնային յուղեր	80,640
Պանիր, կաթնաշոռ	24,692
Խտացրած կաթ և կաթի փոշի	9,199
<b>Ընդամենը</b>	<b>805,821</b>

Աղբյուրը: Ղազախստանի վիճ. ծառայություն, [www.stat.gov.kz](http://www.stat.gov.kz)

2016թ.-ին կաթնաթթվային ապրանքների արտադրությունը կազմել է կաթնամթերքի համախառն արտադրության 24%-ը, մինչդեռ պանրին ու կաթնաշոռինը ընդամենը 3%-ը: Ամենացածրը կազմել է խտացրած կաթի և չոր կաթի արտադրությունը՝ 9,199 տոննա արդյունքով:

Համաձայն հաջորդիվ բերված աղյուսակի 2016թ.-ին Ղազախստան է ներմուծվել 225,340 հազ. ԱՄՆ դոլարի կաթնամթերք: Կաթնամթերքի ներմուծման կառուցվածքում գերակշիռ մասը՝ 33%-ը բաժին է ընկել խտացրած կաթի և կաթի փոշու ներմուծմանը: Պանրի և կաթնաշոռի ներմուծումը կազմել է կաթնամթերքի համախառն ներմուծման 27%-ը: Ամենացածր արդյունքը գրանցել է կաթնաթթվային արտադրության մեջ օգտագործվող կաթնային

շիճուկը՝ կազմելով 3%:

### Կաթնամթերքի ներմուծման մասնաբաժինը Ղազախստանում, 2016թ.

	Ներմուծում (հազ. ԱՄՆ դոլար)	Ներմուծման մասնաբաժինը
Խտացրած կաթ և կաթի փոշի	75,300	33%
Պանիր, կաթնաշոռ	60,600	27%
Թթվասեր, կեֆիր, յոգուրտ և այլ խմորման ենթարկված կամ թթվեցրած կաթ ու կաթնասեր	30,400	13%
Կարագ և այլ կաթնային յուղեր	26,800	12%
Կաթ	25,700	11%
Կաթնային շիճուկ	6,540	3%
<b>Ընդամենը</b>	<b>225,340</b>	<b>100%</b>

Աղբյուրը: Ղազախստանի վիճ. ծառայություն, [www.stat.gov.kz](http://www.stat.gov.kz)

### Դիտարկումներ

- 2016թ.-ին Ղազախստանում արտադրված 806 հազ. տոննա կաթնամթերքի 24%-ը բաժին է ընկել կաթնաթթվային ապրանքներին, իսկ 3%-ը կազմել է պանրի և կաթնաշոռի արտադրությունը:
- 2016թ.-ին Ղազախստան ներմուծված կաթնամթերքից 33%-ը բաժին է ընկել խտացրած կաթին և կաթի փոշուն, իսկ 27%-ը՝ պանրին և կաթնաշոռին:



# Վաճառքի գների և ուղիների ուսումնասիրությունը

## Սանրածախ ոլորտի ուսումնասիրությունը Ռուսաստանում

Կաթնամթերքի գների ուսումնասիրությունը ռուսական շուկայում իրականացվել է սուպերմարկետների ցանցերում կատարված վերլուծությունների միջոցով, ինչի արդյունքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

## Կաթնամթերքի վաճառքի միջին գները ռուսական շուկայում 2017թ.-ի սեպտեմբերի դրությամբ, ՀՀ դրամ

Ապրանքանակ	Քաշ	Տեղական արտադրություն	Ներմուծում
Փոխարժեք (RUR/AMD)	8.22		
Կաթ	1լ	422.8	552.0
Խտացրած կաթ	380գ	559	522
Թթվասեր	200գ	310	485
Յոգուրտ	125գ	191	436
Կարագ և այլ կաթնային յուղեր	200գ	857	906
Պանիր	200գ	1,376	2,326
Կաթնաշոռ	200գ	667	653

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

2017թ.-ի սեպտեմբերի դրությամբ կատարված գնային ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ ռուսական շուկայում ներմուծված կաթնամթերքի գները փոփոխական են և որոշ դեպքերում ներմուծված կաթնամթերքի գինը մոտ 2 անգամ գերազանցում է տեղականի գները, իսկ որոշ ապրանքների գծով էլ տեղականի գներն են ավելի բարձր: Մասնավորապես՝ ներմուծված պանիր 200գ-ի միջին գինը մոտ 70%-ով բարձր է տեղականի գնից, իսկ ներմուծված յոգուրտի գինը ավելի քան 2 անգամ գերազանցում է տեղականի գինը: Միևնույն ժամանակ տեղական արտադրության խտացրած կաթի 380գ-ի գինն ավելի բարձր է քան ներմուծվածինը, նույնը կարելի է ասել նաև կաթնաշոռի համար:

2017թ.-ի սեպտեմբերի դրությամբ իրականացվել է նաև ռուսական շուկայում շրջանառվող պանիրների ավելի մանրամասն գնային ուսումնասիրություն՝

տարբերակելով հայկական արտադրության պանիրները և այլ պանիրները: Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են ռուսական շուկայում շրջանառվող այլ պանիրների և հայկական պանիրների գները:

## Այլ պանիրների միջին գները ռուսական շուկայում, ՀՀ դրամ

Անվանում	Քաշ	Արժեք
Փոխարժեք (RUR/AMD)	8.22	
Էմենտալ	200գ	3,385
Ռոկֆոր	200գ	2,835
Բրի	200գ	2,869
Մոցառելլա	200գ	1,252
Պարմեզան	200գ	2,129
Սուլուգունի	200գ	1,431
Միջին գինն այլ պանիրների համար	200գ	2,317

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

## Հայկական արտադրության պանրի միջին գները ռուսական շուկայում, ՀՀ դրամ

Անվանում	Քաշ	Արժեք
Փոխարժեք (RUR/AMD)	8.22	
<b>Աղի պանիր</b>		
Գաուդա	200գ	863.1
Չանախ	200գ	780.9
Լոռի	200գ	838.4
Ալաշկերտ	200գ	822.0
Միջին գինն աղի պանրի համար	200գ	826.1
<b>Այլ տեսակի պանիրներ</b>		
Սուլուգունի	200գ	887.8
Պարմեզան	200գ	1,397.4
Ռոկֆոր	200գ	2,013.9
Տոմմի այծի պանիր	200գ	1,397.4
Մոցառելլա	200գ	904.2
Միջին գինն այլ պանիրների համար	200գ	1,320.1

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

# Վաճառքի գների և ուղիների ուսումնասիրությունը

Եթե հայկական արտադրության պանիրները համեմատում ենք ռուսական շուկայում շրջանառվող այլ պանիրների հետ, ապա ակնհայտ է դառնում, որ հայկական արտադրության պանիրները ներկայանում են ավելի մրցունակ գներով: Մասնավորապես՝ մոցառելյա տեսակի պանրի գինը, որն ինչպես նշվեց այլ պանիրների շարքում ներկայանում էր ամենացածր արժեքով, հայկական արտադրության նույն տեսակի պանրից բարձր է մոտ 39%-ով:

Իսկ ընդհանուր առմամբ, ռուսական շուկայում շրջանառվող պանիրների գները հայկական արտադրության միևնույն պանիրների գներից բարձր են 48%-ով:

## Հայկական պանիրների վաճառքի գներն ԱՄՆ-ում

Ամերիկյան շուկայում հայկական պանիրների գնային ուսումնասիրությունը կատարվել է մթերային խանութներում կատարված վերլուծությունների միջոցով, ինչի արդյունքը ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

## Հայկական արտադրության պանրի միջին գները ամերիկյան շուկայում, ՀՀ դրամ

Անվանում	Քաշ	Արժեք
Փոխարժեք (USD/AMD)	482.5	
Լոռի	450գ	3,373
Չանախ	450գ	2,649
Ֆետա	450գ	2,408

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

## Դիտարկումներ

- 2017թ-ի սեպտեմբերի դրությամբ ռուսական արտադրության պանրի միջին գինը կազմել է 1,376 դրամ, իսկ ներմուծվածինը՝ մոտ 70%-ով բարձր:
- Հայկական արտադրության աղի պանրի միջին գինը ռուսական շուկայում 200գ-ի համար կազմել է 826 դրամ, իսկ հայկական արտադրության այլ պանիրների համար՝ 1,320 դրամ:
- Հայկական արտադրության այլ պանիրների գները գրեթե 48%-ով ցածր են ռուսական շուկայում շրջանառվող միևնույն տեսակի պանիրների գներից:
- Հայկական արտադրության Լոռի, Չանախ և Ֆետա պանիրների 450գ-ի գները ամերիկյան շուկայում կազմել են համապատասխանաբար 3,373, 2,649 և 2,408 ՀՀ դրամ:

# Վաճառքի գների և ուղիների ուսումնասիրությունը

## Մանրածախ ոլորտի ուսումնասիրությունը Վրաստանում և Ղազախստանում

Կաթնամթերքի գների ուսումնասիրությունը վրացական և դազախական շուկաներում իրականացվել է սուպերմարկետների ցանցերում կատարված վերլուծությունների միջոցով:

Այսպիսով 2017թ-ի սեպտեմբերի դրությամբ վրացական շուկայում կաթնամթերքի համար գործում են հետևյալ գները:

### Կաթնամթերքի վաճառքի միջին գները վրացական շուկայում 2017թ.-ի սեպտեմբերի դրությամբ

Ապրանքատեսակ	Քաշը	Տեղական արտադրութ յուն, ՀՀ դրամ
Փոխարժեք (GEL/AMD)	195	
Կաթ	1լ	628
Խտացրած կաթ	380գ	564
Մածուն	450գ	438
Յոգուրտ	125գ	185
Կարագ և այլ կաթնային յուղեր	200գ	927
Վրացական պանիր	200գ	1,079
Կաթնաշոռ	200գ	427

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

2017թ-ի սեպտեմբերի դրությամբ կատարված գնային ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ վրացական շուկայում տեղական պանրի 200գ-ի միջին գինը կազմում է մոտ 1,079 դրամ, իսկ կարագինը՝ 927 դրամ:

Հաջորդիվ ներկայացված է կաթնամթերքի վաճառքի միջին գները դազախական շուկայում: Գնային ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դազախական շուկայում ներմուծված կաթնամթերքի գները տեղականից ավելի բարձր են: Մասնավորապես՝ ներմուծված կարագի 200գ-ի միջին գինը 52%-ով գերազանցում է տեղականի գինը, իսկ ներմուծված պանրի գինը մոտ 33%-ով բարձր է տեղականի գնից: Իսկ տեղական և ներմուծված կաթնաշոռի վաճառքի միջին գների միջև տարբերությունն էական չէ:

## Կաթնամթերքի վաճառքի միջին գները դազախական շուկայում 2017թ.-ի սեպտեմբերի դրությամբ, ՀՀ դրամ

Ապրանքատեսակ	Քաշը	Տեղական արտադրութ յուն	Ներմուծում
Փոխարժեք (KZT/AMD)	1.48		
Կաթ	1լ	533	570
Խտացրած կաթ	380գ	484	629
Թթվասեր	200գ	362	425
Կարագ և այլ կաթնային յուղեր	200գ	848	1,290
Պանիր	200գ	1,561	2,069
Կաթնաշոռ	200գ	575	582

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

## Շահութաբերություն ըստ շուկաների

Վրաստանի և Ղազախստանի շուկաներում վաճառքի շահութաբերության վերաբերյալ տվյալների բացակայության պատճառով, տեղական արտադրողների շահութաբերությունը դիտարկվել է ռուսական շուկայի համար, ինչն ավելի մանրամասն ներկայացված է հաջորդ գլխում:

## Դիտարկումներ

- 2017թ-ի սեպտեմբերի դրությամբ վրացական արտադրության պանրի միջին գինը կազմել է 1,079 դրամ, իսկ դազախական արտադրությանը՝ 1,561 դրամ:
- Ղազախստանում ներմուծված կաթնամթերքի գները տեղական արտադրանքի գներից ավելի բարձր են: Ներմուծված կարագի գինը տեղականից բարձր է մոտ 52%-ով, սակայն կաթնաշոռի դեպքում այդ տարբերությունն էական չէ:
- Վաճառքի շահութաբերությունը մանրամասն ներկայացված է հաջորդ գլխում:

# Վաճառքի գների և ուղիների ուսումնասիրությունը

## Փոխարինող ապրանքների ուսումնասիրություն

Կաթնամթերքի տարբեր տեսակների հիմնական փոխարինիչների մասին խոսվել է 112-րդ էջում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են կաթնամթերքի հիմնական փոխարինիչների վաճառքի գներն ըստ երկրների:

**Կաթնաթերքի հիմնական փոխարինիչների վաճառքի գներն ըստ երկրների, ՀՀ դրամ**

Անվանում	Քաշ	Ռուսաստան (RUB/AM D)	Վրաստան (GEL/AM D)	Ղազախստան (KZT/AMD )	ԱՄՆ (USD/AM D)
Փոխարժեք		8.22	195	1.48	482.5
<b>Կաթի փոխարինիչներ</b>					
Կաթի փոշի	1 կգ	1,309	1022*	1,376	6,342
<b>Կարագի փոխարինիչներ</b>					
Սփրեդ	180 գ	276	205	272	1,437
Մարգարին	180 գ	166	194.5	182	1,190
<b>Կաթնաշոռի փոխարինիչներ</b>					
Ֆետա պանիր	200 գ	918	-**	1,140	2,989

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

\*Մանրածախ վաճառքի գների բացակայության պատճառով դիտարկվել են մեծածախ վաճառքի գները:

\*\*Վրացական շուկայում ֆետա պանրի վաճառքի գինը հնարավոր չի եղել պարզել:

## Դիտարկումներ

- Կաթի հիմնական փոխարինիչը հանդիսացող կաթի փոշու գինը 1 կգ-ի համար ամենաբարձրը կազմել է ամերիկյան շուկայում՝ 6,342 ՀՀ դրամ արդյունքով:
- Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ դիտարկվող երկրների շրջանակներում կաթի փոխարինիչների ամենաբարձր վաճառքի գներով աչքի է ընկել ԱՄՆ-ն: Իսկ մնացած երկրներում դիտարկվող ապրանքների վաճառքի գների միջև տարբերությունները էական չեն եղել:

# Վաճառքի գների և ուղիների ուսումնասիրությունը

## Վաճառքի ուղիների ուսումնասիրություն

Ինչպես արդեն նշվեց, 2016թ.-ին ՀՀ-ից արտահանված կաթնամթերքի կառուցվածքում պանրի արտահանումը կազմել է 99.7%: Ուստի, վաճառքի ուղիների ուսումնասիրությունները կատարվել են պանրի համար: Վաճառքի ուղիների ուսումնասիրությունն իրականացվել է արտադրող ընկերությունների շրջանում հարցումների անցկացման միջոցով:

Հարցումներին մասնակցած 14 ընկերություններից 6-ը գրադվում են կաթնամթերքի արտահանմամբ: Նրանցից 3-ը բեռնափոխադրումն իրականացնում են սեփական տրանսպորտային միջոցներով, իսկ մնացածը բեռնափոխադրող ընկերությունների միջոցով: Նշված ընկերություններից բոլորն էլ իրացումը կազմակերպում են սուպերմարկետների ցանցի և խանութների միջոցով, սակայն նրանցից 3-ը աշխատում են նաև միջնորդների հետ: Հարցմանը մասնակցած ընկերությունների համար, արտահանման հետ կապված հիմնական խոչընդոտներ են հանդիսացել ՀՀ դրամ/Ռուբլի փոխարժեքի տատանումները և կաթնամթերքի պահպանման կարճ ժամկետը:

Բեռնափոխադրման առանձնահատկություններից ելնելով Խորհրդատուն կապ է հաստատել տարբեր բեռնափոխադրող ընկերությունների, ինչպես նաև Հարավ-Կովկասյան երկաթուղու հետ:

Որպեսզի բեռնափոխադրման ընթացքում պանիրը չփչանա և չկորցնի իր որակական հատկությունները, անհրաժեշտ է, որպեսզի այն միջտ պահվի 3-5 ջերմաստիճանի պայմաններում: Հետևաբար վերջինիս տեղափոխումն իրականացնելու համար, բեռնախցիկները պետք է զինված լինեն սառնարանային համակարգերով:

Հարավ-Կովկասյան երկաթուղու հետ քննարկումից հետո պարզ դարձավ, որ երկաթգծով պանրի տեղափոխումը հնարավոր չէ, քանի որ ընկերությունը չունի սառնարանային վագոններ:

Բեռնատարներով փոխադրումների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տեղական բեռնափոխադրող ընկերություններն ունեն հովացման համակարգով զինված բեռնախցիկներ: Պանիրը բեռնախցիկում տեղադրվում է հատուկ

պալետների վրա: 1 մեծ պալետի վրա տեղավորվում է 740 կգ պանիր, իսկ մեծ բեռնատարի առավելագույն տարողունակությունը 20 տոննա է: Քանի որ կաթնամթերքի արտահանման հիմնական երկրները եղել են Ռուսաստանը, Վրաստանը և Ղազախստանը, ուսումնասիրվել են տրանսպորտային ծախսերն այդ ուղղություններով: Համաձայն հաջորդիվ բերված աղյուսակի Մոսկվա և Կրասնոդար ուղղություններով տրանսպորտային ծախսերը կազմել են համապատասխանաբար 965,000 և 723,750 ՀՀ դրամ: Իսկ Երևան-Աստանա ուղղության արժեքը միջինում կազմել է 4,825,000 ՀՀ դրամ:

## 20 տոննա պանրի տեղափոխման տրանսպորտային ծախսերը

Քաղաք	Արժեք (ՀՀ դրամ)
Փոխարժեք (USD/AMD)	482.5
Մոսկվա	965,000
Կրասնոդար	723,750
Թբիլիսի	337,750
Աստանա	4,825,000

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

## Դիտարկումներ

- Հարցմանը մասնակցած 14 ընկերություններից կաթնամթերքի 6 արտահանողներն իրենց արտադրանքի իրացումը կազմակերպում են սուպերմարկետների ցանցի և խանութների միջոցով, սակայն նրանցից 3-ը աշխատում են նաև միջնորդների հետ:
- Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՀՀ-ից արտահանվող հիմնական կաթնամթերքի՝ պանրի տեղափոխումը երկաթուղու միջոցով հնարավոր չէ իրականացնել, քանի որ Հարավ-Կովկասյան երկաթուղին չունի սառնարանային վագոններ:
- Բեռնատարների միջոցով 20 տոննա պանրի տեղափոխումը Մոսկվա, Կրասնոդար, Թբիլիսի և Աստանա ուղղություններով միջինում կազմում է համապատասխանաբար 965,000, 723,750, 337,750 և 4,825,000 ՀՀ դրամ:

# Ռուսական շուկա մուտք գործելու խոչընդոտների ուսումնասիրություն

## Կարգավորում

Մաքսային Միության տարածքով անցնող ցանկացած սննդամթերքի տեղափոխման հիմնական փաստաթղթերն են համարվում « Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին », « Մսի և մսամթերքի անվտանգության մասին » տեխնիկական կանոնակարգերը: Մա կանոնների համախումբ է, համաձայն որոնց պետք է արտադրվեն Միության տարածքում կենդանական ծագման բոլոր արտադրատեսակները: Դա նշանակում է, որ Մաքսային միության հինգ երկրներն (այն ներառում է Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Հայաստանը և Դրոգստանը) ունեն արտադրանքի նկատմամբ նույն ուղեկցող փաստաթղթերը և պահանջները:

## Ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը

Որպես կանոն անհրաժեշտ են երկու փաստաթղթեր՝ ներմուծման թույլտվությունը (միայն Մաքսային միության անդամ չհանդիսացող ԱՊՀ երկրների համար) և անասնաբուժական վկայագիրը՝ ստացված արտադրողի երկրից: Սովորաբար այն ուժի մեջ է ոչ ավել քան մեկ ամիս ստացման օրվանից: Արտադրանքը պետք է ունենա Մաքսային Միությանը հատուկ մակնշումը: Իսկ մնացած բոլոր մաքսային պահանջները սովորական են. խմբաքանակի փաստաթղթերը, արտադրողի և բեռնափոխադրողի տվյալները, հաշիվ-ապրանքագրերը, բեռների մաքսային հայտարարագրումը:

## Դիտարկումներ

- ՌԴ ապրանքների ներմուծման համար անհրաժեշտ են երկու փաստաթղթեր՝ ներմուծման թույլտվությունը (միայն Մաքսային միության անդամ չհանդիսացող ԱՊՀ երկրների համար) և անասնաբուժական վկայագիրը՝ ստացված արտադրողի երկրից: Սովորաբար այն ուժի մեջ է ոչ ավել քան մեկ ամիս ստացման օրվանից: Արտադրանքը պետք է ունենա Մաքսային Միությանը հատուկ մակնշումը: Իսկ մնացած բոլոր մաքսային պահանջները սովորական են. խմբաքանակի փաստաթղթերը, արտադրողի և բեռնափոխադրողի տվյալները, հաշիվ-ապրանքագրերը, բեռների մաքսային հայտարարագրումը:

# Ռուսական շուկա մուտք գործելու խոչընդոտների ուսումնասիրություն

## Մրցակցություն

Վերջին տարիներին, մասնավորապես՝ մինչև 2015 թվականը պահանջարկը ռուսական արտադրության կաթնամթերքի նկատմամբ նվազել է: 2016թ.-ի սկզբներին գրանցվեց պահանջարկի փոքր աճ, սակայն, հիմնականում ներմուծված կաթնամթերքի շնորհիվ:

Ներկայումս Ռուսաստանում գործում են կաթնամթերք արտադրող մի շարք խոշոր ընկերություններ, որոնց միջև գործում է խիստ մրցակցություն:

Ռուսաստանի կաթնամթերքի շուկայի առաջատարներն են համարվում Վիմ-Բիլ-Դանն, Յունիմիլկ և Դանոն ընկերությունները:

Վիմ-Բիլ-Դանն-ը համարվում է կաթնամթերք արտադրող ամենախոշոր ընկերությունը, որին պատկանում է շուկայի գերակշիռ մասը: Կաթնամթերքի վաճառքից ստացված եկամուտը կազմում է ընկերության հասույթի 89%-ը: Կաթնամթերքի վաճառքից ընկերության հասույթը ամեն տարի կազմում է ավելի քան 2,5 մլրդ ԱՄՆ դոլար:

Հաջորդ երկու ընկերությունները՝ Յունիմիլկը և Դանոնը դեռևս 2010թ.-ին ստորագրել էին համաձայնագիր Ռուսաստանում և ԱՊՀ այլ երկրներում կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող իրենց ընկերությունների միաձուլման վերաբերյալ: Այժմ այս երկու ընկերությունները լուրջ մրցակից են համարվում Վիմ-Բիլ-Դաննի համար:

Այլ խոշոր արտադրողների թվին են դասվում Վորոնեժի կաթի կոմբինատը և գերմանական Էրմանն ընկերությունը:

Չնայած կաթնամթերքի բիզնեսի բարձր շահութաբերությանը, շուկա մուտք գործելու շեմը բավականին բարձր է: Ներքին շուկայում փոքր և միջին մասնակիցների հիմնական խնդիրն է մշակել և զարգացնել սեփական ապրանքային նշանները, ընդլայնել իրացման աշխարհագրական տեղանքը, սպառողներին տեղեկատվություն տրամադրել արտադրանքի որակական և այլ հատկանիշների վերաբերյալ: Գործողությունների այսպիսի ուղղությունը կարող է և պետք է ապահովի կաթնամթերքի նկատմամբ պահանջարկի աճ:

## Դիտարկումներ

- Ռուսաստանի կաթնամթերքի շուկայի առաջատարներն են համարվում Վիմ-Բիլ-Դանն, Յունիմիլկ և Դանոն ընկերությունները: Յունիմիլկ և Դանոն ընկերությունները ստորագրել են համաձայնագիր Ռուսաստանում և ԱՊՀ այլ երկրներում կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող իրենց ընկերությունների միաձուլման վերաբերյալ: Այժմ այս երկու ընկերությունները լուրջ մրցակից են համարվում Վիմ-Բիլ-Դաննի համար:

# Ռուսական շուկա մուտք գործելու խոչընդոտների ուսումնասիրություն

## Գնորդներ


Գնորդների ուժը գնահատելու համար ուսումնասիրվել են՝

- կաթնամթերքի նկատմամբ պահանջարկը և
- սպառողների գնողունակությունը:

## Պահանջարկի ուսումնասիրություն

Պահանջարկն ուսումնասիրելու համար դիտարկվել են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են կաթնամթերքի 1 շնչի հաշվով սպառումը ՌԴ-ում և սպառման նորման: Ստորև բերված գծապատկերում ներկայացված է 1 շնչի հաշվով սպառումը ըստ տարիների:

### Կաթնամթերքի հիմնական տեսակների 1 շնչի հաշվով սպառումը բնեղեն արտահայտությամբ



Աղբյուրը: [http://www.dairyinfo.gc.ca/index\\_e.php?s1=diff-fcil&s2=cons&s3=cons glo&s4=tb-bt](http://www.dairyinfo.gc.ca/index_e.php?s1=diff-fcil&s2=cons&s3=cons glo&s4=tb-bt), Խորհրդատուի հաշվարկ

Կաթի 1 շնչի հաշվով սպառումը տարեց տարի նվազել է, ինչը 2015թ.-ին 2012թ.-ի համեմատ կազմել է մոտ 3%: Կարագի և պանրի 1 շնչի հաշվով սպառման ծավալները դրսևորել են կայուն շարժ, մասնավորապես՝ 2015թ.-ին սպառված պանրի և կարագի ծավալները համապատասխանել են 2012թ.-ի արդյունքներին, կազմելով համապատասխանաբար՝ 5.7 և 2.3 կգ:

Հաջորդիվ ներկայացված է 1 շնչի հաշվով կաթնամթերքի հիմնական

տեսակների փաստացի օրական սպառումը ՌԴ-ում և սպառման օրական նորման:

### 1 շնչի հաշվով օրական սպառումը ՌԴ-ում և սպառման նորման, 2015

	Չափման միավոր	Փաստացի օրական սպառում	Օրական սպառման նորման մեկ շնչի հաշվով
Կաթ	լիտր	0.1	0.2
Պանիր բոլոր տեսակների	կգ	0.016	0.02
Կարագ	կգ	0.006	0.01

Աղբյուրը: [http://www.dairyinfo.gc.ca/index\\_e.php?s1=diff-fcil&s2=cons&s3=cons glo&s4=tb-bt](http://www.dairyinfo.gc.ca/index_e.php?s1=diff-fcil&s2=cons&s3=cons glo&s4=tb-bt), Խորհրդատուի հաշվարկ

Դիտարկված 3 ապրանքատեսակների գծով 1 շնչի հաշվով սահմանված միջին օրական նորման գերազանցում է փաստացի սպառումը, մասնավորապես՝ կաթի դեպքում 2.06 անգամ, պանրի դեպքում 1.05 անգամ, իսկ կարագի դեպքում 1.74 անգամ:

## Դիտարկումներ

- Դիտարկվող ժամանակաշրջանում կաթի 1 շնչի հաշվով սպառումը տարեց տարի նվազել է, ինչը 2015թ.-ին 2012թ.-ի համեմատ կազմել է մոտ 3%: Կարագի և պանրի 1 շնչի հաշվով սպառման ծավալները դրսևորել են կայուն շարժ, մասնավորապես՝ 2015թ.-ին սպառված պանրի և կարագի ծավալները համապատասխանել են 2012թ.-ի արդյունքներին, կազմելով համապատասխանաբար՝ 5.7 և 2.3 կգ:




# Ռուսական շուկա մուտք գործելու խոչընդոտների ուսումնասիրություն

## Գնողունակության ուսումնասիրություն

Սպառողների գնողունակությունը գնահատելու համար դիտարկվել են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են նվազագույն սպառողական զամբյուղը, միջին ամսական աշխատավարձը, 1 շնչի հաշվով կաթնամթերքի սպառողական ծախսերը, ինչպես նաև կաթնամթերքի ամսական ծախսերի մասնաբաժինը միջին ամսական աշխատավարձի կառուցվածքում: Նշված վերլուծության նպատակն է հասկանալ, թե արդյոք սպառողներն ունակ են գումարներ ծախսել կաթնամթերքի ձեռքբերման համար: Հաջորդիվ բերված գծապատկերում դիտարկվել են նվազագույն սպառողական զամբյուղը և միջին ամսական անվանական աշխատավարձը:

### Նվազագույն սպառողական զամբյուղ և աշխատավարձ



Աղբյուրը: [http://www.gks.ru/free\\_doc/doc\\_2017/rusfig/rus17.pdf](http://www.gks.ru/free_doc/doc_2017/rusfig/rus17.pdf), Խորհրդատուի հաշվարկ

Վերոնշյալ գծապատկերում ներկայացված է կաթնամթերքի գների ինդեքսի դինամիկան, որը դիտարկվող ժամանակաշրջանում նվազել է՝ 2013թ.-ին կազմելով 17%, 2014 և 2015 թթ.-ին համապատասխանաբար 16% և 10%:

Նվազագույն սպառողական զամբյուղը 2013-2015թթ.-ի ընթացքում դրամական արտահայտությամբ նվազել է 19%-ով: Միջին ամսական աշխատավարձը նույնպես նվազել է՝ 30%-ով: Սակայն հարկ է նշել, որ այս նվազեցումները

նկատվում են ցուցանիշները դրամական արտահայտությամբ ներկայացնելու պարագայում, ինչը պայմանավորված է ռուսական ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժեվորմամբ: Իսկ սպառողական զամբյուղը և միջին աշխատավարձերը ռուբլիով ան են գրանցել: Ուսումնասիրվել են 1 շնչի հաշվով կաթնամթերքի հիմնական տեսակների միջին սպառողական ծախսերը տարվա կտրվածքով:

### Կաթնամթերքի հիմնական տեսակների գծով սպառողական ծախսերը 1 շնչի հաշվով

	Չափման միավոր	2012	2013	2014	2015
<b>Փոխարժեք (RUR/AMD)</b>					
		12.94	12.87	10.99	7.89
<b>Կաթ</b>					
	դրամ/լիտր				
Միավորի միջին արժեքը		438.4	497.3	481.5	375.6
Միջին տարեկան սպառում	լիտր	36.5	36.4	36.0	35.5
<b>Ընդամենը սպառողական ծախսեր</b>					
		<b>16001.9</b>	<b>18101.6</b>	<b>17333.0</b>	<b>13335.3</b>
<b>Պանիր բոլոր տեսակների</b>					
	դրամ/կգ				
Միավորի միջին արժեքը		3527.1	4207.1	4273.0	3302.8
Միջին տարեկան սպառում	կգ	5.7	6.1	5.8	5.7
<b>Ընդամենը սպառողական ծախսեր</b>					
		<b>20104.2</b>	<b>25663.2</b>	<b>24783.5</b>	<b>18826.1</b>
<b>Կարագ</b>					
	դրամ/կգ				
Միավորի միջին արժեքը		3375.3	3975.8	3929.4	3138.2
Միջին տարեկան սպառում	կգ	2.3	2.6	2.4	2.3
<b>Ընդամենը սպառողական ծախսեր</b>					
		<b>7763.1</b>	<b>10337.1</b>	<b>9430.5</b>	<b>7218.0</b>

Աղբյուրը: Խորհրդատուի հաշվարկ


Վերոնշյալ աղյուսակի համաձայն կաթի, պանրի, կարագի գծով միջին սպառողական ծախսերը 2015թ.-ին կազմել են համապատասխանաբար 13,335, 18,826 և 7,218 ՀՀ դրամ:

Քանի որ կատարված վերլուծությունը ներկայացված է ՀՀ դրամով, իսկ ցուցանիշները վերցվել են ռուսական աղբյուրներից, հաջորդիվ բերված է ՀՀ

# Ռուսական շուկա մուտք գործելու խոչընդոտների ուսումնասիրություն

դրամի և ռուբլու փոխարժեքների դինամիկան: 2012-2016թթ. ռուսական ռուբլին տարեց տարի անկում է ապրել և արդեն 2016թ.-ին 2012թ.-ի համեմատ այն դրամի նկատմամբ արժեզրկվել է մոտ 44%-ով՝ 12.94 դրամից դառնալով 7.2 դրամ:


## Ռուսական ռուբլի/ՀՀ դրամ փոխարժեքի դինամիկան



Աղբյուրը: [www.rate.am](http://www.rate.am)

Ստորև բերված գծապատկերում ներկայացված է կաթնամթերքի ամսական ծախսերի հարաբերակցությունը աշխատավարձին:

## Միջին ամսական աշխատավարձ և կաթնամթերքի միջին ամսական ծախսեր, ՀՀ դրամ



Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

Այսպիսով, եթե 2012թ.-ին կաթնամթերքի ամսական ծախսերը կազմում էին աշխատավարձի 1.06%-ը, ապա 2015թ.-ին 1.22%-ը:

## Շուկայի մուտքի խոչընդոտների ամփոփում

Հաշվի առնելով Խորհրդատուի կողմից կատարված վերլուծությունը՝ կատարվել է շուկայի մուտքի խոչընդոտների գնահատում:

## Շուկայի մուտքի խոչընդոտների գնահատում

	Գնահատական
Գնորդների ուժ	ցածր
Մրցակիցների ուժ	միջին
Իրավական դաշտ	միջին

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

Շուկայի մուտքի խոչընդոտների վերլուծության արդյունքում գնորդների ուժին տրվել է ցածր գնահատական, իսկ մրցակիցների ուժին և իրավական դաշտին՝ միջին:

## Դիտարկումներ

- Ռուսական շուկայում կաթնամթերքի մասնաբաժինը դիտարկվող ժամանակաշրջանում նվազագույն սպառողական զամբյուղի կառուցվածքում կրճատվել է՝ 2013թ.-ի 4.8%-ից դառնալով 4.3% 2015թ.-ին:
- Նվազագույն սպառողական զամբյուղը և միջին ամսական աշխատավարձը 2013-2015թթ.-ի ընթացքում դրամական արտահայտությամբ նվազել են համապատասխանաբար 19%-ով և 30%-ով: Սակայն այդ նվազեցումները նկատվում են միայն ցուցանիշները դրամական արտահայտությամբ ներկայացնելու պարագայում, ինչը պայմանավորված է ռուսական ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկմամբ:
- Գնորդների ուժը գնահատվել է ցածր, իսկ միջին գնահատվել են մրցակիցների ուժը և իրավական դաշտը:

# Բաժին 9: Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրություն

01. Ամփոփ բաժին
02. Ներածություն
03. ՀՀ մակրոտնտեսական ամփոփ ուսումնասիրություն
04. Գյուղատնտեսության ոլորտի ամփոփ ուսումնասիրություն
05. Կաթի արտադրություն
06. Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն
07. Տեղական վաճառք/ շուկա
08. Օտարերկյա շուկաներ
- 09. Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրություն**
10. Կաթի վերամշակման և կաթնամթերքի ոլորտի SWOT վերլուծություն

## ՀՀ-ում արտադրվող պանիրներ

Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրության տեսանկյունից Խորհրդատուն իրականացրել է Հայաստանում արտադրվող պանիրների վերլուծություն, այնուհետև ընտրվել են չորս տեսակի պանիրներ, որոնց համար կատարվել է տեղական արտադրության ինքնարժեքի և ռուսական շուկայում վաճառքի շահութաբերության հաշվարկներ, ուսումնասիրվել են այդ պանիրների արտադրության համար անհրաժեշտ հավելյալ սարքավորումները և կատարվել է այդ սարքավորումների ներդրման արժեքի հաշվարկ:

### Պանրի ընտրության հիմնավորում

Արտահանման հնարավորությունների ուսումնասիրությունը կատարվել է պանրի համար, քանի որ 2016թ.-ին ՀՀ-ից արտահանված կաթնամթերքի կառուցվածքում պանրի արտահանումը կազմել է 99.7%: Միևնույն ժամանակ, պանրի արտահանումն ավելի նպատակահարմար է, քանի որ այն ավելի հարմար է փոխադրել, պիտանելիության ժամկետը կաթնամթերքի այլ տեսակների, օրինակ՝ կաթնաթթվային արտադրանքի համեմատ ավելի երկար է և պանիրն ավելի բարձր արժեք ունի:

### Հայաստանում արտադրվող պանիրների վերլուծություն

Հաջորդիվ բերված աղյուսակներում ներկայացված են Հայաստանում արտադրվող պանիրների վերաբերյալ այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են յուրաքանչյուրում աղի, ջրի, յուղի պարունակությունը և օգտագործման եղանակը:

Լոռի, Չանախ և Եղեգնաձոր տեսակի պանիրները դասվում են ազգային պանիրների շարքին: Լոռի և Չանախ պանիրները ստացվում են կովի կաթից, իսկ Եղեգնաձորը ստացվում է այծի կաթից և պահվում է հատուկ մշակված կավե կնձռների մեջ: Սուլյուզունին պատրաստվում է կովի պաստերացված կաթից՝ պանրային զանգվածի հալեցման միջոցով: Կամամբերը պատրաստվում է կովի կաթից և պատված է սպիտակ պենիցիլինային բարակ թաղանթով: Ռոկֆորը հորած պանիրների շարքին դասվող ոչխարի պանիր է, որը հատուկ անձավներում վարակվում է սնկային բորբոսով՝ բավարար օդափոխության և խոնավության պայմաններում:

### Հայաստանում արտադրվող պանիրների տեսակներ

	Լոռի	Չանախ	Եղեգնաձոր	Սուլյուզունի	Մոցարելա
Աղ	3.5-4.5%	3.5-5%	3.5-5%	1-2%	0.7-1%
Ջուր	44%	48-50%	45%	46-50%	54%
Յուղի պարունակությունը չոր նյութերում	50%	45-50%	50%	45-50%	40%
Հասունացման շրջան	2 ամիս	2 ամիս	6 ամիս	1.5 ամիս	1-3 օր
Օգտագործման եղանակը	Սախտուեստ	Սախտուեստ	Սախտուեստ	Սախտուեստ, պիցցա,	Պիցցա, աղցաններ

### Հայաստանում արտադրվող պանիրների տեսակներ (շարունակություն)

	Էմենտալ	Կամամբեր	Թոմ	Ռոկֆոր
Աղ	1-1.5%	1.5-2.5%	2.5-3%	4-5%
Ջուր	40%	52%	45%	46%
Յուղի պարունակությունը չոր նյութերում	50%	48%	50%	50%
Հասունացման շրջան	2 ամիս	3 շաբաթ	1.5 ամիս	3 ամիս
Օգտագործման եղանակը	Սախտուեստ, աղանդեր, աղցաններ	Սեղանի պանիր	Սախտուեստ և աղանդեր	Սախտուեստ, աղանդեր, աղցաններ

Աղբյուր: Խորհրդատուի վերլուծություն

# Արտահանման հնարավոր պանիրների տեսակները

**Դիտարկումներ**

- Որպես ՀՀ-ից արտահանվող հիմնական կաթնամթերք դիտարկվել է պանիրը, քանի որ վերջինս առավել արժեքավոր է, հարմար է փոխադրել և ունի պիտանելիության ավելի երկար ժամկետ:
- Լոռի, Չանախ, Եղեգնաձոր և այլ ազգային պանիրների հետ մեկտեղ Հայաստանում արտադրվում են նաև Սուլուգունի, Մոցարելա, Էմենտալ, Կամամբեր և մի շարք այլ համաշխարհային ճանաչում ունեցող պանիրներ:

**Չորս տեսակի պանիրների տեղական արտադրության ինքնարժեքի հաշվարկ**

Պանրի արտադրության արտահանման հնարավորությունները գնահատելու համար Խորհրդատուի իրականացրել է պանրի արտադրության ինքնարժեքի հաշվարկ ՀՀ-ում և դրա վաճառքի գնի հաշվարկ ռուսական շուկայում: Ինքնարժեքը հաշվարկելու համար դիտարկվել են ինքնարժեքի այնպիսի

բաղադրիչներ, ինչպիսիք են կաթի և բակտերիաների գնման ծախսերը, աշխատավարձը, կոմունալ ծախսերը:

**Ինքնարժեքի և վաճառքի գնի հաշվարկ ռուսական շուկայում**

Ինքնարժեքի հաշվարկման նպատակով իրականացվել է յուրաքանչյուր տեսակի պանրի արտադրության համար կաթի և բակտերիաների ծախսերի հաշվարկ: Կատարվել է ինքնարժեքի կառուցվածքի ուսումնասիրություն և ինքնարժեքի հաշվարկ: Կատարվել է վաճառքի գնի ուսումնասիրություն: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են չորս տեսակի պանիրների արտադրության համար օգտագործվող կաթի և բակտերիաների գնման ծախսերը:

Պանիրների շարքը ներառել են գաուդա, մասդամ, ֆետա և ռոկֆոր տեսակի պանիրները: Խորհրդատուի կողմից կատարված վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ ամենաբարձրը մասդամի արտադրության ծախսն է, որը կազմել է 1,994 դրամ: Գաուդա, ֆետա և ռոկֆոր պանիրների արտադրության ծախսերը կազմել են համապատասխանաբար 1,531, 1,170 և 1,686 դրամ:

## 1 կգ պանրի արտադրության համար օգտագործվող կաթի և բակտերիաների արժեքի հաշվարկ

	Միավոր	Գաուդա			Մասդամ			Ֆետա			Ռոկֆոր		
		1 կգ պանրի համար անհրաժեշտ նյութեր	Գինը, ՀՀ դրամ	Ընդամենը, ՀՀ դրամ	1 կգ պանրի համար անհրաժեշտ նյութեր	Գինը, ՀՀ դրամ	Ընդամենը, ՀՀ դրամ	1 կգ պանրի համար անհրաժեշտ նյութեր	Գինը, ՀՀ դրամ	Ընդամենը, ՀՀ դրամ	1 կգ պանրի համար անհրաժեշտ նյութեր	Գինը, ՀՀ դրամ	Ընդամենը, ՀՀ դրամ
Բաղադրիչներ													
Կաթ	լիտր	10	140	1,400	12	140	1,680	8	140	1,120	11	140	1,540
Բակտերիալ կուլտուրա	միավոր	0.4	89	36	-	-	-	0	89	24	0	89	39
Պրոպիոնաթթվային մանրէներ	միավոր	-	-	-	0.01	10,800	108	-	-	-	-	-	-
Բակտերիալ թերմոֆիլ կուլտուրա	միավոր	-	-	-	0.9	80	72	-	-	-	-	-	-
Բորբոս Penicillium Roqueforti	գ	-	-	-	-	-	-	-	-	-	0.0	2,400	24

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

# Արտահանման հնարավոր պանիրների տեսակները

## 1 կգ պանրի արտադրության համար օգտագործվող կաթի և բակտերիաների արժեքի հաշվարկ (շարունակություն)

Քաղաղորիչներ	Միավոր	Գաուդա			Մասդամ			Ֆետա			Ռոկֆոր		
		1 կգ պանրի համար անհրաժեշտ մյուսքեր	Գինը, ՀՀ դրամ	Ընդամենը, ՀՀ դրամ	1 կգ պանրի համար անհրաժեշտ մյուսքեր	Գինը, ՀՀ դրամ	Ընդամենը, ՀՀ դրամ	1 կգ պանրի համար անհրաժեշտ մյուսքեր	Գինը, ՀՀ դրամ	Ընդամենը, ՀՀ դրամ	1 կգ պանրի համար անհրաժեշտ մյուսքեր	Գինը, ՀՀ դրամ	Ընդամենը, ՀՀ դրամ
Շրդանաֆերմենտ	գ	0.12	65	8	0.14	65	9	0.10	65	7	0.13	65	8
Բնական ներկ Աննատո	մլ	0.25	10	3	0.5	10	5	-	-	-	-	-	-
Բնական ներկ Blego	մլ	-	-	-	-	-	-	0.6	12.0	7.2	0.8	12.0	9.2
Աղ	կգ	0.1	100	10	0.1	100	10	0.1	100	10	0.1	100	12
Պանրի սելիտրա	գ	2.3	0.6	1	-	-	-	1.9	1	1	2.5	1	2
Կալցիումի քլորիդ	գ	2.3	0.7	2	2.5	0.7	2	1.9	0.7	1	2.5	0.7	2
Պանրի լաթեքս	հատ	0.02	3,600	72	0.03	3,600	108	-	-	-	-	-	-
Պանրի նրբաթիթեղ	հատ	-	-	-	-	-	-	-	-	-	1.0	50.0	50.0
<b>Ընդամենը</b>			<b>1,531</b>			<b>1,994</b>			<b>1,170</b>			<b>1,686</b>	

Վերլուծության օբյեկտ հանդիսացող պանիրներից յուրաքանչյուրի ինքնարժեքը հաշվարկելու համար կաթի և բակտերիաների ծախսերին գումարվել են աշխատավարձի, կոմունալ և այլ ծախսերը, ինչն ավելի մանրամասն ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

### 1 կգ պանրի ինքնարժեքի հաշվարկ, ՀՀ դրամ

	Մասնաբաժին*	Գաուդա	Մասդամ	Ֆետա	Ռոկֆոր
Կաթ և բակտերիաներ	87.6%	1,531	1,994	1,170	1,686
Նյութական ծախսեր	2.9%	50.8	66.2	38.8	56.0
Աշխատավարձ	3.2%	55.9	72.8	42.7	61.5
Կոմունալ ծախսեր	2.4%	41.9	54.6	32.0	46.2
Մաշվածություն	3.4%	59.4	77.3	45.4	65.4
Տրանսպորտային ծախսեր	0.4%	7.0	9.1	5.3	7.7
<b>Ինքնարժեք</b>	<b>100%</b>	<b>1,746</b>	<b>2,274</b>	<b>1,335</b>	<b>1,923</b>

Վերջերս: Խորհրդատուի վերլուծություն

\*Մասնաբաժինը վերցվել է հիմք ընդունելով ստանդարտ պանրի արտադրության իրական ծախսերի կառուցվածքը ՀՀ-ում:

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտարկվող պանիրների ինքնարժեքը կազմում է՝ գաուդա պանրի համար 1,746 դրամ, իսկ մասդամ, ֆետա և ռոկֆոր պանիրների համար համապատասխանաբար 2,274, 1,335 և 1,923 դրամ:

### Դիտարկումներ

- Համաձայն ընտրված պանիրների համար կատարված ինքնարժեքի հաշվարկի, վերջինս կազմում է՝ գաուդա պանրի համար 1,746 դրամ, մասդամ, ֆետա և ռոկֆոր պանիրների համար համապատասխանաբար 2,274, 1,335 և 1,923 դրամ:

# Արտահանման հնարավոր պանիրների տեսակները

## Ռուսական շուկայում պանրի վաճառքի արժեքի հաշվարկ

Վաճառքի գնի հաշվարկն իրականացվել է ռուսական շուկայի համար, քանի որ ՀՀ-ից արտահանված կաթնամթերքի 98.64%-ը 2016թ.-ին բաժին է ընկել Ռուսաստանին:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է հայկական արտադրության պանրի վաճառքի գնի ձևավորումը ռուսական շուկայում:

## Ռուսական շուկայում հայկական արտադրության պանրի վաճառքի շահութաբերություն

Ստացված արժեքին ավելացվել է ԱԱՀ-ն 20%-ի չափով և ստացվել է մանրածախ վաճառքի գինը ներառյալ ԱԱՀ-ն: Տեղական արտադրության գաուդա տեսակի պանրի վաճառքի գինը փաստացի վաճառքի գինը գերազանցել է 3.3%-ով, իսկ մնացած պանիրների համար փաստացի վաճառքի գինը եղել է բավականին բարձր, ուստի կարելի է հանգել այն տեսակետին, որ այդ պանիրների արտադրությունը Հայաստանում և արտահանումը շահավետ է:

	Տեղական արդատրողի վաճառքի գինը (40% մարժա)	Տրանսպորտային ծախսերը Մոսկվա ուղղությամբ	Մեծածախ միջնորդի վաճառքի գինը (15% մարժա)	Մանրածախ միջնորդի վաճառքի գինը (30% մարժա)	Մանրածախ վաճառքի գին	Մանրածախ վաճառքի գին ներառյալ ԱԱՀ	Փաստացի վաճառքի գինը ռուսական խանութներում
<b>Գաուդա</b>	2,444	48	374	860	3,727	4,472	4,184
Փոփոխությունը տեղական արտադրողի վաճառքի գնի նկատմամբ			2%	15%	35%	152%	183%
<b>Մասդամ</b>	3,184	48	485	1,115	4,832	5,799	6,771
Փոփոխությունը տեղական արտադրողի վաճառքի գնի նկատմամբ			2%	15%	35%	152%	182%
<b>Ֆետա</b>	1,868	48	288	661	2,865	3,439	4,698
Փոփոխությունը տեղական արտադրողի վաճառքի գնի նկատմամբ			3%	15%	35%	153%	184%
<b>Ռուֆոր</b>	2,692	48	411	945	4,097	4,916	11,886
Փոփոխությունը տեղական արտադրողի վաճառքի գնի նկատմամբ			2%	15%	35%	152%	183%

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

Վաճառքի գները հաշվելու համար Խորհրդատուն ինքնարժեքին ավելացրել է վերադիր ծախսերը և շահույթի մեծությունը (մարժա, mark up): Հաշվի են առնվել այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են տեղական արտադրողի, մեծածախ և մանրածախ միջնորդների շահույթի մարժաները, ինչպես նաև բեռնափոխադրման ծախսերը: Տեղական արտադրողի շահույթի մարժան ընդունվել է հավասար 40%-ի: 1 կգ պանրի տրանսպորտային ծախսերը Մոսկվա ուղղությամբ միջինում կազմել են 48 դրամ, այնուհետև ավելացվել են մեծածախ և մանրածախ միջնորդների շահույթի մարժաները, որոնք համապատասխանաբար ընդունվել են հավասար 15%-ի և 30%-ի՝ համաձայն ռուսական շուկայի վերլուծության:

(www.ibl.ru/konf/120412/analiz-situacii-na-rynke-optovoj-torgovii-produktami-pitanija.html)

## Դիտարկումներ

- Վաճառքի շահութաբերության վերլուծությունը ցույց տվեց, որ դիտարկվող պանիրների արտադրությունը Հայաստանում նպատակահարմար է, քանի որ ցածր ինքնարժեքի շնորհիվ վերջիններս ռուսական շուկայում հնարավորություն ունեն սպառողներին ներկայանալ ավելի մրցունակ գներով, բացառությամբ գաուդա պանրի, որի վաճառքի գինը փաստացի գնից բարձր է 3.3%-ով: Իսկ առանց միջնորդների աշխատելու պարագայում տեղական արտադրողները հնարավորություն կունենան ապահովել ավելի բարձր շահութաբերություն:

# Պանիրների արտադրության տեխնոլոգիան

## Անհրաժեշտ սարքավորումների ցանկ

Խորհրդատուի կողմից ընտրված տեսակի պանիրների գնային ուսումնասիրությունից հետո, իրականացվել է այդ պանիրների արտադրությունը կազմակերպելու համար անհրաժեշտ սարքավորումների ուսումնասիրություն:

Խորհրդատուն կատարել է ենթադրություն, որ ՀՀ-ում գործող պանրի արտադրամասերն ունեն ստանդարտ պանրի արտադրամասերին բնորոշ սարքավորումներ:

Ստորև ըստ ընտրված պանիրների տեսակների, առանձնացվել են այն սարքավորումները, որոնք անհրաժեշտ են ի լրումն ստանդարտ արտադրամասի սարքավորումների տվյալ տեսակի պանրի արտադրությունը կազմակերպելու համար՝

## Պանրի արտադրության հավելյալ սարքավորումներ

	Գաուդա	Մասդամ	Ֆետա	Ռոկֆոր
Պանրի կաղապարներ	X	X	-	X
Պանրի մամլիչ	X	X	-	-
Տաք սենյակի համար դարակաշարեր	X	X	-	X
Ասեղներով դակող սարք	-	-	-	X

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

Այսպես՝ գաուդա և մասդամ տեսակի պանիրների համար անհրաժեշտ են կաղապարներ, մամլիչներ և դարակաշարեր, իսկ ռոկֆորի համար դուրս է գալիս մամլիչը և ավելանում է ասեղներով դակող սարքը:

Խորհրդատուի կողմից նաև իրականացվել է ընտրված պանրի տեսակի արտադրությունը կազմակերպելու համար անհրաժեշտ սարքավորումների ներդրման գումարի հաշվարկ՝ 500կգ արտադրողականությամբ արտադրություն կազմակերպելու համար, որի արդյունքը ներկայացված է հաջորդ աղյուսակում, իսկ մանրամասն բացվածքը բերված է Հավելված Ճ-ում:

## Պահանջվող սարքավորումների ներդրման արժեքի հաշվարկ

Պանրի տեսակ	Ընդամենը ներդրման գումար
Գաուդա	14,093,613
Մասդամ	13,255,206
Ռոկֆոր	4,640,919

Աղբյուրը: Խորհրդատուի վերլուծություն

## Դիտարկումներ

- Խորհրդատուի կողմից կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ գաուդա, մասդամ և ռոկֆոր տեսակի պանիրների արտադրության համար անհրաժեշտ հավելյալ սարքավորումների ցանկը ներառում է կաղապարներ, դարակաշարեր, մամլիչներ և ասեղներով դակող սարքեր:
- Խորհրդատուի կողմից հաշվարկվեց այդ սարքավորումների ներդրման արժեքը, ինչը գաուդա և մասդամ տեսակների համար կազմեց 14,093 և 13,255 հազ. ՀՀ դրամ, իսկ ռոկֆորի համար՝ 4,640 հազ. ՀՀ դրամ:

## Արտահանման հնարավորությունների ուսումնասիրության ամփոփում

Նախնական հաշվարկները ցույց տվեցին, որ դիտարկվող պանիրների արտադրությունը Հայաստանում նպատակահարմար է, քանի որ վերջիններս ռուսական շուկայում հնարավորություն ունեն սպառողներին ներկայանալ ավելի մրցունակ գներով:

Այդ պանիրների արտադրության համար անհրաժեշտ հավելյալ սարքավորումները (500կգ արտադրողականություն ապահովելու համար) նախնական հաշվարկներով զգալի ներդրումներ չեն պահանջում:

Գաուդա տեսակի պանրի արտադրության համար անհրաժեշտ հավելյալ սարքավորումների ներդրման արժեքը կազմում է 14,093 հազ. ՀՀ դրամ, իսկ մասդամ և ռոկֆոր տեսակներինը համապատասխանաբար 13,255 և 4,640 հազ. ՀՀ դրամ:



# Բաժին 10: Կաթի վերամշակման և կաթնամթերքի ոլորտի SWOT վերլուծություն

01. Ամփոփ բաժին
02. Ներածություն
03. ՀՀ մակրոտնտեսական ամփոփ ուսումնասիրություն
04. Գյուղատնտեսության ոլորտի ամփոփ ուսումնասիրություն
05. Կաթի արտադրություն
06. Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն
07. Տեղական վաճառք/ շուկա
08. Օտարերկյա շուկաներ
09. Արտահանման շուկայի հնարավորությունների ուսումնասիրություն
10. Կաթի վերամշակման և կաթնամթերքի ոլորտի SWOT վերլուծություն

# SWOT վերլուծություն- կաթի արտադրություն

## Ուժեղ կողմեր

- Հարկային ռեժիմ, գյուղմթերքների արտադրության ոլորտի համար սահմանված են հարկային արտոնություններ, մասնավորապես ԱԱՀ և շահութահարկից ազատված է առաջնային արտադրությունը
- Կերի ծախսի ցածր մակարդակ, արտավայրերի օգտագործման դեպքում տարեկան մինչև 65 տոկոս օրերը կենդանիները կարող են սնվել արոտային ռեժիմով,
- Ոլորտ մուտքի խոչընդոտների բացակայություն,
- Կաթի նկատմամբ կայուն պահանջարկի առկայություն:

## Թույլ կողմեր

- Արոտավայրերի օգտագործման պայմանների խախտում, բնակավայրերին մոտ արոտավայրերը գերծանրաբեռնված են, հեռու վայրերը թերծանրաբեռնված,
- Արոտավայրերի օգտագործման կանոնավորվածության բացակայություն,
- Մանր արտադրողների տեսակարար կշիռ բարձր է, մանր արտադրողներ (մինչև 5 կով) չունեն ֆինանսական միջոցներ կովերի կերն ու խնամքը ճիշտ կազմակերպելու համար,
- Կերի պահպանման համապատասխան պայմանների բացակայություն, կերը պահվում է բացօթյա պայմաններում
- Աշխատանքի ավտոմատացման ցածր մակարդակը, կիթն իրականացվում է հիմնականում ձեռքով
- Ցածր արդյունավետությամբ կովերի նախրի առկայություն,
- Խոշոր եղջերավոր կենդանիների անասնաբուժական ծառայությունների թերգարգացածություն

## Հնարավորություններ

- Արոտավայրերի թերի օգտագործում /ՀՀ-ում արոտավայրերի ընդամենը 30 տոկոսն են օգտագործվում/, Տարածքների աճի հնարավորություններ,
- Աշխատանքների ավտոմատացման հնարավորություններ, օրինակ կլթման աշխատանքներ,
- Արոտավայրերի օգտագործման արդյունավետության բարձրացում,
- Գյուղատնտեսության նախարարության կողմից առկա ծրագրեր՝ սարքավորումների թարմացում՝ լիզինգային ծրագրերով, բարձր արդյունավետ կովերի ներմուծում,

## Սպառնալիքներ

- Բնակլիմայական պայմանների փոփոխություն, երաշտ
- Արտաքին մրցակցություն
- Կենդանիների հիվանդություն

# SWOT վերլուծություն- կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն

## Ուժեղ կողմեր

- Կաթնամթերքի արտադրանքի նկատմամբ կայուն պահանջարկ,
- Կաթնամթերք արտադրող ընկերությունների կողմից հարկային ռեժիմի ընտրության հնարավորություն ըստ իրացման ծավալների,
- Գոյություն ունեցող կայացած արտահանման շուկա Ռուսաստանում:

## Թույլ կողմեր

- Հումքի՝ մասնավորապես կաթի ցածր որակ, որը պայմանավորված է կովերի սանիտարական պայմանների պահպանման հետ,
- Հումքի մատակարարման խիստ սեզոնայնություն, կաթի մատակարարումը ձմռան ամիսներին կտրուկ նվազում է,
- Տեխնոլոգիական թերհագեցվածությունը, շուկայում գործող միջին կաթ վերամշակող և արտադրող ընկերության սարքավորումները բավականին հին են,
- Ոլորտում լավ մասնագետների պակաս,
- ԱԱՀ չհաշվանցման խնդիր, քանի որ կաթնամթերք վերամշակող ընկերությունների հիմնական ձեռքբերումը կաթն է, որն ազատված է ԱԱՀ-ից
- Որակի կառավարման համակարգեր ներդրված է տնտեսավարող սուբյեկտներից միայն փոքր մասի մոտ, որը սահմանափակում է այդ ընկերությունների վաճառքի, մասնավորապես արտահանման հնարավորությունները
- Ներդրումների իրականացման համար ֆինանսավորման աղբյուրների դժվարամատչելիություն

## Հնարավորություններ

- Կաթնամթերքի սպառման ծավալների աճ ՀՀ-ում,
- Արտահանման շուկաներում հնարավորություններ, մասնավորապես ԵՏՄ շուկա,
- Տեխնոլոգիական առաջընթաց,
- Նոր տեսակի արտադրատեսակներ հիմնելու հնարավորություն, մասնավորապես նոր տեսակի պանիրների արտադրության հիմնում:

## Սպառնալիքներ

- Կաթի մատակարարման խափանում՝ երաշտի, հիվանդությունների և այլնի պատճառներով,
- Արտաքին մրցակցություն ՀՀ շուկայում, մասնավորապես՝ ԵՏՄ շուկա
- Ռուսաստանում պատժամիջոցների չեղարկման դեպքում շուկայի բացում շուկայի ավանդական մասնակիցների համար

# Հավելվածներ

- Ա. Տերմինների բառարան
- Բ. Պայմաններ
- Գ. Պայմանագիր
- Դ. Խոշոր եղջերավոր կենդանիների և կովերի բաշխումը ըստ մարզերի
- Ե. Խոշոր եղջերավոր կենդանիներ ունեցող տնտեսությունների բաշխումը ըստ տնտեսությունների կարգավիճակի
- Զ. Խոշոր եղջերավոր կենդանիների բաշխումը ըստ կազմի և տնտեսությունների կարգավիճակի
- Է. Կաթնային հոտի կովեր ունեցող տնտեսությունների բաշխումը ըստ կաթնային հոտի կովերի քանակի և տնտեսությունների կարգավիճակի
- Ը. Կթու կովերի կերաբաժինը
- Թ. Սերմնավորման հասակի էգ հորթերի և երինջների կերաբաժինը
- Ժ. Նամակ ԶԶ Գյուղատնտեսության նախարարությանը
- Ի. ԶԶ Գյուղատնտեսության նախարարության կողմից ստացված տեղեկատվություն
- Լ. ԽԵԿ-ի բուժմամբ զբաղվող տնտեսություններին ներկայացված հարցաշար
- Խ. Նամակ ԶԳՏՏԶԶ-ից
- Ծ. ԽԵԿ-ի բուժմամբ զբաղվող տնտեսությունների շրջանակում իրականացված հարցման արդյունքներ
- Կ. CARD-ի կողմից տրամադրված կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերությունների ցանկ
- Յ. Կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերություններին ներկայացված հարցաշար
- Ձ. Կաթի վերամշակմամբ և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերությունների շրջանակում իրականացված հարցման արդյունքներ
- Դ. Կաթի և կաթնամթերքի մանրածախ վաճառքի գները ԶԶ շուկայում
- Ծ. Պանրի արտադրության հավելյալ սարքավորումների ներդրման արժեքի հաշվարկ

# Ա. Տերմինների բառարան

<b>Հիմնադրամ</b>	Հայաստանի Գյուղական Տարածքների Տնտեսական Չարգացման Հիմնադրամ
<b>Խորհրդատու</b>	Գրանթ Թորնթոն Քնսայթինգ ՓԲԸ
<b>Պայմանագիր</b>	Հայաստանում Գյուղական Տարածքների Տնտեսական Չարգացման Հիմնադրամի և 'Գրանթ Թորնթոն Քնսայթինգ' ՓԲԸ-ի միջև 2017թ.-ի օգոստոսի 4-ին կնքված Ծառայությունների մատուցման FREDА/CS-2017/011-4 պայմանագիր
<b>ԱԱՀ</b>	Ավելացված արժեքի հարկ
<b>ԱՊՀ</b>	Անկախ Պետությունների Համագործակցություն
<b>ԱԶ</b>	Անհատ ձեռնարկատեր
<b>ԲԲԸ</b>	Բաց բաժնետիրական ընկերություն
<b>ԽԵԿ</b>	Խոշոր եղջերավոր կենդանի
<b>ՀՀ</b>	Հայաստանի Հանրապետության
<b>ՀՀ ԳՆ</b>	Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարություն
<b>ՀՆԱ</b>	Համախառն ներքին Արդյունք
<b>Ռ-Գ</b>	Ռուսաստանի Դաշնություն
<b>ՄՊԸ</b>	Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
<b>ՎԱՎԿԿՀ</b>	Վտանգի աղբյուրի և կրիտիկական կետերի հսկման համակարգ
<b>ՓԲԸ</b>	Փակ բաժնետիրական ընկերություն

**ՕՈՒՆ** Օտարերկրյա Ուղղակի Ներդրումներ

# Բ. Պայմաններ

## Ընդհանուր դրույթներ

Այս հաշվետվությունը կազմվել է այն ըմբռնմամբ, որ Պատվիրատուն տրամադրել է Խորհրդատուին տեղեկատվություն բոլոր ֆինանսական և ոչ ֆինանսական փաստերի մասին, որոնց մասին արդեն իսկ տեղեկացված էր, և որոնք կարող էին ազդել տվյալ հաշվետվության վրա ստորագրման ամսաթվի դրությամբ:

Խորհրդատու և ոչ մի պատասխանատվություն չի կրում սոցիալական, տնտեսական, ֆիզիկական գործոնների և օրենսդրական դաշտում տեղ գտած փոփոխությունների համար, որոնք կարող են տեղի ունենալ նշված ամսաթվից հետո՝ ազդելով հաշվետվության և կատարված եզրակացությունների վրա:

Բացի այդ, Խորհրդատու և պատասխանատու չէ սույն հաշվետվության թարմացման համար՝ նշված ամսաթվից հետո տեղի ունեցած իրադարձությունների և հանգամանքների պատճառով:

## Հաշվետվության ձևեր

Ձեր հարմարության համար սույն հաշվետվությունը կարող է տրամադրվել ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակով: Հետևաբար, կարող են գոյություն ունենալ սույն հաշվետվության մի քանի օրինակներ և տարբերակներ: Ցանկացած տարբերության դեպքում գերակա է համարվում միայն հաշվետվության վերջնական կնքված և ստորագրված տարբերակը:

## Գաղտնիություն

Սույն հաշվետվությունը գաղտնի է և պատրաստված է միայն Ընկերության ղեկավարության համար: Այն չպետք է օգտագործվի, վերարտադրվի կամ տարածվի ցանկացած այլ նպատակով՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն, առանց մեր նախնական գրավոր համաձայնության:

## Տեղեկատվության հավաքագրում

Այս հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունը աղբյուրներն են՝

- Հանրությանը հասանելի աղբյուրներ,
- Կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրությամբ զբաղված ընկերությունների հարցումներ

- Կաթի արտադրությամբ զբաղված ընկերությունների հարցումներ,
- Մասնագիտական գրականություն

Խորհրդատու և չի ստուգել հարցումների արդյունքում հավաքագրված տեղեկատվության ճշտությունը հետևապես չի կարող պատասխանատու լինել այդ տեղեկատվության համար:

Մենք ձեռք ենք բերել համապատասխան հավաստիացում, որ տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվությունները համադրելի լինեն:

## Տեղային աշխատանքներ

Խորհրդատուի կողմից տեղային աշխատանքները՝ հարցումները, իրականացվել են Հոկտեմբերի 2-ից Հոկտեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում: Հոկտեմբերի 15-ից հետո մեր կողմից հարցումներ չեն իրականացվել, հետևաբար ցանկացած փոփոխություն հարցման ամսաթվից հետո ներկայացված չէ հարցման արդյունքներում:

## Աշխատանքների աշխարհագրություն

Հարցումներն իրականացվել են Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում:

## Հետադարձ կապ

Հարցերի դեպքում, որոնք պահանջում են պարզաբանում կամ լրացուցիչ տեղեկությունների ստացում, խնդրում ենք դիմել պրն Գուրգեն Հակոբյանին (հեռ.՝ +374 (10) 260 964 (200), [gagik.guylbudaghyan@am.gt.com](mailto:gagik.guylbudaghyan@am.gt.com)), Տնօրեն/բաժնետեր կամ տկն Հասմիկ Հովսեփյանին (հեռ.՝ +374 (10) 260 964 (304), [hasmik.hovsepyan@am.gt.com](mailto:hasmik.hovsepyan@am.gt.com)), բաժնետեր:

# Գ. Պայմանագիր



ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ FREDА/CS-2017/011-4

BC/CS/025/17

ՀԱՅԱՍՏԱՆԻՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՐԱՆԱԴՐՄԱՒ

ԵՎ

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆՏՈՆ ՔՆՍԱԼԹԻՆԳ» ՓԲԸ

ՄԻՋԵՎ

CONTRACT FOR SERVICE PROVISION  
FREDA/CS-2017/011-4

BC/CS/025/17

BETWEEN  
FUND FOR RURAL ECONOMIC DEVELOPMENT IN ARMENIA (FREDA)

AND

"GRANT THORNTON CONSULTING" CJSC

ք. Երևան, 04 Օգոստոսի 2017թ.  
Yerevan, 04 August 2017



Ծառայությունների մատուցման պայմանագիր FREDА/CS-2017/011-4  
Contract for service provision FREDА/CS-2017/011-4



Ծառայությունների մատուցման պայմանագիր FREDА/CS-2017/011-4  
Contract for service provision FREDА/CS-2017/011-4

ՑԱՆԿ	Contents
Պայմանագրի պայմաններ	Terms of the Contract
Հավելված Ա «Առաջադրանքի պայմաններ»	Annex A - "Terms of Reference"
Հավելված Բ «Հաշվետվությունների նկատմամբ պահանջներ»	Annex B- "Reporting requirements"
Հավելված Գ «Հիմնական անձնակազմը և կատարվելիք հանձնարարականները»	Annex C- "Key personnel and assignments to be implemented"
Հավելված Դ «Գնային գնահատականները և Բանակցությունների Արձանագրություն»	Annex D- "Cost Estimate of Services and Minutes of Negotiation"
Աղյուսակ 3Ը «Ծառայությունների մատուցման ժամանակացույց»	Table 3Ի(B)- "Implementation Schedule"

**Պայմանագրի պայմաններ**

04 Օգոստոսի 2017թ.

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Նախքան ստորագրելը և կնքելը, խնդրում ենք ուշադիր կարդալ սույն պայմանագիրը (այսուհետ՝ «**Պայմանագիր**»): Ստորագրելով Պայմանագիրը՝ Դուք անվերապահորեն ընդունում եք Պայմանագրի թղթի դրույթներն ու պահանջները և պարտավորվում եք գործել դրանց համաձայն: Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

Սույն Պայմանագիրը ստորագրվել է երկու հավարտանշոր թվականի օգոստոսի չորսին, ջաղաք երևանում հետևյալ կողմերի միջև՝

> **Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի** (գրանցման համար՝ 222.160.01071, ՀՎՀՀ՝ 00099439, իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Մամիկոնյանց 39Գ) (այսուհետ՝ «**Պատվիրատու**» կամ «**Հիմնադրամ**»), ի դեմս տնօրենի Ժ/պ Ալեքսանդր Քալանթարյանի, որը գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա և

> «**ԳՐԱՆԹ ԹՈՐՆՏՈՆ ԲՆԱՍԱԹԻՆԳ**» ՓԲԸ (գրանցման համար՝ 264.120.747156, ՀՎՀՀ՝ 00120086, իրավաբանական հասցեն՝ Հայաստան, 0012, Երևան, Վաղարշ Վաղարշյան փող., 8/1 շենք) (այսուհետ՝ «**Կատարող**»), ի դեմս տնօրեն Գուրգեն Հակոբյանի, որը գործում է Կատարողի կանոնադրության հիման վրա,

որոնք այսուհետ միասին հիշատակվում են որպես «**Կողմեր**», իսկ առանձին՝ որպես «**Կողմ**»:

Կողմերը հիմք ընդունելով՝  
**1) 20.06.2017թ.** Պատվիրատուի կողմից

**Terms of the Contract**

04 August 2017

**SPECIAL NOTE**

Before signing the Contract, (hereinafter referred to as Contract) it is highly recommended to read it thoroughly. By signing the Contract, you unconditionally accept all the clauses and requirements stipulated in the Contract and agree to act based on them. The issues which are not regulated by the Contract are subject to regulation by the RA legislation.

The present agreement was signed on 04 August 2017 in Yerevan between the following parties:

> **Fund for Rural Economic Development in Armenia** (Registration number 222.160.01071, TIN 00099439, legal address Mamikonyants 39a, Yerevan, RA) (hereinafter referred to as “**Client**” “**FREDA**”), represented by the acting director Alexander Kalantaryan which acts based on the statute of the Client, and

> “**GRANT THORNTON CONSULTING**” CJSC (Registration number 264.120.747156, TIN 00120086, Address: 8/1 Vagharshyan Str., Yerevan, 0012, Armenia) (hereinafter referred to as “**Executor**”), represented by the director Gurgen Hakobyan which acts based on the statute of the Executor,

which are together regarded as “**Parties**” and separately as “**Party**”

Taking into account the mentioned below, the Parties:

04 Օգոստոսի 2017թ.

- 1) հետազոտության հայտ ներկայացնելու հրավերը,
  - 2) 07.07.2017թ. Կատարողի հետաքրքրության հայտը,
  - 3) 17.07.2017թ. Պատվիրատուի գնումների հանձնաժողովի կողմից հետազոտության հայտերի բացման և գրանցման արձանագրությունը,
  - 4) 17.07.2017թ. Պատվիրատուի գնումների հանձնաժողովի կողմից հետազոտության հայտ ներկայացրած կատարողների որակավորման և փորձի գնահատման վերաբերյալ գնահատման վերաբերյալ,
  - 5) 20.07.2017թ. առաջարկների ներկայացման թիվ 01/122.1-17 հրավերը,
  - 6) 28.07.2017թ. Կատարողի տեխնիկական առաջարկը,
  - 7) 28.07.2017թ. Կատարողի ֆինանսական առաջարկը,
  - 8) 04.08.2017թ. Կողմերի քանակությունների արձանագրությունը, և այն, որ Պատվիրատուն ցանկանում է, որ Կատարողը մատուցի Պայմանագրի Հավելված Ա-ում նշված ծառայությունները, իսկ Կատարողը համաձայն է մատուցելու այդ ծառայությունները,
- միմյանց արձանագրությամբ կնքեցին Պայմանագիրը հետևյալի մասին.**

**ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

Պայմանագրում այնպանով, որքանով դրա համատեքստից այլ բան չի բխում, հետևյալ բառերը և արտահայտություններն ունեն հետևյալ իմաստը.  
**Օրենսդրություն**՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը:  
**ՀՀ դրամ**՝ Հայաստանի Հանրապետության դրամական միավորը:  
**Աշխատանքային օր**՝ ՀՀ իրավական ակտերի համաձայն աշխատանքային օր համարվող օրացուցային օր:  
**Հաշվետվություններ**՝ Պայմանագրի անբաժանելի

04 August 2017

- 1) The invitation of presenting interest application by the Client as of 20.06.2017,
- 2) The interest application of the Executor as of 07.07.2017,
- 3) The protocol of opening and registration of interest application of procurement committee of the Client as of 17.07.2017
- 4) The evaluation report as of 17.07.2017 on experience and qualification of executors of the procurement committee of the Client who presented an interest application,
- 5) The proposal presentation invitation number 01/122.1-17 as of 20.07.2017,
- 6) The technical proposal of the Executor as of 28.07.2017
- 7) The financial proposal of the Executor as of 28.07.2017
- 8) The negotiation protocols of the Parties as of 04.08.2017 and the fact that the Client agrees that the Executor provides services of Appendix A of the Contract and the Executor agrees to provide those services,

**with mutual consent concluded the Contract on the following:**

**DEFINITIONS**

The below mentioned words and expressions have the following meanings, if no other meanings issue from the context:  
**Legislation**-Legal system of the Republic of Armenia,  
**RA dram**-monetary unit of the Republic of Armenia,  
**Working day**-calendar day which is considered as working day in accordance with the legal acts of the Republic of Armenia.



04 Օգոստոսի 2017թ.

մաս կազմող Հավելված Գ-ում նշված հաշվետվությունները:

**1. Պայմանագրի ստորկան**

Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությանը իրականացնել Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված Ա-ում նշված ծառայությունները (այսուհետ՝ «**Ծառայություն**»), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայության համար՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով:

**2. Ծառայությունների գումարը և վճարումների կարգը**

**2.1.** Ծառայության համար Պատվիրատուն Կատարողին է վճարում **15,000,000** (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ «**Վճար**»), որը ներառում է Կատարողի բոլոր ծախսերը, բացառությամբ ԱԱՀ: Ընդհանուր գումարը՝ **18,000,000** (տասնութ միլիոն) ՀՀ դրամ

**2.2.** Վճարը Կատարողին փոխանցվում է անկանխիկ՝ Կատարողի բանկային հաշվառման փոխանցում կատարելու եղանակով՝ հետևյալ ժամանակացույցով.

N օ	Միջանկյալ փուլային աշխատանքներ	Կումարը ՀՀ դրամ	N օ	Intermediary stage work	Amount in AMD
1.	Նախապատրաստական աշխատանքների ավարտին	6,000,000	1.	Upon the preparatory works completion	6,000,000
2.	Պաշտային աշխատանքների ավարտին	6,000,000	2.	Upon the fieldworks completion	6,000,000
3.	Վերջնական հաշվետվության տրամադրում	6,000,000	3.	Upon the final report submission	6,000,000
<b>Ընդամենը՝</b>		<b>18,000,000</b>	<b>Total</b>		<b>18,000,000</b>

**2.3.** Կատարողի պարտավորություններն անբողբոջությամբ կատարված լինելու պարագայում Պատվիրատուն Վճարը Կատարողին է փոխանցում Կատարողի կողմից հաշվ-

04 August 2017

**Reports**-the reports mentioned in Appendix C which constitute an integral part of the Contract.

**1. Subject of the Contract**

With this Contract and the order of the Client, the Executor undertakes to implement the services of Appendix A which constitutes an integral part of the Contract (hereinafter referred to as "**Service**") and the Client undertakes to pay for the Service with the order prescribed in this Contract.

**2. Service price and payment order**

**2.1** The Client pays to the Executor for the service **15,000,000** (fifteen million) AMD (hereinafter referred to as "**Payment**"), which include all the expenses of the Executor except VAT. Total amount **18,000,000** (eighteen million) AMD.

**2.2** The payment is transferred to The Executor through bank wire with the following schedule:

**2.3** In case of full execution of liabilities by the Executor, the Client pays to the Executor within 30 (Thirty) days after the presentation by him of the invoices in 2 copies to the coordinator mentioned in

04 Օգոստոսի 2017թ.

ապրանքագրերը երկու օրինակով Պայմանագրի 3-րդ կետում նշված համակարգողին ներկայացնելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում:

**3. Ծրագրի վերահսկողությունը Ա. Համակարգող**

Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի ներկայացուցիչ է նշանակվում գլխավոր ներդրումային մասնագետ Ներսես Կյուրինյանը, (այսուհետ՝ «**Համակարգող**») (մինչև Պատվիրատուի կողմից այլ անձի նշանակվելը), որի պարտականությունն է հանդիսանում հաշվետվությունների, վճարման հաշիվ-ապրանքագրերի, սպամնագրերի կատարմանն առնչվող այլ փաստաթղթերի ընդունումը և հաստատումը, ինչպես նաև Պայմանագրի շրջանակներում առաջ եկող հարաբերությունների համակարգումը:

**Բ. Հաշվառումների գրանցամատյաններ**

Սույն Պայմանագրի շրջանակներում աշխատանքների, ներառյալ արտագրասնկակային աշխատանքների ընթացքում, սույն Պայմանագրի շրջանակներում ծառայություններ մատուցող Կատարողի աշխատակիցներից պահանջվում է լրացնել հաշվառման գրանցամատյանը կամ որևէ այլ փաստաթուղթ, որը նախատեսված է նախկին աշխատանքանախի և կատարված նախքանի հաշվառման համար՝ Ծրագրի համակարգողի կողմից ընդունելի տարբերակով:

**Գ. Հաշվետվություններ**

Հավելված Բ-ում «Կատարողի կողմից հաշվետվությունների ներկայացման Պահանջներ», նշված հաշվետվությունները պետք է ներկայացվեն Ծառայությունների մատուցման ընթացքում և պետք է կազմեն հիմքը Վճարումների կատարման համար:

04 August 2017

3<sup>rd</sup> paragraph of the Contract.

**3. Project Administration A. Coordinator.**

The Client designates Senior Investment Specialist **Nerses Kyurinyan** as Client's representative (hereinafter referred to as "**Coordinator**"); (before the appointment of another person by the Client) who shall bear responsible for the receipt and approval of reports, invoices other documents regarding the Contract as well as coordination of relations arising within the framework of the Contract.

**B. Timesheets**

During the course of their work under this Contract, including field work, the Executor's employees providing services under this Contract may be required to complete timesheets or any other document used to identify time spent, as well as expenses incurred, as instructed by the Project Coordinator.

**C. Reports.**

The reports listed in Annex B, "Executor's Reporting Requirements," shall be submitted in the course of the assignment, and will constitute the basis for the payments to be made under paragraph.

04 Օգոստոսի 2017թ.

**4. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

- 4.1. Պատվիրատուն իրավունք ունի՝
- 1) ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների ընթացքը՝ որակը, կապակցված որոշումների վերաբերյալ արձանագրությունները՝ առանց միջամտելու վեցիելիս գործունեությանը.
  - 2) Կատարողի ծառայությունների մատուցումը դադարացնել, եթե Կատարողը առանց Պատվիրատուի կողմից հարգելի համարվող պատճառների չի կատարում Պայմանագրով սահմանված իր պարտականությունները, կամ այլ պատճառով՝ չի համապատասխանում Պատվիրատուի պահանջներին,
  - 3) վերոնշյալ աշխատանքների կատարումը հանձնարարել ոչ միայն Կատարողին, այլև նաև իր իսկ աշխատակիցներին կամ այլ ընկերություններին:
- 4.2. Պատվիրատուն պարտավոր է պատշաճ կերպով կատարել Պայմանագրով իրեն վերապահված պարտավորությունները:
- 4.3. Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել և ողջամիտ ժամկետում ստանալ իր կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր:
- 4.4. Կատարողը պարտավոր է՝
- 1) Ծառայություններն իրականացնել Հավելված Գ-ում նշված անձնակազմով (այսուհետ՝ **«Անձնակազմ»**),
  - 2) Պայմանագրի Հավելված Բ-ում սահմանված ձևով և ժամկետներում Պատվիրատուին ներկայացնել համապատասխան հաշվետվությունները,
  - 3) Աշխատանքներն իրականացնել Պայմանագրի, Պատվիրատուի և Կատարողի գործող կանոնադրությունների և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան,

04 August 2017

**4. Rights and obligations of the Parties**

- 4.1 The Client has the right to:
- 1) Check anytime the process, quality and protocols of decisions made with regards to Services provided by the Executor without interfering into the activity of the latter,
  - 2) Stop the provision of Services by the Executor if the Executor not fulfil the liabilities stipulated in the Contract without any cause that can be considered as reasonable by the Client or does not comply with the requirements of the Client at other reason,
  - 3) Assign the implementation of above mentioned works not only to the Executor but also to his employees or other companies.
- 4.2 The Client is obliged to implement duly the liabilities stipulated in the Contract,
- 4.3 The Executor has the right to require from the Client all the necessary documents and information regarding the provision of services at during reasonable period.
- 4.4 The Executor is obliged to:
- 1) Provide Services with the staff mentioned in the Annex-C (hereinafter referred to as "Staff"),
  - 2) Present appropriate reports to the Client as mentioned in the Annex-B of the Contract,
  - 3) Implement works that are compliant with the Contract, acting in line with the Client and the executor as well as RA legislation.

04 Օգոստոսի 2017թ.

- 4) Ծառայությունները մատուցել մասնագիտական և էթիկայի բարձրագույն ստանդարտներին համապատասխան,
  - 5) Պայմանագրի շրջանակում փոխարինել Անձնակազմի ցանկացած աշխատակցի, որին Պատվիրատուն կհամարի ոչ համապատասխան,
  - 6) Առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության չկնքել Ծառայությունների մատուցման ենթապայմանագրեր:
- 5. Պայմանագրի ուժի մեջ մտնելն ու գործողության ժամկետները**
- 5.1. Այս Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից կնքման ու ստորագրման պահից:
